



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
✓ 775

1999



Լ Ի Ի Պ Ի Ը

154





Լյուդիա
Լ Է Ի Դ Ի Ա

ՄԱՐԿՈՍ ԱՒՐԵՂԻՈՍ ԿԱՅՍԵՐ

Փ Ա Մ Ա Ն Ա Կ Է Ն

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Ն Կ Ա Ր Ա Գ Ի Ի Ր Մ Ա



1849.

Յ . Վ Ր Թ Ա Ն Ի Ս Ի Վ . Ե Ա Գ Ո Ւ Թ Ճ Ե Ա Ն



Մ Ի Ի Թ . Ո Ւ Խ Տ Է Ն



Վ Բ Է Ն Ն Ա

Ծ Խ Ի Թ - Ա Ր Է Ա Ն Ն Ե Տ Պ Ա Ր Ա Ն

1861 Ռ-ՅԺ.



28 777

4 775-60

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ի՞նչ ախորժ երեւոյթ է՝ գիշեր ատեն բայց աւտուան մօտ մինաւոր բարձունքի մը վրայ՝ լեռանց սառնամանիքին փայլելը տեսնել : Առաւօտեան առջի կարմրութիւնը սարէ սար անցնելու կը սկսի, խոնարհազոյն կեցող գլուխները դեռ ան կենդանացուցիչ ծառապայթներուն կը սպասեն, իսկ վարի ձորամէջը կը տատանի մէզն ու մտռախուղը, ու ամէն կողմանէ լեռանց ստորտը կը շօշափէ :

Ասոր նման երեւոյթ մ'ալ հաւատոյ աշաց առջեւ կը բացուի, թէ որ քրիստոնէութեան աւտուան կը դառնայ ու ան հսկայակերպ գլուխները կը դիտէ՝ որոնց վրայ փրկութեան արեւուն առաջին լուսաւորութիւնը կաթած էր : Ասոնց վրայէն մեզ հեռաւորացս ոգենորոգ ու զովացուցիչ հով մը կը փչէ, անոնց բարոյիցը ժայռեղէն հաստատութեանը վրայ կը զարմանանք, որոնք իրենց ժամանակակցաց մէջէն բարձրագլուխ կը շողան, ու կարծես թէ իրենց արիւնոտ աղբիւրներուն կարկաշիւնը կը լսենք, որոնք իրենց սիրտերէն բղխելով՝ կու գան ընդհանուր մարտիրոսութեան հոսանքին մէջ կը մտնեն : Աս մարտիրոսութեան հոսանքը քրիստոնէութեան բովանդակ երեք առջի դարերուն մէջ կը վազէ՝ հեթանոսական ու քրիստոնէական աշխարհքին սահմանաբաժինը կազմելով :

Ասանկ հայեցուած մ'ընել ուզած է աս մատենիս հեղինակն ալ՝ ան ոսկեղէն դարուն վրայ : Բայց որովհետեւ նոյն ժամանակին պատմութեանը մէջ մեծամեծ անձինք, ադամանդեայ շղթայի մը պէս, երկայն շարք մը կը կազմեն, հեղինակը իր հայեցուածը շափաւորած է, ան ժամանակի միջոցը մինակ ընտրելով՝ որուն մէջ Մարկոս Աւրելիոս Հռոմայեցուց կայսրը կ'իշխէր, (քրիստոսէ ետքը՝ 161էն մինչուկ 180) : Աս միջոցիս մէջ երեւելի ըլլող անձինքը Զմիւռնացի Ս. Պողիկարպոսն է, Հռոմ՝ Յուստինոս փիլիսոփան, Հարաւային Գաղղիայի մէջ՝ հաւատոյ

նուիրակն ու եպիսկոպոսը Պոթինոս: Իսկ անխոնջ Իրե-
նէոսն՝ արեւելեան եւ արեւմտեան եկեղեցեաց մէջ միացու-
ցիչ կապ մըն է: Նա եւ Սովտերոս Ս. Քաջանայապետը,
Դիոնիսիոս Կորնթացին եւ իմաստուն Աթենագորասն,
որն որ յունական փիլիսոփայութենէն՝ Քրիստոսի աշա-
կերտութեան անցած էր, Մարկոս Արեղիոսի ատենը
կ'իյնան:

Արդ՝ աս ամէն հաւատոյ վկաները, որոնք տեղւոյ յա-
րաբերութեան կողմանէ իրարմէ այնչափ տարանջատ են,
իրարու քով ամփոփելու համար՝ այնպիսի անձ մը պէտք
էր, որուն վիժակը յիշեալ մեծամեծ անձանց հետ կապ
մ'ունենայ, ան միզին պէս՝ որն որ ձորերը կը ծածկէ ու
միանգամայն լերանց ստորոտը կը շրջապատէ: Աս անձը
Ղիւզիան է, արեւելեան գերուհի մը:

Խնդիր մը միայն կը մնար, թէ արդեօք ան ատենուան
համաշխարհական տէրութեան բազմաթիւ քաղաքներուն
որուն մէջ պէտք է առաջիկայ պատմութեան հանգոյցը զե-
տեղիլ: Հոռմ՝ կայսերական մեծատարած տէրութեան
գլխաւոր քաղաքը, բնականապէս ամենէն յարմարագոյնն
էր, անոր համար ալ առանց նոյն քաղաքը յիշատակելու
անցնելը պատշաճ չէր ըլլար: Բայց կրթութեան գլխաւոր
տեղը ու իմաստութեան ապաստանարանը, ո՛չ Հոռմ՝ ո՛չ
ալ Իտալիան էր, այլ Յունաստանի հին մայրաքաղաքը,
Աթէնք: Նոյն իսկ Անտոնինեանց ժամանակը՝ Հոռմ՝ կայ-
սերական արքունիքը Հելլենական կրթութիւնն ու հրա-
հանգը անանկ մեծ բանի տեղ դրած էր, որ նոյն իսկ թա-
ղաժառանգ իշխանաց ու բարձրագոյն դպրոցաց համար՝
ծարտարագոյն վարպետները Աթենքէն կը բերուէին: Յու-
նարէն լեզուն նրբագոյն կրթութեան նշանակմըն էր, ըստ
ամենայնի այնպէս, ինչպէս հիմակ ազնուագոյն ընտա-
նեաց մայրենի լեզուն Գաղղիերէնը սեպուած է: Նոյն իսկ
Մարկոս Արեղիոս Հելլենական փիլիսոփայութեան ա-
շակերտ էր, ու իր առածները յունարէն կը գրէր: Հերով-
դէս Ատտիկոսը, Դեմոնաքս, Աթենագորաս, Արիստիդէս,
Պաւսանիաս, Ղուկիանոս եւ ուրիշ երեւելի մատենագիր-
ներն աս ատեն ամէնքն ալ Աթէնք կը գտնենք: Աթէնք
քրիստոնէութեան տարածման համար անանկ երեւելի ե-
ղած էր, ինչպէս Իտալիա: Աս վերջինը՝ քաղաքականու-

թեան, իսկառջինը՝ մտաւոր իշխանութեան նիստն էր: Ասոր համար ալ Առաքելոց այն երկու իշխանները առ երկու քաղաքներն իրենց առաքելական գործունէութեանը պիտաւոր տեղի բրին, քաջասիրտ Պետրոսը կայսերական քաղաքը դիմելով ու բազմահմուտ Պոլոսը յունակեզու ազգերուն մէջ ճանապարհորդելով: Անոր համար Աթէնք առաջիկայ պատմութեան ասպարէզ ընտրուած է: Հելլենական աստուածներու հաւատքը՝ քանի մը հետաքրքրական ու յանկուցիչ հանգամանքներ մեզի կրնային ընծայել, երբոր հեթանոսուհոյ մը բերնէն նոյնը լսենք: Հռոմայեցոց ու Յունաց հեթանոսութեան մէջ տեղը մեծ վիճ կար, նոր պղատոնական դպրոցին կրօնական տեսութիւնները աւելի ազնուագոյն էին, քան թէ բիրտ Հռոմայեցոց հաւատքը: Յունաց իմաստուններուն զիտողութիւնները անպտուղ չմնացին: Արշափ ալ իրենց դրութիւնները իրարմէ կը տարբերէին, զէթ ասոր մէջ կը միաբանէին, որ նոյն ատենուան ազգերուն աստուածութեան վրայ ունեցած նիւթական տեսութիւնները՝ անտարժանաւոր բժրոնումներ չէին:

Ասկից զատ՝ Յունաց անճառ (գաղտնի) վարդապետութիւնները, որոնց ծագումը յունական ազգին շատ հին ատենները պէտք է փնտռել, նահապետաց ատենուան վարդապետութենէն շատ բան պահած էին, ու գուցէ պրիտանորարար Էղեւսինեան բտուած խորհուրդներն էին՝ որոնց համար Արիստոտէլ (ԲՆՎ. ԺԲ. 8) կ'ըսէ թէ «Հին իմաստութեան մը մնացորդները պահած են, անանկ հին իմաստութեան մը՝ որն որ կրնայ իրաւամբք աստուածային յայտնութիւն մը սեպուիլ», : Բայց աս գաղտնեաց վարդապետութենէն զատ՝ որուն ամէն ուսեալ մարդիկ մասնակից կ'ըլլային, Յունաց քաղաքներուն մէջ ուրիշ աղբիւր մ'ալ կը վազէր, որն որ կարող էր սասրին հեթանոս ժողովրդեան աստուածութեան վրայօք ունեցած գաղափարը աւելի մաքրել ու զտել: Արովհետեւ նոյն ատենները չէ թէ մինակ Դեզոսի, Կոսի, Միլետոսի եւ ուրիշ կղզեաց քաղաքներուն մէջ հազա նա եւ մեծ Կորնթոսի մէջ ալ Հրեայք իրենց կրօնն ու պաշտօնը կը գործածէին ու Պոլոս Առաքեալ նա եւ Աթենքի մէջ Հրէից ժողովրդանոց կը գտնէր*:

* Գործք առար. ԺԷ. 17:

Ուստի աս ամէն բան, այսինքն փիլիսոփայութիւն, խորհուրդք ու Հրէութիւն գործակից եղան՝ հեթանոսութեան վիթխարի օձը՝ որն որ բոլոր Հռոմէական աշխարհին բոլորտիքը գալարած էր, պատառ պատառ հատցընելու, մինչուկ որ ան Գաւթեան ցեղին “արեւազգեստ կինը”, ամենայն փառաւորութեամբը յայտնուեցաւ, որն որ արդէն օձին գլուխը ջախջախած էր:

Նոյն ատենուան կրօնական տեսութիւններուն հետ, Մարկոս Արեղիոսի ատենը պատահած քաղաքական դէպքերն ալ, հեղինակը դուրս չի թողուր: Թէ որ Գանուբեան ազգաց դէմ տրուած պատերազմը քիչ մը երկայն կը ստորագրուի, անոր համար է՝ որովհետեւ հեղինակը իրբեւ Գերմանացի, սկզբնաբար Գերմանացւոց համար կը գրէ:

Ահաւասիկ ասանկ պրքոյկ մը մեզի հիւր կու գայ, մեր մէջն ալ յաղթող գաղափարները աւետարանելու, որոնցմով ատեն մը Քրիստոսի Տեառն մերոյ կրօնը Հռոմայեցւոց օրհասական տէրութիւնը նոր կեանքով մը կենդանացուց: Աս գաղափարները մեր ժամանակին համար աւելորդ չեն, բարոյական հեթանոսութիւն մը մէկ կողմանէ, ու հաւատալու տկարութիւն մը մէկալ կողմանէ՝ ան տխուր ժամանակները կը յիշեցընեն, անանկ որ ինչպէս Շաթոպրիան կ'ըսէ, սյսօրուան օրս հարկ եղած է որ քրիստոնէութիւնը ինք զինք իր որդւոցը առջին ջատագովէ, ինչպէս որ ատեն մը ինք զինքն իր հալածիչներուն առջեւ կը պաշտպանէր, ու ատեն մը հեթանոսաց համար պրուած ջատագովութեան թղթերը՝ հիմակ քրիստոնէից առջեւ ջատագովութեան ճառեր կ'ըլլան:




Hauschilder

EDertinger

Յոհանն Ժր . . . ձեռքը քար ժր առած , որուն վրային շղթայ ժր
 կախուած էր . . . կործանած քաղաքը կը նայէր : Էր . 24 - 25 :

ԼԻՒԳԻԱ

ՄԱՐԿՈՍ ԱՒՐԵՂԻՈՍ ԿԱՅՍԵՐ ՓԱՄԱՆԱԿԷՆ
ՆԿԱՐԱԳԻՐ ՄԸ



Ք Լ Ո Ւ Խ Ա .

Գերի Օրիորդ :

(Յամի Տեառն 165)



Է՛ն Զմիւռնիոյ տօնաժամունսն Տրապարակը գո-
չիւն, աղաղակ ու դղրդիւն կը պատէր, խաժա-
ժմուժը իրար կը նեղէր. ՏրՏրում, կոխկրտում,
ճիչ ու վայնասուն բոլոր քաղաքամէջը կը
Տնչեցընէին: Հոս գերիներու պահապան մը
իր վաճառներուն գերազանց աղուորութիւնը կերկե-
րաձայն կը քարոզէր. Տան ուրիշ մ'ալ աղոց անո-
ղորմաբար կը զարնէր, վատաբախտներուն կոծն ու
գոչիւնը՝ ծեծողներուն անիծալից ՏայՏոյութեանցը
Տեա կը խառնուէին: Ծախու Տանուած գերիներուն
ամէն մէկը պարանոցէն վար կախուած տախտակ մը
ունէր, որուն վրայ իրենց զանազան յատկութիւն-
ներն ու ձիրքերը նշանակուած էին: Տախտակներէն
մէկ քանին ասանկ վերնագիր մ'ունէին, Վայելչագիր*,
կամ Գաստարակ**, Ուսուցիչ եւ այլն, որովՏետեւ
աս վերնագիրը կրողներն իբրեւ տան ուսուցիչ կամ
կրթող՝ ամէն կերպ պահանջուած յատկութիւններն
ունէին: Հրապարակին վերի կողմերը կեցողներն ըստ
մեծի մասին Ափրիկեցիք էին, արեւակէզ Լիբէաս-
տանին թշուառ արարածները՝ թխագոյն, սեւամորթ
մարդիկ՝ կնճըւած գանդուր մաղերով, ականջնին
ծակ, ոտքերնին կիրով ճերմրկած, որն որ ծովի
վրայէն բերուած ըլլալնուն նշանակ մըն էր: Իրենց քով
մեկուսացած կը կենային սեւուկ աղջկուկը, որոնք

* Καλεγράφος. ** Πεδάγωγός.

պարանով Տիւսուած վանդակներու մէջ փակուած էին, ու Եթովպիոյ ներքին կողմերէն բերուած, սեւ երենոս Տնդիկ փայտի գունով: Իրենց բազմոցը երփնագոյն օթոց մըն էր, որուն վրայ մէկ մէկու քով խիտ առ խիտ կը բաժնէ՝ ծնկի վրայ եկած կը նստէին. գինին, հացն ու պտուղը՝ իրենց կէս օրուան ոգեպահիկ կերակուրն էր, ուսկից քիչերը կ'ուտէին, որովհետեւ մէջերնին խօսք եղած էր, թէ քիչ մը ատենէ ի վեր այսչափ խնամով սնուցուելնուն պատճառը՝ շուայտասէր Հռոմայեցոց փափուկ համադամ կերակուր պատրաստուելու համար է: Տօնավաճառին վարի կողմերը սպիտակ գերիներու խումբը գրաւած էր, որն որ ամենուն աչքն ու մտադրութիւնը իրեն կը քաշէր. ասոնք աշխրաքիս ամէն կողմերէն ժողոված էին: Ասոնց մէջ կը խառնուէին նա եւ նիհար վտիտ Իսաւրացիները, որոնց գործքը երբեմն միջերկրական ծովուն մէջ ասպատակութիւն ընել էր. ասոնք աղեղորմ՝ կերպարանք մը կ'ընծայէին: Իսկ ընդ հակառակն բազմացեղ Կապագովկացիները հպարտական վեհ կեցուածք մ'ունէին. բայց քաղցրութեամբ ու ողորանօք գործածողներուն շատ հարկաւոր ու օգտակար ծառայութիւններ կրնային մատակարարել, ինչպէս իրենց տախտակին վերնագիրն ալ կը վկայէր:

Իերեաց խումբերուն մէջ, ուր շահադէտ Հռոմայեցիք եւ ճոխ ու բազմահարուստ Յոյները յամբարայլ ժուռ կու գային, վայելուչ հագուած, համեստ գեղապատշաճ տիկին մ'ալ կու գար, որն որ հագուստին նայելով՝ միջին աստիճանի կ'երեւար: Իր յուզախնդիր նայուածքը գերի բռնուած քրիստոնէից երխտասարդ կերպարանքին վրայ երկայն ատեն կը զբաղէր: Բայց կ'երեւար որ փնտոածը չէր կրնար կոր գանել. եւ անոր համար ալ մօտաւոր փողոցներէն շիտակ դէպ ի վեր հրապարակական բանտերը կ'երկրննար: «Չիմքր անոնց մէջ չգտնելուս արդեօք ուրախանամ, չէ նէ քանքատիմ», . այսպէս կը հառաչէր տառապեալ կնիկը: «Հիմակ արդեօք վեց ամիսէ ի վեր դեռ բանտն է: Արդեօք ժողովուրդեան

մերձաւոր տօնախմբութեան մը համար կը պահուի: Ողորմած Աստուած, թող մի տար որ իմ զաւակս ժողովրդեան բարձրաձայն աղաղակներու եւ ծափահարութեան մէջ չար գազաններէն պատառուի,:

Աս մտածութենէն տանջուած Քարիտանէ բանտին սեամը կը հասնի: Պողոթոջուն ձեռուրներով դուռը կը զարնէ ու ներս մտնելու հրաման կ'ուզէ: Բանտապանին կը հաղորդէ, որ Սերափիկէ անուհով դուստր մը ունէր, որն որ Պողիկարպոսի վկայական մահընէն ետքը բանտ դրուած էր. շատ ամիսներէ ի վեր ինչ եղաւ, ինչ չեղաւ. վրան լուր մը չունի:

«Սերափիկէ — — ծիրանավաճառ կնկան մը դուստր», մըմըռաց քթին տակէն բանտապանը. «այնպիսի աղջիկ մը՝ կրօնը արհամարհող քրիստոնեաներէն եւ դեռ տասնուերեք տարեկան: Մօտ օրերս կը տեսնես. հարսանեաց հանդէսը պիտ'որ կատարուի գեղեցկատեսիլ մատաղ յովազի մը հետ, կայտառ ու արթուն եթովպացիի մը հետ, որուն համեմատ չկայ,»:

Քարիտանէին երեսին գոյնը մէկէն կը նետէ. սպիտակ կճեայ արձան կը կտրի, ու վախէն սիրտը բաբախելով դժնեայ բանտապանին առջին կերթայ, որուն հենգնախօս շրթունքէն իր միակ դստեր գլուխը գալու հաւանական վիճակը քիչ շատ հասկըցած էր:

«Ա՛յ կը տեսնեմ որ պտուղ ալ կը տանիս», ըսաւ բանտապանը. «ասոնք կ'ուզեմ հրապարական խրախճանին օրը, որն որ մօտերս հաւանականաբար անահտական դից տօնին օրը պիտ'որ կատարուի, աղջկանդ առջին դնել:

«Քարասիրտ մարդ, ինչպէս կը ծաղրես», ըսաւ Քարիտանէ, «արդեօք ցուրտ մահը քեզմէ ալ սիրական զաւակ մը յափշտակած չունի. քեզի սրտակից եղած անձի մը մահուան անկողնոյն քով կեցած չունիս: Ան ատեն կրնաս չտարակուսիլ որ ինչպիսի զգածումներ հիմակ իմ ներսս կը բանին: Ա՛հ կը պաղատիմ քեզի, մինակ աս մէկ մխիթարութիւնը շնորհէ ինձի, որ Սերափիկէն դեռ հրապարակական հանդէսը չտարուած հետը խօսիմ,»:

«Քսակդ ո՛ւր է», հարցուց պահապանը. «աղէկ

լեցուած է նէ՛ բաները նպաստաւոր կերպարանք մը կրնան առնուլ, :

“Չէ, խտաբարոյ մարդ, չէ, ոսկին ու արծաթը իզմէ մեծ խնայութեամբ միայն կրնաս յուսալ, բայց Հռոմի օրէնքներն՝ որոնք դատապարտելոց մահւոնէն յառաջ ճաշ մ'ալ կը շնորհեն, այնչափ խիստ չեն որ մօր մը իր դատապարտուած միամօր դստեր քով մտնելը զլացուի: Թէ որ քեզի իմ դոյզն ստակս տալու ալ ըլլամ, դուն անով զքեզ հազիւ գոհ կրնաս ընել: Բայց ես գանձ մ'ունիմ, շատ մեծ ժառանգական գանձ մը, որն որ իմ ու քու մէջդ կրնայ բաժնուիլ, առանց ասոր համար նուազութիւն մը կրելու, ասկից կրնամ քեզի տալ ինչ որ քու սիրտդ կը բաղձայ. միայն թէ զիս ալ իմ բաղձանքիս հասցընես, :”

“Արտառոց խոստում, . . . պատասխանեց բանտապանը. “ան գանձին աժէքը որչափի կը հասնի, :”

— “Այլորիս շրջապատէն վեր, թափանցիկ զըմբուխտի գնդակ մը ըլլալու է, :”

Ասոր վրայ բանտապանին երեսը զուարթացաւ: “Ստուգիւ մեծ չափազանցութիւն է, ըսաւ մտքէն, բայց կրնայ գեղեցիկ զմբուխտէ մտանի մ'ալ ըլլալ, . . . ու չորս դին նայելով՝ բալլիքներն առաւ, անոր աչք մը ըրաւ որ իր ետեւէն գայ:”

Խել մը խաւարին բակերէն անցան գացին: Ամենեւին խօսք մը նոյն ստորերկրեայ տեղերուն խոր լուութիւնը չընդհատեց, միայն ոտնակոխի խոնկ խոնկ ձայնը պատերը կը հնչեցընէր: Աերջապէս անձուկ ու ցած դրան մը առջին կանկ առին: Բալլիքը խութուեցաւ, կղպակը ետ ետ հրուեցաւ, քարիտանէ ներս մտաւ չմտաւ, դուռը կունրկէն կղպուեցաւ:

Ո՛վ երջանիկ վայրկեան, ասանկ վշտագին հոգերու մէջ ալ աւելի քաղցր չէր կրնար զգածուիլ: Բայց լուռ — հոն անկիւն մը քաշուած կը նստի գերի օրիորդը, չիգիտեր, չիգուշակեր՝ որ իրեն մօտ սպասողն ո՛վ է: Աջ ձեռքը թեթեւ շղթայ մը, ձախ թեւին վրայ գլուխը կռթնցուցած անուշ քուն կ'ըլլար: “Ո՛հ գուցէ դուն ալ գուշակած ես մօտ օրերս գլուխդ գալիքը, լալէն յոգնած արտեւանունքդ ար-

դեօք ինչ աղօտ պատկերներ աս վայրկենիս մէջ կը տեսնէ կոր: Գուցէ կ'երազես ան տաք գոլորշի հանող Մերկարանները*, դէպ ի ուր որ քու արիւնաթաթախ դիակդ անգուգ դահճին ճանկովը պիտ'որ քաշուի: Բայց չէ չէ, այսպիսի զուարթ դիմաց գծագրութեան մը վրայ արհաւիրք չինկարուիր. աս կերպարանքը խաղաղութիւն կը ցոլացընէ ու Աստուծոյ յանձնուած քնոյ մը անգորրութիւն: Իր շղթայակապ աջ ձեռքին վրայ՝ առանց մտադրութեան՝ սանկ բռնած գօտի մ'ունէր, որուն վրայ խորհրդածելով մրափած կ'երեւար: Չեռքը վար թող կու տայ եւ գօտին իրեն անշարժ մատուրներէն կը պրծի կ'իյնայ: Քիչ մը ետքը երազ տեսածի պէս գլուխը դէպ ի պատին կռթընցուց, ու ժպտող դէմքով մը ինք իրմէ աս խօսքերը խօսեցաւ:

«Այո՛ այո՛, անմոռաց յիշատակաց արժանի Պողիկարպոս, չէ թէ մագաղաթի, այլ ազնիւ նիւթի մը վրայ քու ամէն մէկ խօսքերդ դրոշմած եմ: — Պողիկարպէ, դքեզ մէյ մ'ալ պիտ'որ տեսնե՞նք: — Արդեօք շուտ: — Ո՛հ դեռ երկայն պիտ'որ տեւե՞: — Մինչուկ ան ատեն մեր յոյսը միշտ աչքերնուս առջին պիտ'որ ունենանք ու մեր արդարութեան առհաւատչեայն երբեք պիտ'որ չկորսունցընենք»,**:

Քարիտանէն դեռ անշունչ բանտին դրան առջեւ կը կենար: Պտուղները գետինը թողուցած, ձեռուրները ձգած ու իրարու անցուցած, իր երազող դստեր առջին կը սպասէր: Ու երբոր աս խօսքերը՝ «Ո՛հ դեռ երկայն պիտ'որ տեւե՞ն», լսեց, — սրտին անձուկն ու փղձուկը չկրցաւ բռնել, յորդահոս արտասուքը ծնօտէն վար կը հոսէր ու իր ներքին դրդումն ալ երկայն ատեն չկրնալով զսպել՝ վերջապէս մեղմ՝ ձայնով մը իր դստեր անունը սկսաւ տալ. — «Սերափիկէ», — հեղ մ'ալ նոյն ձայնը հնչեց — «գիտես ո՞վ է հոս»:

Աղջիկը դեռ աչքները գոց խոր մտադրութեան մը մէջ ընկղմած՝ քունը գլուխը ձայն կու տար. «Հոս

* Spoliarium.

** Ս. Պողիկարպոսի առ. Փիլիպեցիս գրած թղթէն:

միայնութիւն է — խաղաղութիւն ու աստուածային շնորհք»:

«Սերափիկէ, — քու մայրդ է,»:

«Չէ չէ, հոս միայն աստուածային շնորհքը կը սպասէ — Տէրը. — բայց ան սիրանոյշը (Քարիտանէն) իզմէ թռաւ, գնաց,»:

Աս խօսքիս վրայ խոր հառաչանք մը ըրաւ, ու գունատ այտերէն վաղած արցունքը սրբելով աչկունքը դէպ ի ոտքին կողմը՝ նոյն պարզուած գօտւոյն վրայ տնկեց:

Յանկարծ աչքին առջեւը կերպարանք մը նըշմարեց, — զարհուրեցաւ. բայց կայծակի երագութեամբ տեղէն ցատկելն ու ոտք ելլելը մէկ եղաւ. քայլ մը որ առաւ, շղթաներուն ճոխնէն ու շըռինչը՝ իրեն ուր ըլլալը յիշեցուց: «Ամենաբարի Աստուած,» սկսաւ գոչել, ու մօրը վիզը պլուեցաւ:

«Արա՞ղ կը տեսնեմ, չէ նէ իրօք դուն ես: Մօրս փաթթուած եմ, չէ նէ անոր զուարթունն է որ ինձի այցելութեան ելեր է: Զարմանալի երեւոյթ, փակուած դրերէն ի՞նչպէս աս գարշահոտ գետնափորը մտար,»:

«Հա՛, սիրելի որդեակ, ես եմ. երկայն ատեն աստանդական պտրտելէս վերջը հոս դարձայ: Առանց քեզի կեանքը՝ ինձի մահունէ աւելի տրտմագին երեւցաւ: Աերջի հալածանքէն ետքը, վեց ամիս լեռներու վրայ երերեալ տատանեալ պտրտեցայ: Շատ հաւատարիմ ու անձկայրեաց սրտեր գտայ. — միայն մէկը ինձի պակաս էր. քուկդ: Հիմակ ալ հոս կը մնամ. մինչուկ որ քու վիճակդ որոշուի: Ան սոսկալի օրէն ի վեր՝ որ անլուր ու անողորմ եղբունագործութիւններ կատարեցան, որոնց նմանը մինչուկ հիմակ չէր տեսնուած, անդադար զքեզ կը մտածէի: Երբոր լսեցի որ ամփիթէատրոնը դուն ալ տեսնուեր ես, քեզի համար մեծ հոգի ու մտմտութի մէջ ինկայ: Ես միշտ չարագուշակ արկածներ սկսայ վրադ երեւակայել: Ժամ ի ժամ կը սպասէի. — չսխալեցայ կարծիքիս մէջ՝ — որ դուն ալ գերի ինկած ես,»:

«Ա՛յո՛ մայր,» պատասխանեց Սերափիկէն, «ար-

ժանի եղայ՝ մեր կենարարին համար բանտ ու կապանք քաշելու: Սոսկալի օր մ'էր այն օրը, եւ սակայն ցանկալի՝ օր: Ո՛հ տեսնայիր նոյն ատեն, մեր անմոռաց յիշատակաց արժանի Պողիկարպոսն՝ թէպէտ հարիւրամեայ՝ բայց ոչ երեսին մեղմ պայծառութիւնը, ոչ մանկական յստակ անմեղութիւնն այլայլած էին: Հեթանոս հանդիսատեսներէն ոմանց խտաբար սիրան ալ շարժեցաւ, ոմանք կ'արդահատէին նոյն ծերոյն, շատերը կը վախնային որ ան տկար ծերունին կարող չըլլայ պիտ'որ այն դիւցազնական վեհութիւնն ու հոգւոյ հանդարտութիւնը պահել, զորն որ իրեն բարեպաշտ ու արդիւնաւոր վարքը յուսալ տուած էր: Բայց աս վախը որչափ անհիմն էր, ով մայր. դուն աս սուրբին աներկիւղ հաստատութիւնը մահուան ժամանակը տեսնելու էիր,, :

„Աս գէթ աս բախտն ունեցայ, աղջիկս, որ ան մեր Եպիսկոպոսին՝ մահւրնէ քիչ մը յառաջ քաղքէն դուրս ճամբու մը վրայ հանդիպեցայ, որ ատեն որ դեռ Հերովդէս քրմապետին կառքը նստած, նիկետասն ալ քովը՝ կ'անցնէին: Աս երկուքն ալ զինքը կը ստիպէին որ զկայսրը՝ գերագոյն տէր անուանէ ու անոր խնկարկէ: Այնքանութիւնը երթալով մէջերնին ան աստիճանի սաստկացաւ՝ որ ծերունին կառքէն դուրս գլտորեցին, որն որ արիւնլուայ երեսին վրայ ինկաւ, սրունքը ցաւցուց: Բայց աս դէպքը վրան եւ ոչ փոքր ազդեցութիւն մը բրաւ, այնպէս որ բան մը չկրածի պէս կայտառ կը քալէր: Ան տեսնալս վերջի անգամն է եղեր կենացս մէջ, բայց անոր կերպարանքը, մեծարելի ծանրութիւնն ու վարուց սրբութիւնը՝ յիշատակիս մէջ միշտ ներկայ է, ականջներս դեռ կը հնչեն Ս. Յովհաննեսէն եւ Քրիստոս տեսնողներուն բերնէն խօսածները: Քրիստոսի վարդապետութեան ու անոր զարմանագործ նշաններուն վրայ լսածները ինչպէս մեզի հաղորդելու փոյթ մ'ունէր,, :*)

“Բայց սիրելի մայր, մանաւանդ ան իր ետքի

* Ս. Իրենէոս ի թուղթն առ Փլորինոս :

Տրաժարականը տուած ժամանակ՝ խօսածներուն ա-
կանջալուր չեղար: Իր առջին նահատակուած երիտա-
սարդ Գերմանիկոսին ու անոր ընկերացը գիակներուն
քովէն անցնիլն, ու Կուադրատոսին առջին կենալը,
չտեսար: Արտաձայն խօսքերով՝ որոնք բոլոր թէատ-
րոնին մէջ լսուեցան, Ստատիոս Կուադրատոս Տրա-
մայեց իրեն՝ որ Կայսեր բախտին վրայ երգում ընէ,
դՔրիստոս արհամարհէ որ զքեզ ազատեմ, կ'ըսէր:
Երգում ըրէ ու արհամարհէ: Հանդիսատեսները աս
ձայնին վրայ անբարբառ մնացին, ամէն մարդ դէպ 'ի
յառաջ սկսաւ քալել, բայց Պողիկարպոս մեղմ ու
փառաւոր ձայնով մը սկսաւ պատասխան տալ: Աւթ-
սունուվեց տարիէ ի վեր է՝ որ անոր ծառայութիւն
կ'ընեմ, ինծի վնաս մ'ըրած չունի: Մանաւանդ թէ
անոր ներհակ իրմէ մեծ բարերարութիւններ ալ տե-
սած եմ: Ի՞նչպէս կրնամ իմ թագաւորս թշնամա-
նել, որն որ զիս փրկած է: Գուն ինծի կրակ կը
սպառնաս, որն որ քիչ մը տեսն մինակ կը վառի ու
ետքէն կը մարի: Բայց դուն հանդերձեալ դատաս-
տանը կը ճանչնաս ու այն անշիջանելի հուրը գիտնս,
որ յաւիտենական արգարութենէն կը վառուի՝ ան-
աստուածները տանջելու համար: Ժողովուրդը՝ դա-
տաստանական քննութեան շուտով լմրնալուն մեծ
փափաքով կ'եռար: Արդէն մէյ մը արիւն տեսած
էր, ու նորէն սպանման փափաքով լեցուած: Թէատրո-
նին վերին նիստէն մէկէն ձայն մը լսուեցաւ որ՝ փայտ
դիզուի, եւ բիւրապատիկ արձագանգով գոչեց ժո-
ղովուրդը, փայտ դիզեցէք, անոր այրիլը տեսնել կ'ու-
զենք: Շատերը մերձակայ բաղնիքներն ու խանութ-
ները վազեցին. ու ահագին փայտակոյտ մը դիզուե-
ցաւ: Հեղ մ'ալ Պողիկարպոս հայեցուածքը իր սրտա-
կիցներուն վրայ պարտցուց, ու գետինը ծռելով կօ-
շիկներուն կապերը քակեց, գօտին մէկ դի դրաւ,
ու դէպ ի փայտակոյտը սկսաւ նայիլ:

Կուադրատոս նշան տուածին պէս՝ ծերունին սըր-
տոտութեամբ մագլելով փայտակոյտին վրան ելլելէն
ետքը կայնեցաւ. ու իր արծաթեզօծ սպիտակ մազերը
բազմածալ զգեստին վրայ սփռեցան: Չեռքերը կապուե-

լու ժամանակ՝ իր պատուական գլուխը երկինք վերցուց։ Երանական հեզիկ հանդարտութեան պատկեր մը կ'երեւար վրան, այնպէս որ ճարտարներէն ոչ որ նմանը կրնար կերպաւորել։ Զինուորներէն մէկը զինքը ցիցի կապել ուզած ատեն՝ հեզութեամբ ըսաւ անոր. Ա՛լ ասի հարկաւոր չէ։ Արակի դիմացը համբերելու զօրութիւն տուողն՝ աս փայտակուտի վրայ անշարժ կենալու ուժն ալ կու տայ։ Ետքը մահուան աղօթքը սկսաւ ընել։

“Տէր Աստուած ամենակալ, Հայր Արդւոյ քո սիրելւոյ եւ օրհնելոյ Յիսուսի Քրիստոսի, որով ընկալաք զգիտութիւն քո, Աստուած հրեշտակաց եւ զօրութեանց եւ ամենայն արարածոց եւ համօրէն աղգին արդարոց, որ կենդանի են առաջի երեսաց քոց. օրհնեմ զքեզ՝ զի արժանի արարեր զիս յաւուրս յայսմիկ եւ ի ժամուս՝ հաղորդութեամբ վկայիցն քոց լինել կցորդ բաժակի օծելոյ քո ի յարութիւն կենացն յաւիտենից հոգւոյ եւ մարմնոյ, անեղծութեամբ հոգւոյն սրբոյ. ընդ որս եւ ես եղէց ընկալեալ ի քէն պարարտ եւ ընդունելի պատարագաւ, որպէս պատրաստեցերն եւ յառաջագոյն յայտնեցեր եւ լցեր անխաբդ եւ ճշմարիտ Աստուած։ Ասն այնորիկ գովեմ զքեզ վասն ամենայնի, օրհնեմ զքեզ եւ փառաւոր առնեմ զքեզ հանդերձ յաւիտենական երկնաւորն Յիսուսիւ Քրիստոսիւ Արդւով քով սիրելւով, ընդ որում քեզ եւ Հոգւոյն սրբոյ պատիւ, այժմ եւ յաւիտեանս. Ամէն, , , ,”

“Ըն ներկայ գտնուող հաւատացեալներէն ոմանք, ըսաւ Սերափիիկէ, լուութեամբ իրեն հեա կ'աղօթէին, մէյ մ'ալ յանկարծ բոց մը գէպ ի վեր սկսաւ բարձրանալ, ժողովուրդը խոր լուութեան մէջ ձգեց։ Եւ ինչ սքանչելիք. ան վեր ծառացող բոցը սուրբին չորս գին հովէ ուռած մեծ առագաստի մը պէս կ'երեւար։ Ժողովուրդեան մէջ ահուդողի ձայներ սկսան խորունկէն լսուիլ, եւ՝ աս զարհուրելի վճռոյն համար Աստուծոյ ձեռքը յայտնի կ'երեւայ, կ'ըսէին։

Վիմացը բարձր կայանի մը վրայ կեցած էր բղեաշխը՝ իրեն առանձին տաղաւարին մէջ։ Ասիկա

երբոր տեսաւ որ Պողիկարպոս կրակէն անվնաս մնաց, քովի դահիճներէն մէկուն նշան տուաւ: Ամէնքը աս նոր հրամանին կը սպասէին: Այրկեան չտեւեց անմիջապէս կատարիչ* ըսուող դահիճը գաղանաբար փայտակոյտին վրայ ցաթկեց, ու իր շողացող դաշոյնը կուրծքին զարկաւ: Պողիկարպոս դեռ հատկելեալ շնչով անշարժ կը կենար, իր մթագոյն արեան վտակը պատմուճանին վրայէն օձաձեւ կը սողոսկէր ու շէջով բոցերուն վրայ կ'իջնար: Աերջապէս քիչ մը վար հակել սկսաւ, աչկունքը խոնարհեցուց, — եւ իր մեծ սիրտը հատաւ: Երբոր բոլորովին վար ինկաւ՝ կրակը մարմինը սպառեց:

Կէս օրէն ետքը ժամը երկուքն էր Ապրիլի 25ին,:

Աս ըսաւ ու լռեց...: Սերափիկէին սրտին սաստիկ յափշտակութիւնը քանի մը վայրկեան դեռ վրան կը տիրէր: Գլուխը դէպ ի իր մօրը վզին ծռեց, եւ իր թխագոյն մազերը՝ անոր դեղընցած պտերուն վրայ սգոյ քող մը կը կազմէին:

“Օ մեզ քիչ մը մխիթարենք”, ըսաւ Քարիտանէ պլայլած ձայնով. “Պողիկարպոս իր կենաց պսակին հասաւ. անխոնջ մարտիկ մըն էր, շաբաթական հանգիստը հիմակ իրեն համար սկսաւ”:

“Ա՛յ, իրաւ շաբաթ էր”, ըսաւ Սերափիկէ, “անոր մեռած օրը, եւ արեւմտեան Եկեղեցին՝ նոյն օրը աւագ շաբաթի մէջ էր”:

Աւ մտածելով որ գուցէ ինք Սերափիկէ ալ քանի մը օրուան մէջ նոյն յաւիտենական հանգիստը կրնայ մտնել, աս խօսքերն աւելցուց. “Իւրաքանչիւր մահկանացուի կեանքը՝ աւագ ուրբաթ օրուան դառնութիւն ու մահուան անձկութիւն մըն է, մարտիրոսութիւնը անցուցածին պէս, մարմինն ալ շաբաթական հանգիստը շիրմին մէջ կը գտնէ, հոն փառաւոր զատկի մը առտուան սպասելով”:

Սերափիկէ պատմութիւնը յառաջ տանելով, “ի վերայ այսր ամենայնի”, ըսաւ, “ամբարիշտ ժողովուրդը նոյն արին նահել դէպքը կատարելէն ետքը, չաստուածոց իբրեւ մեծ հատուցում մը բրածի պէս՝ հաճութեան ու բերկ-

* ConfeCTOR.

րութեան ձայներով, Աեցցէ՛ հռոմէական արդարութիւն, սկսաւ աղաղակել, ու իրենց բզեշխին երկայն ու բարենշան օրեր մաղթել, իրենք ծափահար ցնծում կ'ընէին, մենք ալ բարձրաձայն լայէն կը փղձկէինք :

Մենք կսկծագին սրտիւ՝ նոյն մարտիրոսական մահուան հանդիսատես ըլլալէն ետքը, խարոյկին առջին կեցած մաղմաղ մոխիրը կը զննէինք, մեր անգին հօրն ածուխ կտրած ոսկրորոտիքը կընկատէինք : Ժողովուրդը ցրուեցաւ գնաց. մենք մնացինք, կարծէինք որ նոյն սուրբ մոխրէն Պողիկարպոս փիւնիկ հաւու մը պէս նորէն պիտ'որ յառնէ, եւ իր թեւերն իր որբ մնացող զաւակացս վրայ պիտ'որ տարածէ : Սուրբին հողաթափները, գաւազանն ու գօտին գեռ գետինը կեցած էին, ու ոչ ոք անոնց ձեռք դպցուցած էր : Մենք աս ծանրագին յիշատակները ժողվելու փութացինք, արդէն սանդալներն ու ցուպը ոմանք ձեռք անցուցած էին, գօտին ալ ես ձեռք ձգեցի : Բայց նոյն վայրկենին մէջ ետեւէս ձեռք մը երկընցաւ, զիս բռնեց, ու անողորմ ձայնով մը աս խօսքերը մըմընաց. Հոս ահա, հոս են անոնց թունաւոր սերմերն. ետքէն ասոնցմէ ուրիշ նոր բողբոջներ պիտ'որ ծլին, ըսելն ու գօտին ձեռքս պլլելը մէկ եղաւ. զիս կապեցին ու ամփիթէատրոնին մութ սենեակներէն մէկուն մէջ դրին :

Ըս է աւասիկ, սիրելի մայր, նոյն ըսած գօտիս. որն որ ձեռքս իբրեւ անգին յիշատակ մնաց, անասի, մայր, ասոնք ալ վրան սուրբ արեան բծերն են, ան ու քու շրթանցդ համբոյրներովը ծածկէ, :

Քարիտանէ աս նշխարքը մեծ գորովով մը պագաւ. վրան թափած արցունքներն՝ այնչափ Պողիկարպոսին համար չէին, որչափ իր ազնիւ դասերը համար, որուն գլխէն անցնելիքը՝ շատ քիչ օրէն մօտալուտ կը գուշակէր :

Սերափիկէ գօտին յանձնած ատեն՝ մայրը հարցուց՝ որ «մէկզմէկ երբ մէյ մ'ալ պիտ'որ տեսնենք,» :

«Ղըկնաւորը ուղելուն պէս,», պատասխանեց դուստրը, եւ իր առջի խօսքերուն դառնալով ըսաւ. «Աս բանտը բերուած ժամանակս, ճամբան բարե-

կամներէս մէկը ինծի հանդիպեցաւ, Իրենէոս քահանան էր ան, Պողիկարպոսին ամենասիրելի աշակերտը: Ասի զիս ճանչցաւ, ու ինծի մօտենալով սկսաւ աս խրատները խօսիլ: Փրկութեան վարդապետութիւնը պահէ, որն որ հոգին սուրբ քու սիրտդ դրոշմած է:*) Ո՛հ ես զանոնք պիտ'որ պահեմ, մինչուկ ետքի շունչս պիտ'որ պահեմ,,:

Ասոր վրայ Քարիտանէն մէյ մ'ալ նորէն հարցուց, որ "ե՞րբ մէյ մ'ալ պիտ'որ տեսնուինք, ո՞վ մէջերնէս յառաջ պիտ'որ երթայ, դ՞ու՞ն թէ ես,,:

Սերափիկէ աս հարցման ժամանակ՝ իր մօրը սրտին անձկութիւնը դիտեց իմացաւ. ու ձեռքէն բռնելով պատասխան տուաւ՝ որ "Մեռնիլը պիտ'որ մեռնինք, երբ որ Աստուած կ'ուզէ. չէ թէ երբոր մարդիկ կը գուշակեն, ինծի համար, մայր, սիրտ մի յոգնեցըններ: Ես դեռ պիտ'որ չմեռնիմ: Աստուծոյ եռանդագին հառաչեցի, որ զիս դեռ իր յաւիտենական տունը չդարձընէ: Վիշտ կրել կ'ուզեմ, բայց մեռնիլ չէ: Յանկութիւնն ու փափաքը սրտիս մէջ դեռ կ'եռան. կենարարին վարդապետութիւնը, անարատ վարուց հայելիի մը մէջ աշխարհիս ցուցընել կ'ուզեմ, գէթ քանի մը անհաւատներուն պատմել՝ որ Ամենակալին սէրը մեզի համար ինչեր ըրած է: Աս գործքը լմննալէն ետքը՝ աս կենաց տեսարանը սիրով կը ձգեմ: Աստուած ձայնիս լըսեց. զուարթունը ինծի յայտնեց . . .,,:

Աս միջոցին բանտին դուռը կը խառնուէր, խիստ դժբախտոց մ'է սկսաւ, դուռը մէկէն բացուեցաւ: Բանտապանը Քարիտանէն խստիւ կը յանդիմանէր, որ դեռ հոն է. ինչո՞ւ այսչափ կ'ուշանայ. ու ստիպեց որ ալ շուտով հեռանայ. իր զաւկին եւ ո՛չ հրաժարական մը տալու ատեն կը թողուր:

Քարիտանէի դուստրը նորէն առանձին մնաց: Ան հարցումը նորէն մտքին մէջ տեղ սկսաւ ընել. ,,Ո՞վ մեզմէ ամենէն յառաջ հոսկից պիտ'որ երթայ,,: Բայց ասոր պատասխանը իրեն մտմտուք մը չէր պատճառեր:

* Իրենէոս ընդգէմ հերետիկոս. Գիրք Գ. ԳԼ. Դ.

Ատքը գեղեցիկ պտուղներուն սկսաւ նայիլ, զորոնք իր մայրը հոն թող տուած էր: Խնձորներէն մէկը սկսաւ ստրկել, մէջէն քանի մը ոսկի ելաւ, որոնք անտարակոյս ան դիտմամբ մէջը պահուած էին, որպէս զի օրիորդը այն դաժան ծառաներուն դառնութիւնը մեղմացընէ՝ արիւնահեղ հրամանը գործադրած ժամանակնին: Սերափիկէաս անուշ պտուղներէն մէկուն համը սկսաւ նայիլ. բայց կերած ժամանակը կը կարծէր թէ նոյն պտուղներուն քաղցր հիւթերուն հետ մօրը սէրն ալ կոկորդը կը քաղցրացընէր:

Բանտապանը քարիտանէն դռան առջին երկայն բռնեց, սկսաւ անոր հետ խօսիլ:

«Գուն, ըսաւ, կարծեմ խոստմունքդ մոռցար. զքեզ ներս խոթած առենս բան մ'ըսած էիր. փառաւոր զմիռուխտի մը խօսք կար, չե՞ս յիշեր, ինձի պարգեւ մը տայիր պիտ'որ: Ո՛ր են գոհարներդ»:

Քարիտանէն անոր իրաւունք տուաւ. «քեզի պարգեւ մը խոստացած եմ, որն որ աւելի կ'աժէ քան թէ բոլոր երկիրը, լուսնէ ու աստղներէ աւելի: Աս գանձերը հաւատոյ խորհուրդներն են, զորոնք ընդունողները, ազատ մարդիկ, իշխան ու թագաւոր կ'ըլլան: Հա՛ եկու, աս խորհուրդները կ'ուզեմ քեզի հաղորդել»:

«Մոլի, — գնա՛ սըկից. ի՛նչ. ինձի Ապողոնին խաղը կ'ուզես ձեւացընել, որն որ երբեմն Փոլսեացւոց թագաւորին չուխտ մը երկայն ականջ կ'այցուցած էր: Զիս ծիծաղելի Միդաս թագաւորին տե՛ղ կ'ուզես դնել: Զէ՛ չէ, խաբուողը դուն պէտք է որ ըլլաս, չէ թէ ես: Հոն վերը կը լսե՞ս գերիներու շշընկոցը: Բրածե՛ծ ըլլող քրիստոնեաներուն ձայնն է: Գուն ալ խելագար կնիկ, ան քրիստոնեաներէն ես. ու քիչ մը չարաչար տեսակներէն կ'երեւաս: Գիտեմ, արդէն բանտին մէջ բոլոր խօսածնիդ լսեցի: Աս իրիկուն քեզի համար համրուած հնչական ոսկիներուն ձայնը պիտ'որ լսես»:

Աս ըսաւ, ու դժբախտ կնիկը խուց մը խոթեց, դուռը կ'անըկէն այնպիսի կտաղութեամբ մը զարկաւ՝ որ բանտին բակերը դռնչացին:

անուս մարդ մին էր. անապաշտութեան դիւրամէտ, միշտ դիւթութեան զօրութեանը վրայ կը մտածէր, եւ ան քուրմին խօսքերուն նայելով, կը կարծէր որ միշտ աս զօրութիւնը քրիստոնէից ձեռքն է: Տարութիւնը շատցածին չափ՝ իր սրտի անձկութիւնն ալ կ'աւելնար: Մէկէն կեցած՝ արեւուն մանելը կը դիտէր: «Բնութեան այն երեւոյթը կը տեսնես», կանչեց, ու գողգողալով քուրմին ձեռքէն բռնեց: «Նայէ՛, ըսաւ, ի՞նչպէս երկինքը արտաքոյ կարգի կարմրութիւն մը պատած է: Ասի անկարելի է որ մեզմէ բաժնուող արեւուն՝ գոյն զգոյն երանգներուն մէկ խաղալիկն եղած ըլլայ, ասի չարագուշակ արկածքի մը նշան է: Նայինք աստուածները մեզի ի՞նչ պիտ'որ խաւրեն»,:

Ամենէս լռիկ հանգարտութեամբ մը աս տեսարանը կը զննէր: Եթերի կարմրութիւնը երթալով կը բարձրանար. եւ որչափ դէպ ի վեր կը նայէր, երկնից կամարին մէջ տեղը՝ մանուշակագոյն երանգ մը կը ստանար: Հորիզոնին վրայ երկնից չորս կողմը բաց գեղնագոյն գիծ մը կը ձգուէր, որն որ արեւելեան կողմը տկարագոյն էր: Աս երեւոյթը երթալով նուազեցաւ. ծովին վրայէն երկնագոյն փոքրիկ շամանդաղի ամպեր կը բարձրանային, որոնք երթալով վայրկեանէ վայրկեան խտանալու վրայ էին: Օդին բարեխառնութիւնը երթալով դաժան կերպարանք մը կ'առնուր. ու աշնանային վերջի օրերուն կծուութիւնը կը զգացուէր: Կապուտակագոյն ամպերը ծովու հայելոյն վրայ՝ ուրուական ոգիներու պէս ասդին անդին կը կաքաւէին, իրենց բազուկները միշտ դէպ ի վեր տարածելով, մինչուկ որ եթերին առջի գոյնագոյն ներկուածքը բոլորովին մէկ գի պարզեցին: Ետքը մէկէն յանկարծ երագութեամբ մը դէպ ի քաղաք խոյացան եւ Զմիւռնիոյ վրայ կենալով, անոր շրջակայ բլուրներուն ու ձորերուն վրայ տարածեցան:

«Արդեօք զիս կը խաբեմ», հարցուց բզեշխը, եւ կամ իրօք թանձրագոյն մշուշի մէջ կ'երթանք, որ այսչափ պաղ կ'ըլլայ, շատ պաղ, տներնիս փութով, տներնիս փութով, տեղերնիս դառնանք: Գլուխնիս գալիք կայ, ես ալ աւելի ահագին բաներ կը

սպասեմ, ժանտախտ, կամ պատերազմ, կամ ընդ-
հանուր աւեր,,:

“Վաղթական սուրբերն են,, ըսաւ Ասմենէս,
“որ բնութեան աս զարմանալի հրաշալիքը կը պատ-
րաստեն: Ես արդէն կ'իմանայի կոր, որ ասոնք տե-
ղերնէն խախտելը՝ այսպիսի արտաքոյ կարգի երեւոյթ-
ներ յառաջ պիտ'որ բերէ: Ասոնք երբեմն Փարաւոն
թագաւորին օրերը Եգիպտոսէն փախած ատեննին՝
ասոր նման բաներ անոր գլուխն ալ բերին, նա եւ
կարմիր ծովն ալ երկու կիսեցին, որ ցամաք երկրի
վրայէն քայելու պէս անոր վրայէն կարող եղան
անցնիլ: Փարաւոն ու իր զօրքը ծովուն ալիքներուն
մէջ կորսուեցան այն փախստականները հալածել ու-
զելով: Կարելի է որ իրենց աս անգամուան ճամբոր-
դութիւնն ալ այսպիսի չարագէտ արկածներով
պիտ'որ ըլլայ,,:

Այսպիսի հոգերով ու մտմտութներով բաժ-
նուեցան երկուքն ալ: Քուրմը իր տունը գնաց, բը-
գեշին ալ իր խորհրդականաց քով քաշուեցաւ, ա-
նոնցմէ հանդարտեցուցիչ բան մը լսելու համար:
Հազիւ թէ Հերովդեսին պալատը մտաւ, մէյ մ'ալ
տեսաւ որ Զմիւռնացիներէն խել մը սինլքոր մար-
դիկ, աղաղակ շշնկոց փրցընելով եկան իրարու վրայ
գլտորեցան, ոմանք բաց դաշտ կը փնտռէին, ոմանք
ալ նաւահանգիստը, ինչու որ հոստեղացի ծերերը
նշաններէն արդէն իմացած էին, եւ յիշեցին որ այս
կերպ կանխագոյն նշանները երբեմն մեծագոյն կամ
փոքրագոյն երկրաշարժներ յառաջ բերին:

Կուագրատոս իր սրտակից մարդիկը քովէն
չէր զատեր: Իր պալատը քաղքին դղեկին մէկ թեւն
էր, անանկ ամուր շինուած՝ որ ամենեւին վտանգէ
մը վախ չկար: Քացը կենալու չէր վտահներ, ինչու
որ ժողովրդեան անսովոր գրգռութենէ վախ կար.
վասն զի քրիստոնէից դէմ բռնած ընթացքէն բնակ-
չաց մեծ մասը ոտք ելած էր: Իսկ ինք ապահովու-
թեան համար իր պալատը քաշուած, մեծ անձկութեամբ
խուցերուն պատուհաններէն կը նայէր, երբեմն աս
սենեակը, երբեմն ան դատիկոնը կը վազէր, եր-

կինքին աստեղաղարդ կամարը անդադար զննելու հետ էր: Աս ան բղեշխն էր՝ որ երբեմն բարձրավիզ գուռուցութեամբ գահին վրայէն կրկեսին մէջ ոգորողներն, առիւծներէն պատառուողներն եւ կամ դատապարտուած քրիստոնեայքը՝ գազանաց առջին նետուած ժամանակ կը զննէր. հիմայ կնամարդի վատութեամբ կծկած քաշուած, տան խորշ մը մտած, երեսը կը պահէր, ինչու որ իր կենաց վտանգը մտալուտ կը գուշակէր:

Իր ընկերները աւելի սրտոտ կ'երեւային: Որովհետեւ արձակ բնութեան զննութիւնն ընել կ'ուզէին, ուր լուռ ու անշունչ հանդարտութիւն մը կը տիրէր. ու աղէկութեան բարենշան գուշակ կ'երեւար, ամէնքն ալ ձի հեծած քաղքէն դուրս սիրուն գաշտավայր մը մտրակեցին: Աէս գիշերը մտա էր, պայծառ երկինք, լռիկ հանդարտութիւն մը կը տիրէր: Որչափ ալ խորունկ ականջ կը կախէին եւ սուր մտադրութիւն կ'ընէին՝ ստորերկրեայ խուլ սօսաւիւն մը, որն որ օդին դուրս ժայթքելէն յառաջ սովորաբար կը պատահի, չէր լսուեր: Մէջերնէն մէկը ահանջը գետինը դրաւ, յանկարծ մէկէն վեր ցաթկեց, խորունկէն, շատ հեռուէն անորոշ ձայն մը կայ, ըսելով: Մէկալ ընկերներուն ալ սկսաւ նոյնը հաւանական երեւալ: Մէկէն երեւակայութիւննին տարնալ սկսաւ, գեղերէն մէկուն պահապան շան մը գլղղիւնն եղած ըլլայ կ'ըսէին, գուցէ ամարանոցի մը վերնայարկը երկնից յարդգողէն դէպ ի վար բոց մը ցուլացաւ, ու կանոնաւոր հնչմամբ մը անոր զարկաւ: Հովտին կողմնակի դիէն շան հաջելը կը կարծէին որ նոյնին նշանակ մըն է, որն որ երթալով կը սաստկանար, ու վերջապէս գողգրղալով հեծեծագին կաղկանձել սկսաւ: Մի եւ նոյն ատեն գեղին զանազան տներէն շներու կնձկնձալը կը լսուէր:

Մտմտութեամբ սկսաւ առնուլ, ու գլուխնին շարժելով՝ «զարմանալի երեւոյթ», կ'ըսէին, «եւ աւելի զարմանալին ան է՝ որ ամէն պարտէզներէն ու յարկերու տակէն ձայն կ'ելլէ»: Չիերն ալ վրնջել ու խխնջել սկսան, կ'երեւար՝ որ շներու կաղկանձիւնը

անոնց վրայ ալ ազդեցութիւն ըրած էր, ոտքերնին կը դռփէին, կը քստմնէին, բաշերնին կը անկուէր, խրաչել, փրփրալ, գլուխնին առնուլ վազել, անսանձ ըլլալ կը ջանային:

Բաղքին մերձակայ տեղերուն՝ աս միջոցիս մէջ՝ բնակչաց մեծ մասը, անձկութեամբ սպասելէն յոգնած, քաղքին ծովախորշերէն ու նաւերէն տներնին դարձած էին: Յաջողամիտ ու բանէ հասկըցող մարդիկներէն ոմանք բնութեան աս վախցուած երեւութիւն վրայ կը ծիծաղէին, եւ կ'ուզէին գիտնալ որ նոյն նշանները արգեօք յաճախ անգամ տեսնուած են՝ առանց գէշ նշանակութիւն մը ունենալու: Չգուշաւոր յառաջատեսներէն ոմանք ալ քարէ կամ մետաղէ գնտակներ առին ու ծայրէն դերձան կամ երկայն մազ անցուցած, սենեակներնուն առաստաղէն կախեցին որ ամենաթեթեւ շարժում ալ որ ըլլայ գիտեն ու փախչելու ատենը իմանան: Բայց նոյն փոքրիկ գնտակները անշարժ մնացին: Բնութիւնը զննողները աներու տանիքը ելած էին. բայց խոր լուծութիւնը չորս կողմը տիրած էր. միայն հոս հոն ոտնաձայն մը կը լսուէր. մարդկանց ձայներ, կղպակներու շառաչիւն: Պահապաններու թիւն աս միջոցին որչափ ալ շատ էին, սակայն եւ այնպէս գողութիւններու առջեւն առնելու չէին բաւեր, որոնք գիշերուան մթութիւնը ու բնակչաց շփոթութիւնն ու սարսափը յարմար առիթ մը կը սեպէին:

Լսմենէս՝ (Իսիսի քուրմը) վտանգը անցուցածի մը պէս անհոգ տուն դարձաւ ու տան մէջ շատ բաներ պակսած գտաւ. իր բացակայութեան ատեն՝ տունը գրեթէ կողոպտուած էր: Դուրս վազելու բաց դաշտ մը փնտռելու մտադրութիւնը ու հոգը՝ խելքը գլխէն առած էր, սենեակները ինչպէս որ պէտք էր չէր կղպած, եւ ասանկով իր նոր ու դեռ չգործածած ոսկի բանդիւր գողցուած էր: Մեծ դժկամակութեամբ իր չաստուածուհին քամահեց, որ իրեն սեպհական ստացուածքին վրայ անանկ անփոյթ ու անհոգ եղած է, բարկութենէն կատղած սուր գանակ մը առած, վար վազեց գէպ ի գաւիթը,

մտածելով որ կարելի է նոյն նենգաւոր գողը ուրիշ փորձ մ'ալ ուզէ ընել: Հոն երկայն ատեն սպասեց:

Հատ զարմացաւ երբոր իր ամբոխած երեւալ կայութեանը ներհակ ամէն բան զուարթ հանդարտութեան մէջ տեսաւ, նա եւ կալանաւոր քրիստոնէից խումբ մ'ալ վահագն ըսուած ճամբէն դէպ ի ծով կը քալէին: Ասոնք իրենց ինչքն ու ստացուածքը, աւելի ապահովութեան համար՝ նոյն իրիկուն նաւերու մէջ կը կրէին, ու դէպ ի ընդարձակը բացուիլ կը մտածէին, որպէս զի թէ որ երկրաշարժին յառաջ ուրնէ տուած նշաններն երթալով սաստկանան, ապահով ըլլան: Սերափիկէի մայրն ալ ասոնց մէջն էր: Բազմութիւնը մեծ դրան կամարը կը հասնի, առջեւ նէն երկու կանթեղ կ'երթար. կալանաւորները փոխն ի փոխ կ'երգէին, բոլոր ճամբան ասոնց մեղմ ձայնէն կը հնչէր: Ամենէս ականջը սիւնի մը դրած մտիկ կ'ընէր. լսեց որ «Օրհնեցէք զՏէր ամենայն ազիւք», կ'երգէին:

«Ասոնք են ահա զաստուած հայհոյողները», մըրմըռաց քթին տակէն, գող ու աւազակները, մարդածախ գազանները. Չմիւռնիոյ ամէն կերպ չարագէտ արկածներու պատճառքը — ահա հիմակ կը մօտենան, — նեմեսիս * զասոնք իմ վրէժխնդրութեանս մատնեց, — հա՛ սանգարամետաց հոգիներուն արժանաւոր զոհ մը», — եւ իր դանակը շողացնելով, դէպ ի կամարը մօտեցաւ: «Գողեր, աւազակներ, բանդիոս կ'ուզեմ, հոս, հոս օսկի բանդիոս կ'ուզեմ», . . . — — — անդունդէն սաստիկ բոմբիւն մը ու ահագին ձայն մը լսուեցաւ, թնդիւն ու գղղղիւն, — կամարը կործանեցաւ, փլաւ, Ամենէս ալ տակը թաղուեցաւ, մնաց:

Ստորերկրեայ տարրը կայծակի երագութեամբ ճամբու երկայնութիւնը շրջշրջելով հոյովեցաւ. տունէ տուն երեբում տատանում պատճառեց, պալատները կը գողային, բարձր աշտարակները գլուխնին կը ծռէին, գղեակները կը ճեղքուէին, ճամբաները տակնուվրայ եղան, քաղաքը աւերակ դարձաւ:

* Չաստուածուհի վրէժխնդրութեան:

Ամէն մարդ դուրս ցաթկելու եւ խուսափելու կը նայէր. որը օգնութիւն կը պոռար. որը թաւալգըր կու գար: Մէկ մեծ մաս մ'ալ գոչիւն ու վայնասուն փրցընելով նաւերը կ'ապաստանէին, ուրիշները շրջակայ դաշտերը կը ցրուէին, ու բարձր լեռներու վրայ իրենց ապահովութիւնը կը փնտռէին: Ամէն մարդ ոտքի վրայ էր, ամէն բան շարժման մէջ էր, իրար կը կոխկրտաէին, մոլթը իրենց արհաւիրքը ու զարհուրանքը կը սաստկացընէր: Յուսահատութիւնը ծայրէ ծայր տիրած էր: «Գուք Աստուածք օգնութեան, օգնութեան հասէք», կ'աղաղակէր ժողովուրդը. «ալ կորանք, ալ լմընցանք»:

Վաղքին վերի դիերը դեռ քանդուած չէր, այն միապաղաղ կռածոյ շէնքերը, գլխաւորաբար տաճարները նոյն կատաղի զօրութեան առջին ալ դիմացան: Շատերուն սրտի անձկութիւնը ու սարսափը, նուիրական տեղեր չաստուածոց արձաններու քով ապաւինելու ստիպած էր, Հոմերոսի մեծ տաճարին մէջ բազմութիւնը խիտ առ խիտ դիզուած էին:

Յանկարծ երկրորդ ու երրորդ հարուածը վրայ եկաւ. ու քիչ մը շունչ տալէն ետեւ, խուլ դոփիւն մը սարսեց ու դողացուց անձուկ ու նեղ փողոցներն ու քաղքին ամենէն հեռու կողմերը տարածեցաւ. — Զմիւռնիա՛ իր քանի մը մասերն ի բաց առեալ, բովանդակ կործանեցաւ:

Ղմուկն ու շփոթը վերջի ծայրն հասաւ: Գիզուած փլատակներուն համար փախչելն ալ անկարելի եղաւ: Ամէն մարդ ինք զինքը նեղ անձուկի մը մէջ փակուած բռնուած տեսաւ: Կնկտիք ու մարդիկ, իրենց տներուն մնացորդներուն տակ ինկած կը ճչէին. ահն ու երկիւղը խելքերնին առած էր: Ճմլած ջախջախուածներէն հարիւրաւոր անձինք փողոցներու վրայ փռուած էին, վիրաւորաց թիւն ու համրանքը չկար, ասոնց հեծութիւնն ու կոծը ամենուն սիրտը կը զկծեցընէր. կէս ջախջախուողներն ու պատերու տակ կէս թաղուողներն իրենք զիրենք չէին կրնար ազատել:

Չեոքը ջահ մը անցընել կրցողը, իր ճամբան կրնար յառաջ տանիլ պրծիլ. բայց շատ տեղ ան ալ

անկարելի կ'ըլլար, ահագին փլատակներուն ու վերելած փողոցն ու շոգւոյն պատճառաւ: Իսկ ուր որ աւերն ու քանդումը ճամբաներ ու հրապարակներ բանալով անցուդարձը քիչ մը դիւրընցուցած էր, չորս կողմը տիրող մթագնութեան մէջէն ջահերուն արիւնաներկ կարմրութիւնը նորանշան տեսք մը կ'ընծայէր: Բայց վառուած ջահերով անհաստատ մէկ դիէն մէկալ դին շարժիլն ալ, ինչպէս նա եւ տներու մէջ բաց կրակարաններու, ամաններու ու ճրագներու մէկէն կործանիլ փլչիլն ու փշրիլն ալ ուրիշ զարհուրելի հետեւութիւն մը յառաջ կը բերէր: Քաղքին գրեթէ ամէն մասին մէջ կրակ ինկաւ ու զարմանալի երագութեամբ չորս դին գտնուող տները փորնկցուց: Ար կարծուէր որ վերնայարկէ մը ելած ըլլայ: Այսպէս քիչ ատենուան մէջ քաղքին վերի մասն ալ բոցերու հեղեղ մը ձեւացաւ: Ամէն մարդ մէյմէկ նոր դժբախտութեան արկած մը կը պատմէր, ալ կը կարծուէր՝ որ աշխրաբիս կատարածն հասած է, ու երկրիս շրջապատը հրով սպառի պիտ'որ:

Ստատիոս Կուադրատոս բղեաշխը կը կարծէր որ իր ապարանքին մէջ ապահով է. բայց անոր յոյսն ալ պարապի ելաւ: Ինչու որ երբոր իր տան վերի դատիկոնը ծնկան վրայ եկած իր աստուածոցը հեծեծելով կ'աղաչէր՝ որ իրեն խնայեն, անզգալի երագութեամբ մը պալատը կայծ մը ինկաւ ու առաստաղը լուսաւորեց: Գժբախտը զարհուրած ուր փախչիլը չէր գիտեր. վերջապէս ինք զինքը այնպիսի տեղ մը ձգեց, ուսկից ազատելու յոյս չկար: Ինք զինքը վար նետել կը մտածէր, բայց կը վախնար որ կտոր կտոր կ'ըլլայ: Տասը հազար հոռմայեցի սեստերա խոտացաւ զինքը ազատողին, բայց իր ձայնը խուլ պատերը միայն կը լսէին: Արդէն օձաձեւ կրակը գլխին վրայ լեզուն կը խաղցընէր, կը շէր, կը սուլէր ու վրան կը գալարէր. — — ճիշն ու մեղմ՝ հեծեծանքը Կուադրատոսին ոգեսպառ ու հատկըլեալ ետքի շունչերն էին, որն որ ետքէն բոլորովին նոյն կրակին ճարակն եղաւ:

Ս'ինչուկ հիմակ յիշուած աւերին ու քանդումին

ատենը, Զմիւռնիոյ բնակչաց տասներորդ մասին հետ՝
Հոֆերին անուամբ Հոմերոս բանաստեղծին պատուոյն
նուիրուած մեծ սիւնազարդ սրահին մէջ ապաւինող
հազարաւոր մարդիկ, ձեղունը պատրուտելէն ու սիւ-
ները կործանուելէն, բոլոր ջարդ ու փուրդ եղան:
Եւ՝ որն որ անհաւատալի կ'երեւայ՝ նոյն իսկ Հոմե-
րեայ պղնձէ արձանը վարէն վեր ձեղքուած էր *:
Անոնք աւելի բախտաւոր էին, որոնք որ քրիստոնէից
պէս նաւերու մէջ ապաւինած էին, որոնց մէջ Քա-
րիտանէն ալ կը գտնուէր, որոնք ատենին նաւ մտած,
Ժամանակին բաց ծովին վրայ հեռացած էին: Ինչու
որ աս երկրաշարժին ժամանակ ծովը բոլորովին խա-
ղաղ էր: Բայց քիչ մը ետքը կ'երեւայ որ հրաբլի-
խային զօրութիւն մը ծովին տակէն պորտկաց ու այն
ապականութիւնը որն որ ասկից յառաջ պիտ'որ գար,
դժբախտութեան վերջին ծայրն էր:

Սաստիկ ցնցումներէն երկու ժամ ետքը ծովը
Հերմոսի գետաբերաններուն քով ուռիլ բարձրա-
նալ սկսաւ: Թէեւ ջրերու նուազութիւնը կամ տե-
ղատուութիւնը սկսած էր, ի վերայ այսր ամենայնի ար-
տաքոյ կարգի շուտութեամբ մը մակընթացութեան
վերջի աստիճանը հասաւ, փրփրացող ամեհի ալիքները
մինչուկ քաղքին ճամբաները հասան: Քարեղէն
հրուանդանը՝ ուր շուրջ 6000 հոգի ասդին անդին
տարածուած էր, մէկէն ջրով ծածկուեցաւ: Աս ալ
բաւական չէ, ջրերու յոյզն ու սաստկութիւնը անե-
րեւոյթ զօրութենէ մը ան աստիճանի գրգռեցաւ՝ որ
մնացած քանի մը բարձր շէնքերէն ալ վեր ելաւ,
եւ 80 ոտք բարձրութեան հասաւ **: Զմիւռնիա ա-
ւերակ դարձած էր, բնակիչքը պարապ տեղ բոցե-
րը դադրեցընելու կը ջանային, մինչուկ որ ծովու
ջրերուն անընդհատ յուղմունքը բարձր կոհակներովն,
այն բռնկած տեղերուն զարնելով, անթիւ անհամար

* Անեկա «Բնութեան խորհրդածութիւն», բուած վեցե-
րորդ գրքին մէջ աս գէպքը կը յիշատակէ:

** Լիմայի երկրաշարժէն ետքը, (28 Հոկտ. 1746, դիշերը
10¹/₂ մն) ծովը 80 ոտք իր միջին բարձրութենէն վեր ելաւ.
Քատիքսի մէջ՝ 60 · Լիսապոն՝ 40 ոտք:

Տրեղէն սիւներ կազմեցին ու մթազոյն մուխին ան-
դունդը զսպեցին: Ծովը՝ հազարաւոր մարդկան դի-
ակներու աւարն հետն առած, կամաց կամաց սկսաւ
ետ քաշուիլ, ու իր տղմուտ յատակն երեւցրնել: Աս
երեւոյթը զանազան անգամ կրկնուեցաւ. եւ առջի
յարձակման մէջ չհասուցած վնասը՝ երկրորդին կամ
երրորդին կը հանդիպցրնէր: Ամէն տեղերէն աւելի
վնասուածը ծովախորշին կողմն էր, ուր զուարճու-
թեան յարմար տներ ու փառաւոր պալատներ, քիչ
վայրկենի մէջ իրենց խել մը բնակիչներովը մէկտեղ,
բերանաբաց շնչող կամ յօրանջող անդունդը իջան:
Նաւերուն մեծ մասը քայքայած էր, եւ իրենց մնա-
ցորդը քաղքին փողոցներուն թաց հողակոյտին վրայ
դեռ կը ծփային: Թէատրոնին մէջ տեղը, որուն մէկ
կողմը քանդուած էր, բաւական մեծութեամբ նաւ մը
պառկած կը կենար:

Այսպիսի սոսկալի արհաւիրներով անցաւ նոյն
գիշերը, առաւօտը երբոր սկսաւ սպիտականալ, եր-
կիրն ու ծովը իրենց կատարեալ անդորրութիւնը
գտած էին: Ահն ու վախը փարատեցան: Իսկ իրենց
կեանքը ազատողները, թէ եւ բոլոր իրենց ինչքն ու
ստացուածքը կորսնցուցած էին, բայց անանկ ալ իրենք
զիրենք նախանձելի բախտաւոր մարդիկ կը համարէին:
Մէկզմէկ կը գրկէին ու քաշած կորըստնին իրարու
կը պատմէին: Յնծութիւնն ու հեծութիւնը մէկտեղ
կը խառնուէր. ուրախութեան ու հեծեծանաց ձայ-
ներն երբեք ասանկ դառն բաղադրութիւն մը ձեւ-
ացուցած չէն: Մի եւ նոյն տեղը հայր մը իր որդ-
ւոյն դիակին քով նստած կ'ողբար, ուրիշ բախտա-
ւոր երիտասարդ մ'ալ իր նորէն տեսած բարեկամը
կը գրկէր: — —

Արբոր աս տեսարաններն ամէն կողմ կերպ
կերպ իրարու կը յաջորդէին, լերան վերեւը դեռ
միտող պալատի մը աւերակին առջին՝ գունատ ու
սպիտակատեսիլ օրիորդ մը կը պտըտէր, պատմուճանը
ճերմակ, ձեռքը քար մը առած կը տանէր, որուն
վրայէն շղթայ մը դէպ ի վար կը կախուէր: Մէկէն
կանկ առաւ կայնեցաւ. իր սեաւ աչկուկը հանդարտ

ասդին անդին պտըտցընելով, խորունկ մտադրու-
թեամբ մը դէպ ի կործանած քաղաքը կը նայէր, կը
զննէր ու քիչ մը հեռու հայելիի պէս ծովին երեսը
կը նշմարէր: Առաւօտեան արեւուն ճառագայթը ա-
նոր պատմութեանը կը շողացընէր, եւ իր պայծառ ոսկի
նշոյլներով կը նկարէր: Նոյն տեսքը զինքը կ'ապշեցը-
նէր: Բայց իր կերպարանքին վրայ սարսափ կամ եր-
կիւղ չէր նշմարուեր, այլ լռիկ յանձնառութեան
գրոշմ՝ այն կամքին հետ, որն որ երկրագունդը իրեն
ոտքին պատուանդան բրած է:

Իր քայլերը դէպ ի ո՞ր կողմը շտկելու տար-
տամ կ'երեւար. աս միջոցին մէկէն մարդուն մէկը
դէպ իրեն ուղղուեցաւ, անոր խորշումած ճակտին վրայ
դեռ չարագէպ արկածի մը հետքերը կը նշմարուէին
Իրենէոսն էր անի որ շտապով իրեն հետեցաւ ու կեն-
դանի զարմանք մը ցուցընելով ըսաւ. «Ո՞րն էր զո՞ւ
ես, Սերափիկէ: Կալանաւորն ապա՞յ աղա՞տ տեղ մն-
հո՞ւն հո՞ւան զո՞հը դիակաց վրայ պտըտցընէր: Ի՞նչ քոյն է:»:

Սերափիկէ մարդուն աչքը նայեցաւ, ու մեղմ
ծանրութեամբ մը պատասխանեց. «Հա, Իրենէոս, կալա-
նաւոր գերուհին քակուեցաւ: Մահուան երթալու
զրոյցը ինծի ծանուցուելէն ետեւ, բանտին պատերը
մէկը սարսեց, շարժեց, լայն ճեղքուածներ բացուե-
ցան, իմ բանտս իր որմերն բացին, — ես ալ դուրս
ելայ: Հոս կեցեր քաղքի մը աղիողորմ կերպարանքը
կը զննեմ, որուն չնաշխարհիկ փառաւորութիւնը եր-
կրիս վրայէն չիք աչաց աներեւոյթ եղեր է: Քանի մը
չէնքեր դեռ կը տեսնեմ կոր, որ կը կործանին կ'իյ-
նան: Իրենէոս, հոն քանի մը ճամբաներ կ'երեւան,
ահա՛ մօրս բնակած տունը ատի չէ՞ մի, յարգոյ վար-
դապետ, գիտե՞ս արդեօք ո՞ւր է. ո՞ւր է իմ մայրս, որն
որ ամէն բանէն աւելի պէտք եմ փնտռել: — Ար-
դեօք մեռնողներուն՝ չէ՛ նէ կենդանի մնացողներուն
մէջ փնտռելու եմ»:

«Պէտք չես զարհուրիլ, պատասխանեց Իրե-
նէոս, թէ որ լսելու ըլլաս որ ուրիշներուն վատաբախտ
չարիքն անոր գլխուն ալ եկաւ: Բայց չէ, Սերափիկէ,
քու մայրդ կենդանի է, անի ազատած է, բայց ա-

զատած գերութեամբ: Աս գիշեր տեսայ զինքը որ նաւերուն կ'երթար կոր: Ինքը՝ ու իր հաւատակից ընկերները Հոռոմ կը տարուէին: Բայց դուն զքեզ ազատելու մ'ուշանար: Կապանքդ կը ցուցընէ որ դուն գերի էիր,:

Ժամ մը վերջը Սերափիկէ նաւահանգստին մէջ անվնաս մնացած նաւու մը տախտակամածներուն վրայ տեսնուեցաւ, որն որ դէպ ի Յունաստան կը նաւարկէր: Կապերը մէկ դի առնուած էին. ոչ ոք իմացաւ թէ ինչպէս նոյն ճանապարհորդներուն մէջ ինք զինքը խառնած է:

Մէյ մ'ալ դարձաւ նայեցաւ, ալ վերջի անգամն էր, — այն քաղքին մնացորդներուն, ուր չմոռցուելու արժանի մանկութեան օրերն անցուցած ու կրթութիւնը արած էր: Բլրի մը դուրս ցցուած կողմը, կէս քանդուած տնակ մը նշմարեց, բայց արմաւենիի ծառերն, որոնք երբեմն հոն կը կենային, չէին տեսնուեր. նա եւ փոքրիկ պարտեզ մ'ալ աներեւոյթ եղած էր: Սերափիկէ հազիւ թէ աս տեղւոյն իր ետքի հրաժարականը պիտ'որ տար, երեքալ սկսաւ ու մէկէն պատերը կործանեցան. — իր հայրենական տունն էր:

Գ Լ Ո Ւ Խ Գ .

Մետեղղա:

Այն զարմանագեղ հրապուրիչ երկիրը՝ Ատտիկէ, որուն վրայ բանաստեղծներն այնչափ վիպասանեցին, հիմակ մեր պատմութիւնը կարգացողները կը փոխադրենք. ան աշխարհը՝ որն որ երբեմն անուանի զօրավարներու եւ օրէնսդիրներու հայրենի դաւառն էր, փիլիսոփայութեան խանձարուրք, մուսայից օթարան, եւ ուրիշ բարձրագոյն տեսական աշխարհքի մը հաւատացողներու ապաւէնք:

Թէպէտ Աթէնք՝ արդէն իր համբաւուն ծայրը անցած էր, ու ան ատենները կը սկսէր կամաց կամաց վար իջնալու, անոր համար ալ հին ատենուան բոլոր

մտաւոր գիւտերուն ստացումը ձեռքն էր, ու իր հարցը մտածութեանցն ու գործողութեանց գեղեցիկ գեղեցիկ պատուղները կը վայելէր: Ճշդիւ աս ժամանակը Աթէնքի պատմութեան մէջ ամենէն հասուն ու գեղեցիկ ժամանակն էր, այնպէս ինչպէս արեւը մարը մտած ժամանակ՝ ամէն ատենէն գեղեցիկն է:

Ադրիանոս կայսեր ինքնակալութեան ժամանակն ալ դեռ նոր անցած էր: Իր անհուն պետութեան ամէն քաղաքներէն աւելի Աթէնքը սիրած էր: Բոլոր փառաւոր շէնքերը, Ադրիանոսի կամարէն անդին եղող նոր կանոնաւոր ճամբաները, որոնք ամէնը մէկէն իրենց բազմութեամբն ու տարածութեամբը երկրորդ քաղաք մը կը ձեւացընէին, աս կայսեր գործքերն են: Նոյն ատենուան բնակչաց թիւը 180,000ի կրնար հասնիլ: Ադրիանոսի ըսուած քաղաքը, զորն որ վերոյիշեալ (մինչուկ հիմա դեռ աղէկ պահուած) կամարը, հին քաղքին հետ կը միացընէ, Յունաստանի հին պատմութեան զարգացման յայտարար մըն է, որով հոովմեական կեանքը՝ հին Յունաց հետ գիրկընդխառն կապուած՝ ու երկու աղգայնութիւններն իրարու ձուլած էին:

Հին մայրաքաղքէն դուրս, դէպ ի հիւսիսային արեւելեան կողմը, բրգաձեւ, ու հիմակուան ատենս լերկ ու գրեթէ մինակ փշոտ թուփեր բուսցընող լեռ մը կը բարձրանայ, որն որ Վիկայի անկողին կ'ըսուէր: Զրոյցի մը նայելով Աթենաս՝ Աթէնքի պաշտպան չաստուածահին՝ իրեն նուիրուած Ակրոպոլիսի շինութեան համար նիւթեր ու ատաղձ պատրաստելու շատ զբաղած ատենը, Վիկայի անկողինը իր բազկացը վրայ կը տանէր. որի մը իր չորս դին թռչըտելով եկաւ Երիթթոնիոսի ծնունդը իրեն իմացուց: Աթենաս վախէ շփոթած, ձեռքէն նոյն լեռը Աթէնքին առջեւը վար ձգեց հոն՝ ուր դեռ հիմակ կը կենայ:

Աս լերան ստորտը՝ որուն կատարը այցելութեան համար եկող անցաւորներուն քաղքին վրայ տիրող հրապուրիչ տեսք մը կը շնորհէ, եւ մինչուկ հեռուն, դէպ ի կապոյտ ծովը կ'առնու, Յունաց ու Հռովմայեցւոց գերդաստաններու սիգապանձ ու խորխտ

պալատները կը բարձրանային, որոնց մէջը Մետեղլայի՝ յոյն տիկնոջ մը՝ պալատը գուցէ առջինն էր: Աս պալատը Ադրիանոս կայսեր շինել տուած հին ջրմղի կամարաձեւ շինուածքին մօտերը, փառաւոր արքունական դղեկէն քիչ աւելի բարձրագոյն դիրք մ'ունէր, անդղեկէն՝ զորն որ հիմայ ճամբորդները Աթէնքէն դուրս կը տեսնեն ու կը զարմանան: Ադրիանեան քաղքին՝ ինչպէս ամէն շէնքերը նոյնպէս Մետեղլային տունն ալ հռոմէական կերպով շինուած էր, բայց եւ այնպէս յունական ազնուագոյն ճարտարապետութեան արուեստն ալ կ'երեւար: Տան առջեւի գոցուած մասին վրայ՝ որն որ գաւիթ կ'ըսուէր, տան տիկնոջ անունը մարմարեայ տախտակի մը վրայ գրուած էր, մեծ դրան վրայ պղնձի արձան մը կար, որն որ յոյսը կը ներկայացընէր, տակը լատիներէն արձանագրով մը „Dum spiro spero“ = “ցորչափ կը շնչեմ՝ պիտի յուսամ”, գրուած էր:

Իսկէն դուրս՝ գեղեցիկ հագուած գերի մը տան մուտքը կը պահէր: Չեռքը արուեստաւոր կերպով շինուած բոժոժներ ունէր, զորոնք ատենին կը հնչեցընէր, անով դռնապանի մը իշխանութիւն ունենալը ցուցընելու համար: Իր քալուածքը, ստէպ ստէպ ամէն մէկ քայլին շղթան թօթուելը, ապացոյց մըն էր, թէ ինչպէս ամբարտաւանութիւնը ընկերութեան ամէն աստիճանի մարդկան վրայ իշխելու եղանակն ու կերպը գիտէ, մինչուէ ամենաստորին ու անկիրթ՝ դրան պահապանի մը վրայ ալ:

Մետեղլա իր տանը սարիինային * վրայ մեծ հաճութեամբ ժամանակը կ'անցընէր, այսպէս կ'առանուէր այն ձողաբարձ տանիքը, որն որ ոսկեզօծ պատուանդանի մը վրայ հաստատուած էր, վրան մուտ կանաչ օթոցը, կնոջ կերպարանքով ճարտարագործ սիւներու վրայ հաստատուած էր: Մէկ երկայն բաց գունով բեհեզեայ տապաստակի մը վրայ կը բազմէր տիկինը, ու զբաղած էր պզտի մարմարեայ սեղանի մը վրայ գալարուած մագաղաթեայ գիրք մը բանալու: Հռոմայեցի բանաստեղծի մը գիրքն էր, ի-

* Pergula.

րեն սիրած Վիրգիլիոսին՝ որուն հովուական վէպերը
կը կարդար: Մէկէն կ'ելլէր, գրիչ կ'առնէր ու գե-
ղեցիկ խօսքերէն մէկը կ'օրինակէր. գրածը նորէն
աչքէ կ'անցընէր. իր մտադիր աչկունքը ու գլխին
շարժուածքը ճանչցընել կու տային որ բանաստեղ-
ծին քանի մը խօսքերուն խորունկ իմաստը պայծառ
չէր կրնար թափանցել: Բայց անոր քանի մը կտոր-
ները իր երեւակայութիւնը անանկ սաստիկ բռնկցու-
ցած էին՝ որ բարձր ձայնով մը սկսաւ նորէն կարդալ:

«Թողէք երգե՛մ՝ արդ երկնային
երգեր, Մուսայք Սիկեղեան .

Այն մեծ շրջան դարուց նորէն

Աւասիկ արդ կ'սկսի,

Նորէն կ'ընէ դարձ մեզի կոյսն,

Նորէն կրովնեայ պետութիւն .

Կը բողբոջի մէկ նոր սերունդ,

Բարձրակամար երկրնքէն:

Եկուր եկուր Սպասուածքդ դու,

Տուր վերջ դարիս երկաթեայ:

Գուն կ'սկսիս մէկ ոսկեզար,

Երկիրս ամէն կը ծաղկի:

Քու ատենդ ո՞ր Գողգիոս հիւպատ,

Պիտ՝ որ ծնանի իրաւցրնէ,

Էօնական այն փրկութիւն,

Ու շուտ մ'անցնի այն փառաւոր

Լուսիններու յուրջ կարգին:

Կ'ըլլան յայնժամ՝ անհետ մեր պարտքն,

Արհաւիրէ ազատ երկիր:

Կ'ընդունի նա կեանք աստուածոց,

Ու դիւցազունք կը տեսնէ

Աստուածներու հետ ընկերած,

Եւ անոնց քով միշտ ներկայ:

Նա ծոխութեամբ Աստուածեղէն,

Իբրեւ իշխան կը տիրէ,

Ու կը վարէ բոլոր աշխարհք,

Որ թշնամի էր եղած:

Ա՞ն ընկալ շուք բարձրական,

Ատենն հասաւ մերձեցաւ,

Ո՞ր սիրելի մանուկ դից,

Արամազդայ մեծ զաւակ:

Տես տիեզերք բեռնած, ընկճած

Լեռնանման բեռան տակ,

Հոս երկիրներ, հոն ծոփուն դաշա,

Եւ երկրնքին խորութիւն:

Ո՞հ կ'սպասեն ամէնք գալու

Ուրախայից այն դարուն :
Ո՛հ թէ կենացս իմ՝ մնացորդը
Տար ինձ լրութիւն ոգեւոր ,
Ունենայի ուժ բաւական
Իրեն գործքերն երգելու :

“Վ իրգիլիոս, գեղեցիկ կը խօսիս, ըսաւ Մե-
տեղդա, բայց անիտոս որ — հասկըցուիլ չես ուղեր :
Շուրջ յիսուն ողիմպիադներ անցան քու մահուա-
նէզ ի վեր * , ու ես ամենեւին բան մ'ալ չեմ գի-
տեր ան սպասուած աստուածոց մանկանը վրայ՝ որն որ
մեր մեղաց հետքերը պիտ'որ ջնջէ, կ'ըսես, ու երկիրս
ազատէ : Գիտեմ որ կայ Ասիայի մէջ ժողովուրդ մը,
որն որ կը հաւատայ թէ Աստուած մը իրենց մէջ
ապրած ըլլայ, բայց ան ալ իր վերջը շատ գէշ լմըն-
ցուցեր է : Ե՞րբ պիտ'որ ըլլայ որ մարդկային միտքը
երկրիս վրայ ճշմարտութիւնը մէյ մը գտնայ : Աս
մարդկային միտքը առեղծուածի մը առջեւ յաւիտեան
պիտ'որ մնայ, ու՝ Զրոյցի մը նայելով՝ անի յաւիտեան
պիտ'որ չկարենայ լուծել. եւ աս առեղծուածը նոյն
խկ ինքն է ,” :

Յունարէն գիրք մը ձեռքը առաւ, հին պատ-
մագիր մը, որն որ Պարսից Աիւրոս թագաւորին անցքը
կը պատմէր : Հազիւ թէ քանի մը թուղթ կարդաց,
ուրիշ հատուած մը փնտտեց, բայց աս ալ զինքը չկր-
ցաւ գոհ ընել. “միշտ մի եւ նոյն բան ,” մըմրուաց, —
“հոսկից ելեր է Աիւրոս հոն գացեր է. անկից ելեր է
ու գացեր է . . . : Ասիկա Աիւրոսին քմաց ատորժելի
եկեր է ու կը բաղձայ որ դուն ալ նոյնին համը նայիս :
— Չէ, քսենոփոն ,” կանչեց, “դուն միշտ անաղի հաց
կը նմանիս, անհամ ու չուտուելու ,” — աս ըսաւ ու
բռնեց գալարուած մագաղաթները միւսիոնէ շինուած
յատակին վրայ նետեց. անանկ որ տանեաց կճեայ շըր-
ջապատներուն քով գացին մնացին :

“Ով ժամանակ, ժամանակ ,” ըսաւ, “ինչպէս
անիրաւութեամբ կը վարուիս մարդկային հոգւոյն
գործքերուն հետ : Շատ հեղ, ամենագեղեցիկը ու բա-

*) Վիրգիլիոս՝ ուսկից վերի խօսքերն առնուած են՝ Մեսի-
այի ժամանակն ալ չէր ապրեր՝ Բրիտտոսի ծննդէնէն 19
տարի յառաջ մեռած էր :

րեգոյնը կը փշրես ու կը մանրես քու երկաթեայ սանդիգ մէջ, ու հովին կու տաս՝ որ փոշի պէս ցըրուէ տանի, մեզի անոնց հաղիւ ամենափոքր մնացուկը կը թողուս, — երբոր անդին՝ անհամ անշնորհ գործքերը մեծ խնամով ու զգուշութեամբ քու նուիրական ծոցիգ մէջ կը պահես, որպէս զի սերունդէ սերունդ նոյնը աւանդես:

Իսոյց հոս պատմութեան գրքի ինչ հարկաւորութիւն կայ: Ահաւասիկ Աթէնքը առջեւս կեցած է. դիրք մը, որուն ճակատը կեկրոպս տասնը եօթը դար յառաջ գրած է, ու թեսէոս առջի հատուածը: անանկ գործք մը, որուն ամէն մէկ թուղթը՝ իմաստութեան, զօրութեան ու բարուց մեծութեան վրայ կը պատմէ. ո՛հ թող որ կարգամ քու թղթերդ, մեծ ու սիրուն քաղաք:

Աթէնք, դուն կը վախնաս աստուածներէն, քու դիւցապաշտութեանդ նկարագիրը մարմարեայ ճակտիգ վրայ գրուած էր, ան բազմամեհեան Ակրոպոլիսի վրայ: Անթիւ անհամար արձաններ Աթենասայ տաճարին տեսքը իզմէ կը ծածկեն: Մեր հարքը աստուածութեան երախտագէտ գտնուելու համար, որուն վահանին տակ պատերազմեցան ու յաղթեցին, այն Պարթենոնը կանգնեցին, ու աս շինողը — անմահ Պերիկղէսն — անոր ամէն մէկ սիւնէն յետագայ սերունդներուն ծանր ազդարարութիւն մը կու տայ՝ որ ժողովուրդ մը այնչափ դրսանց հզօր ու ահաւոր կ'ըլլայ, որչափ որ ներքուստ իր ներքին կրօնական կենաց փառաւորութիւնը կը ծաղկեցընէ *:

Նոյն տաճարին մէջ տեղը կանգնուած է Բրոմաքոս Աթենասին հսկայաձեւ արձանը, իր վիթխարի կերպարանքը ամէն տանիքներէն վեր կը բարձրանայ. իր պղնձեայ սաղաւարտին փետուրներն, իր տէ-

* Պարթենոնի կատարեալ քանդումը 1687ին եղաւ, երբոր Անետիկիք Աթէնք նորէն առած ժամանակնին Ակրոպոլիսի վառօդի մթերանոցը ռումը արձակելով տաճարին առաստաղը օդը հանեցին: Սակայն եւ այնպէս սիւներու անտառ մը դեռ կեցած է, — շքեղ շէնք մը, որուն վրայէն արդէն 23 դարեր անցած են առանց բոլորովին կործանելու:

գին շուսաճաճանչ ոսկի ծայրը հեռուանց Սունիոնի հրուանդանին առջեւը կեցող ձկնորսին կ'իմացընէ՝ որ գուն գեղեցիկ Աթէնք, Աթենասի պաշտպանութեան տակն ես * :

Աթէնք, դուն արգարակորով ես. եւ ասոր վրայ տարակուսողը թող Ակրոպոլիսին քովը սա բլրոյն վրայ Արիսպագոսին նայի: Ասոր արգարութեան սրահը կը ժողվէին իշխանները, գիշերուան հանդարտ լուսթեան ժամանակ իրենց նիստերը կը կատարէին, տէրութեան ու կրօնի գէմ գործուած ոճրագործութեանց, բարոյից ու անձնական ապահովութեանց վրայ իրաւունք կտրելու համար:

Աթէնք, դուն քաջ ես. եւ թէ որ վրադ արշաւող բարբարոս մը քու համբաւաւոր գործքերդ չգիտնայ, այն Ղիկեան Ապողոնի կրթութեան վարժոցը թող խօսի, թէ ինչպէս կտրիճներդ նոյն տեղւոյն վրայ մարմնոյ կրթութեան մէջ իրենք զիրենք կը հրահանգէին եւ թէ ինչպէս դեռ մինչուկ հիմայ նոյն իսկ Հռոմայեցւոց զարմացման առարկայ եղած են:

Աթէնք, դուն ճարտար արուեստաւորներու կայարան, ու իմաստութեան օթարան ես: Ասի կը յայտնէ քու թէատրոնդ, փիլիսոփայութեան դպրոցդ, ահագեմիադ ու պատկերազարդ սրահդ, որուն մէջ իմաստունները դարերէ ի վեր կը սորվեցընեն:

Իրօք ալ քու ամէն մէկ յիշատակարաններդ ու շիրիմներդ քու հոյակապ մատենիդ մէջ մէկ թրղութերն են, զորոնք որդիքդ ապագայ ժամանակի համար գրեցին հասկցընելու համար՝ որ մահկանացուաց միտքը ինչ մեծութեան կրնայ հասնիլ: — —

Արբոր Մետեղղա այսպիսի խորհրդածութիւններու հետ խորունկ զբաղած էր, արեւն ալ դէպ ի քաղքին ու ծովուն մէջ տեղը ինկող ձիթաստանին մօտ եկած էր. իր վարդակարմիր նշոյլներն Ակրոպոլիսի հազարաւոր արձաններուն վրայ կը սփռէին ու

* Աս համբաւաւոր արձանը երկրորդ դարուն վերջերը Ալարիկոսի Աթէնքէն ետ քաշուելէն ետքը դեռ կեցած էր:

կարծես թէ անոնց ամէնն ալ Մետեղային բերնէն ելած գովեստներուն վրայ կը շառագնէին:

Աս միջոցիս մէջ Ղուկիոս, Մետեղային ծաղկահասակ որդին, եւ իր հարստութեանը ժառանգը, սանդուխներէն վեր վազեց ու մայրը բարեւելէն ետեւ զրոյց տուաւ որ իր Բոքոս գերեզմանը Չմիւռնիայէն դարձեր է. բայց իր ապսպրած բաներէն մէկն ալ գրեթէ հետը չէ բերած, միայն ասիացի գերի օրիորդ մը բերեր է: Նա եւ աս ալ աւելցուց որ Բոքոս Չմիւռնիա քաղքին վրայ շատ զարմանալի բաներ կը պատմէ, եւ թէ նոյն քաղաքը սաստիկ երկրաշարժէ մը գրեթէ բոլորովին կործաներ է:

Մետեղա ոտք կ'ելլէ ու արտորանօք եւ իրեն զգեստին պաղպաջուն զարդերը գրեթէ իրեն արգելք մ'ըլլալով, կը յառաջէ Չմիւռնիոյ լրերը իմանալու: — Բայց ինք աս լրերը առնելու զբաղի, մեղի ալ ներուի հոստեղս քիչ մը անոր կենացը նկարագիրն ընելու:

Մետեղա ծննդեամբ Յոյն էր, դեռ չկարգուած՝ քրիստոսորայ կ'անուանուէր: Պզտիկուց ինքը զինքը հին պատմագրաց գրուածները կարդալու տուած էր: Իր հայրը Ատաիկոս, որն որ քրիստոսէ 104 տարի ետքը Մարաթոն ծնած էր, Յունաց երեւելիներէն մէկն էր, քաջ ատենախօս, ետքն ալ Հռոմի հիւպատոս ու Մարկոս Աւրելիոսի ուսուցիչն եղաւ, վերջապէս յունական գաւառներու ոստիկան անուանուեցաւ: Աս հռչակաւոր մարդը, թէպէտ եւ Հռոմի արքունեաց մէջ սիրելի էր, ու երկու Անտոնինեանց ինքը զինքը շատ սիրցուցած էր, բայց բոլորովին Յոյն մնացած էր, ու իր ցեղին ազնուականութեանը վրայ մեծ ծանրակշռութիւն կը դնէր, որովհետեւ Մարաթոնի մէջ Պարսից յաղթող Միզաիադէսէն իր սերունդը յառաջ կը բերէր: Իբրեւ բնիկ Յոյն իր ազգային աշխարհահռչակ խաղերը պահել կը ջանար. ու շինել տուած խել մը չէնքերէ ի զատ՝ Ողիմպիայի մէջ (ուր դեռ ան ատենը չորս փարի մէյ մը անթիւ անհամար բազմութեամբ հին ողիմպիական խաղերը, կռիւմարտը, հաս եւ առիկն ու կառարշաւը կը կատարուէին), ջրմուղ մ'ալ շի-

սովորութեան՝ ոսկի փոշի ցանելու հետ էր, մինչուկ որ կարմրովեկ գոյն մը ստացան: Աղախնոյն մէկը Ատտիկոսին առջեւէն կ'անցնի, ու բարակ աղնիւ մարգարտէ հիւսուած հողաթափ մը սանդուխներէն վեր կը բերէ, որն որ զարդարանքին լմննալու նշան էր: Բայց որովհետեւ մատաղօրեայ դուստրը չէ թէ այնչափ իր զարդերովը, որչափ բնական վայելչութեամբ կ'ուզէր հաճոյ ըլլալ, եւ վասն զի սնգոյրը պատրաստող աղախինը դեռ գործքը լմնցուցած չէր, անոր համար Քրիստոփորայ մինչուկ կատարեալ հագուիլը՝ դեռ այն ծանօթ գեղեցկութեան գիւտը բոլոր երեսին վրայ կը պահէր: Այսինքն Քրիստոփորայ ամէն իրիկուն քուն չեղած՝ հացի խմոր մը կաթի մէջ թաթխած երեսին վրայ դնել կու տար: Գիշերը երեսին վրայ կը չորնար ու փսփո փսփո ձաթըրտելով, անանկ տեսք մը կու տար երեսին, որ իբրեւ թէ գաճով կամ կրով ծեփուած ըլլայ*:

Ատտիկոս հողաթափները տանող աղախնոյն խուճապելէն, կարծեց որ ալ Մետեղղոսը իր դասեր սենեակը խոթելուն ատենը եկած է:

Բայց ինչպէս շփոթեցաւ մնաց աղջիկը, երբոր անոնց՝ սանդուխներէն վեր ելելը իմացաւ: Աղախնոյն մէկը դէպ ի դուռը վազեց որ անոր փեսին ներս մտնելն արգելէ. իսկ Մետեղղոս անհամբերութեամբ իր հարսին երեսը վերջապէս մէյ մը տեսնելու կը փութար, մէկէն անոր սենեակը վազեց ու զարհուրած մնաց, երբոր զինքը անանկ առատոոց կերպարանաց տակ տեսաւ: — Յովնայիսի ըսածին համեմատ, — ծովի կատուի պէս տեսաւ:

Աս յանկարծական դիպուածը իր զարմանքին հետ մէկտեղ բարկութեան կիրքը անանկ շարժեց, որ մէկէն մտքին մէջ իր խօսքը ետ առնելու որոշեց. եւ թէ որ Ատտիկոսի ճարտար լեզուն անոր յիմարական այլալուծիւնը յայտնի ու պայծառ առջին չգնէր, բաները շատ գէշ կ'երթային:

Այսպիսի միջանկեալ դիպուածէ մը վերջը, բուն հարսնախօսութեան հանդէձը կատարուեցաւ. ու դա-

* Կակրղցուած հացով ուռած է երեսը: Յովնայիս. Զ. 467:

շանց թուղթերն պաշտօնական կերպով ստորագրուեցան: Մետեղոյս իր հարսին մատնի մը տուաւ, իբրեւ գրաւ ու ձախ ձեռքին մատը անցուց, որովհետեւ հիները կը կարծէին որ աս մատէն ջիղ մը մինչուկ սիրտը կը հասնի: Աերջապէս հետեւեալ Յունիս ամոյն մէկ օրը, որովհետեւ հիները աս ամիսը բարեբախտ կը սեպէին, իրական ամուսնութեան օր սահմանուեցաւ:

Միգապանծ խրոխտ հարսը, նոյն օրը ինքը զինքը ալ արտաքոյ կարգի զարդարանքներու տուած էր, ինչպէս որ իր ծաղիկ հասակը, վիճակն ու ցեղը եւ ուրախութեան հանդէսը կը պահանջէին: Յունական սովորութեան համեմատ, երկայն ու սպիտակ բազմածալ զգեստ մը ունէր, մէջքը բամբակէ գօտիով: Երեսը բաց կարմիր շղաշատեւ մը ծածկած, որն որ մինչուկ վար կը տարածուէր: Մազերը վեց խոպուպիք բաժնուած էին, մէջընդմէջ հիւսած ծաղիկներով, ու ռաբը կակուղ կարմրաներկ * կաշիէ հողաթափ մը:

Հարսանեաց հանդէսը Եղիս՝ Ատտիկոսի տունը կատարուեցաւ: Նախ Հերա շաստուածուհւոյն զոհ մատուցին, կենդանւոյն լեղին մէկ դի նետուեցաւ, նշանակելու համար որ ամուսնական վիճակէն ամէն դառնութիւնները հեռացուին պիտ'որ: Ետքը ամուսնական խոստումը շատ վկաներու առջին կրկնուելէն ետեւ, փառաւոր սեղան մը եղաւ, երաժշտութիւններով ու կոչնականաց բարեմաղթութիւններով: Բազմականներէն միայն մէկ հոգի մը կար, որ արտաքոյ կարգի ծանրութեամբ մտածութեանց մէջ ընկղմած կը կենար. — ծերունի հայրը: Ատտիկոսի նստած սեղանի բազմոցին ձախ դին սեղանոյ սպաս մը գրուած էր, որ բոլոր կերակուրի ատեն չգործածուեցաւ, — ասիկա անոր Պողիզիկէս որդւոյն սահմանուած էր, որն որ թէպէտ տարիներով յառաջ մեռած էր, բայց սեղանի ժամանակ ասոր տեղը պէտք էր միշտ պարապ մնալ: Ասանկ հանդիսութեան մը մէջ, Ատտիկոսին ասանկ փափուկ

* Տես Ագամայ Հռոմայական հնութեանց գիրքը: Բ. 273:

զգացողութիւնը այնչափ սրտաշարժ է, որ Ղուկիանոս մատենագիրը՝ որուն սովորութիւնն է միշտ իր նետը ատափկեցի հենգնութեան մէջ թաթխել, պարապ տեղ աս բանիս վրայ կը ծիծաղի* : — Սեղանը լմրննալէն ետքը սովորութիւն մ'ալ կատարուեցաւ, որն որ հին Հռոմայեցիներէն յառաջ եկած էր, որոնք երբեմն Սարսնեանց աղջիկները յափշտակած էին : Անոր համար հիներու հարսնախօսութեան հանդէսին մէջ հարսը կը յափշտակէին : Քանի մը տեղեր աս սովորութիւնը ինչպէս ծանօթ է, մինչուկ հիմակ դեռ պահուած է : Հանդէսը լմրննալու վրայ եղած ատեն՝ աղջիկները անոր կ'ընկերանային, ձեռքերնին ըզբ առած հարսը կառք նստուցած, որպէս զի յիշէ որ խաթունի մը մեծ փափաքով մանեղու զբաղիլը կը վայլէ, ու պարկեշտ տնական գործքերու ետեւէ ըլլալը իր յատուկ գործքն է : Երկրորդ օրը Աթէնք Մետեղղոսին տունը դեռ հանդէսը կը շարունակուէր. ու հոն հարսը իր բարեկամութիւններուն պարգեւները կ'ընդունէր, ու իբրեւ տանտիրին ինքը զինքը կը ցուցընէր : Հին հելլենական սկիզբ մը դեռ ի գործածութեան էր, թէ տան մէջ իշխելն ու վերին իշխանութիւնը՝ էրիկ մարդուն, կնոջ ալ՝ իր երկան հոգն ու զաւակաց խնամքը յանձնուած է եւ աղախնեաց հրամայելը** : Ասկէց վերջը հարսին անունը քրիստոսորայ Ատտիկա Մետեղղեայ եւ կամ համառօտ միայն Մետեղղա կը կանչուի : Բայց իր անունն հետ՝ ի մանկութենէ ունեցած գիտութեանց փոյթը չփոխուեցաւ, ու աս փոյթը իր պարտքերուն կատարմանը հետ յարմար կերպով մը միաւորեց :

Ինութիւնը երկաթեայ օրէնք մը ունի, աս օրինաց համեմատ քիչ տարի ետքը՝ բովանդակ մատաղական վայելչութիւնը երթալով պիտ'որ թարշամի, մինչուկ որ զգայարանները բթանան, մազերը իյնան, եւ ի վախճանի ուրիշ բան չմնայ՝ բայց եթէ անմխի-

* Ղուկիանոս, Դեմոնաքս. 24 :

** կփ. Լատլ. Յունաց ամուսնութեանը Պատմութեան ու Փիլիսոփայութեան վրայ. 32 :

Թար — մեռելագլուխ մը: Ասանկ աւեր կը դարձընէ բնութիւնը ինչ որ ինք շինած է, բրուտի մը պէս, որն որ իր ամանները կը փշրէ եւ ուրիշ մը կը շինէ: Ասանկ ալ Մետեղղային վրայ կը տեսնենք որ գեղեցկութեան հրապոյրը շուտ մը կը գունատի ու զանազան դէպքերը իրեն շուտով իմաց կու տան՝ որ մարդս առօրեայ ծանձի պէս հազիւ երկրորդ օրուան վրայ ապահովութիւն ունի:

Սակայն եւ այնպէս հաճոյ ըլլալու փոյթը իր վրան չմարեցաւ, հապա ուրիշ եղանակ ու հնարք բանեցուց: Արովհետեւ մարմնոյ ձիրքերովն ալ չէր կրնար պարծիլ, իր գիտութեան ծանօթութեանց հարստութիւններովն ու ոգւոյ փառաւորութեամբը սկսաւ ուրիշին զարմանքն ու սքանչանքը իրեն քաշել. եւ որովհետեւ հարստութեան բախտն ալ իրեն աս գիտումներուն ձեռնտու կ'ըլլար, անթիւ բարեկամներ գլուխը ժողովեց, որոնք իրեն բազմախորտիկ ծաշերն ու տելով, անոր հաճոյական շողորթութութիւններ ու գովեստներ կը խօսէին: Աթէնքի մէջ չկար կնիկ մը որ Մետեղղայի պէս ուսումնականութեան համբաւ ունենար: Ինչու որ Յունաց ամէն բանաստեղծներն ու փիլիսոփաները չէ թէ միայն կարգացած էր, հապա ամենէն աղէկ վարպետներու եւ գրւխաւորաբար իր համբաւաւոր հօրը առաջնորդութեամբ՝ հիմնական կերպով քննած էր:

Բիչ մը ետքը գլուխը գժբախտութիւններ եկան: Նախ եւ յառաջ իր հայրը կորսընցուց, որն որ իր կենաց մնացորդը կէս մը քեփիսիա՝ ուր փառաւոր գեղի տուն մը ունէր, կէս մ'ալ Մարաթոն՝ իր ծննդեան տեղը կ'անցընէր*:

Քիչ մը ետքը իր երկանը Մետեղղոսի մահը սգաց:

Ղ ուկիոս՝ մեծ տաղանդի տէր զաւակը ասանց ամուսնութեանը մի միայն շառաւիղն էր: Ասիկա դեռ 15 տարուան էր, երբոր իր հօրը որդիական սգոյ պարտքը կատարելու ստիպուեցաւ՝ աղգին սովորութեանը համեմատ երեսը մէկդի դարձուցած, ջահ մը

* Ատտիկոսի գերեզմանը դեռ մինչուկ հիմակ Աթէնքի մօտ կը ցուցընեն:

բունելով դէպ ի ան փայտակուտին վրայ, որուն վրայ Տօրը դիակը փռուած էր: Իր մայրը էրկանը կորուստը շատ զգաց: Ինչու որ թէ եւ հանգուցեալը գիտնական զբաղմունքներէն քիչ համ կ'առնուր, բայց ներդաշնակութիւնը մէջերնին երբեք աւրուած չէր: Շաբաթ չէր անցնէր որ աս հաւատարիմ լծակիցը Եղեւսիս տանող սրբազան ճամբուն վրայէն չերթար, հոն գերեզման մը զարդարելու, որուն դամբանագիրը աս բառերով կը սկսէր, «կեցիր, անցաւոր», եւ որն որ սափորի մը մէջ իր էրկանը ածիւնը կը պահէր:

Աս խիստ դժբախտ հարուածներն իր ներքին լուսաւորութեանը համար հեռեւութիւններ ունեցան, ինչու որ ասկէ ետքը սկսաւ կամաց կամաց այն ուսումնական խօսակցութիւններով երեւելի ըլլալու ու կամաց կամաց սրտին մէջը բաղձանք մը կ'արթննար իր կենացը ապագան գիտնականութենէն աւելի յարգ մ'ունեցող բանով, այսինքն ազնուական գործողութիւններով ու առաքինութեան գործքերով զարդարելու: Աս բաղձանքը դեռ շատ նոր արթնցած էր:

Ասանկով Մետեղղայի վրան ուրեմն երեք կերպ ժամանակ փոխուած կը տեսնենք. — եւ ո՞վ չտեսնէր աս ընթացքը շատ անգամ մարդկային կենաց մէջ, — այսինքն արտաքին բնական ձիրքերով զուարճանալ, ետքը մտաց ձիրքերով զուարճանալ, եւ վերջապէս դրդում մը՝ սրտի զարդարանքով ու բարեպաշտութեամբ երեւելի ըլլալու: —

Վանք հիմակ մեր հասնող ճամբորդները մէյ մը հարեւանցի աչքէ անցընելու: Ասիացի գերի օրիորդը՝ յիշած էինք վերը Զմիւռնիայէն հասած: Ասի ուրիշը չէր, բայց եթէ Սերափիկէն: Երբոր աս օրիորդը ան շփոթութեան ատեն իր հայրենի քաղքին նաւահանգիստէն փախչելով նաւ մտաւ, նախն տէրը աս խեղճ փախստեայն իրեն ստացուածը սեպեց, եւ որովհետեւ Մետեղղայի հետ շատ առեւտրական գործողութիւններ ունեցած էր, անոր համար զՍերափիկէն աս հարուստ տիկնոջ պարգեւ խաւրեց:

Մետեղղա Սերափիկէին յանկուցիչ կերպա-

րանքը տեսնելուն պէս՝ իր գերեպանին մեծ հաճութիւն ցուցուց, եւ հարցուց որ ուստի է: Երբոր լսեց որ ծննդեամբ Ղիւղիայէն է, որոշեց՝ որ ասկէ ետքը իր գաւառին անուամբը կանչուի, այսինքն Ղիւղիայի կամ Ղիւղի:

Ասկէց ետքը ուրեմն մեր պատմութեան էջերէն՝ նա եւ վերջի բանը՝ զորն որ Սերափիկէ դեռ իբրեւ իրեն ստացուածը կը սեպէր, այսինքն իր քրիստոնէական անունը՝ անհետ կ'ըլլայ: Ա՛լ գերի օրիորդն օտարաց մէջ իբրեւ օտար կ'ապրէր. հայրենիքէն հեռու, բարեկամներէն, ազգականներէն ու իր հաւատակից ընկերներէն զատուած: Իր վրայ իշխողը՝ հեթանոսուհի մըն էր: Իրեն ուրիշ բան մը չմնաց, բայց եթէ կապոյտ երկինք մը՝ որն որ ամենուն հասարակաց է. վստահութիւն մը անոր վրայ՝ որուն անթուր աստղներէն անգին է: Անոր սիրոյն համար ամէն բան թողուցած էր, եւ ճշգիւ անոր համար իր վստահութիւնը սահման չունէր: Այն շրթուկները՝ որոնք միայն ճշմարտութիւն կը խօսէին՝ սուրբ վստահութիւն մը իրեն կու տային՝ թէ «հարիւրապատիկը պիտ'որ առնու եւ յաւիտենական կեանքը ժառանգէ»:

Պ Լ Ո Ւ Խ Պ.

Զինուորական նորընծայութիւն*:

Ղգրիանոսի սրահ ըսուած գեղեցիկ արձակավայրին վրայ Աթենացի ժողովուրդը խիտ առ խիտ կը դիզուէր. հոն խայտախարիւ սեան մը վրայ տոմսակ մը կ'պցուած էր, լատիներէն վերնագրով մը «Bonum factum», աս գրուածքին մօտ ըլլողները չէին կրնար իրենք զիրենք նոյն տեղէն անջատել, կը կարգային ու կը կարգային. դարձեալ կը դառնային ու նոյնը կը կարգային: Ոմանք ասի օրինակելու չափ կը զբաղէին. հեռու կեցողներն յօտն ի մատին կայնած իրենք զիրենք վեր կը բռնէին, որ կարող ըլլան նոյնը տեսնել. բայց ուրիշ բան մը չէին կրնար նշմարել, բայց եթէ աս երկու մեծ բառերը «Bonum factum», = «Աղէկ

* Tirocinium.

գործք մը, : Աերջապէս մէկ քանի հոգի սիւներուն մօտիկնալով հեռու կեցողներուն սկսան կանչել, «բարբարոսաց դէմ պատերազմը հրապարակաւ ծանուցուած է, : Մի եւ նոյն ատեն պատերազմի պաշտօնեաներէն մէկը հրապարակը եկաւ ու որոտաձայն քարոզ կարդաց, ծանուցանելով ժողովրդեան կայսերական որոշումը որ դանուբեան իշխանութեանց պատերազմը հրատարակուած է, եւ թէ երկու կայսերք ալ Մարկոս Աւրելիոս ու Ղուկիոս Աերոս անձամբ պատերազմի ասպարէզը պիտ'որ երեւան :

Պաշտօնէին խօսքը դեռ բերանն էր, երբոր ժողովրդեան աղմուկն ու շփոթը զինքը ընդհատեց . Աթենացուց հաճութեան ու ծափահարութեան ձայներուն վերջը չէր գար : Պատերազմի հաճութիւն ցուցնողներուն մէջէն մէկն ալ ծաղկահասակ Ղուկիոսն էր, որն որ պատրդկական տոհմին գեղեցիկ ծիրանեգոյն շերտերով պատմուածներ * դեռ հագած էր, շիկակարմիր այտերովն իր հասակակից ընկերներէն մէկուն վազեց, իրեն աս դէպքը հաղորդելու ու միանգամայն խորհուրդ հարցընելու համար որ իրենք ինչ պիտ'որ ընեն :

Մետեղդա դեռ լսած չէր, եղածը չէր գիտեր : Իր տան սրահը նստած, քանի մը երեւելի տիկնայց արտաքոյ կարգի սովորութեանը համեմատ, ժամանակ անցընելու համարընտանի օձ մը վիզը գալարելով, հացի միջուկ կը կերցընէր ու խաղալով կը զբօսնուր : Քիչ մը հեռու նստած էր սրնգահար մը, ու տան տիկինն ալ իր ոտքին կանոնաւոր շարժմունքներովն նոյն երաժըտութեան կ'ընկերանար : Աս միջոցիս ընդօրինակողներէն մէկը իրեն կու գայ ու լրագրական թերթի նման ** բան մը արծաթափայլ փոքրիկ գրասեղանի

* Toga praetexta.

** Աս ստոյգ է՝ որ նոյն ատենները հրապարակական արձանագրութիւնները՝ aeta diurna մակագրութեամբ ծախօթ էին, որոնք ծերակուտին գործքերը, դատաստանները, մեռնողներուն ու ծնածներուն ցանկը, եւ ուրիշ ասոր նման բաներ կը պարունակէին, զորոնք իրենց գերիներուն օրինակել կու տային ու մեծամեծներուն կանոնաւոր կերպով առջեւնին կը դնէին :

մը վրայ կը դնէ: Խաթունը լրագիրը հազիւ թէ ձեռքը կ'առնու, Ղուկիոս մէկէն ներս կը վազէ. «Մայր, Մայր, լսեցիր այն մեծ ու նորանշան դէպքը, Մարկոմաններուն, Կուսաններուն, Յազիւ գացուց ու ամէն բարբառու ազգաց դէմ հրատարակուած պատերազմը, երկու կայսերք ալ անձամբ Ակուիլէյա պիտ'որ երթան ու Աթէնքին բոլոր կտրիճ երիտասարդներն ալ կանչուած են՝ որ զէնք առնուն»,:

«Անդարտ, հանդարտ կեցիր, որդեակ,, պատասխանեց Մետեղլա. «այնչափ աղմուկ կը հանես՝ որ կարծես թէ նոյն իսկ Արէսն էս: Չես գիտեր հին իմաստուններուն երիտասարդաց յաճախ կրկնածն *μῆθεν ἄγαν* = մի շտապիր *: Հոն է պատմուճանդ վերցուր,,:

«Գլուխ ու պատմուճանս կորսնցուցի,, պատասխանեց Ղուկիոս,, թէպէտ աս վերջինը, աղէկ նշան է,, եւ պատմուճանը վերցընելով, մօրը առջին ելաւ ու խօսքը յառաջ տանելով, կ'ըսէր, «աւասիկ իմ ազաչանքս ալ, որ ինձի թոյլ տաս շնորհես ալ աս մանկութեան պատմուճանը հանելու ու անոր տեղ պրական պատմուճանը հագնելու: Ես զինուոր ըլլալ կ'ուզեմ ու պատերազմի երթալ: Կտրիճ Կուինտոսն ալ, անտիհիւպատոսին որդին, իզմէ մեծ չէ, ինքն ալ մեկտեղ պիտ'որ երթայ, ինչպէս ինձի իմացուց,,:

«Կուինտոս դեռ հայր ալ ունի, բայց Մետեղլան թէ որ իր Ղուկիոսը կորսընցընէ,, (ըսաւ մայրն իր զաւկին խարտեաշ մազերը փայփայելով,) երկրիս վրայ օրիշ սիրելու մէկը չիմնար. ըսէ տղաս, սոսպիսի տրամութիւն մը կրնաս ինձի պատճառել,,:

«Ա՛խ մայր, պատերազմի գացողներուն ամէնն ալ պէտք է որ մեռնին: Գուցէ կենացս մէջ մէյ մ'ալ աս առիթը չեմ գտներ Կայսեր մը հետ պատերազմի դաշտը ելլելու: Մտածէ՛ մէյ մը — երկու Կայսր: Կը յիշէս մայր, որ դեռ տղայութեանս ժամանակ, երբոր դպրոց կ'երթայի, իմ տախտակներուս վրայ գրելու տեղ, անոնց վրայէն մեղրամոմը շատ ան-

* Գեղփիսի տաճարին առջեւի կողմը գրուած նշանաբաններէն մէկը, «Ամենայն ինչ չափով,,:

գամ կարծր գրչով մը կը քերէի, ու մեծամեծ զօրավարներուն անունները գրելու տեղ, աւելի պզտի զինուորներ կը ձեւացընէի: Ասկից զինուորութեան վիճակին բնածին կոչումն չիճանչցար,»:

Մետեղդ ցաւագին կերպով մը ժպտելով գլուխը շարժեց: «Միրելի մայր: դուն չես բաղձար կարծեմ՝ որ ես ստոյիկեան, ակագեմեան, պերիպատետիկեան եւ կամ եպիկուրեան ըլլամ: Չէ, Գոգոնայի նուիրական կաղնոյն վրայ կ'երգնում որ ասոր կոչում չունիմ: Բնութեան զօրութիւնները զննելը ու կիսաբաց բերնով երկինքը պաղած նայիլը, փիլիսոփաներու կը թողում: Պատերազմի մէջ ինկող զինուորներու շիրիմները՝ Աերանիկոսի մէջ՝ չեմ կրնար առանց իրենց անմահական անուանը վրայ նախանձելու տեսնել: Ասկից ետքը ես ալ Թէմիստոկղին պէս պիտ'որ ըլլամ, որն որ գիշերները չէր կրնար քուն ըլլալ, քանի որ Միդտիադէսին համբար կը մտածէր: Իմ Ատտիկոս հաւս շատ անգամ կը պատմէր, որ իր ցեղը Միդտիադէսէն յառաջ եկած է: Դուն նոյնը ինծի շատ անգամ կրկնած էիր: Ար յիշե՞ս իմ հօրս մահուան անկողնոյն վրայ ըսածները, թէ «Մեծնալու որ ըլլաս, Այստեր մինչուկ ի մահ հաւատարիմ ըլլաս,»:

«Վ. յո՛, բայց շուտ մը աւելցուց՝ թէ մօրդ հնազանդէ,»:

«Վիտես մայր, պատերազմը աս աշնան դեռ չ'սկսիր, այլ գալ տարի գարնան: Մինչուկ նոյն տունն դուն ալ կը յուսամ որ կը համոզուիս՝ որ որդիդ ալ այն դափնեայ անմահական պսակին տերեւներէն մէկ հաար ժողովելու ետեւէ ըլլայ: Բայց թէ որ մէկտեղ երթամ պիտ'որ, սպիտակ պատմութեանը հիմակուրնէ առնելու եմ, ու բոլոր ձմեռ Արեսեան դաշտին վրայ զինուորական կրթութիւնները մէկտեղ ընելու եմ: Անոր համար սիրելի մայր — այն այրական պատմութեանը * կ'ուզեմ: Ա՛ղաչեմ՝ քեզի՝ այո՛ ըսէ — Մայր, այրական պատմութեանը կ'ուզեմ, — մտածէ որ 17 տարեկան եմ,»:

* Toga virillis.

“Համբերութիւն, համբերութիւն տղաս, հոգի ըներ, ժամանակին կ'ընդունիս այրական պատմութեանդ, : ”

“Բայց չէ, ուրիշները երթալէն վերջը չըլլայ, : ”

“Չէ, : ”

“Ուրեմն անոնց հետ մէկտեղ կրնամ պատերազմի երթալ : Մայր, կրնամ, : ”

“Ե՛հ, թէ որ կը կարծես որդեակ, որ քու բախտական է, թող անանկ ըլլայ, մէկտեղ գնա՛, աստուածները թող զբեզ պահպանեն, : ” — —

Եւ խօսակցութեանց ժամանակ հոգի մէջ ընկողմած մայրը իր զաւակը ներքին փափուկ գորովով մը գրկեց ու հառաչելով ըսաւ. “որդեակ, գուն իմինս ես, քանի որ ես քու մայրդ եմ. եւ կը յուսամ որ բարի ու աստուածոց հաճոյական զաւակ կը մնաս, : ”

Մօրը հաւանութեանը վրայ պատանին անանկ ուրախութիւն մը իմացաւ, որ կենացը մէջ չէր զգացած : Արդէն մտքով ինքը զինքը Աթէնքի քաղաքացեաց ու քաջամարտիկներուն մէջ կը տեսնէր եւ անդիհիւպատին առջին ելլելու օրուան անհամբերութեամբ կը սպասէր, որ անոր ձեռքէն հրապարակաւ այրական պատմութեանը ընդունի :

“Մայր, : ” հարցուց, “ի՛նչ կը կարծես, ութը օր բաւական է. ստուգիւ մինչուկ այն ատենը աղէկ պիտ'որ կենամ, : ”

Եւ խօսքերուն վրայ Մետեղղա ժպտեցաւ. օրացոյց մը բերել տուաւ, ու աշնան մէջ հանդիպող տօները աչքէ անցուց : Տեսաւ որ Հոկտեմբերի 15ին Տրովադայ առումը Աթէնքի մէջ կը տօնուի : “Ասի ապագայ Աքիլէսի մը համար յարմար օր է, ըսաւ կատակով մը, նոյն օրը զինուորութեան պիտ'որ գըրուիս, : ”

“Ի՛րօք, Հոկտեմբերի 15ը, : ” ըսաւ Ղուկիոս, երեւելի օր մըն է, թէ եւ մինչուկ նոյն օրուան հասնելու համար շաբաթներ պէտք են, բայց Հոկտեմբերի 15ը փառաւոր օր մըն է — ասիկա ցնծութիւն մը պիտ'որ ըլլայ, : ” Ասանկ խօսեցաւ կրակոտ պատանին

ու արտորնօք “Հիմակ պէտք եմ՝ Վուկիոսին վազել
երթալ, մնաս բարով բարի մայրիկ, մնաս բարով, ը-
սաւ ու գնաց: —

Մետեղղա հնարք մը կը մտածէր՝ որ աս զե-
նուորական Նորընծայութիւն * ըսուած տօնը քնչպէս
ըլլայ որ իր տղուն միտքը անջնջելի մնայ: Մտածեց
որ իր ամէն բարեկամները հրաւիրէ ու միտքը դրաւ
որ անդիհիւպատոսին աղաչէ, որ իր Ղուկիոսին միտքը
ապաւորելու յորդորական խօսք մը խօսի:

Օ ինուորական Նորընծայութիւն ըսուած տօնը,
հին ատենուան խափանուած հանդէսներէն մէկն է,
որն որ իւրաքանչիւր երիտասարդի վրայ մեծ ապաւո-
րութիւն կ'ընէր: Ըս տօնը հիները պատանեկութեան
հասակէն՝ իբրեւ հրաժարական հանդէս մը կը կատա-
րէին: Ըս հանդիսաւոր հրապարական խօսուածքին մէջ
երիտասարդները կը խրատուէին, արդարակորով քա-
ղաքացւոյ մը վերաբերեալ պարտքը կը յիշուէր, իրենց
նախնեացը մեծամեծ գործքերը առջնին կը դրուէին.
ու թէ որ համբաւաւոր հայր չունէին, պատմու-
թեան գրքերուն մէջ գրուած հին աղբային առաքինու-
թիւնները կը յիշեցընէին: Թէ որ պատահէր որ ետքէն
քաղաքացիին մէկը ոճրագործութեան մը համար դա-
տաստանի կանչուէր, դատաւորը անոր զինուորական
նորընծայութեան ժամանակ ըրած յառաջադրութիւն-
ներն ու խոստումները երեսը կը զօրնէր:

Գանք հիմայ տեսնենք թէ քնչպէս Ղուկիոս
պատանին աս ուրախութեան տօնը կատարեց:

Ըթէնքի ազնուական երիտասարդաց խումբ մը
հրաւիրուած էր անդիհիւպատոսին ներկայանալու:
Մետեղղային բոլոր ազգականները, պաշտպանաւոր-
ներն ու բարեկամները պալատին օրահը ժողվեցան:
Բայց տան աիկինը ու Ղուկիոս, որուն համար նոյն
տօնը կը կատարուէր, դէռ չէին երեւցած: Արովհետեւ
մայրը իր որդւոյն հետ վերը առանձին մեհեանը աս-
տուածներուն առջին եռանդագին աղօթքներու զբա-
ղած էին, որ երկնից օրհնութիւնը Ղուկիոսի ապագայ
բռնելու կենաց ընթացքին վրայ իջնայ: Ղուկիոս՝

* Tirocinium.

ձեռուքները երկինք տարածած, աստուածութեան պատկերին դիմացը սրտագին կ'աղօթէր, եւ իբրեւ թէ սրուած անտեսանելի շնորհքները ընդունել կ'ուզէր: Հանդիսաւոր աղօթքներու ժամանակ, զորն որ քուրմը կը կատարէր, ուխտ կ'ընէր աստուածներուն, որ առաքինութիւնը ամէն բանէն վեր յարգէ, ու մոլութիւնը ատէ: Ետքը մեծ յարգութեամբ մը արձաններուն ծունկը կը շօշափէ, ու աջ կողմը կը դառնայ ու նորէն աստուծոյն դիմացը կու գայ կը կենայ: Մայրը անոր քովը կը սպասէր, ձեռքը բերնին դրած լուութեամբ կ'աղօթէր: Մոմապատ տախտակ մը ձեռքը առած, գրոցով մը վրան ուխտ մը գրեց, կնքեց տախտակը, ու աստուծոյն օտքին առջեւը դրաւ ու հոն անանկ կը մնար, առանց մէկը գիտնալու թէ ինչ գրուած է:

Աս տախտակին վրայ գրուածները, մինակ մեր ընթերցողներուն կը հաղորդենք: Ուխտ ըրած էր՝ որ եթէ իր զաւակը նոյն պատերազմէն ողջ առողջ դառնայ, «նաեիրական գարուն», պիտ'որ կատարէ: Այսինքն կը խոստանար՝ որ իր որդւոյն դառնալէն ետքը Մարտու Ապրիլ ամիսներուն մէջ իր կալուածներուն վրայ ծնած ամէնանասունները ողջակէզ մատուցանէ:

Աղօթքը լմնցածին պէս, ըմպելեաց նուէրները սկսան: Արակը կ'ձեայ փոքրիկ խորանի մը վրայ կը վառէր. երիտասարդը ոսկի բաժակ մ'առաւ, ու ողջակէզի կուժէն թխագոյն գինի լեցուց, ու անոր մէկ մասը խորանին բոցին վրայ, մէկալ մասն ալ արձանին առջեւը մուօփոնեայ յատակին վրայ աստուծոյն արձանին առջեւը թափեց: Ետքը ալիւրէ կարկանդակ մը նոյն բազնին վրայ դրաւ այրեց, ու Արաբիայի ամենէն ազնիւ խունկէն պայծառ բոցին վրայ ցանեց, անանկ որ սիրուն անուշահոտութիւն մը բոլոր մեհնինին մէջը բուրեց:

Աս ալ բաւական չէ, գեռ կրօնական հանդէսը չգոցուեցաւ, ինչու որ Չուկիօս պարանոցէն վար ոսկի հաւկթածեւ բժժանք մը կը կրէր, զորն որ ծնընդեան օրը հայրը որդւոյն վրայ կախած էր: Աս բժժանքը զաւկի մը չէ թէ միայն իր որդիական հնազանդութիւնը յիշել տար պիտ'որ, այլ եւ ամէն կերպ հիւան-

դուժիւններէն ու վտանգներէն ազատ պահէր պիտ' որ: Աարդացողը պիտ'որ ապշի, թէ որ ըսելու ըլլամ որ ինչպիսի խոր սնապաշտական հաւատք ընծայած էր այն խելացի կնիկը նոյն սնտաի բոժոժանքին: Բայց գանք որ այս օրը իր տղան պատանեկութեան հասակը լմընցած ըլլալով, մայրը նոյն բոժոժանքը մէկ դի առնելու ստիպուեցաւ. ու տարաւ իր ձեռքովը նոյն սակի տուփը աստուածուհւոյն առջին դրաւ, ուր իբրեւ նուիրական ընծայ միշտ կախուած մնաց:

Ղ ուկիոս ասոր վրայ զուարթ գէմբով մը դեռ ծիրանեգոյն շերտերով պատմուճանը * հագած, սանդուխներէն իջաւ ու բակը մտաւ, ուր բարեկամները իրեն կը ստղասէին: Ամէն կողմէն բարեմաղթական ձայներ ու ողջոյններ ընդունելէն ետեւ, բազմաթիւ ընկերութեամբ անդիճիւպատին գնաց:

Այն ատենները Աթենացւոց սովորական ժողովքները հասարակապետութեան ատենուան պէս դուրսը բացը՝ Պնիքս ըսուած բլրին վրայ չէին կատարուէր, որն որ պատմական յիշատակութիւններով հարուստ՝ ու երեւելի ատենախօսներուն փառաւորութեամբը համբաւաւոր էր **. հայա Գիոնիսոսի թէատրոնը կը ժողվէին:

Արդէն յառաջունէ հոն չափահաս երիտասարդները՝ որոնք աս հանդիսութեան հրաւիրուած էին, անդիճիւպատին կը սպասէին, որն որ հասածին պէս գնաց իր տեղը նստեցաւ: Ամէն մէկը իր բարեկամին հետ ընկերացած, անդիճիւպատին առջեւը եկաւ ու հագած սպիտակ ծիրանեգոյն շերտերով պատմուճաննին կարգաւ հանեցին: Անդիճիւպատն ամէն մէկուն հանուած ժամանակը նոյնիննշանակութիւնը յորդորական կերպով մը կը հասկըցընէր: Պատանեկու-

* Praetexta.

** Գեռ մինչուկ այս օրս ատենախօսներու վէմը, բարձր ու զեղեցիկ գործուածքով՝ որուն վրայ երբեմն Գեմոսթենէսի պէս երեւելի անձինք կայնած են, ան վէմէն զատ նա եւ խել մը կէս բոյսրածեւ շինուած բարե նստարաններ ալ Պնիքս բլրին վրայ կը տեսնուի: Հռոմի հրապարակը (Forum), աս Աթենացւոց ժողովատեղիէն աւելի հետաքրքրական չէ:

Թեան աս զգեստին եղերբը եղած այն ծիրանեգոյն գիծը, ըսաւ, ձեր պատանեկութեան ատենը ձեզի կը յիշեցնէր որ այնպէս ապրիք, որ օր մը իբրեւ այր կատարեալ ծիրանիով կարուած զգեստը, որն որ բարձրագոյն աստիճանի ծառայութեան նշանազգեստ մըն է, կարող ըլլաք հագնիլ: Նա եւ աս ալ պէտք չէք մոռնալ որ գուբ այնպիսի համբաւաւոր հռչակով պսակուած Յոյներու յաջորդները պիտ'որ ըլլաք, որոնք ձեր հայրենիքը Պարսից հեղեղէն ազատեցին: Եւ քաղաքացիի մը սուրբ պարտքերը անոնց սրտին մէջ աղէկ մը տոգորելէն ետեւ, սյրական պատմուճանը առին, որն որ բոլորովին սպիտակ ու անարատ զգեստ մըն էր: Բոլոր ժողովուրդը աս գործողութեան ժամանակ բարեմաղթութեան խօսքեր խօսեցան:

Ար նշանազգեստը հագնելէն ետեւ, Ղուկիոս իրեններուն հետ մեկտեղ Ակրոպոլիսի բարձունքը ելաւ, ինքը զինքը Աթենասայ պաշտպանութեանը յանձնելու համար: Տաճարին խուցը բաց էր ու կապոյտ եւ աստեղազարդ նկարուած կամարաշէն գաւթէն անցնելով ան սրբարանը մտան: Աթենասայ * բարձր արձանին առջեւը, որն որ հին ատենները այնչափ երեւելի ու անուանի էր իր անբաւ ոսկւովն ու փղոսկրէ գործուածքովը, երկրպագութիւն ըրին: Ընկերացողներէն ոմանք՝ որ ջերմեռանդութեան այնչափ միտում չունէին՝ աչքերնին երբեմն փառաւոր արձանին վրայ կը պտըտցնէին՝ — որն որ Բիգիասայ անուանի արձանագործին ամենէն ճարտար գործուածքն էր, — երբեմն ալ չաստուածուհւոյն քովը կախուած կանթեղին ** գեղեցիկ գործուածքը անոնց

* Աս արձանը 37 ոտք բարձրութիւն ունէր ու մէկ ու կէս միլիոն փղոսկի աժէք:

** Աս կանթեղին համար Պաւսանիաս Հերովդէս Ատտիկոսի աշկերտը, իր Յունաստանի ստորագրութեան մէջը Ա. 26, այսպէս կը գրէ. «Կայեմարտս ոսկի կանթեղ մը շինեց չաստուածուհւոյն, որուն եզը տարի մը չսպաւիր, թէ եւ դիշեր ցորեկ կը վառի. աս կանթեղին մէջի սպանիական քթանէ շինուած պատրոյկը անանկ յատկութիւն մը ունի, որ կրակէն չիմաշիր: Աս կանթեղին վրայ պղղընձէ արմաւենի մը մինչուկ ձեղունը կը բարձրանայ, որն որ մուխը կ'առնու ու կը ցրուէ:

մտադրութիւնը կը գրաւէր: Ճամբան՝ տուն դառնալու ատեննին՝ Ղուկիոս մէյ մը իր վրան գլուխը կը նայէր, ու իր այրահան պատմութեանին վրայ մեծ հաճութիւն կը զգար. եւ կ'ուրախանար իր ընկերներուն առջին երբոր կը լսէր անոնցմէ որ քաղաքացիի մը պէս նոյն զգեստը վայելցուցած է:

«Վեղեցիկ տօնախմբութիւն մը եղաւ,» կ'ըսէր ընկերներուն կձեաց փառաւոր սանդուխներէն վար իջած ատեննին, . «միայն բան մը ինձի ծանր եկաւ. զիս այն բարձր աստուածուհւոյն՝ Յունաստանի Աթէնքին պաշտպանին յանձնած ատենս, երբոր մտածեցի որ յոյն երիտասարդները հռոմայեցի կուսակալներէն շքանշան ընդունին, հռոմէական արծուենշանի տակ պատերազմին, այնպիսի տէր մը ունենան, որն որ Յունաստան միայն իբրեւ գաւառ ճանչնայ ու անի բոլորը մէկտեղ Աքայիա անուանէ: Յառաջագոյն աս բաներս ինչպէս տարբեր էր, ո՛հ թէ որ հիմակ ալ նոյնպէս ըլլար: Իմ հաւս թէ որ կենդանի ըլլար, այսօրուան սեղանին վրայ ուրիշ բանի մը վրայ պիտ'որ չխօսէինք, բայց եթէ հին հելլենական զօրավարաց ու անցած ժամանակին փառացը վրայ: Ինչպէս մայրս պիտ'որ ցնծար, թէ որ հին Ելլադան նորէն յառնէր: Ստուգիւ անոր համար այսօր այնչափ տխուր կ'երեւար, երբոր մենք զինքը թողուցինք ու թէատրոնը կ'երթայինք,»:

Աս միջոցիս նոյն ծանր մտածութիւնները մէկէն փարատեցան, երբոր Մետեղղա իր որդւոյն տուն դառնալը տեսաւ, զուարթ գէմքով մը անի ողջունեց, ու խել մը խրատներ իր սրտակից որդւոյն տալէն ետքը, հրաւիրեալները սեղանի հրամցուց:

Հարուստ տօնական զգեստները մէկգի դրուեցան, կոչնականներուն գլուխները դափնիով ու պրսակներով զարդարուած էին, ու այն անձին՝ որուն համար աս հանդիսութիւնը կ'ըլլար, զանազան ընծաներ տուին: Ամէնքը բազմեցան, եւ որպէս զի սեղանին սկիզբէն մինչուկ վերջը, (հաւկրթէն մինչուկ պտուղները *) զբօսանք մը պակաս չըլլայ, խեղկա-

* Ab ovo usque ad mala.

տակներ, ձեռնածուներ ու երաժիշտներ պատրաստուած էին հասարակաց զուարճութեան համար, ամէն մէկը իրեն մասը հանգանակելու: Հոն կրնար տեսնուիլ որ նա եւ ուրախութեան մէջ, իրարմէ ինչ տարբերութիւն ունին Յունաց ու Հռոմայեցւոց բարբը, որովհետեւ Յոյները՝ դղրդիւն աղաղակ ու կատակ՝ իրենց աղգին սովորութեան համաձայն չէին տեսներ, իսկ Հռոմայեցիք՝ — աւելի աղէկ ճաշակի, ինչպէս նա եւ աղէկ ճաշակի գործարանաց կողմանէ պակսութիւն ունենալով, անանկ բաներէն, նա եւ կերակրոյ ատեն, շատ մեծ զուարճութիւն կը զգային. — ու ոմանք մեծապէս գոհ կ'ըլլային, թէ որ՝ ինչպէս Ղուկիանոս աղէկ կը բացատրէ, կարկանդակով խոճկոր մը հանգիստ կերպով ուտէին, ու գիտնական խօսակցութիւններու տեղ, գինւով ծանրացած գըլուխին մեղմով բռնած բաժակին վրայ ծուել կարող ըլլային:

Աստուծոն սկսեալ Ղուկիոս ալ քանի մը երեւելի անձանց հետ սկսաւ տեսնուիլ, որոնք պատերազմի վերաբերեալ բաներուն մէջ փորձ ու հրմուտ ըլլալով, աս իրենց պաշտպանութեան տակ մտնող պատանին քաջ պատերազմող մը ընելու կը ջանային: Ամէն օր Արեսեան դաշտը կ'երթար, զինուորական կրթութիւն կ'ընէր, ու սաստիկ բաղձանք կը ցուցընէր, ժամ մը յառաջ թշնամւոյն առջեւը ձակատելու, ու իրեն մեծ նախնոյն, Միղտիադէսին փառաւոր հետքերը կոխելու:

Գ Լ Ո Ւ Խ Ե .

Գլխոյ ասեղ:

Այդիա՛ Մետեղղայի քով ծառայութեան մըտնելէն ի վեր, շատ ամիսներ անցած էին: Գերութիւնը իրեն համար ամայի դաշտ մըն էր, որն որ անդադար արեւուն կիզիչ ճառագայթներուն գիմացը տարածուած կը կենար: Բայց ինչպէս երբեմն հին ատենը

բարեպաշտ Բոկոսին աղախինը միայնակ առանձին ցորենի անդաստանը կ'երթար, հասկ քաղելով խուրձ կը կապէր, ասանկ ալ Աիւդիա աս ամայի երկրին մէջ գործելով, ժրաջան կ'աշխատէր աղնուական գործքերու պտուղներ ժողվելու համար: Մետեղղայի բընաւորութիւնը արդէն իրեն ըստ բաւականին առիթ մըն էր անձին ուրացութեան գործքեր ընելու: Ինչու որ աս աիկինը որչափ որ օտարներու եւ հիւրերու առջեւը ինքը զինքը սիրելի ու ցածուն կ'երեւցընէր, այնչափ ալ իրեններուն հետ խիստ ու դժնեայ վարմունք մը ունէր: Աս կողմանէ հիմակ շուտ մը զինքը պիտ'որ սկսինք ճանչնալ:

Ղուկիոս դեռ նոր դուրս ելած էր: Արեսի դաշտը, որուն վրայ մեծ զօրահանդէս մը պիտ'որ ըլլար, զինքը հրաւիրած էր: Տան առջեւէն անցած ժամանակ մայրը ողջունեց, ու աղաչեց անոր որ հոն տեղաց մօտ տնէ մը հանդէսը գայ տեսնէ: Ղուկիոս տնէն հազիւ թէ հեռացաւ, ծառայ մը եկաւ Մետեղղային, ու զինքը նոյն իրիկունը զօրահանդեսէն ետքը անդիհիւպատին տունը հրաւիրեց՝ գիշերական ակումբի մը զբօսանքի համար:

Նրաւէրը բերող ծառան հեռանալուն պէս, Մետեղղա ձեռքը զարնելով նշան մը տուաւ աղախիններուն. երբոր չլսեցին, սուլելով * կանչեց որ գան ներս մտնեն: Անմիջապէս անոնց պատուիրեց որ դուրս ելլելու զգեստները պատրաստ ըլլան, եւ աս անգամուան համար ամենէն փառաւորը բերին, ինչու որ անդիհիւպատը (ինչպէս Ղուկիանոս պատմագիրը քանի մը ապացուցեր կու տայ) այնպիսի մարդ մըն էր՝ որ միայն արտաքինը կը նայէր:

Արպիս՝ հագուստներու վրայ ըլլող աղախինը, մէկէն Մետեղղային զարգարուելու խուցը վաղեց ու ճերմակ պատմուճան մը բերաւ. աղնիւ բարակ միղեսեան բամբակէ: Աս զգեստին թեւերը կարճ կ'ըլլար ու բազկին վերի դիերը միայն կը ծածկէր. հին դորական ոճով ձեւուած, ու ոսկի ճարամանգներով

* Արոգինէս քրիստոնէից մեծամեծներուն վրայ ծառան այս կերպով կանչելը կը պախարակէ:

Հաստատուած էր: Թէ պարանոցին կողմի կտրուածքը, եւ թէ պատմութեանին վարի կողմերը՝ սիգոնացի ծիրանի կտրուած էր, որն որ հասակը առած մեծատուն խաթունի մը սովորական հագուստն էր: Արպիս՝ խաթունին զգեստը մինչուկ որ հագցուց՝ շատ աշխատեցաւ: Մեծ ճարակութեամբ այն ուռուցիկ ծալքերը մէջէմէջ յարմարցուց, մէջքի գօտին տակէն այն բազմաձալ հագուստը մինչուկ որ շտկեց արեան քրտինք մտաւ: Եւ որովհետեւ Յունաց խաթուններուն նոյն ատենուան հագուստները գրապան չէին ունենար, փոքր բաները նոյն ծալքերուն մէջը կը խոթէին: Այնպէս որ եթէ գօտին չըլլար, նոյն բազմաձալ զգեստը անանկ երկայն պիտ'որ գար, որ մինչուկ տառններէն վար կէս կանգուն գետինը պիտ'որ քսկրտուէր*:

Աւրիշ աղախին մ'ալ գլխուն մազը ու զարդը կարգի դնելու ետեւէ էր. վարսակալը հաստատելու, ու անոր տակէն գանգուր մազերը երկու կողմը թեթեւ մը տարածելու զբաղած էր: Բայց երկայն գեղեցիկ գնդասեղ մը փղոսկրեայ՝ Երիսի փոքրիկ կերպարանքով մէկանդ, զարդարանաց սեղանին վրան էր, որն որ ամենէն ետքը կը բերուէր: Աս գնդասեղը հին քանդակագործի մը զարմանագործ ճարտար աշխատութիւնն էր: Արայի փոքրիկ պատկերը մատի երկայնութեամբ էր ու ամէն մասերը արտաքոյ կարգի բարակութեամբ գործուած էին, պտուտակով խոթուած էր, այնպէս որ ուրիշ գնդասեղի մը վրայ ալ կրնար յարմարցուիլ: Մազը հիւսող աղախինը աս գնդասեղը մեծ յարգութեամբ մը զգեստ հագուելու աթոռին քով պտտիկ սեղանին վրայ դրաւ: Ամէն բան ասանկ շրջահայեցութեամբ ընելու պատճառ ունէր, ինչու որ աթոռի մը վրայ կախուած ոսկի շղթաներուն քով խարազան մը կար, մետաղի թելէ հիւսուած, ու ծայրը մետաղէ ճարամանդներով հաստատուած, որ պատճառ մը տրուածին պէս աս խարազանը վրան կը գործածուէր: Յովենալ՝ կարծես թէ աս մեր Տիկինը

* Տես Պէօթթիկէրի «Մարինան», Բ. Մաս, էջ 118.

աչքին առջեւը ունի, երբոր կանանց անդժուժեան վրայ կը գրէ:

“Վնչո՞ւ աս գանգուրը շատ վեր է: Ազնիւ խաթունը ճօճող խարաղանով աս ոճիրը կը պատժէ,”:

Աիւզիա հողաթափները կը բերէ. իսկ Մետեղզաբնդհանուր եղած նորամուտ սովորութեան համաձայն արդէն ծարիր քաշած լմրնցած էր, միայն հաւկրթածեւ հայելիի մը մէջ նայած ատեն, աչքին քանի մը ուղղելու բաներ դպան, յօնքին վրայի սեւութիւնը աղէկ տրուած չէր, ու փոքրիկ վրձինով մը դեռ վրայէն անցնելու հարկաւորութիւն կար: Յանկարծ միտքը կ'իյնայ որ աւելի թանձր սեւագոյն ներկ մը ունի որ ըստ ամենայնի իր ուղած գոյնը կրնար տալ, եւ որովհետեւ կորսընցընելու ատեն չկայ, աճապարելով մը Աիւզիայի անուներ տուաւ, անոր մեղադիր ըլլալով՝ որ, — բայց մեղադրութիւնը դեռ բերնէն ելած չէր, մէյ մ'ալ Աիւզիա զարհուրած, հոն մօտ կեցող զարգարանաց սեղանին զարնուածին պէս, ասեղը կը գրւտորի կ'իյնայ, յատակին վրայ կտոր կտոր եղած կը մնայ:

Տիկինը բարկութենէն բորբոքած, ցաթկեց ու իր յանկարծական կատաղութենէն յափշտակիչ գազանի մը պէս իրեն երկայն ու սուր կտրուած ըզունգները Աիւզիային թեւերուն խոթեց* : Իսեղձը՝ ատեն չունեցաւ ինքը զինքը ժողվելով խօսք մը զուրցելու: Տիկինը բարկացած, մէկէն խարաղանին վազեց ու անոր մետաղէ ճարամանդովը անողորմաբար կ'ինջեցընէր ու դառն կ'ծողական խօսքեր կը զուրցէր, երբոր անիկա իրեն ոտքերուն առջեւը ինկած էր: Չարագան գանալից աղջկան զգեստները արիւնով թաթաւած էին, իր հեծեծանքը գութ չէր շարժեր. ու այնպէս կիսամեռ առին առջեւէն մէկ դի վերցուցին: Ի վերայ այսր ամենայնի դեռ բարկութիւնը չիջաւ, ոտուրները գետինը կը զարնէր, այնպէս որ նոյն իսկ մէկալ նաժիշտները չէին համարձակեր իրեն առ-

* “Ծառայող գերուհիները՝ հատու ըզունգներէն նայել որ պաշտպանուած ըլլան,” Ավիլիոս:

զին բերաննին բանալ խօսք մը խօսելու համար: Բայց անոր գրգռութիւնը իջեցընելու համար՝ շողոքորթական խօսքերով անոր զարդն ու վայելչութիւնն ու գեղեցկութիւնը գովել սկսան, ու յանկուցիչ պչրանքները բարձրացընելով, հազիւ քիչ մը ինք զինքը գտաւ ու ամէհի բարկութենէն իջաւ:

Աս կերպով լմրնցաւ զարդարանքը, մինակ ճերմակ ու թեթեւ թիկնոցը մնաց, որուն զարդարուն ծալքերը ձախ թեւին վրայէն գետինը պիտ'որ ծփար:

Աս միջոցիս վայրագաւթին մէջ վեց զօրաւոր Ասորիք, երկայն ու հանգիստ գահաւորակ մը բերած կը սպասէին:

Հիները՝ իրենց աւելի հաճոյական կը համարէին, հանգիստ բազմոցի մը վրայ նստած՝ մարդկանց կռնակը տարուիլը, քան թէ ձիու վրայ նստած՝ անոնց հանած ոտքի փոշիէն նեղուիլը: Անոր համար ալ հարաւային երկիրներու փողոցները ըստ մեծի մասին նեղ կ'ըլլան: Այնպէս որ կառքի գործածութիւնը գրեթէ անկարելի է: Արդէն ծանօթ է, որ Հռոմ՝ միայն Այսորը ձիով կ'երթար: Տօթագին հարաւային կողմերուն անձուկ փողոցներն աս աղէկութիւնը ունին որ բոլոր օրը շուքի մէջ կը բռնեն:

Սեռեղղային գահաւորակը բարակ կոկուած կիտրոնի փայտէ գործուած էր, մէջը փափուկ բարձերով շիտկուած, այնպէս որ կրթընցնելու ու հանգիստ ընկողմանելու ամէն կերպ դիւրութիւնները մը տածուած էին:

Երբոր տիկինը հագուած սգուած սենեկէն դուրս ելաւ ու դէպ ի վար գահաւորակ մտնելու կ'իջնար, իր կայտառ պապկան՝ գեղեցիկ փղոսկրեայ վանդակէն իրեն համար մասնաւոր սորված գովեստի խօսքեր կը կանչէր: Նաթիշաները ու ծառաները գահաւորակին երկու կողմը շարուեցան, ձեռուրնին կուրծքերնուն վրայ բռնած, շուտ շուտ ամէն կերպ ծառայութիւն ու երկրպագութիւն ընելով, անոր մեծարանք կը ցուցընէին. մինչուկ որ գահաւորակին մէջը ելաւ բազմեցաւ, ու իք բազմածալ թիկնոցը աղէկ մը ամփոփելով, տեղաւորուեցաւ նստաւ, անու-

չահոտ իւրի շիշ մ'ալ հետը առած էր, ու իր փոքրիկ մեղիտացի շնիկը կէս մը իր թիկնոցովը ծածկած, ժպտելով մը խորհրդածութիւն ըրաւ՝ որ պզտիկ մեղիտացին պաղ առած, հարբուղիս եղած էր, ստէպ ստէպ թաթիկը քթին կը տանէր: Մետեղղա շատ անգամ աս մաքուր ու սիրուն անասնիկը քովը ունենալով, ճամբան իրեն հաճոյ չեղող անձինքներուն բարեւը ճարտարութեամբ մը շունը փայփայելու զբաղելով չտեսնելու կը զարնէր:

Ա երջապէս տիկինը ոտքը տնեն դուրս կոխեց. հիմակ ատենն է՝ որ մեր խեղճ Ղիւզիան մէյ մը աչքէ անցընենք: Իր փոքրիկ խցիկը քաշուած, բարձի մը վրայ կրթնած էր, Ոսինէ նաժիշտը քովէն չէր զատուէր, ամէն բանի մէջ իրեն կը հասնէր, վէրքերը կը լուար, ու զինքը կը մխիթարէր, վրան կ'արգահատէր. իրեն այրելով մը կը պատմէր, թէ քնչպէս ինքն ալ շատ անգամ նոյն ձաղկիչ խարաղանին վէրքերը առած էր. ու սիրտը բանալով՝ Մետեղղային առջի ատեններէն ի վեր ըրած անգթութիւնները կը պատմէր, եւ ասով կը կարծէր որ անոր սիրտը կ'առնէ:

Ղիւզիա քանի մը վայրկեան մտիկ ընելէն ետքը, ընտանութեամբ մը խօսքը բերնէն առաւ ըսելով. «Աս անգամ» սիրելի քոյր, մեր պատուական խաթունիկը բարկանալու պատճառ ունէր: Իմ անյաջողակութիւնս պատճառ եղաւ այնպիսի մեծ վնասին: Արդարութեամբ խօսելու ենք, Ոսինէ, մեր խաթունին աղէկ յատկութիւնները մտածենք. — յիշէ իր տան բարեկարգութիւնները, շատերուն ըրած բարեգործութիւնները, աղքատաց ողորմութիւնը ու կրօնական գործքերը, զորոնք ամէն օր ճշգիւ կը կատարէ»:

Ոսինէ Ղիւզիային բերնէն ասանկ խօսքեր չէր սպասեր, մեծ զարմացմամբ մտիկ կ'ընէր. «Ասոնք այնպիսի գովասանք են, ըսաւ, որ միայն իր ներկայութեանը կրնան զուրցուիլ: Բայց մէյ մը դուրս որ կ'ելլէ, կռնակէն անոր չար յատկութիւններուն վրայ մէջերնիս կարծեմ թէ կրնանք խօսիլ: Արդէն շատ անգամ կը զարմանայի, որ դուն իրեն երբեք շողոքորթութիւն չես ըներ, գուցէ նա եւ անանկ բան

մին ալ կ'ըսես, որն որ բարակ ստգտանքի մը պէս է: Բայց գոնէ աս մէկ հատը անկեղծութեամբ խոստովանէ, այնպէս չէ մի, քու սիրտդ ալ կը զարնէ՝ երբոր անոր անգթութիւնը կը մտածես. եւ դուն այն անողորմ գործքը երբեք պիտ'որ չմոռնաս,:

«Ուրիշ, մէկ դիաց իրաւունք ունիս, ըսաւ Վիւզիան, ինչու որ երբեք թողութիւն տալու բան մը չունիմ, ինչու որ ինծի երբեք անիրաւութիւն եղած չեմ սեպեր,»:

Ուրիշ քանի մը վայրկեան խորհրդածելէն ետքը, դարձեալ նոյն խօսքերը կրկնեց, չէր կրնար կոր ըմբռնել, թէ ինչպէս չարչրկած աղախին մը նա եւ սրտի ոխ մ'ալ պահելէն հրաժարի: Շատ հեռու էր դեռ այն հոգիէն, որն որ հաւատով ու յուսով կը համբերէ, ու բարձր սիրոյ զգածմամբ կրածը աչքին բան չերեւար, մանաւանդ թէ վայելմունք կը սեպէ: Ի վերայ այսր ամենայնի միտքը դբաւ, որ դեռ ասոր վրայ իրեն հարցընէ, որովհետեւ բան գնելու համար դուրս պիտ'որ ելլէր. «ըսէ ինծի, հեղ գառնուկ, ինծի միջոց մը ցուցուր, որ բարկութեանս յարձակումներուն կարենամ յաղթել. աս բանիս մէջ քեզի նմանիլ կ'ուզեմ,»:

— «Քրիստոնէի մը համար շատ միջոցներ կան, այսինքն մեր պակասաւորութեան պայծառ ծանօթութիւնը ու չարչարուած փրկչին մտածութիւնը՝ ներողամտութիւն ու ինայութիւն մեր ընկերներուն ընել կը սորվեցընէ»:

— «Շէ սիրելիս, ինծի պէս հեթանոսուհի մը համար,»:

«Վնգամ մը լսած էի, ըսաւ Վիւզիան ծիծաղ երեսով մը, որ,» փիլիսոփային մէկը քիչ մը բարկութեան դիւրամէտ էր, հեաը խոշորացոյց հայելի մը կը կրէ եղեր որպէս զի բարկութիւնը երեսը մթազնած ժամանակ հայելին մէջը նայի, որ արտաքին խոժոռ տգեղութենէն ներքինը ճանչնայ,»:

«Ուրիշ բան մ'ալ, Ուրիշ, այնպէս չէ մի, դուրս կ'երթաս. կաշի ծախողներուն քով բարակ

մագաղաթի թուղթ ալ կը գտնուի, շնորհք ըրէ քանի մը թերթի ինծի համար անոնցմէ գնէ,»:

«Բեզի պէս ստորին աղախին մը մագաղաթի հետ ինչ գործք ունի, ըսաւ, ստակը ուստի,»: «Մագաղաթի հետ ինչ գործք ունենալս քեզի հիմակուկ հիմա չեմ կրնար ըսել, բայց ստակը կու տամ: Զմիւռնիա գերի ինկած մօրս տուած դահեկաններէն քանի մը հատը դեռ քովս կայ, առանց կարծեաց պատուական մայրս ան ստակը դիտմամբ տուած էր ինծի, որ բանտապանը շահիմ: Ես վրան մտադիր չեղայ ամենեւին. զգեստիս մէկ ծոցը խոթուած մնացած պիտ'որ ըլլայ, ու անով եկած պիտ'որ ըլլամ,»:

Աս ըսաւ տեղէն ցաթկեց, սենեկին մէկ խորշը գնաց ու ստակը հանեց Ուփնէին ձեռքը տուաւ:

«Բայց ինծի պիտ'որ ըսես, ըսաւ Ուփնէ, աս մագաղաթը ինչ բանի պիտ'որ գործածես: Ապա թէ ոչ բան մ'ալ չեմ առներ. գիտնաս որ ձեռնունայն կը դառնամ: Ես զքեզ ինծի միշտ բախտի ընկեր մը ճանչցած եմ, ինծի պէս սրտակից բարեկամի մը ամէն բան կրնայ զուրցուիլ,»:

«Հիմակ ալ ըսեմ քեզի՝ երբոր պէտք է որ գիտնաս, ըսաւ Լիւզիա: Նորերս խաթունը, երբոր իրեն իմաց տուի որ ես քրիստոնէ եմ, հարցուց ինծի որ արդեօք Յուստինոս փիլիսոփային Պիոս կայսեր տուած ջատագովութեան թուղթը կրնամ մի հոգալ: Ես աս գրուածքը մեր տեղացի Կուադրատոս եպիսկոպոսին բարերարութեամբը ձեռք անցուցի: Ասկից օրինակ մը կ'ուզեմ Մետեղղային ծննդեան օրը ընծայելով՝ զինքը յանկարծակիի բերել ու զարմացընել: Ինք դեռ չի գիտեր՝ որ ես գեղեցկագիր եմ: Կարծեմ որ անոր ուրախութիւնը կրկին կ'ըլլայ, թէ որ իր գրքերուն սնտուկին մէջ գրուած գտնէ: Արդ հիմակ ամէն բան իմացար, գնա՛, բեր մագաղաթը,»:

Ուփնէ մեծ հիացմամբ մը անոր առջեւէն ելաւ, ու երթալու ատեն թեթեւ մը ձեռքին դպչելով հասկըցուց, թէ ինչպէս իր սրտին ամենածածուկ խորը թափանցած է:

Իսկ Լիւզիայի սրտին վրայ քաղցր զգածում մը

եկաւ ու այնպիսի երկնային հիացում մը պաշարեց, որուն ճաշակը միայն բարի մարդիկ առած են, երբ որ ազնուական գործողութիւն մը գլուխ հանած են: Արթնս որ աս միջոցին աստուածային աղոթելութիւն մը իրեն իմաց կու տար, “Աս անգամ աղէկ գործեցիր, ըսելով, որովհետեւ խաչին վրայ գամուած ժամանակս, թշնամեացս համար աղօթք կ’ընէի. աչկերսներուս ալ ապսպրեցի որ իրենց թշնամիները սիրեն, զիրենք ատողներուն բարիք ընեն. զիրենք հալածողներուն ու զըպարտողներուն համար աղօթք ընեն”:

Աս վարդապետութիւնը Լիւդիա շատ անգամ իր անմոռաց յիշատակաց արժանի եպիսկոպոսէն ու վարդապատէն այսինքն Պողիկարպոսէն իբրեւ Քրիստոսի առաքելոց մէջ աւանդուած վարդապետութիւն լած էր: Ասիկայ Փիլիպպեցիներուն գրած թղթին մէջ կը յորդորէր, թէ “Քրիստոսի հետ յաննել չենք կրնար, թէ որ չար ընդ չարի կը հատուցանենք. մանաւանդ թէ գթասիրտ պիտ’որ ըլլանք այնպիսիներուն դէմ, որպէս զի Աստուած ալ մեզի հետ ըլլայ”:

Այնէ մագաղաթի թերթերը ձեռքը առած դարձաւ: Լիւդիա առաւ զանոնք ու սկսաւ գծել, ու վրան գրել: Անոր ամէն մէկ խօսքերուն վրայ կը խորհրդածէր, Քրիստոնէութեան գազանի ու խորհրդաւոր խօսքերուն այնպէս բացայայտ խօսուածքին վրայ կը զմայլէր: Մեծ ուրախութիւն մը սրտին մէջ սկսաւ յղանալ, որ Մետեղղային վրայ մեծ տպաւորութիւն պիտ’որ ընէ նոյն գրուածքը: Առջի օրը մինակ վերնագիրը կրցաւ գրել, որովհետեւ ձեռուրները կը դողդրղային ամէն մէկ գրին վրայ. իրիկունն ալ արդէն վրայ եկած էր: —

Գրիչը մէկ դի գնելով օրական աշխատութեանցը վրայօք սկսաւ մտածել: Խցին պատին վրայ կախուած պարզ խաչին վրայ կը նայէր որն որ աղուոր կերպով մը պլլուած էր այն գօտուով, որով իրեն ձեռուրները Զմիւռնիոյ ամիթիթէատրոնին մէջ կապուած էին: Խաչեցելոյն պատկերին առջեւը գետինը ձուռնկ կը չոգէր, վասն զի իր փրկչին ըսելու բաներ

ունէր, դեռ օրական գործքերը չլմընցուցած: Առան-
ձինն կը յանձնէր անոր իր տիկինը, որուն պատճա-
ռաւ նոյն օրը աւելի արդիւնք մը ստանալու արժանի
եղած էր: «Արած նեղութիւններս քեզի կը նուիրեմ»,
Տէր, առ ընդունէ, թէ որ իմ համբերութիւնս քու
առջիդ հաճոյ եղաւ նէ՛ ինծի մի սեպեր, այլ իմ
տիրոջս արդիւնք սեպէ: Թէ որ երբեք պատժոյ
արժանի գործք մը ընէ, զինքը մի պատուհա-
սեր, այլ զիս անոր տեղ. ինչու որ զիս անոր տեղ
զոհելու պատրաստ եմ: Մինակ իրեն համար մէկ
հատիկ շնորհք մը կը խնդրեմ, Տէր, որուն համար
ալ ամէն օր քեզի կ'աղաչեմ, — այսինքն մեր կենարար
փրկչին ծանօթութիւնը՝ որ անի միայն ճանչնայ ու անի
պաշտէ,»:

Աս աղօթքը ըրած ժամանակ այնպէս զբաղած
էր՝ որ միտ չէր գներ թէ ինչպէս մէկը՝ դրան վարա-
գոյրը կամացուկ մը վեր առած կը դիտէր ու ետքը
մեղմով մը վար ձգեց փախաւ, երբոր ինք դեռ աղօթ-
քի մէջ խորունկ ընկղմած էր, այնպէս որ Մետեղղային
հարուստ զգեստին շուկն ալ չլսեց:

Մետեղղա աս միջոցիս մէջ թէեւ երեկոյեան
զբօսանքի մը շքեղ ընկերութեան մէջն էր. սակայն
եւ այնպէս ըրած անողորմ գործողութեան վրայ սիրտը
սաստիկ կոտրած էր. անանկ մեծ ազգեցութիւն
ըրած էր իր ոգւոյն վրայ՝ որ Ղիւզիայի սիրտը չա-
ռած չէր կրնար ինքը զինքը հանդարտեցընել: Բայց
երբոր եկաւ ու Ղիւզիային այնպիսի գիրքը տեսաւ,
սրտին մէջ սուրբ զարհուրում մը ծնաւ, սոսկաց ու
առանց անոր բերան մը բանալու ձգեց փախաւ: Ինքն
ալ իր տանը աղօթարանը մտաւ ու անոր օրինակին
հետեւելով իբր թէ վշտացած աստուածները հաշ-
տեցընել կ'ուզէր: Հոտաւէտ խնկեղէզներ վառելէն
ետքը, իր շաստուածին առջեւը ինկաւ ու ամօթապարտ
ճակատը անոր առջին ծռելով կ'աղաչէր, բայց կար-
ծես թէ այն ցուրտ աստուածութիւնը ետ ետ կը
քաշուէր. ինչու որ նոյն աղաչաւորը մխիթարելու ոչ
սիրտ եւ ոչ սփոփութիւն մ'ունէր: Ասոր վրայ սաս-
տիկ զղջմամբ զգածեալ հեթանոսուհին, ինք իրմէ

զղջման ներգործութիւն մը հնարեց, որուն նմանը ետքի ժամանակները չենք գտներ, եւ որն որ սաստիկ նուաստացուցիչ է: Այսինքն գլուխը կուրծքին խոնարհեցուցած, զգեստին վրայ թքաւ: Աս կերպ ապաշխարութեան ներգործութիւնը երեք անգամ կրօկնեց, ու ետքը դնաց իր ննջարանը մտաւ*: Ասիկա հեթանոսական ապաշխարութեան ներգործութիւն մըն էր, իր անարժան գործողութեանցը փոխարէն աստուածներուն հատուցում մը ընելու համար. ինչպէս քրիստոնեայք ալ երեք անգամ ձեռքերնին իրենց կուրծքը կը զարնեն, Աստուծոյ ցուցնելու համար որ իրենց անիրաւութեան աթուր սրտերնին է, որն որ բեկանելու արժանի է:

Գ Լ Ո Ւ Խ Զ.

Զեւսի տաճարին մէջ զոհ մը:

(166 ք. Ե.)

Սերոյիչեալ պատերազմական փորձերը բոլոր ձմեռ տեւեցին, Ղուկիոս այնպիսի եռանդամբ ինքը զինքը զինուորութեան հրահանգին տուած էր՝ որ արդէն իբրեւ աղէկ կրթուած զինուորի կարգը կը համարուէր: 166ին գարունը սկսաւ. որ ատեն կայսերական զօրաց ազրիական ծովուն հիւսիսային կողմը ալպեան լեռանց վրայ քալելուն ժամագիր ժամանակն էր:

Ա. քուիլէայէն՝ որն որ հիմակուան Թրեստէն շատ հեռու չէ, ուր երկու կայսրները ձմեռը անցուցին, հրաման ելաւ որ ամէն միջոց ի գործ գրուի, աստուածոց հաշտութիւնը իրենց շահելու համար: Գերմանիա ըլլուելու արշաւանքը շատ ծանրակշիռ էր: Հռոմէական զբօշը Գանուբին արեւելեան եզերքը պիտ'որ տարուեր, ու Հռոմի յաղթական զինուց համբարը մինչուկ հեռաւոր բարբարոսներուն՝ Յազիգներուն երկիրը, ուր հիմակուան Ռենգարիան է, պրակագեղ անտառախիտ Թայսին եզերքը պիտ'որ ծանուցուեր:

* Տես ասոր վրայ Ալեօթիկէրին "Սարխնան", :

Թշնամուցն զօրութիւնը ծանօթ էր: Մարկոմանաց զօրավար՝ Արիովիստին համբաւը եւ Արմինիոսին յաղթութիւնները արդէն առջի ատեններէն Հռոմայեցւոց դեռ միտքն էր, ու թէ որ Հռոմի մէջ գերմանական քաջութիւնը մոռցած ալ ըլլային, պէտք էր որ մրտքերնին գար այն թափօրով՝ որն որ տարւէ տարի կապիտողեան սագերով կը կատարուէր, որոնք իրենց կարկաչելովը գերմանացւոց գիշերական յարձակմունքէն Հռոմ՝ ազատած էին:

«Մտուածոց բագինները անթիւ անհամար անասուններու արիւնով ներկած էր: Նուամյի ատենէն սահմանուած ամէն սրբութիւնները ի գործ կը դրուէին, նա եւ եօթնօրեայ Աքթիսթէրնիումն ալ կատարուեցաւ, այսինքն չաստուածոց արձաններուն առջին կերակուրներ կը դրուէին, արական չաստուածները՝ սեղաններուն առջեւ պառկած, իսկ չաստուածուհիները՝ նստած *»: Աթէկք ալ իր հանդիսաւոր ողջակէզները կը կատարէր:

Ահրոպողիսի արեւելեան կողմը Ագրիանոսի կամարին մօտ, ուր որ այս օրուան օրն այն տասնու վեց վիթխարի կորընթեան սիւները կը բարձրանան, հոն է ողիմպիական Արամազդայ (Զեւսի) տաճարը: Այս նուիրատեղին 120 սիւներու անտառէ կը կազմուի, շրջապատը 2300 ոտք է: Աս հին շէնքը Ագրիանոս լմրնցուց: Տաճարին զարդը անթիւ անհամար արձաններն են, որոնց մէջ ամենէն երեւելին է ոսկիէ ու փղոսկրէ Փիգիասայ շինած այն վիթխարի յիշատակարանը, որն որ ողիմպիական Արամազդայ անուամբ ծանօթ է: Նա եւ այն մեծակառոյց յիշատակարանը, որն որ քաղաքը ի նշան երախտագիտութեան Ագրիանոս կայսեր համար կառուցած է, շատ ատեն չէր որ նոյն տաճարին մէջ դրուած էր: Աս մեծակառոյց Ողիմպարանը իրաւցրնէ հնութեան հրաշալիք մըն էր, թէ եւ եօթն հրաշալեաց կարգը չանուանուի, նոյն իսկ անոր աւերակները այս օրս ճանապարհորդին վրայ մեծ տպաւորութիւն կ'ընեն, տպաւորութիւն մը՝ որն որ

* Շթոպերկին Քրիստոնէական Արօնի պատմութիւնը, Ը. էջ. 73.

մինակ Ակրոպոլիսի՝ այս ինքն այն աւերակ մնացած չաստուածներուն քաղաքին մնացորդներովը կը յաղթուի:

Պայծառ առաւօտ մը երկրիս վրայ կը ծիծաղէր, արեւը դեռ բարձրացած չէր, երբոր Աթէնքի կրտորիճներն ու զէնքի կարող մարդիկ իրենց փայլուն տէգերովն ու սաղաւարտներով կը ժողվէին: Նա եւ Ղուկիոս պատրաստ էր, ու դուրս չելած մօրը ականջէն ըսաւ գաղտնութեամբ, որ հաւահամաները երեք նուիրական հաւերուն վրայ գանգատ կ'ընէին որ կերուտել չեն ուղեր* . եւ թէ հաւադէտները ոչ ագուաւ եւ ոչ ալ որի տեսեր են, «թէպէտեւ դժկամակ ագուաները ըսաւ ուրիշ ատեն բոլոր օրը կը կանչուրտեն»,:

«Վ՛լ աւելի եւս ըսաւ Մետեղղա, որն որ դեռ իր մաղերը դափնի պսակով զարգարել տուած էր, աւելի եւս աղօթել պէտք ենք ու աստուածներուն օգնութեան դիմել: Չարագուշակ հաւադիտութիւն մը քիչ բան չէ, մեծ նշանակութիւն ունի, վասն զի շատերը անով կը վհատին: Չլսեցիր Գեղփիսի պատգամը ինչ խօսեր է»,:

«Վ՛ի, սա պատգամը, թող տուր, ասիկա ալ չիգիտեր, թէ Արիւսոս արդեօք գառնուկ մը թէ կրիայ մը կ'եփէ** : Գեղփիս թող իր ոսկի գանձերը մեզի շնորհէ, ալ աղէկ կ'ընէ քան թէ իր խեղճ պատգամները, եւ թէ Պիւթաւղէս մը հիմա աւելի կ'ատէ, քան թէ Պիւթիա մը*** :

* Դանօթ բան է որ Պոպղիոս Աղաւդիոս առջի պունիկեան պատերազմէն յառաջ ան հաւերը՝ որ ուտել չէին ուղեր, ծով նետել տուաւ ըսելով, «թէ սր ուտել չեն ուղեր, թող խմեն»,:

** Ասիկա հին ատենը համբաւաւոր եղած պատգամ մը կ'ակնարկէ: Այսինքն Արիւսոս պատգամաւորներու ձեռքով Գեղփիս հարցուց, թէ հիմա իր տունը ի՞նչ կ'ընէ, ճիշդ պատասխան տուաւ պատգամը թէ «թագաւորը կաթօայի քով կեցած, կրիայի մը հետ գառնուկ կ'եփէ»,:

*** Գեղփիսի մէջ նոյն ատենները շատ գանձեր կային, ինչպէս Պաւսանիաս իր 10երորդ գրքին մէջ կը պատմէ: Պիւթաւղէս Պիւթոն վիշապին հետ կռուողն է: Աս պատգամատեղը իր ետքի պատասխանը Բրիտոսէ 360 տարի ետք տուած է Յուլիանոս ուրացողին. «Ըսէ քու թագաւորիդ, Փերոս ալ յարկ մը չունի»,:

Մետեղչա մեծ մտմբտուկի մէջ ինկաւ պատե-
րազմին յաջող ելքին վրայ հաւահամաներու վճիռ-
ները լսելով, իր մէկհատիկ զաւկին ապագայ վիճակը
աչքին առջեւը կը բերէր, որդւոյն հրաժարելուն
վայրկեանը կը մամտար, զորն որ քիչ օրէն պիտ'որ
տեսներ: Այսպիսի պղտոր մտածութեանց ժամանակ
Տուրանոս ջրի ժամացուցին * պահպանը Մետեղ-
չային ննջարանին փառաւոր վարագոյրը բանալով մէ-
կէն ներս մտաւ, իմաց տալով որ զոհի ժամանակն
է, պատրաստուի դուրս ելլելու: Փառաւոր շքեղ տե-
սարան մը կ'ընծայէր մարդուն աչքին՝ քաղքէն դուրս
գաշտերուն վրայ տարածուած սպառազէն բազմու-
թիւնը տեսնելը, որոնք դէպ ի տաճար կ'երթային:
Այն պողպատեայ սաղաւարաններուն ու շողշողուն նի-
զակներուն տեսքը ամենուն աչքը կը շլացընէր, իւ-
րաքանչիւր զինուոր իր հաւկրթաձեւ վահանը ձախ
թեւը զարկած զարմանալի երեւոյթ մը կ'ընծայէր
հեռուէն տեսնողներուն առջին: Առաւօտեան թեթեւ
զեփիւռ մը մարտիկներուն գարգմանակները կը ծա-
ծանէր: Իրենց գլխէն վեր անթիւ անհամար գէնքերու
կոթեր, դրօշակներ ու արծիւներ կը բարձրանային:
Թեթեւ պատերազմական հագուստ մը զինուորաց
շողուն զրահները կը ծածկէր ու մինչուկ ծնկուը-
նին կ'իջնար, ու հեծելագունգ զօրքին մեծ դիւրա-
շարժութիւն մը կու տար: Երբոր լէգէոնները տա-
ճարին մօտիկցան ու ծաղիկներով, պսակներով զար-
դարուած սեղաններուն առջին կարգաւ շարուեցան,
մէկէն լուսութեան նշան մը տրուեցաւ, Քարոզ մը մէջ
տեղն անցաւ, ու սուր ձայնով ամենուն լուսութիւն
հրամայեց: Արամազդայ քուրմը սրբութեան առջեւ
ելաւ բեհեզ հագած, գլուխը կոնաձեւ խոյր մը դը-
րած զոհը սկսաւ, որն որ այս անգամ սովորականէն
դուրս աւելի հանդիսաւոր պիտ'որ ըլլար. հարիւ-
րաւոր սեղաններու վրայ մատուցուած զոհին մուխը
սկսաւ վեր վեր ծառանալ ելլել, ու ամպ ձեւանալ,

* Քրիստոսէն 306 տարի յառաջ Հռոմ ստացաւ արեւու-
ժամացոյցը, թէ եւ անկատար ու նուազ ճշդութեամբ,
159 տարի Ք. Յ. Սկիպիոն Նասիկա առջի անգամ ջրի
ժամացոյցը Հռոմ բերաւ:

քուրմը բարձր ձայնով մը ձեռուրները երկինք վեր-
ցուցած Գիտոսին աղօթք ըրաւ, թշնամիները անհետ
բնաջինջ ընելու ու կայսերական զէնքին յաջողութիւն
խնդրելու համար: Խոստացաւ՝ որ աւարին մէկ մասը
հայր Արամազդին ու անոր տաճարին կը գործածուի,
թէ որ հռոմէական զէնքը յաղթող ելլէ: Քագիններու
մօտ կեցողներն աս քագինները շօշափեցին, ու
մանք ալ աստուածներուն արձանները իրենց թեւեւ
րովը կը գրկէին, ոմանք դարձեալ անոնց չորս գին
կը զառնային, մատուրնին շրթուքներնուն վրայ
դրած, որն որ ջերմեռանդութեան նշան մըն էր:

Աս ասանկ կատարուելէն ետեւ, զոհին սպա-
սաւորները փառաւոր հագուած սգուած զօրքին մէ-
ջէն անցան յառաջ եկան, ասոնց մէջն էր Պոպիս
ըսուածը, իրեն վեր ստատուած հագուստովը: Ասիկա
սպիտակ ցուլ մը չուանով քաշած կը բերէր, որուն
եղջիւրները արծաթեզօծ էին, ու ամենեւին արատ
մը վրան չունէր. վրան ծանրագին գորգերով ու ժա-
պաւէններով անանկ զարգարած էր, որ հազիւ կըր-
նար մարդ զինքը տեսնել: Անասունը փառաւոր ար-
ձանին առջին բերուածին պէս, որն որ շանթակիր
Արամազդայ պատկերը փղոսկրէ գահաւորակի վրայ
նստած կը ներկայացընէր, սեղաններուն վրայ բորբո-
քող կրակին նօրէն խունկ նետուեցաւ, որոնց ծուխը
անանկ սաստիկ կ'ելլէր, որ տաճարին սիւները բոլոր
ծածկուեցան, ու զոհագործներուն փառաւոր զգեստ-
ները մոգիչ կերպով մը կը փարփային: Արամազդայ
քուրմը յառաջ անցաւ ու ցլին վրայ ջուր սրկեց,
դլուխը ալիւր ու աղ ցանեց, ու ետքը քիչ մ'ալ
բարակ ծեծուած խունկ առնելով ոսկի եղջիւրնե-
րուն վրայ ցանեց: Ասկէ ետքը գինիէն ճաշակեց ու
մէկալ քրմերուն ալ տուաւ, որոնք ձերմակ հագած
անոր չորս գին կեցած էին: Յուլին՝ ամանի մը մէջէն
գինի խմցընելէն ետքը, ճակտէն վեր քանի մը մազ
փրցընելով, զոհի համար որոշուած կրակին մէջ նե-
տեցին: Աս միջոցիս ցլասպան մը իր երկայն ու սուր
դանակովը պատրաստ կեցած էր, ու քրմապետին
հրամանին կը սպասէր: Յլին երկու գին Պոպիսի

երկու կտրիճ օգնականները կայնած էին, որոնց պաշտօնը մէկէն շուտ մը ցուլը սպաննուածին պէս արիւնը ողջակեղի ամաններուն մէջ առնուլ ու սեղաններու վրայ թափել պիտ'որ ըլլար: Յուլը սպաննելու համար որոշուողը քրմապետին հարցուց, կրնամ ընել. քրմապետը պատասխան տուաւ, ըրէ: Աս հրամանին վրայ ցլասպանը զօրաւոր ձեռքով սուր դանակը ցլոյն փողը խոթեց. կը մռնչէր անասունը, բայց անդիէն անոր տաք արիւնը կոնքերու մէջ կ'առնուէր ու բազիններու վրայ կը սրսկուէր: Երբոր բոլոր արիւնը վազեց լմրնցաւ, կարգը ընդերահամաներուն եկաւ: Ասոնք անմիջապէս փորոտիքը քննելու մօտեցան. լերդը ու սիրտը դուրս առին, ու ամէն բանէն յառաջ մեծ ճշգուծեամբ ու զգուշութեամբ աս լերդը քննեցին, որովհետեւ աս էր անթիւ գուշակութանց աղբիւրը: Տհաճութեան կերպարանքով մը երկու կիսեցին. ու ստէպ կը տրանջէին որ լերդի գլուխ ըսուած տեղը աս անգամ գրեթէ բոլորովին չկայ: Սիրտն ու կարգաւորեալ ընդերքը սակից աւելի նպաստաւոր յոյս մը կու տային պատերազմի ելքին յաջողութեանը: Աս կերպով ապագայն քննուեցաւ, ու կենդանւոյն նոյն մասերը որոնք աստուածներուն կը վերաբերէին՝ վրան ալիւր, գինի ու խունկ սրսկելով, բորբոքող բազիններուն ու զոհի սեղաններուն վրայ դրուեցան, որոնց քովը պրական ու իգական աստուածներուն շարժական արձանները կային: Ասկից ետքը ժողովուրդը մօտեցաւ, որոնք իրենց ոսկի ու արծաթի պարգեւները ու զարդերը սեղաններու վրայ դրին՝ որ աստուածոց պատուոյն համար պարուին:

Բայց որովհետեւ աս անգամուան զոհը արտաքոյ կարգի պէտք էր որ ըլլար, անոր համար մէկ կենդանւոյ մը զոհը բաւական չէր, ուստի հեթանոսական հաւատքը ուրիշ անթիւ եզեր Արամազդայ խաւրեց, որոնց ամենէն գերազանց մասերն, աստուածոց որոշուեցան, մէկալները քուրմերուն. ուրիշ մաս մ'ալ ժողովրդեան համար որոշուած էր, որն որ տաճարին չորս կողմը զոհ ուտելու կը բազմէր: Հար-

կաւոր չէ մասնաւորապէս յիշել որ երաժշտութիւնն ալ աս հանդիսութիւնը աւելի փառաւոր կ'ընէր, այսինքն խլաձայն փողը, զօղանջող ծնծղան ու մետաղէ սրինգը, զորն որ ճակատը կապուած զոհի սպասաւորները կը հնչէին:

Սեղանը լմննալէն վերջը, դարձեալ բարձրաձայն աղօթքներ եղան, գինին ոսկի տաշաերէն դուրս հեղուեցաւ, ու ժողովուրդը աս խօսքերով արձակուեցաւ «Հիմայ հրաման է երթալու»,:

Ահա այսպէսով քիչ տողի մէջ մեր ընթերցողաց առջին հեթանոսական զոհի կերպ մը ընծայեցինք. իրենց ձգելով որ աս գործողութեան կրօնական մասը գատեն: Մինակ աս գիտողութիւնը կրօնանք աւելցընել, որ զոհը միջնակէտ մըն է, չէ թէ միայն քրիստոնէութեան, այլ եւ մովսիսական ու հեթանոսական պաշտօնին: Զոհը մատուցողը կը խոստովանի որ Աստուծոյ պարգեւներուն անարժան է, ու աս պարգեւներուն վրայ մեղօք իր իրաւունքը կորսնցուցած է: Ասոր համար Աստուծոյ ամենէն գեղեցիկ պարգեւներուն փոխանորդները՝ այսինքն պտուղները, կենդանիներն ու մեծագին բաները աստուածութեան սեղանին վրայ կը դնէ, խոնարհ խոստովանութեամբ մը որ աս բարերարութեանց արժանի չէ: Հին հաւատքին նայելով, Աստուծոյ բարկութիւնը կենսքով մը բոլորովին կը քաւուի եւ ասկից յառաջ եկած էր մարդազոհը: Անանկ կը սեպուէր որ մարդու արեան վրան է բոլոր կեանքը, եւ աս արիւնն էր, որն որ սեղանին վրայ կը թափուէր: Քիչ մը ետքը մարդու տեղ կենդանիի արիւն սկսան գործածել սեղանին վրայ, բայց միշտ կենդանիի զոհը ըստ հին ազգաց աստութեան, եւ նոյն իսկ Իսրայելացւոց, իբրեւ մարդազոհի տեղ բռնող նուէրք մը կը համարուէր:

Արամազդայ տաճարին մէջ կատարուած կրօնական գործողութեան նպատակը, աստուածոց ու մարդկան հօր՝ Արամազդայ հաշտութիւնը խնդրելու համար էր, իբրեւ ամենուն մեղաց թողութիւն մը, ու վերահաս պատերազմին յաջողութեան համար: Աս պատճառիս համար ալ նոյն օրերը Աթէնք ժողովուր-

դը խումբ խումբ ոտք ելած, որ օրուան վրայ Աթենասայ ու Արէսի * տաճարը կը յաճախէին, եւ ուրիշ անթիւ անհամար տաճարներուն մէջ իրենց զոհը կը մատուցանէին:

Ա երջապէս մարտիկ զօրաց Պիրէոսի նաւահանգիստը դէպ ի նաւերը երթալու օրը եկաւ հասաւ. ասիկա ընտանիքէն ու հայրենիքէն բաժնուելու օր մըն էր: Ծնողք սկսան իրենց որդւոցը ու զաւակացը ան հին սպարտական զրոյցը յիշեցընել, այսինքն՝ ետ դառնալ կամ վահանով ու կամ վահանին վրայ: Օրհնութեանց ու բարեմաղթութեանց խօսքերու մէջ, Ղուկիոս ալ ինքը զինքը մօրը գորովական զգածումներէն ճողոպրեց, որն որ դեռ առջի անգամ պատերազմի ասպարէզ պիտ'որ ելլեր: Ասիկա իր մայրը մխիթարելու կերպը գիտէր, երբոր անոր առջին պատերազմէն ետքը իր ապագայ շքեղ փառաւորութիւնը, աստիճանը ու պատիւը կը նկարագրէր: Բայց մենք պիտ'որ տեսնենք, թէ ինչպէս երիտասարդական իրահամարձակութիւնն ու ամէն բանի դիմադրաւ նետուիլը՝ աճառի փայլուն փամփուշտ մըն է, որն որ շատ շուտով պզտոր ջրոյ կաթիլ մը կ'ըլլայ:

Գ Լ Ո Ի Խ Է .

Գերեաց կեանքին նկարագիրը:

Ղուկիոս ճամբայ ելլելէն ետեւ, մայրը խոր տրամութեան մէջ ընկղմած մնաց: Ան ատեն միայն իր որդւոյն վրայ ինչ աստիճանի սէր ունենալը զգաց: Իր խոր միայնութիւնը քաշուած աշխրբէս հեռու, հոգերով լիցուն մայրենի սրտի մը ձայներուն միայն ականջ կ'ախած ժամանակ, մենք մեր բարեմիտ ընթերցողին մտադրութիւնը աս միջոցիս մէջ Մետեղզայի գերեաց խումբին վրայ զբաղեցընենք:

* Աթէնքի արեւմտեան կողմը գեղեցիկ գորիական տաճարը, որն որ հնութեան ամենէն աղէկ պահուած աւերակներէն մէկն է, «Թեսէոսի տաճար», կ'անուանուի: Բայց Ռոս երեւելի հնագէտը կը կարծէ որ աս տաճարը պատերազմի աստուածին նուիրուած ըլլայ, ու Թեսէոս ուրիշ բան ունեցած չըլլայ, բայց եթէ հասարակ Ղիւցալնարան մը:

Ս արք՝ մեծ գաւիթը տանող սենեակները խել մը խոհակերներու ու անոնց օգնական մանչերու բազմութիւն մը կը տեսնենք. ի՞նչ քանի համար կը հարցընէք նէ, քիչ մը համով կերակուր պատրաստելու համար են: Եւ մանաւանդ աս օրերս աւելի կ'աշխատին որ իրենց սգաւոր տիկնոջ առջին քանի մը սիրած կերակուրներ հանեն: Բայց ասոնց մէջէն ամէնքն ալ կերակուրը սեղանին վրայ տանելու պատիւը չունին, ինչու որ աս պաշտօնիս համար ալ ուրիշները, այսինքն գեղեցկատեսիլ պատանիք, խարտեաշ մազերով ու կապուտակ աչուրներով, սահմանուած էին, որոնք մասնաւոր հիւսիսային հեռաւոր կողմերէն բերկրամով հարաւային ազգերուն կը բերուէին:

Աս մեծ շէնքը պտըտելու որ ըլլանք, սրահ մը կը գտնենք, որուն մէջ բնակողները Եւրոպայի արուեստանոցներու գծբախտ գործաւորները կը յիշեցընեն, կտաւագործ աղջիկներ կարգաւ շարուած կ'աշխատին, այսինքն աղախիներ՝ որոնք կարգանստած կէս մը իրենց տիկնոջը համար, կէս մ'ալ տան բազմութիւ ամբոխին համար, ոստայնանկութիւն կ'ընէին: Գերեաց աւելի մեծագոյն մասը պարտէզի մէջ կ'աշխատին, ընդեղէններ տնկելու, ծաղիկները մշակելու եւ պտուղ յառաջ բերելու համար: Իսկ Մետեղղայի ձիթաստանները, սյգեստանները ու Ափիսիայի մէջ՝ ինչպէս նա եւ Եղիւսիսի մօտ Թերեզրոնին մէջ ունեցած ամարանոցին գալու ըլլանք՝ բաւական կ'իմանանք թէ իրեն հպատակաց թիւր եւ զբաղումը ի՞նչ էր: — Այս ընդհանուր տեսութիւնը տալէն ետեւ գանք առանձինն քանի մը գործքերու վրայ ի մասնաւորի:

Վախ եւ յառաջ խարտեաշ Տիւրանոս գերւոյն վիճակը մէյ մը զննենք: — Իսեղծը իբրեւ պատժաւոր վերոյիշեալ սրահին մէկ անկիւնը քաշուած — ջրի ժամացուցին քով կը կայնէր: Ասի քանի մը օտարականներ տեսնելով, ամբընալով մը գլուխ ծռեց ու վզէն կախուած տախտակին վրայ տեսաւ որ իր ըրած մէկ տղայութիւնը նշանակուած էր, զորն

որ իրօք ալ ըրած էր: Քանի մը օրէն ի վեր երբոր տեսաւ որ ալ վրան մտադրութիւն ընող չըլլար, սանդուխին քովէն վար կախուած խարազանը կամացուկ մը առաւ ու պարտեղին սաղարթներուն մէջ պահեց: Խստաբարոյ Քոզոսը ասի հոն գտնելով, եկաւ անոր քանի մը ինջեցուց ու ոտքը ծանր գնտակ մը կապած սրահին մէկ անկիւնը դրաւ: Թէեւ իր նայուածքը խոժոռ էր, բայց զուարթութիւնը ամենեւին կորսնցուցած չէր. ցածկրտող աքիսի մը կը նմանէր որն որ ծառերէն վեր մագլցելով ելլելու միայն միտ կը դնէ: Իր կակուղ սրտին զգածմունքը շատ անգամ իր հեզիկ հնչող սրննգին ձայներովը կը բացատրէր: Երբոր ստահակութիւնը կը բռնէր, իր փոքրիկ թրմբուկը ձեռք կ'առնէր վրան դափելու, մինչուկ որ Քոզոս իրեն զգալի նշան մը կու տար, որ խաթունին ազգ ընելու ժամանակը հասած է:

Աս Քոզոսը դաժան ու խստասիրտ մէկն էր, իր շարժուածքը ու սէգ կայնուածքը կը ցուցնէր որ յառաջ զինուորութիւն ըրած էր. իր տեղը փայրագաւիթն էր, ուր սիրով ալ կը կենար: Չեռքի գաւազանը իր պատուանշանն էր, ու Յետեղպային գերեզմանն էր. իրեն պաշտօնն էր բոլոր տան սպասաւորները կառավարել ու միանգամայն պատժելը: Գլխարկը որ մինչուկ վարձ աղէկ սնուցուած երեսները քաշած էր, կը ցուցնէր որ ալ դերի չէր: Բայց յառաջ պատերազմի գերիներուն հետ Աթէնքի հրապարակը ծախուած՝ ու երկայն ատենէ ի վեր ազատութիւն դտած էր: Իր ձեռքի գաւազանէն աւելի խարազան կը գործածէր, որովհետեւ աւելի զուարճալի էր իրեն գերուոյ մը թեւերը սիւնի մը պրկել, ու ոտքէն ծանր բան կախելով անշարժ ու շիտակ կեցընել ու աս դրից մէջ խարազանով զարնել: Արեւար որ Վաղիգուղային հոգին ասոր անցած էր, որն որ օր մը պատուական ընտանեաց կտրիճները իր զօսանացը համար խարազանով ծեծել տալէն ետքը, տանջել տուած էր: Քոզոսին այն ժանգոտած խիստ ձայնը միայն լսողը կը դողացընէր, ուր մնաց այսպիսի խստաբարոյ մարդու մը հետ վիճաբանութեան

մանել: Ան էր զարմանալին որ գերեաց Տեա ինչ
չափ խստութեամբ կը վարուէր նէ, նոյնչափ ալ մե-
ծերուն մարդասիրութիւն ու անուշ քաղաքավարու-
թիւն մը կը բանեցընէր: Մետեղղոսի կենդանութեան
ժամանակը աս անողորմ մարդն ինքը զինքը այնպէս
սիրցուցած էր անոր ու սիրտը վաստակած էր՝ որ
Մետեղղոս մեռած ատեն իր կնոջը յանձնեց Բոգոսը,
պատուիրելով որ իբրեւ գերեզան պահէ:

Ինչ դիրք որ Բոգոս ատեն մը իր տիրոջը նկատ-
մամբ ունէր, նոյն դիրքը Տիմա վաստակած էր 60 տար-
ւան պառաւ աղախին մը իր տիկնոջը նկատմամբ: Ա-
սիկա Սելինան էր, ծննդեամբ Ափրիկեցի: Իր կենաց
կէսը Մետեղղային Տեա անցուցած էր ու տան խա-
թունը իբրեւ տղայ ճանչցած: Ատտիկոս ասիկա Հռո-
մի Տրապարակէ մը գնած էր, որ Քրիստոփորան նայի
խնամէ: Իր սեւ գորշ փրփկեցի երեսն՝ իր խնամած
աղջկան վարդակարմիր փափկութեանը ընդդիմա-
պատկեր մը կ'ըլլար: Ու Ատտիկոս իրեն դուստրը
երբեք այնչափ աղուոր չէր տեսներ, ինչպէս երբոր
աս տգեղ նաժշտին ուսին վրայ մրափած կը տես-
նէր*: Այսպէս Սելինան իր խաթունին կեանքը ու
վարքը բոլոր գիտէր կը ճանչնար, ու այնպիսի մի-
տում ու յօժարութիւն կը ցուցընէր անոր, որ իրեն
առաջարկուած ազատութիւնն ալ երբեք չուզեց գոր-
ծածել: Միայն թէ իր աղէկ յատկութիւնն ալ մի-
այն նոյն յարումը ունենալուն վրայ կը կայանար:
Ուրիշ կողմանէ վարմունքը շատ գէշ՝ ու մէկալ ծա-
ռայակից աղախիներուն Տեա անտանելի էր: Աեղ-
ծաւորութեան մէջ անանկ վարժ էր՝ որ քովը ա-
ղախին չկար որ վրան վստահութիւն ունենար: Ի վե-
րայ այսր ամենայնի միշտ կը ջանար որ ամէն մարդ
իր վրայ աղէկ մտածէ, անոր համար ալ շողքորթա-
կան խօսքեր, չէ թէ միայն իր խաթունին, այլ նոյն իսկ
իր ծառայակից ընկերներուն երեսէն վեր զուրցելու
չէր ամբնար: Իրեն աս քծնող բարքը՝ իրեն փրփ-
կեցի սերնդեանը յատկութիւնն էր: Քանի որ կը ծե-

* Ասանկ սեւ նաժիշտներ հիմակ ալ Փարիզ կը տեսնուին,
զոր օրինակ թիւլլըրի սրահներուն տակը:

րանար. նոյնչափ ալ իր սնապաշտական միջոցները կը
շատցընէր, որպէս զի իր թխագոյն գեղեցկութիւնը
գուրս հանէ, ցուցընէ. եւ որովհետեւ մազերուն
կարծութեան վրայ կ'ամրանար, անոր համար գլուխը
բազմածալ զարգարուն լաթով մը կը ծածկէր: Այն-
չափ երկայն ծառայութեանը փոխարէն, աղէկ ստրկի
գումար ալ մէկգի դիզած էր, որովհետեւ իր ամ-
սական վճարքը վեց եգիպացի չափ ցորեն, ու եօթը
գեննար (ցլանցիկ) ստակ էր: Աս կերպ մթերած
գումարովը, իր առանձնական շահագիտութիւն ընելու
կերպն ալ գիտէր. նմանելով ան հնդկային մրջիւն-
ներուն, որոնց համար կը պատմուի որ հողէն ոսկի
կը ժողվեն: Ասի երբեմն երբեմն աժան գերի մը
որ գանէր, կը գնէր, անոր աշխատութենէն իրեն
վարձ կը քաղէր, ու նորէն նոյնը կը ծախէր: Գեո-
մօտերս հրապարակէն ոսկի ու արծաթ բանող աղ-
ջիկ մը 100 տրախմայի (40 փղորինի) գնեց: Իսկ իր
ստակը անանկ խնայելով կը գործածէր՝ որ իր կենացը
մէջ դանկ մ'ալ առանց հարկաւորութեան չէր ծա-
խեր կամ մէկու մը չէր պարգեւեր: Աս կերպով յա-
ռաջ երթալու որ ըլլար մինչուկ ցլտոր ծերութիւնը,
գուցէ իր գումարը մէկ տաղանդի * կը հասցընէր:
Իսկ թէ որ մահը վրան հասնէր ու աս թշուառ ա-
գահին կեանքը բառնար, Մետեղղային ընելիքը ուրիշ
բան չէր կրնար ըլլալ, բայց եթէ հասարակ գերի-
ներէն քիչ մը վեր յուղարկաւորութիւն մը, դիակը
փայտակուտի մը վրայ սյրել տալով: Աս էր աւասիկ
ամենալքատ մարդիկներէն աւելի ըլլուելու զա-
նազանութիւնը:

Իսկ որպէս զի մեր յօժարամիտ ընթերցողնե-
րուն միտքը չնախապաշարուի, որ Մետեղղային բոլոր
ունեցած գերիները խստասիրտ Բոգոսին, եւ կամ
թխագոյն Վիբէացի Սելինսյին պէս են, անոր համար
մեր բարեբարոյ՝ ան վերը յիշուած հողաթափներու
աղախինը՝ այսինքն գեո բարքը չսպականած ու զուար-
թամիտ Ուինէն մէյ մ'ալ աչքէ անցընենք:

Ուինէ՛ Մետեղղայի քով մտնելէն ի վեր, քիչ

* Մէկ տաղանդ = 6000 Տրախմա. կամ 1400 թալէր:

ատենուան մէջ իր ինչ ըլլալը յայտնած էր: Յառաջ ստորին ծառայութիւններ կ'ընէր, խաթունին զարգացումը ատենը իրեն օգնելով, ետքէն կամաց կամաց սկսաւ պաշտօնը մեծնալ, հողաթափներուն փոշին կը մաքրէր, վերջապէս տեսակ մը կաշեգործութեան սկսաւ, այսինքն բարակ կակուղ ու ճերմակ հողաթափներ սկսաւ շինել, անանկ զարմանալի յաջողակութեամբ՝ որ ոտք անցուցած ժամանակ, կարծես թէ կակուղ կտաւէն շինուած ըլլար: Զարմանալի երագութեամբ՝ ինչ որ ձեռք կ'առնուր առջի անգամ ճարտարութեամբ կը յաջողցընէր. միայն նշմար մը բաւական կ'ըլլար, ուզուածը տեղն ի տեղ կատարելու: Ամենէն զուարճալին ան կ'ըլլար, երբոր Մետեղլա պտրտելու համար զինքը ուրիշներէն աւելի հետը կ'առնուր. հոն էր տեսնելու արժանի Մետեղլային ծաղրական շարժումները, երբոր գլուխը անդադար մէյմը ձախ՝ ու մէյ մը աջ, իր անթիւ անհամար ծանօթներուն կը շարժէր, առանց մէկը աչքէն փախցընելու. անանկ որ կարծես թէ երակներուն մէջէն սնդիկ կը խաղար:

Ամենէն ողորմելին պղտիկ Թրակացի մըն էր, որն որ հինգ տարւան ծախուած էր, դեռ չափէ դուրս պղտիկ. եւ աս էր իրեն դժբախտութիւնը: Յոյն վաճառական մը զինքը գնեց, որ պղտիկուց իր ուզածին համեմատ մեծցընէ, ու արուեստով գաճաճ մը ընէ: Աս վախճանաւ, Թրակացին իր պղտիկութիւնը ու աճման ընդունակ հասակը, գաճաճութեան յարմար դարանի մը մէջ անցընելու ստիպուեցաւ, զորն որ Պլինիոս «գաճաճի տուփ», բացատրութեամբ կ'իմացընէ. որպէս զի անոր մէջ յաճախ ճնշուելովը ու պտղով չափաւորապէս սնանելով, աճելու զօրութենէն դադրի: Եւ իրօք ալ միայն երեք ոտք աճում ունեցաւ: Քիչ մը վերջը Աթէնքի վաճառանոցին մէջ բարձր գնով ծախու հանուեցաւ, ու բարի Մետեղլոսը վրան արգահատելէն միայն գնած էր, որպէս զի տան մէջ իր հացկատակն ըլլայ: Աս պատճառաւ Թրակացին ալ գաճաճի մը վերաբերած յատկութիւնները չունէր, ի ծնէ խեղկատակ մը չէր, եւ ոչ ալ պատասխանելու մէջ երգիծաբանութիւն մը ունէր, հապա բոլո-

րովին խեղճ մարդուկ մըն էր: Շրթունքներուն վրայ բարեսիրտ ժպիտ մը կը շարժէր, այնպէս որ լալու ու ծիծաղելու մէջ տեղը բան մըն էր: Իր բարեսրբտութեամբը ամենուն կը ներէր, որ իր ծաղրական տեսքին վրայ հաճութիւն ունենան, բայց թէպէտ ամէն հարցման սիրով պատասխան կու տար, ի վերայ այսր ամենայնի աշուրներն ալ շուտով կը լեցուէին: Ի՞նչ որ զուրցէր, խօսողն ինք ըլլալուն համար, արտաքոյ կարգի ծաղրական կը հնչէր. եւ աս տպաւորումը չընելու համար կը ջանար որ ծանր կերպով մը խօսի: Մեակողքա ու Ղուկիոս որդին անոր հետ միշտ գորովական սիրով կը վարուէին, անանկ որ զինքը հեռացընելու համար շատ էր, բարի Ղուկիոսին վրայ բան մը յիշատակելը, մէկէն կը թողուր կը փախչէր, ու երեսը կը ծածկէր տան կամ պարտէզին մէկ խորշը, ու անոր հեռաւոր ճամբորդութիւնը կու լար:

Ասանկ արարածներու նկարագիրն ալ մեր բարեմիտ ընթերցողներուն առջին հանելու հարկաւոր տեսանք, որովհետեւ նոյն ժամանակուան վրայ եղած տպաւորումը ճշգրիտ չէր ըլլար, թէ որ գերեաց վիճակն ու հանգամանքը աղէկ չգիտցուէր: Խենթութիւն մըն է, հին հասարակապետութեանց ու կայսերութեան ժամանակ ազատութեան վրայ խօսիլը: Երբոր մարդ գիտնայ որ ասոնց ազատութիւնը՝ անատենուան անձանց երկու երրորդական մասին ստրկութեան վրայ շինուած էր, ան ատեն աս ազատութեան վրայ մարդ ուրիշ կերպ կը մտածէ: Օրինակի համար, Աթէնք՝ Գեմետրիոս փաղերացւոյն ատենը (թ. 300 Տ. Յ.) շուրջ 21,000 ազատ, 10,000 կէս ազատ, ու 400,000 գերի ունէր. — ահա ազատներուն ու ստրուկներուն մէջ այսչափ մեծ անհաւասարութիւն կար: Ուրիշ պատմական օրինակ մ'ալ, որն որ Հռոմայեցւոց հին ժամանակուան ազատութեան վրայ մտադիր ըլլողին միտքը մեծ սարսափով կը պաշարէ՝ հետեւեալն է: Հռոմայական օրէնք մը կը պատուիրէ, որ եթէ տան տէր մը իր գերիէն սպանուի, եւ սպաննողը չգտնուի, — տան բոլոր գերիները սպաննուին: Պեդանիոս Սեկունտոսին վրայ աս

գիպուածը Հռոմ՝ պատահեցաւ, երբոր սպասաւորաց մէկէն սպանուելուն համար, իր տանը մէջ գտնուող 400 գերիները մահուան դատապարտուեցան: Թէեւ ժողովուրդը աս վճռոյն գործադրութեանը դէմ ոտք ելաւ, ու ան դժբախտ գերիները ազատելու ջանաց, բայց Ներոն կայսրը զինուորական պահապաններով պաշարեց ան ճամբան՝ ուսկից որ աս դատապարտուածները պիտ'որ անցնէին, եւ ասանկով այն անգութ վճիռը ամենուն վրայ կատարուեցաւ:

Իսկ թէ կալուածատէր մը որչափ գերի կրնար ունենալ՝ գաղափար ունենալու համար, օրէնք մը պահուած է, ուսկից կրնայ մահաբերուիլ: Աս օրէնքը խտաիւ կը պատուիրէ տերաց, որ իրենց կտակին մէջ 100 գերիէ աւելի կարող չըլլան ազատ ընել, թէ որ 20,000 ունին նէ: «Խեղճ մարդ», կը գոչէր Սենեկա*, «որ քու զուարճութիւնդ գերեաց բազմութեան վրայ դրած ես, որոնք այնչափ բազմութիւ ես, որչափ պատերազմի ելլող ազգի մը զօրքը, եւ առանձնական շէնքերու վրայ, որոնք մեծամեծ քաղաքներու շրջապատէն աւելի են. թէ որ ունեցածդ ակ աւելի ունենալու բաղձանքիդ հետ համեմատելու ըլլաս, մուրացիկ աղքատի մը հետ զքեզ հաւասար կը գտնես»: Աս ճնշուած մարդկանց բազմութեանը նայելով, զարմանալու չէ թէ որ Հռոմայեցւոց պատմութիւնը երբեմն երբեմն անոնց գլուխ վերցընելը, ոտք ելլելը կը պատմէ. ինչպէս Եւնոս գերին 60,000ով, ու ետքն ալ Սպարտակոս 40,000 գերիներով, բաց դաշտի վրայ Հռոմայեցւոց հետ կը զարնուին: Ասոնք ան ատեն յաղթուեցան, սրով սպանուեցան, նա եւ հաղարաւորներ խաչ հանուեցան: — Սակայն քանի մը դար ետքը կը լսենք որ հնչող շղթաները գերեաց ձեռքէն կ'իջնան: Բայց հոս կրնայ մէկը հարցընել, որ անոնց յաղթութեանը ու ազատութեանը ո՞վ օգնեց: — Եւնոս թէ Սպարտակոս կամ Հռոմայեցւոց կայսրներէն վեր եղող մէկը:

* Սենեկա «Բարերարութեանց վրայ», է՝ 10:

Գ Լ Ո Ւ Խ Ը .

Յուստինոսին ջատագովութեան թուղթը :

Մետեղզային ծննդեան տարեդարձն ըլլալով, այսօր իր պալատներէն մէկուն սրահի սիւները գեղեցիկ պսակներով զարդարուած էին : Պարտեզներէն ու դաշտերէն ժողովուած ամենագեղեցիկ պտուղները, զարդարուած կողովներու մէջ բոլոր հոս կը բերուէր. աղջիկներէն մէկ քանին գոյնագոյն ծաղկանց տերեւները վայրագաւթին գետինը կը սփռէին, ուրիշները եգիպտացի ծաղկավաճառներէն բերուած անուշահոտ ծաղիկները պսակներու վրայ խոթելու զբաղած էին : Արուեստաւորները նորանոր ճարտար ու գեղեցիկ գործուածներ կ'առաջարկէին. նոր զգեստներ, գօտիներ, բանուած հողաթափներ, եւ այլն : Մետեղջա ասոնց ամենուն ճարտարութիւնը, արուեստն ու փոյթը գովելով կ'ընդունէր : Ասոնց մէջէն ամենէն աւելի զինքը ափշեցընող պարգեւը, արդէն նախընթաց օրուրնէ իր գրատանը մէջ գտած, ոլորուած մագաղաթի թերթերն էին, որոնց մէջ, գեղեցիկ զարդագիրներով, աս հետեւեալ խօսքերը գրուած էր .

«Տիտոս Եղիոս Արրիանոս Անտոնինոս բարեպաշտ Օգոստոսին ու Վեսարին, ու Վերիստիմոս անոր փիլիսոփայ որդւոյն * , եւ Ղուկիոս փիլիսոփոսին իմաստութեան բարեկամին, մեծափառ սինկղիտոսին ու բոլոր հոռմայեցի ժողովրդեան կը նուիրուի աս աղերսագիրը, անոնց համար, որոնք ամէն մէկ սերէն կ'ատուին ու կը նախատուին, որոնց թիւը կը համարի ինքը զինքը Յուստինոս Արիսկոսի որդին ալ, որն որ Ասորիքի Փլաւիա Նէապոլիսէն է, » :

Տիկինը աս երկայն տիազոսը կարգալուծն պէս, աս պարգեւը որմէ ըլլալը հասկըցաւ. զարմանքը աւելցաւ, երբոր լսեց որ նոյնը օրինակողը Վիւզիան է, արդէն նոյն քրիստոնէուհւոյն ան իրիկուն խցիկը փակուած իրեն համար աղօթք ընելը մտքին վրայ տըպաւորութիւն ըրած էր. հիմակ ալ նոյն գրութիւնը

* Մարկոս Աւրելիոս կայսրը՝ Անտոնինոսին որդեգիրը յաւաջ Վերոս կը կոչուէր :

իր զգած մունքը աւելի եւս վառեց, երբոր տեսաւ որ
ինչ ազնուական կերպով իրմէ վրէժխնդրութիւն
կ'առնու: «Թէ որ քրիստոնեայք իրենց եղած անի-
րաւութեան փոխարէնը այսպիսի գործողութեամբ կը
հատուցանեն», ըսաւ ինք իրեն, «ան ատեն ինչպէս
կրնայ ըլլալ որ Հռոմայեցւոց բոլոր տէրութեան մէջ
վրանին ձգուած յանցանքներն ալ ստոյգ ըլլան»:

Գեղեցկագիր աղախինը շուտ մը իրեն կանչել
տուաւ եւ ըսաւ իրեն, որ իր գեղեցիկ ձիրքէն ա-
ւելի հոգւոյն վսեմութեան վրայ զարմացած է, ուսկից
նոյն ձիրքն ալ յառաջ եկած է:

«Մ,ս թուղթը», ըսաւ, «ես շատոնցունէ բաղ-
ձացած էի ու ձեռք չէի կրցած ձգել, ուրիշ հան-
դարտ ատեն մը պէտք է որ ասի քեզի հետ մէկտեղ
կարգանք: Ես Յուստինոսի վրայ անոր համար մեծ
համարում ունիմ, որովհետեւ համարձակած՝ իր համո-
ղումը դուրս հանած է: Թէեւ Պղատոնը իմ առջեւ
ուրիշ ամէն փիլիսոփաներէն վեր կը բռնեմ, բայց
անոր վրայ միայն աս ստգիւտը կը գտնեմ որ Արար-
չագործ Աստուծոյ հաւատքը ունենալէն ետքը, Աթե-
նացիներուն ռամիկ ժողովրդեան ըրած մէկ խօսուած-
քի մը մէջ, զանոնք բազմաստուածութեան գաղա-
փարին մէջ հաստատել ուզեց, վախնալով որ չըլլայ
թէ ետքէն Սոկրատէսին պէս իրեն կեանքն ալ
առնուն *»:

Ի այց կուզես գիտնալ իմ աստուածաբանու-
թիւնս: Գուցէ կարծած էդ աւելի քուկիսիդ մօտ է:
Զեւս՝ սկիզբն ու վախճան է ամենայնի եւ ամենայն
ինչ իրմէնէ **: Ես եւ մեր դպրոցը կ'ընդունի որ Զեւս՝
իրեն ստորակարգեալ աստուածներ ունի իբրեւ Աս-
տուծոյ պատգամաւորներ, որոնք իր հրամանները
մարդկանց համար ի գործ կը դնեն, — ուստի եւ
մենք այն դիցաբանութենէն՝ զորն որ հասարակ ու-
միկը ու գլխաւորաբար՝ մտածել չգիտցող Հռոմայե-

* Յուստինոս Պղատոնի աս գործողութիւնը իր պատուական
համոզմանց առջին պատժապարտ ուրացութիւն մը կ'ա-
նուանէ: Տես «Խրատք առ Յոյնս»:

** Արիփիկեանց վարդապետութեան սկզբունքն է:

ցիները ունին, շատ հեռու ենք: Աս խենթութիւնը պէտք է որ անցնի: Բանաստեղծները նոր աստուածներ հանելու իրաւունք չունին եւ ոչ անոնց վարուց պատմութիւն հնարելու եւ ժողովրդեան առջին իբրեւ ճշմարտութիւն դնելու: Ան Հոմերոսն ու Հեսիոդոսը իբրեւ խաբէբայք դատապարտելէն ետքն արսոր խրկելու էր: Ասոնցմէ ետքը եկողները իրենց օրինակին հետեւելով, սկսան աստուածներ հնարել, անանկ որ մենք հիմակ մեծ դժուարութիւն կը կրենք մինակ անոնց անունը միտք առնելու համար: Այժտանի աստուածութիւններ ամենեւին չկան,»:

Քիչ մը կենալէն ետքը հարցուց: «Գիտես, ըսաւ ան շատ երեւելի պատգամը որն որ մեռեալ Պանին վրայ եղած է,»:

«Լ'նշուշտ,» ըսաւ Լիւդիա:

«Ի՞նչ գիտես նայիկք,»:

«Տիրերիոս կայսեր ժամանակը վաճառականինաւ մը, որուն մէջ Եպիթերոէս՝ Եմիղիանոս ճարտարախօսին հայրը, ուրիշ շատ ճամբորդներու հետ մէկտեղ կը գտնուէր, Եքինադեան կղզիներուն մօտերը կը ծփար: Արեւը մարը մտնալէն ետքը, հազիւ թէ քիչ մը երեկոյեան ըմպելիքը բերաննին առին, մէյ մ'ալ յանկարծ Պաքսիք կղզիէն քիչ մը հեռու ձայն մը լսուեցաւ, որն որ Թամոսին կը պողար: Աս էր ղեկավարին անունը, որն որ Եգիպտացի մըն էր. զորն որ յանուանէ՝ քիչերը կը ճանչնային: Ամէն մարդ ապշած կը կենար, իսկ ղեկավարը նոյն երկու անգամ պողացող ձայնին լուռ կեցաւ, երրորդին պատասխանեց, ասոր վրայ ան ձայնը որոշ կերպով ծովի երեսին վրայ ասանկ հնչեց «Թէ որ Պաղոդէս գեղին հասնիս, զրոյց տուր որ մեծն Պան մեռաւ,»»: Թամոս՝ Պաղոդէս մօտեցաւ նէ, երեսը դէպ ի ցամաք դարձուցած պողաց: Հազիւ թէ նոյն խօսքերը ըսած էր, մէյ մ'ալ ընդհանուր՝ ու կարծես թէ մեծ բազմութենէ մը ելած, զարմանքով խառն հեծութիւն մը լսուեցաւ*:

* Պլուտարքոս՝ «Պատգամատեղեղն ինյալուն վրայ» Գլ. 17.

Աս խօսքերը զրուցելէն ետքը Վիւզիա՝ աս ալ ըսաւ. «Ղարմանայի բան. աս պատգամը ըստ ամենայնի քրիստոսի մահուան ատենը կ'իյնայ», :

Մետեղղա՝ իր գերուհւոյն սիրով ահանջ կախեց: Քանի մը գովասանքի խօսքեր խօսելէն ետքը, ըսաւ իրեն. «Զքեզ շատ բանի յարմար կը տեսնեմ կոր. ասէէ ետքը չէ թէ ոտուրներուս՝ հապա գլխուս սպասաւորես: Անոր համար որոշեցի՝ որ այսօրուրնէ սկսեալ, գրակարգացս ըլլաս», :

Աս առանձնական շնորհքը Վիւզիա մեծ սրտի անձնկութեամբ յանձն առաւ. ինչու որ արդէն գիտէր որ աս կերպ յառաջ քաշուելուն վրայ ուրիշներուն նախանձը պիտ'որ գրգռէ, նախանձն ալ անհանդարտութիւն պիտ'որ պատճառէ: Ասոր համար հաստատութեամբ միտքը դրաւ, իր գերեկիցներուն հետ աւելի ընտանութեամբ վարուելու ու անոնց ծառայական գործքեր ընելու, ինչու որ նախանձին առջեւը աննելու միակ միջոցը՝ ծառայութեան պատրաստ սէրն է:

Վա եւ աս ալ ըսաւ իրեն Մետեղղա թէ «քեզի ուրիշ կողմանէ ալ աղէկ հատուցում ընելու պարտական եմ. այն անարժան կրից գործողութեան համար, զորն որ նորերս ցուցուցի: Արպէս զի ճանչնաս որ ես արտաքին աղուորութենէս զատ նա եւ ազնուական զգացում ալ ունիմ, առ սա արծաթի հայելին, թող քուկզ ըլլայ. ըրէ ինչ որ կ'ուզես», :

Վիւզիա շատ փափուկ զգացման տէր ըլլալով, կէս մը սիրտը կոտրելու պէս եղաւ, որ ինչու անանկ թեթեւ ընդօրինակութեամբ մը իր Տիկնոջը հաճութիւն պատճառելուն համար շուտ մը ասանկ կերպ մը վճարք ընդունի: Մէկալ դիաց այնպիսի բաղմագին պարգեւ մը մերժելն ալ առողջ վշտացրնել կ'ըլլար, անոր համար յարգութեամբ ընդունեցաւ, եւ ուրախութեան նշաններով հասկըցուց, որ հայելոյն բարձր ասէքը յարգել գիտէ:

Սելինա՝ աս տեսարանը քովի խցէն կայնած կը գննէր, եւ երբոր Վիւզիա պարգեւն առած դուրս ելաւ, Սելինա չկրցաւ ինքը զինքը բռնել, գնաց Վիւ-

գիային՝ նորերս ըրած անյաջողակութիւնը նորէն Տիկ-նոջը միտքը ձգեց, իրեն խորհրդածութիւններն ալ վրան աւելցրնելով: —

Ի իւրիա նոյն ջատագովութեան թուղթը կարգալու սկսաւ նէ, Մետեղղա հարցուց որ «Յուստինոս փիլիսոփան՝ Հռոմի քաղաքացի մեր տիւնենեան ծովու քով՝ Նէապոլիս քաղքէն Եպիկուրոսին հետեւողներէն չէր մի»,:

Ի իւրիա ալ պատասխան տուաւ, թէ «Յուստինոս փիլիսոփոս է, ու թէ որ չեմ սխալիր, ըսաւ, իր փիլիսոփայի վերարկուն դեռ հիմակ ալ Հռոմ վրան կը կրէ, ու հոն քրիստոնէութեան ուսումը կը սորվեցրնէ: Ինք Սամարիայի Նէապոլիս քաղաքը ծնած է ու ինքը զինքը յառաջ Պղատոնի վարդապետութեանը տուած էր, բայց ասիկա զինքը գոհ չընելով, քրիստոնէական կրօնի կողմը անցաւ: Եւ իբրեւ քրիստոնէայ՝ աս ջատագովութեան գիրը ի նպաստ քրիստոնէից Անտոնիոս Պիոս կայսեր՝ ու իր սինկղիստոսին գրած է»,:

«Հա. անանկ, սկսէ ուրեմն կարգալ: Բայց նախ ամէն բանէն յառաջ, մէյ մը Աստուծոյ գաղափարը ինծի հաղորդէ Յուստինոսի գրուածքէն ցուցրնելով»,:

Ան ալ սկսաւ *:

«Մենք կը հաւատանք ճշմարտին Աստուծոյ, որն որ արդարութեան ու ամէն առաքինութեանց հայր է, ու չարութեան հետ ամենեւին մաս չունի: Ձինքը ու իրեն Որդին՝ որն որ երկնքէն զմեզ սորվեցրնելու համար իջած է, եւ մարգարէական Հոգին՝ — կը փառաւորենք ու կ'երկիրպագենք»,:

«Դ,ս հաւատքը», ըսաւ Մետեղղա խօսքը կտրելով, «հարկաւ մերինէն շատ տարբեր է, բայց աւելի եւս տարբեր՝ ու երբեմն նա եւ բարոյականի գէմ պիտ'որ ըլլան՝ Յիսուսի աշակերտացը կրօնական արարողութիւնները»,:

Ի իւրիա իբրեւ պատասխան՝ աս կարդաց:

«Հիմակ անոր գանք, թէ ինչպէս մենք Աս-

* Աս հետեւեալ կտորները Յուստինոսի այն համբաւաւոր ջատագովութեան թուղթէն են:

տուժոյ զմեզ կը նուիրուենք ու քրիստոսիւ կը նուրօգուինք: Արոնք որ քրիստոսի պատուիրածներուն համաձայն ապրիլ կը խոստանան, անոնց կը սորվեցուի որ պար պահեն ու աստուծմէ իրենց մեղացը թողութիւն խնդրեն. ետքը տեղ մը կը տարուին, ուր ջուր ըլլայ, ու վերստին աւազանին ծննդեամբ կը մկրտուին, յանուն Հօր՝ որն որ ամենուն Տէրն ու Աստուածն է ու Յիսուսի քրիստոսի մեր փրկչին եւ Հոգւոյն սրբոյ. ետքը իրենց համար աղօթք կ'ընենք ու զանոնք կը համբուրենք: Նա եւ ամէն եղբայրներուն երէցը հաց կ'ընծայէ ու բաժակ մ'ալ՝ որուն մէջը ջրով խառնուած գինի կը գանուի: Ասիկա կ'առնու երէցը՝ ու ամէն բանին Հայրը կ'օրհնէ, ու սրտանց կը գոհանայ որ աս պարգեւներուն զմեզ արժանի ըրաւ: Երբոր աղօթքն ու գոհութիւնը կը լմըննայ, ժողովուրդը կը կանչէ ամէն: Ամէնը՝ երբայեցերէն բառ մըն է, ու թող ըլլայ կը նշանակէ: Ասոր վրայ մեր սարկաւազները հոն առաջիկայ գանուողներուն նոյն գոհութեան հացէն ու գինիէն կու տան, ու անկից հեռաւորաց կը տանին: Աս հացն ու գինին մենք Գոհութիւն կ'անուանենք: Միայն հաւատացելոց շնորհուած է անոր մասնակից ըլլալը, երբոր մեր վարդապետութեան կը հաւատան, ու վերստին ծննդեան աւազանին ջրով մաքրուած, ըստ վարդապետութեան քրիստոսի կ'ապրին: Ասան զի մենք աս կերակուրը սովորական հացի՝ կամ հասարակ ըմպելիի պէս չենք առնուր, այլ իբրեւ մարմին բանիւն Աստուծոյ ծնեալ. ինչպէս քրիստոս մեր փրկիչը մարմին ու արիւն ունեցաւ մեր փրկութեանը համար: Անոր համար ալ մեր քովը կը սորվեցուի, որ աս կերակուրը՝ գոհութեան խօսքերը անոնց վրայ զուրցուածին պէս՝ քրիստոսի մարմին ու արիւնն է, ու մեր մարմնոյ ու արեան հետ խառնուելով զմեզ կը սնուցանէ:

Առաքեալք՝ իրենց յիշատակաց արժանի գըրուածոցը մէջ, որն որ Աւետարան կ'անուանուի, մեզի աւանդեցին՝ որ Յիսուս իրենց այսպէս ընելու պատուիրած է, երբոր հացն առաւ գոհացաւ ու ըսաւ. «Չայս արարէք առ իմոյ յիշատակի. այս է մարմին

իմ ,, ,, նոյն կերպով բաժակն ալ առաւ, գոհացաւ ու
բսաւ. “այս է արիւն իմ ,, ,, : Դարձեալ ան օրերը՝ ու-
րոնք Վիւրակէ կ'ըսուին, ընդհանուր ժողովել մը կ'ըլ-
լայ, որուն մասնակից կ'ըլլան չէ թէ միայն քաղաք-
ներուն մէջ, հապա նա եւ գեղը բնակողները: Հոն
առաքելոց պատմութիւնը կամ Մարգարէները կը կար-
գացուին: Աս ընթերցուածը լմննալուն պէս, գահ-
երէցը խրատաբանութիւն մը կ'ընէ, որ նոյն կար-
գացուածներուն հետեւին, նմանող ըլլան: Ետքը ա-
մէնքնիս միատեղ հասարակաց աղօթքի կ'ելլենք: Ա-
ղօթքը լմննալէն վերջը, հաց, գինի ու ջուր կը նուի-
րուի. երէցը կ'աղօթէ ու կը գոհանայ, ժողովուրդը
կը միաբանի, ամէն ըսելով: Ունեւորները ողորմու-
թիւն կը ձգեն, իւրաքանչիւր զք իր ուզածին չափ,
երէցը կը պահէ աս տուրքը, ու որբերուն, պրինե-
րուն, հիւանդներուն, կալանաւորներուն, օտարնե-
րուն կը բաշխէ, վերջապէս համառօտիւ ըսելով,
երէցը բոլոր տառապելոց հոգաբարձուն է: Աս մէկ-
տեղ գալ ժողովելը, անոր համար Վիրակի օրը կ'ըլ-
լայ, որովհետեւ նոյն օրը Աստուած աշխարհքս ստեղ-
ծեց, ու նոյն օրը միանգամայն Յիսուս Քրիստոս մեր
փրկիչը ի մեռելոց յարութիւն առաւ:

Թէ որ ձեզի անանկ կ'երեւայ որ խելքի ու
ճշմարտութեան համաձայն է, յարգեցէք. թէ որ
պարապ խօսքեր կ'երեւան, արհամարհեցէք: Բայց
անմեղ մարդկանց վրայ մահուան վճիռ մի տաք իբ-
րեւ թշնամեաց դէմ: Բայց ձեզի յառաջուրնէ կ'ը-
սենք որ եթէ անիրաւութեան մէջ շարունակելու
ըլլաք, ետքէն Աստուծոյ ապագայ դատաստանէն
չէք կրնար պրծիլ: Բայց մենք կը գոչենք. թող ա-
նանկ ըլլայ, ինչպէս որ Աստուծոյ հաճոյ է,, : —

Ուսեալ Տիկինը աս ջատագովութեան թուղթը
մտադրութեամբ մտիկ կ'ընէր: Արդէն իրեն ծանօթ
էր, թէ նոյնը ազնիւ Անտոնիոս Պիոսին վրայ ինչ
տպաւորութիւն ըրած է, եւ թէ Վայսրը՝ Աթէնք,
Լարիսսա, Թեսաղոնիկ եւ ուրիշ Յունաստանի քա-
ղաքներուն հրովարտակ հանած է, որ ժողովուրդը
քրիստոնէից դէմ ասելութիւն ցուցնելէն ետ կե-

նայ * : Չատագովութեան թուղթը կատարեալ կարգացուելէն ետքը, Ղիւզիա իր խաթունին խել մը հարցումներուն մէկիկ մէկիկ պատասխան տալու ստիպուեցաւ : Բայց մանաւանդ քրիստոսի կենացը ու անոր զարմանագործ նշաններուն վրայօք, անոր ցեղն ու ազգաբանութիւնը ուզեց : Եւ ամէն բանէն աւելի զինքը զարմացնողը՝ քրիստոնէութեան աս հիմնադրին ոգւոյն հանգարտութիւնը ու մեծահոգիութիւնն եղաւ, որ այնպիսի դառն մահուան ինք զինքը անանկ յօժարութեամբ մատնած էր : “Ես յառաջագոյն, ըսաւ, ան կարծեաց վրայ էի, որ այսպիսի վախճան մը աւելի չարագործի՝ քան թէ արդար մարդու մը կը վայլէ : Բայց Պղատոնի խօսքերէն աչքս բացուեցաւ, որն որ արդար մարդը այսպէս կը նկարագրէ. “Մինչուկ ցմահ առաքինի մնալով, անիրաւ ու չարաբարոյ պիտ'որ համարուի, ու իբրեւ այսպիսի մարդ պիտ'որ ձաղուի, տանջուի, ու վերջապէս խաչը բեւեռուի ** : Աս խօսքերը ուշի ուշով խոկալէս ի վեր, քու Աստուծոյդ մեռնելու եղանակին վրայ միտքս հաշտուեցաւ,, :

Որչափ ալ քրիստոսի աշակերտուհի մը ըլլալը մտքէն հեռու էր, ի վերայ այսր ամենայնի աս ջատագովութեան թուղթը իրեն առիթ տուաւ՝ քրիստոնէից վարդապետութիւնը ու սովորութիւնները ճշգրտագոյն ճանչնալու ու սորվելու, մանաւանդ Յուստինոսի աս ջատագովութեան թուղթը, որն որ նոյն ատենները այս կերպ գրութիւններու կարգին մէջ առաջինն էր, իրեն հարցումներուն համար յենարան մը եղաւ :

Ղիւզիա իր խաթունին յանձնեց որ կրօնի նկատմամբ քանի մը երեւելի անձանց հետ մէյ մը խօսակցի, մանաւանդ Աթէնքի Կուազրատոս բարեպաշտ եպիսկոպոսին հետ, զորն որ եկեղեցին իր սուրբերուն կարգը դասած է,, : Ես երթամ, ըսաւ, ու

* Շթօյպէրկ Պատմ. կրօնիցն քրիստոսի. Ը. էջ. 22 :

** Ռուսոյ իր Էմիլ. Ա. 4. կ'ըսէ՝ որ Պղատոն աս խօսքերով յայտնապէս ու ճշգիւ զքրիստոս կը նկարագրէ :

քու բաղձանքդ ան խոնարհամիտ եպիսկոպոսին իմացրնեմ* :

Թէ որ աւելի քրիստոնեայ փիլիսոփոաներու հետ ալ խօսակցիլ կ'ուզես, Արիստիդէս փիլիսոփան կայ, որն որ ջատագովութեան թուղթ մը կը գրէ, (որն որ Եւսեբիոս եկեղեցական պատմչին վկայութեան նայելով, նոյն ատեններս ամենուն ձեռքը կը պտտէր.) դարձեալ Աթէնքի մէջ այնչափ անուանի եղող Աթենագորաս փիլիսոփան՝ որն որ մեռելոց յարութեան վրայ գիրք մը գրած է, :

Մետեղցա խոստացաւ որ աս բանս մտքին մէջ դեռ աղէկ մը որոճայ, եւ այսպէսով լմնցաւ խօսակցութիւննին :

Գ Լ Ո Ի Խ Թ .

Արծաթի հայելին :

Թէ հիները ապակիէ հայելի չէին գործածեր, արդէն յայտնի է : Յառաջ՝ շատ հին ժամանակները, հայելիի տեղ՝ ինչպէս Սենեկա կը պատմէ, իրենց կերպարանքը ջրոյ սկաւառակի մը մէջ՝ կամ՝ օդը հանդարտ եղած ժամանակ ծովեզերքը իջնալով, ջրին երեսը կը նայէին : Բայց աս վախճանաւ քիչ մը ետքը մասնաւոր բոլորչի ու տափակ ամաններ շինեցին, ան ալ դեռ փայլուն արծաթէ չէր, այլ դիւրաբեկ, աժէք չունեցող նիւթէ մը : Ետքէն երբոր ճոխասիրութիւնը սովորական ըլլալու սկսաւ, այնչափ մեծ ու բարձր հայելիներ շինուեցան՝ որ մարդաչափէն աւելի էր, ի սկզբան ոսկի ու արծաթ շրջանակներով, ետքը գոհարներով զարդարած : “Աս կերպ

* Թէ Աթէնքին ամենէն հին եկեղեցին որն է, չիկրնար ստուգութեամբ բան մը ըսուիլ : Աւանց կարծեաց քրիստոնէից առջի աստուածային պաշտամունքը ստորեկրեայ տեղեր կը կատարուէին. ասի դեռ յիշատակել կու տայ քաղքէն դուրս Իլիստոսի քով Հագիա Մարինա ըսուած ստորեկրեայ ժայռերու մէջ գտնուող եկեղեցին, նա եւ այն գեղեցիկ գեանափորները (Քալիստոսի) : որոնք զինքս ու Մուսէոն բլուրներուն մէջ տեղը կ'իյնան :

հայելի մը կնկան մը համար շատ անգամ հին ժամանակները իր բերած օժտէն աւելի կ'աժէր, անոր համար աղքատ զօրապետներու դստերաց օժիտը տէրութեան ծախքով կը հոգացուէր * ։

Ալիգիպի պարգեւ առած հայելին հաւկրթաձեւ էր, թէեւ շրջանակն ականակուռ չէր, բայց աղէկ աժէք ունէր։ Օր մը՝ դեռ առջի անգամ անոր մէջ նայած ատեն, որ շատոնցունէ իր կերպարանքը տեսած չէր, մեծ տրամութեան մէջ ընկրղմեցաւ, ինչու որ իր աչքին այնպէս եկաւ՝ որ իբր թէ մօրը քաղցր ու միանգամայն տրամագին գծագրութիւնը կը տեսնէ։ Մէկէն մտածութիւնները ասդին անդին սկսան թարթափիլ, հեռաւոր տեղուանք՝ ծովէն անդին դէպ ի Հռոմ՝ անձուկ խցերու մէջ իր կորսուած տրամագին մայրը սկսաւ փնտռել։ «Ո՛հ մայրիկ թէ որ զքեզ մէյ մը գտնէի, կ'ըսէր, «ինչպէս աս հայելին իբրեւ փրկանք քու աղատութեանդ համար կու տայի. եւ թէ որ անոր աժէքը քիչ ալ գար, քու դուստրդ ինքը զինքը կը մատուցանէր որ քու տեղդ չարչարուի»։

Աս մտածութեանց մէջ մէյ մ'ալ իր սիրելի բարեկամուհին Ափնէ վրայ եկաւ եւ այսպէս մտադրութիւնը միջահատեցաւ, թեւին տակ գոյնզգոյն ժապաւէններու խուրց մ'ունէր, զորն որ խանութէ մը առած բերած էր։

«Տրտում ես, քեզի բան մը պատմեմ, ըսաւ, որ քիչ մը բացուիս. հիմակ վաճառականէ մը կը դառնամ, որն որ Ասպասիա անունով չափահաս դուստր մը ունի, ասի՝ որչափ շոյտ ու թեթեւաշարժ նոյնչափ ալ վայելուչ աղջիկ մըն է, իր աս երկու յատկութեանցը համար բոլոր Աթէնքի մէջ անունը ելած է։ Ի՞նչ կ'ըսես, Ալիգիա, ասիկա հիմակ զքեզ տեսնել ու մէյ մը ձանձնալ կ'ուզէ, թէ որ ընկերութեան մը կը բաղձաս, քեզի ասանկ ընկերութիւն մը կը հոգայ։ Բայց գիտցիր որ անի վրան գէշ խօսուած կամ ինչպէս ուրիշները կ'ըսեն, Աթէնքին ամենէն աւելի ծանօթ անձինքներուն կը վերաբերի, եւ թէ

* Սենեկայ ընութեան խորհրդածութիւնները, Ա. Գիրք. վերջերը։

որ քու բարեբարոյ ծանր վարմունքէդ չքաշուէի, աս աղջըկան վրայ աւելի բաներ կը պատմէի,, :

Ի իւրիա լուեց. միւսը իր խօսքը յառաջ տարաւ :

“Նըրկու տարիէ ի վեր անոր անունը կը լսեմ: Պղտիկուց ի վեր ասիկա կը մտածէր որ ամուսնական կեանքը ընտրէ: Բայց ասոր համար մեծկակ գումար կը պահանջուի, եւ քանի որ ասի կը պակսի, ինքն ալ իր առջի վիճակին մէջ կը մնայ: Բայց հիմակ թող որ մէյ մը խաթունին երեւամ, ու աս գեղեցիկ ժպաւէններս մէյ մը անոր ցուցընեմ, ու մնացած գըրամը իրեն յանձնեմ,, :

Հիմակ հոս յարմար առիթը կը բերէ, որ Աթենացուց նոյն ատենուան բարոյական վիճակին վրայ խօսք մ'ալ զրուցենք: Բայց հոտած դիակները նորէն դուրս քաշել հանելն ալ, ապերախտ աշխատանք մըն է, եւ ո՞ւր գլուխ կը բռնէ, ի՞նչ վերջ կ'ունենայ, անոր համար աս միտյն կը յիշատակենք, որ Աթենացիք արդէն Պարսից պատերազմներէն ետքը Ափրոզիտեայ տաճարը պատկեր մը դրին, որն որ Յունաց թափօրները կը ներկայացընէր, որուն վրայ Սիմոնիդէս բանաստեղծը այսպէս վերնագիր մը շինած էր. “Ատոնք Աստղիկ չաստուածուհին օգնութեան կանչեցին, ան ալ իրենց ցուցուցած սիրոյն համար Յունաստան ազատեց,, : Նոյն իսկ Սողոն խիստ օրէնսդիրն ալ, մայրաքաղքին մէջ այն լիւրբ աստուածուհւոյն տաճար մը կանգնած էր, եւ ասանկով բոլոր Յունաստան այսպիսի զեղծագործ մոլութեանց ապաստանարաններով լեցուցեցաւ. ասոր հակառակ Աթէնքի մէջ ամուսնական սէրը ամենեւին մեհեան մը չունէր: Այսպէսով մոլութիւնը՝ կրօնքի պատիւ առած էր, մարդկային սիրտը ասկից աւելի գէշ ու ասկից աւելի դարչելի խոտորում մը չէր կրնար ունենալ:

Մեր քրիստոնէ աղախինը Ասպասիային վրայ առած տեղեկութենէն ետքը հաստատութեամբ միտքը դրաւ՝ որ անոր հետ ծանօթութիւն ընելէն չքաշուի: Բայց աս երկուքին իրարու հետ տեսութիւն ընելու շարժառիթները որչափ տարբեր էին: Առ-

ընկնելը՝ նոյն տեսութեամբ անոր միտքը ապականել էր։ միւսը անի ազատել։ Իրօք ալ երկրորդ իրիկունը ճամբու մը բերանը կայնած երկուքն ալ եռանդագին խօսքերու բռնուած էին։ Ահադիա անանկ բացէ ի բաց մերժող բարոյից դատաւոր մը չէր, ինչու որ գիտէր որ մարդկային սիրտը թէեւ փորձութեան ապականիչ շունչէն իր անմեղութեան ծաղիկները ետեւէ ետեւ կը կորսընցընէ, ի վերայ այսր ամենայնի նորէն բողբոջ արձակելու համար Աստուծմէ տրուած զօրութիւն մը ունի, եւ թէ ան ծառը, որն որ անտերեւ՝ ճամբուն վրայ կը կենայ, Քրիստոսի խրատին համեմատ, պէտք չէ անմիջապէս կտրել։ Ահադիա մոլորելոյն վրայ դեռ անփորձ մնացած բարի բարի յատկութիւններ ալ տեսաւ, որոնց վրայ միայն լաւագոյնը աւելցընելու ջանաց։ Միանգամայն կրկին կրկին իր բաղձանքը յայտնեց, որ այն յուսացած միաւորութիւնը, որչափ կարելի է շուտցընել կ'ուզէ։ Ասպասիա անոր այսպիսի հազուագիւտ բարութեանը զարնուեցաւ, թէ եւ վարքը փոխելու ամենեւին միտք չունէր, ի վերայ այսր ամենայնի աս դեռ առաջին անգամ լսած խօսակցութիւնը իր վրան անանկ բարեմոյն ու սփոփիչ ազդեցութիւն մ'ըրաւ, ինչպէս որ գիշերական ցօղը չոր ու ցամաք արօտի մը վրայ կ'ընէ։

Աս խօսակցութեան մէջ Մետեղղայի գերուհիներէն մէկը նոյն ճամբէն անցաւ գնաց, բայց իրենք անանկ խօսքի ընկղմած էին, որ միտ չգրին։ Աս գերուհին՝ երկուքին վրայ ալ մտադրութեամբ կը նայէր. իր աչքին չէր հաւատար որ քրիստոնէուհի մը Ափրդիաէի սպասաւորող աղջկան մը քով կենայ։ Ասի պառաւ Սելինան էր։

Իր զարմանքը անհամեմատ մեծ պիտ'որ ըլլար, թէ որ քանի մը օր ետքը Քարոնի դուռ * ըսուած տեղոյն քովերը եկած ըլլար, ինչու որ նորէն նոյն ընկերութեան հանգիպեր պիտ'որ։

Ասպասիայի վիճակը, մեր քրիստոնէ աղջկան հոգիներ ազատելու նախանձը անանկ գրգռած էր, որ

* Աս տեղը Քարոնին անուամբը կը կոչուէր, որովհետեւ ասիկա դատաստանի բեմը կը հանէր։

գիշեր ցորեկ անոր վրայ մտածելէն չէր դադրէր. հնարք մը կը մտածէր՝ որ անոր կերպով մը օգնէ, ու մոլորեալը գտնուած ճամբէն դուրս հանէ, եւ կամ ստրկի կողմանէ օգնութիւն մը ընէ, որն որ ամուսնանալուն արգելք կ'ըլլար: Մէկէն միտքն ինկաւ որ իր արծըթէ հայելին իր տարեկան վարձքին երեքպատիկ աժէքը ունի, եւ թէ հիմակու հիմակ հոգի մը փրկելէն աւելի աղէկ բանի չէր կրնար գործածել: Թէ եւ իր հեռաւոր մօրը համար ալ մտածեց, եւ թէ ինչպէս անոր կապանքը լուծելու հնարք մը ըլլայ: Աստուծոյ տեսչութեան վրայ գրած վստահութիւնը իրեն՝ աս նկատմամբ ուրիշ ճամբաներ յուսալ կուտար: Աս բանիս մէջ կրօնին ձեռքով առաջնորդուելով իմացաւ՝ որ դժբախտ հոգւոյ մը ցուցուած սէրը՝ հարադատ մօր մը ունեցուած սէրէն քիչ պէտք չէ ըլլալ: Ուստի եւ իրիկուն մը իր գեղեցիկ ու ծանրագին արծըթէ հայելին լաթի մը պլած, իր վերարկուին տակ ծածկած հեան առաւ: Աս միջոցիս՝ պայծառ աչք մը երկրնքէն իրեն կը նայէր, ան միակ աչքն էր, որ իր նպատակներուն կը թափանցէր:

Ինչպիսի զգացումներ աս պարգեւը չպատճառեց: Ինչպէս կրկին ու կրկին նոյնը տուած ատեն տղայական միամտութեամբ մը ապահովցուց, որ նոյն հայելին ստուգիւ գողունի չէ, ինչպէս աղաչելով աղաչեց որ աս բանիս վրայ մէկու մը հետ չխօսի: Ասպասիա այնչափ տարիներէ վեր չթափած արցունքը հոս առջի անգամ թափեց: Խօսք տուաւ որ նոյն պարգեւը կը ծախէ, ու քիչ ատենուան մէջ վարքը կը փոխէ: Աս երկուքին մէջ ուրիշ կերպ բարեկամութեան կապ մը սկսաւ, որն որ թէեւ արգեամբ իրարմէ տարբեր ալ էին, զգացման փափկութեան կողմանէ կը հաւասարէին: Աս գեղեցիկ գործողութիւնը գլուխ հանելէն ի վեր, Լիւդիային աչքը երկնային զուարթութիւն մը կը փայլէր ու ներքին երջանկութիւն մը, որուն պատճառը մէկու մը վեր չհանեց: Երբոր ասանկ գոհ լուծեամբ մը իր օր ըստ օրական գործքերուն կը պատաղէր, երբեմն իր գրասեղանին վրայ գրելով, երբեմն իր խաթունին առ-

ջին գրականագիտութեան պաշտօնը կատարելով, մտքէն չէր անցնէր՝ որ տան մէջ իր վրան ինչեր կը մտածուի: Արդէն մէկ քանի օրէն ի վեր Մեղինան յարմար առթի մը կը սպասէր, որ իր խաթունին զգուշաւոր գաղտնութեամբ մը այնպիսի բան մը վեր հանէ, որն որ չէ թէ միայն իր տանը բոլոր ծառաներուն, այլ նոյն իսկ Մետեղղային մեծապէս դպչելու բան էր. եւ աս առիթը շուտ եկաւ:

«Մզնիւ տիկին,, ըսաւ, «քանի մը օրէն ի վեր աչքիս առջեւն այնպիսի գարշ գործողութիւններ պատահեցան՝ որ քու իմաստութիւնդ հազիւ կարող ըլլայ պիտ'որ հաւատք ընծայել, որ աղախիններէդ մէկը քու շնորհքիդ ամօթալի ապերախտութիւն մը փոխարինեց: Ուրիշները գրեթէ կէս դար աշխատեցան որ աչքերնիդ մանան, եւ հեղ մ'ալ նոյն շնորհքը չունեցան, իսկ ան սեւաչուի Ասիացին, որ հազիւ երկու տարի քովերնիդ կեցաւ, մեծագին հարուստ պարգեւներով վարձատրեցիք: Աս Լիւդիացի աղջիկը՝ իրօք ալ այն նոյնը ելաւ, ինչ որ մենք միշտ կը սպասէինք: Ինչպէս յայտնի համարձակ իր վարդապետութիւնը քարոզելու կը յանդգնի, որն որ չէ թէ մինակ մոլութիւններու արձակերասանակ թոյլտուութիւն մըն է, այլ մանաւանդ թէ նոյները կը պատուիրէ ալ: Քանի մը քարանձաւներու անկիւններուն մէջ կը ժողվին աս ազուաւաբարոյ գիշախանձ քրիստոնեաները, իրենց կտոր կտոր ըրած տողոց գէշին վրայ կը թափին, ու անոնց միսը կ'ուտեն: Գիտե՞ս կ'ըսեն որ որիները երբեմն ստակ կը գողնան, չեմ ուզեր քննել, թէ ան մագաղաթի թերթերը ինչ ստրկով գնուեցան, զորն որ քու կարծած վայելչագիր աղջիկդ դեռ շատ չէ քեզի պարգեւ տուած է: Իր գաղտուկ անցուցած զեղծ բարքը, փանօք աստուածոցս որ յաջողութեամբ երեւան բերի: Գեռ շատ չէ, որ Ասպասիային հետ տեսայ, որն որ Աթէնքին ամենագարշ խոհերանոցն է, մութ ատեն բաց հրապարակի մը մէջ մեծ ընտանութեամբ մը իրարու հետ կը խօսակցէին: Ի՞նչ պատշաճութիւն կայ, այնպիսի քնարերգակ աղջկան մը հետ, որն որ իր նշանաւոր

գոյնզգոյն պատմութեանովը, վաճառանոցի մէջ խաղալ խնտալէն զատ բանմ'ալ չիգիտեր, անոր ականջէն վար փսրըտալէն բաւական ասոր ինչ ըլլալը կը հասկըցուի: Գիշերը՝ կասկածը կ'աւելցընէ: Ա՛հ քանիք, քանիք՝ լուսինը իբրեւ գող բռնած է, ուր որ արեւը վրանին՝ մինակ աղէկութիւն տեսած էր: Եւ աս սաստիկ կասկածաւոր անձին՝ որն որ զմեզ վատահամբաւ կ'ընէ, դուն պարգեւներ կու տաս ու ամէն գերուհիներէն վեր կը բռնես: Յոյն բանաստեղծ մը չէ՞ր, որն որ թատերերգութեան մը մէջ այսպէս կ'ըսէ.

“Յաղթեցաւ այն օրիորդը մեծ ոճրէ:

Ոճրագործաց պատիւ տալ ի՞նչ կը վայլէ,,,:

Մետեղղա անմիջապէս Սելինային չարամիտ դիտաւորութիւնը իմացաւ ու անմիջապէս պատասխանեց թէ “բայց նոյն Սոփոկղէսը ուրիշ տեղ մ'ալ կ'ըսէ՝ որ կնոջ զարգը լուսութիւնն է: — Գուն ո՛ւր տեսար Ղիւզիան,,:

“Ներմէսեան փողոցին բերանը, տիկին, — Ստոպի * սիւներուն քով արձակավայր մը կայ, հոն՝ ուր Ղուկիանոս իր գեղեցիկ բնակութիւնը շինած է,,:

“Ի՛նչ, դուն իրօք կը կարծես, որ քրիստոնեայք ալ մեր Եգիպոսի պէս՝ կողոնոս քաշուած, ինքը զինքնին գարշութեան տուած են,,:

— “Նրամերես, մինակ աս տարբերութեամբ՝ որ Եգիպոս ըրածը չէր գիտեր, իսկ քրիստոնեայք գիտամբ կը կատարեն չարութիւնը, եւ նոյն իսկ իրենց քահանաներն ալ աս բանիս կը ստիպեն: Ղիւզիա քու առջիգ ինչպէս քաղաքավար ու բարեզգեաց կը ձեւանայ. բայց Գիւգէսի ** մատնին իրեն տաս, որն որ ինչպէս ծանօթ է աներեւոյթ ընելու զօ-

* Աս փառաւոր շէնքէն՝ որն որ ինչպէս Պաւսանիաս կ'ըսէ, 120 սիւն ունէր, այս օրուան օրս գեռ խոշոր աւերակներ կան, ու շատ մը պենտեղեան մարմորէ սիւներ՝ արեւմտեան կողմը:

** Պղատոն կը պատմէ թէ Գիւգէս Ղիւզիայի թագաւորը սոսկական հովիւ մըն էր. ասի խոր անդունդ մը իջնալով, արուբէ ձի մը գտաւ հոն, վրան ալ մարդու մը կմախ մը արտաբոյ կարգի մեծութեամբ, որուն մատը արուբէ մատանի մը կար, որն որ իր մատը անցուցածին պէս զինքը աներեւոյթ կ'ընէր:

րութիւն ունի, ինչպիսի զեղծագործ ապականութիւններու զինքը չիտար,»:

— «Մըստանուածը պատժելու համար, Սեւինա, մի միայն կասկածի պատճառ մը բաւական չէ, թէ որ յիշուած մոլութիւնը իրօք վրան կայ, շուտով երեւան կ'ելլայ: Եւ ան ատեն կրնանք զինքը խարազանով ծեծել, թէ որ օգուտ չըներ, նա եւ կրնանք մեռցընել տալ,»:

Աս ետքի կտորը պառաւին վրան անանկ ուրախ ազդեցութիւն մը ըրաւ, որ խօսքը Մետեղցային արդարութեան զգացման վրայ դարձընելով՝ երկայն բարակ գովեստով մը լմընցուց: Բայց դեռ կը կասկածէր՝ որ արդեօք ամբաստանուողն, ուրիշ հեղ մ'ալ նոյն ընկերութեան մէջ կարող ըլլայ պիտ' որ բռնել, անոր համար մէկալ գերիներուն ապրսպըրեց որ աչքերնին աղէկ սրեն, Լիւդիան աչքէ չփախցընեն: Եւ աս վախճանաւ ալ՝ պատմեց Ադրիանոսի Ստոան իր աչքովը տեսածները. աղաչեց ամենուն ալ որ իրեն ցուցընեն թէ որ Լիւդիա Ասպասիային հետ տեսնուի:

Բարի Ուինէն՝ շատ ջանաց Սեւինան համոզընելու, որ նոյն դէպքին մէջ փոշիի մը չափ ալ յանցանք չկայ, եւ որպէս զի զրպարտուած Լիւդիան արդարացընէ, իրեն պատմեց թէ ինչպիսի անհիմն ամբաստանութիւններ իր վրան կը պտըտին: Երբոր Լիւդիա աս պատմութիւնները լսեց, աս հեղ խօսքերը ըսաւ. «Ուրեմն ես Սեւինային յիշեցընելու եմ, որ վրաս ճշմարիտ չեղած լրեր չտարածէ,»: Իսկ ուրիշ կողմանէ անանկ հանդարտ կեցաւ ինչպէս յառաջն էր. եւ ամենուն ալ իմացուց, որ ինք Սեւինային դէմ վրէժխնդրութեան կամ հակառակութեան եւ ոչ հետքը ունի: «Գիւրազգացութիւնը, սովոր էր զուրցել, փոքրոգիութեան նշան մըն է: Աղէկ սուրն՝ ու աղէկ կրթուած սիրտ մը՝ աս բանիս մէջ կը միաբանին, կրնան ծռիլ առանց կոտորելու, բայց դիւրափշուր սուրը կը կոտորի, երբոր պատերազմելու կու գայ: Ինծի համար աս սկիզբը ոսկիի աժէք ունի. «Աղէկ գործէ — ու գէշ լսէ: Կրնայ ալ ըլլալ որ

ծիծաղական մտածութիւն մը ըլլայ՝ մոլորեալ ան-
ձի մը կապերը խզել ուզելս, բայց թէ որ Ս. Պո-
ղիկարպոս մ'ալ նոյն մեղաւորին հանդիպելու որ ը-
լլար, չէր կրնար զինքը խաբել: Գուցէ զանիկա՝ իր
համառօտ խօսքովը, սատանայի անդրանկածինը ա-
նուանէր*: Արնայ ըլլալ որ աս ալ՝ ան նոյնն ըլլայ,
եւ ես մեծապէս սխալած ըլլամ, բայց սխալմունք կայ
որ մարդուն աւելի պատիւ՝ քան թէ ամօթ կը բե-
րէ. իրաւցընէ աս է ան «իմաստութենէ ու պատիւէ
աւելի յարգի անցնող քիչ ատենուան յիմարու-
թիւնը»,** ասոր համար ես ալ աս դէպքին մէջ իմ
սխալմունքիս՝ համար ձայն չհանելով, համբերութեամբ
կը կրեմ»:

Բայց երբեմն փոքրոգութեան լեզուներ ալ
սկսաւ բանեցընել: «Գուն քու հայրենիքդ, մայրդ,
վարպետներդ, ազատութիւնդ կորսընցուցիր», — կը-
սէր ինքն իրեն, — «Ժամանակաւոր բարիքներէն միայն
մէկ հատը մնաց քովդ, քու պատիւդ: Հիմակ կե-
րեւայ որ աս ալ կորսուած է»: Բայց շուտ մը ինքն
իրեն գալով կը մտածէր. թէ որչափ Քրիստոսի
աշկերտները վշտեր կրեցին: Իր պատուհանէն դուրս
Արիոսպագոսին մէյ մը աչքը կը դարձընէր, ուր եր-
բեմն Ս. Պօղոս կայնած, Աթենացւոց. «աներեւոյթ
Աստուածը», կը քարոզէր. ու ինքն իրեն հարցընելով
կ'ըսէր, — ինչ կրեց Պօղոս առաքեալ: Հինգ անգամ
ծեծ կերաւ. երեք հեղ ձաղկեցաւ, մէկ անգամ
քարկոծ եղաւ, եւ վերջապէս սրով գլխատեցաւ —
եւ ինծի հիմակ ծանր խօսք մը դժուար պիտ'որ դայ:
Իմ փրկչիս արեամբ ներկած հետքէն պէտք չէ՞ մի որ
երթամ, որն որ Հրէիցմէ՝ իբրեւ Աստուծոյ հայցոյիչ,
Հռոմայեցիներէն՝ իբրեւ տէրութեան դէմ ապստամ-
բեցընող դատապարտուեցաւ: Անոր համար խեղճ սիրտ,
քու խաղաղութիւնդ՝ մարդկանց շրթունքին վրայ

* Երբոր հեղ մը Մարկիոն մոլորեցուցիչը, Ս. Պողիկար-
պոսին հանդիպելով իրեն հարցուց, թէ զինքն կը ճանչ-
նար, Պողիկարպոս պատասխանեց թէ «կը ճանչնամ
զքեզ, դուն սատանային անդրանիկն ես»:

** Ժողովող, Ժ. 1:

պարապ տեղ մի փնտռեր, այլ քու Փրկչիդ ու Տիրօջդ չարչարանացը մէջ,, :

Աս օրինակին մէջ իր մնայուն հանդարտութիւնը գտաւ : Այսպէս խաչեցելոյն պատկերը՝ ամէն դարու մէջ վհատեալները մտիթարեց, ու իրենց քաջասրտութիւն տուաւ . եւ ինչպէս արծուէ հալածուող ազաւնեակ մը քարածերպ մը փախչելով կը պատըսպարուի, ասանկ ալ զըպարտութենէ հալածուող սիրտ մը իր փրկչին կողը ապաւինելով, հանդարտութիւն ու սրտի դիւր կը գտնէ :

Վանի մը ամիս այս կերպով անցաւ, Մետեղղա Ղիւդիայի վրայ գէշութեան նշան մը չնշմարեց եւ ոչ ալ անոր վրայ տարբեր վարմունք մը եւ կամ նեղսրտութիւն մը : Ուստի օր մը, երբոր Սելինա նորէն միտքը պղտորելու վախճանաւ ուրիշ փորձ մ'ալ ընելու վրան եկաւ, եւ անոր լուութիւնը հաւանութեան տեղ առնել կ'ուզէր . տիկինը սրդողելով ըսաւ . “քու թունաւոր խայթոցներդ կը ճանչնամ ու մտացածդ գիտեմ : Յանցանքը՝ ինքը զինքը միշտ արգարացընելու կը ջանայ, բայց անմեղութիւնը լուութիւնը նախագաս կ'ընէ : Ինչու որ

Թշնամանաց սուր տէղը
Զով որ զարնէ կը տանջէ .
Իմաստնոյն որ այն հասնի,
Կը տեսնես որ լուռ մունջ է .
Իսկ յիմարին որ հասնի,
Հոս հոն այնչափ կը խօսի,
Այնչափ աղմուկ կը հանէ,
Որ կը ցուցուի մատնացի,, :

Ասկէց ետքը Մետեղղա այն խօսուածներուն պարզ զըպարտութիւն ըլլալուն վրայ կատարեալ համոզուեցաւ եւ այս ուղիղ եզրակացութիւնը յառաջ բերաւ՝ թէ ինչպէս աս քրիստոնէուհին՝ տան մէջ, ասանկ ալ քրիստոնէութիւնը՝ բոլոր աշխարհքիս երեսը նոյն կերպով կասկածելի եղած ըլլայ պիտ'որ : Եւ որովհետեւ Ղիւդիա անտարբերութեամբ եւ զուարթամտութեամբ աս ամէն բան քաջած էր, անոր համար ալ իր խաթունին կարեկցութիւնն ու ներքին

մտերմութիւնը բոլորովին իրեն քաշեց: Տիկինը աս մտածութենէ շարժած տեսաւ որ քրիստոնէութիւնը աղէկ ճանչնալու համար ամէն մէկ քրիստոնէին վարքը գործնականապէս դիտելու եւ ճանչնալու է եղեր. ասկից իր գերուհւոյն վրայ համարումը առջինէն աւելի եղաւ:

Խել մը շաբաթէն ետքը, Մետեղլա իր ճանչուորներէն մէկուն տունը այցելութեան գնաց, ու հոն մեծ զարմանքով դիտեց, տեսաւ որ գրասեղանի մը վրայ իր քիչ ասենէն ի վեր պարգեւած արծըթի հայելին կեցած է: Համբերութիւնը հատաւ, հետաքրքրութիւնը չկրցաւ զսպել, հարցուց թէ ինչպէս հոն աս նոյն հայելին բերուած է: Պատմեցին որ Ասպասիա անունով աղջիկ մը ծախելու համար բերած էր:

“Վստայէս”, ըսաւ ինքն իրեն զայրացմամբ, “իմ գերուհիս ան անպիտան լիտիին հետ կը տեսնուի եղեր: Ո՛հ, կ'աղաչեմ, սա ծախողը մէյ մը ձեզի կանչեցէք ու պատմել տուէք, որ ինչպէս նոյն հայելին ձեռք ձգած է”:

Աս բաղձանքը շուտով գլուխ ելաւ, աղախնոյն մէկը գնաց վազեց ու շուտ մը Ասպասիան կանչեց. որն որ պատմեց թէ ինչպէս փոքր Ասիայէն եկած քրիստոնէութիւն մը իրեն նոյն հայելին պարգեւած էր՝ աս թէութեամբ որ շուտ մը կարգուելու ջանայ: “Աս անծանօթ գերուհւոյն ինձի ըրած մարդասիրութիւնը, իր հաճոյակատար անոյշ կերպը, մանաւանդ իր աղաչանքը՝ որ անկէ ետեւ ընթացքս փոխեմ, զիս արտաքոյ կարգի շարժեցին, սիրտս ելաւ արցունքս չկրցայ բռնել: Աստուածոյս երգունցայ, որ ալ ան առջի զեղծ վարմունքէս ետ կենամ, ուխտս ուխտ է, ու մեծ խղճմնոտութեամբ պիտ'որ բռնեմ”:

Մետեղլա աս լսելուն պէս, ճանչցաւ, ինչ անիրաւութիւն կրած էր իր գրակարգաց աղջիկը, եւ ինչպէս լուծեամբ քաշած էր, զարմացաւ: Տուն դարձաւ ու միտքը դրաւ որ ամենեւին նոյն նիւթին վրայ չբացուի: Եւ նոյն վայրկենէն ի վեր, ինքը զինքը աղախինի մը առաքինութենէն շարաչար յաղ-

Թուած ճանչցաւ. ինչու որ այսպիսի առթի մը մէջ անայլայլակ սրտի մը խաղաղութիւնը՝ իր կարողութենէն դուրս, չգիմանալու բան կ'ենթադրէր: Արտարակուսէր, թէ արդեօք բոլոր հեթանոսական փիլիսոփայութեան մէջ, մէկ հատիկ օրինակ մը կրնայ մի իր աղախնոյն առաքինութեանցը հետ հաւասարիլ, եւ չէր գիտեր որ անոր փափուկ մաքրութեանը, համբերութեանը զարմանայ, չէ նէ իր հաստատուն բարոյիցը, որով այնպիսի հալածում մը լուսութեամբ դիտէն անցուց:

Աս ետքի յատկութիւնը, այս ինքն եղած անիրաւութիւնը համբերութեամբ քաշելը, Աիւդիային առաքինութեանց իրաւամբ մարգրիտը սեպեց: Քեղեցիկ է իրաւցընէ անմեղութիւնը, երբոր իր պայծառ աչուընները երկինք վերցուցած Աստուծոյ տեսութեամբը միայն կը զմայլի: Քեղեցիկ է հեղութիւնը, երբոր ատելութեան ու արհամարհութեան դէմ հեծութիւններով ու լռիկ աղօթքով պատասխան կուտայ. բայց չենք կրնար ալ ուրանալ որ կրկին գեղեցիկ եւ առաքինութեանց դշխոյ է այն լռիկ անմեղութիւնը, որն որ զրպարտութեան փշէ պսակովը պսակուած է:

Քանի մը շաբաթ ետքը երբոր Աիւդիա խցին մէջ կարգացած լմնցուցած էր, փողոցէն երաժշտութիւն մը լսուեցաւ, կրնար պատուհանէն տեսնուիլ՝ որ հարս մը կը տանին ջահակիրներով մէկտեղ: Աիւդիա իր տիկնոջը քովը կեցած էր: Երկուքն ալ դուրս նայեցան, տիկինը իր թեւը աս քիչ ճանչուած գերուհւոյն ուսին վրայ ձգած էր: Հարսը առջեւնէն անցած ժամանակ երեսին կարմիր շղաշատեօրը մէկդի առաւ, ու լուսաւորած պատուհանէն վեր նայելով, ձեռքով նշան տուաւ: Ասպասիան էր անիկա:

Մետեղղա՝ իր սիրելի գերուհւոյն վիզէն ձեռքը մէկդի առած ժամանակ, ձեռքին վրայ արցունքի կաթիլներէն թրջած զգաց:

Ք Լ Ո Ւ Խ Ժ .

Պատերազմի բանակէն :

(171 Ք . Ե .)

Քրիստոսէ 166 տարի ետքը Պարթեւաց Տեա տրուած ու լմնեցած պատերազմը՝ չարաչար Տեաեւու թիւն մը ունեցաւ : Արեւելքէն դարձող զինուորները ժանտախտէ բռնուած դարձան ու բոլոր անցած գաւառնին պլըշտրկեցին : Նա եւ Տեաւոր Գաղղիան աս ապականիչ ախտէն շատ կրեց, Իտալիայի մէջ անանկ սաստիկ տարածուեցաւ, որ շատ կողմերը, ինչպէս ժամանակակից պատմագիրներ կը պատմեն, մշակութիւնը երեսի վրայ մնաց, սղութիւնը զգալի եղաւ : Հոռոմի մէջ դիակները սայլով կը ժողվէին ու քաղքէն դուրս կը կրէին, այնպէս որ մեռնողները շատ ըլլալուն՝ հասարակաց ծախքով կը թաղուէին : Նա եւ Աթէնք ու բոլոր Յունաստան աս ախտին վախէն զերծ չէին. ու տարիներով՝ երբեմն սաստիկ ու երբեմն տկար կը զգային, նա եւ մեր խօսած ատենն ալ՝ դեռ բոլորովին կտրած չէր : Մանաւանդ թէ մահուան դէպքերը աս ետքի ատենները երթալով սաստկացած էին. եւ անոր համար Մեաեղղա որոշեց որ իր կալուածներէն մէկուն վրայ քաշուի :

Աս տխուր միջոցիս մէջ, Ա.բուհիլէայէն աղաւնիներ հասան, վիզերնին նամակ կապուած, որոնք իրենց ճամբան զարմանալի երազութեամբ ըրած էին : Խաղաղասէր կենդանիները՝ աս անգամ պատերազմի ասպարէզէն լուր կը բերէին : Նամակները բանակէն, հասարակ ճամբով Ա.բուհիլէա խրկուած, հոն գաղտնեաց դպիրներէն օրինակուած էին, իսկ բնագիրները, նամակաբերներուն օրինակներն ալ, նամակաբեր աղաւնիներու յանձնուեցան : Աս վերջիները որչափ որ ասպարէզէն չէին նէ, գէթ լուրը կորսուելու վտանգին առջեւը նոյն ընդօրինակութեամբ կ'առնուէր : Այս կերպ սուրհանդակութիւնը՝ իր երազութեամբը մեծ առաւելութիւն մը կ'առնենար* :

* Նամակաբեր աղաւնիներու գործածութիւնը հին ատենները յաճախ կը գտնենք, մանաւանդ Արեւելք :

Վոյն աղանիններուն պատճառաւ ուրախացող բախտաւորներէն մէկն ալ՝ Ղուկիոս երիտասարդին մայրն էր. անանկ որ ալ խուցը քաշուած միայն իր որդւոյն վրայ կը զբաղէր:

Արեւը մարը մտաւ, գիշերը վրայ եկաւ: Ախ դիա իր խցկանը մէջ՝ ձեռքի աշխատութիւնը նոր լմննցուցած էր, թող տալով որ գրած թղթերը չորնան՝ ինք թեթեւ վարագուրով մը գոցուած պատուհանին գնաց, բացաւ, ու աղօտ գիշերուան վրայ խորհրդածելու սկսաւ: Չորս գին խոր լուսթիւն մը տիրած էր. մինակ արմաւենիները սօսաւիւն մը ունէին, իրենց երկայն տերեւները վար ձգած: Բակին կողմանէ կամաց մրմունջ մը կու գար, որն որ երբեմն երբեմն կ'ընդհատէր ալ, ասի Անձրեւարանին* շատրուանն էր: Երկնակամարին վրայ՝ իբրեւ գահի մը վրայ բազմած էր գիշերը, ցորեկուան լռիկ այրին: Երեսը աստղանշոյլ քօղով մը ծածկած, իրեն թաւշէ վերարկուն իր սիրական երկրագնդին վրայ կը տարածէր: Իր ժանտախտէ բռնուած պաշտպանեալը իր կանթեղովը (լուսնով) կը լուսաւորէր, եւ գիշերական ցօղին կաթիլներովը կը թրջէր: Արեւոյեան տրամազգեաց տանտիկնոջ մը կը նմանէր, որն որ դէպ ի օրորոցի մէջ պառկող մանկան կը ծոխի զճակատը խաղաղութեան համբոյր մը դրոշմէ:

Մետեղցա ան սիրալիր նայանալով մեկտեղ կը թողու, գլուխը թոյլ անհոգութեամբ մը բարձին կը կրթթընցընէ, եւ ան թղթին մէջի գրուածներուն վրայ կը մտածէ: Կամաց կամաց իր յոգնած արտեւանունքը կը ծանրանան, ու կը մրափէ: Ամէն բան լուռ հանդարտութեան մը մէջ էր. միայն իւղոյ կանթեղը հանդարտ կը շառաչէր, երբոր Մետեղցա երագի մէջ էր:

Վրասեղանին վրայ դրուած նամակին սկիզբը աս էր. «Բանակէն՝ Ղուկիոս իր սիրելի մօրը ողջոյն ու բարօրութիւն: Ալպեան լեռներէն անդին անցնելէս ի վեր, ուր երկինքը աւելի մօտանց ողջունելու առիթ ունեցայ, ամիսներ անցան: Բայց պատուական մայր, մի կարծեր՝ որ ես օր մը առանց զքեզ յի-

* Impluvium.

չատակելու անցուցած ըլլամ: Մանաւանդ Նորիկո-
նէն * ասդին, առջի անգամ Գանուբին ** եղերբը
հասած ժամանակս, առանձինն զքեզ միտքս բերի:
Ինչու որ դեռ պզտիկ տղայութեանս ժամանակ հո-
մայեցի հեղինակէ մը ինծի կը կարգայիր՝ որ աս գետը
աշխարհքիս վախճանին մօտ ալ լեռներու ստորոտէն
պիտ'որ չտողոսկի, այլ մինչուկ լեռներուն գագաթը
սաստիկ առատանայ պիտ'որ, եւ պատեր, հրուանդան-
ներ փրցընէ քաշկրտէ տանի պիտ'որ ***: Գուն կրնաս
ալ երեւակայել, թէ ինչ միտքերով՝ Գանուբին քովը
մօտիկցայ, բայց նախապաշարումս ուղղեցի երբոր ա-
նոր ընդարձակութիւնը տեսայ, որուն լայնութիւնը
այնչափ էր, որչափ Աբիսիսիայի մէջ մեր բուրաս-
տանր: Երկայնժամանակեան պատերազմին վիճակը՝
արդէն մեր գունդը Աթէնքէն ելելէն յառաջ լսած
պիտ'որ ըլլաս: Աբուիլէայ հասնելէն յառաջ՝ Մար-
կոմանները մեր Ախտէքս հրամանատարին վրայ յաղ-
թութիւն մը ըրեր էին, եւ զինքը իր քսան հազա-
րովը մէկանդ ջարդելէն ետքը, փախչող բանակը
մինչուկ ազրիական ծովը հալածեր էին: Արդ հիմակ,
կայսեր Պանգնիա մտնելէն ի վեր ****, հինգ տարի է եւ
մենք շաբթէ շաբաթ որոշիչ պատերազմ կը սպա-
սենք՝ որ աս արշաւանքին վախճան մը տրուի: Յա-
ղիգներուն վրայ ըրած յաղթութիւննիս՝ քու ականջիդ
կատակ մը պիտ'որ գայ, եւ իրօք ալ այնպէս է: Բար-
բարոսները զմեզ սառած Գանուբին քով զբաղեցու-
ցին, կարծելով որ սառուցի կոյտերուն վրայ իրենք
աւելի յաջողութեամբ պիտ'որ պատերազմին: Իրենց
ձիերը, նոյն սահուն գետինն վրայ, աւելի աղէկ
վարժած էին քան թէ մերինները: Բայց մենք վա-
հաննիս սառուցին վրայ նետեցինք ու անոնց վրայէն
թէ մենք ու թէ մեր ձիանքը անցնելով փառաւոր
յաղթութիւն մը ըրինք: Ասկէ ետքը ետեւէ ետեւ ե-

* Պայիերայի՝ Ին գետին արեւելեան գաւառը:

** Գանուբրոս կամ Իսարոս:

*** Տեր Սենեկայի բնութեան խորհրդածութիւնները. Գ. 27:

**** Պանոնիա = հիմակուան Ստիրիային մէկ մասը մինչուկ
Հունգարիա:

ղած յաղթութիւններով Մարկոմաններն ու Յազիկները շատ խոնարհեցան ու նկուն եղան: Աւրիշ հեղձալ Գանուբի վրայի սառոյցը հալելէն վերջը, մել թշնամիները Հռոմէն բերուած առիւծներով վախցրնել ուզեցինք: Աս ամեհի գաղանները լողալով գետէն անդին անցան, ու թշնամեաց վրայ յարձակեցան, — թայց անոնք բրերով զարկին մեռցուցին ու ծիծաղելով իրենց աս աւարին քովը կեցան:

Ղուն հազիւ կրնաս հաւատալ, սիրելի մայր, որ ինչպէս գժուար է ասանկ թշնամեոյ դէմ գործքերնիս լմընցընելը: Պատերազմի թմբուկները իրենց ականջին անուշ երաժշտութիւն մը կը հնչեն. հետերնին բերած սայլերուն կոնակը կը պատսպարուին, ու քաջասրտութեամբ մը կը սպասեն: Ախն ինչ ըսել է չեն գիտեր: Որպէս զի աղէկ գաղափար մը ունենաս, այսչափ միայն կ'ըսեմ՝ որ իրենց կողմը անցնող զինուորները բռնած կը կախեն. երկչոտներն ու դասալիքները ճախիններուն մէջ անողորմ կերպով կը խղդեն*: Զէնքերնէն աւելի վիասակար է կղիմանին, որն որ անանկ խիստ է՝ որ առանց մշուշի օր չանցնիր. նոյն իսկ արեւուն կիզիչ ճառագայթները աս խիտ տարրին չեն կրնար կոր թափանցել, ցրուել, փարատել: Ուր որ մեր գաւառները՝ ամիսներով պայծառ երկնքին երեսը կը վայելենք, ու երկինքը լուսաւոր կապուտակութիւն մը ունի, Գերմանիոյ մէջ նոյն իսկ ամառը բոլորովին առանց ամպի օր մը շաքիչ կը գտնուի: Ա՛հ, ո՛ւր է մեր պայծառ յոյն երկինքը: — Բոգոսին ձեռքով խրկած մուշտակէ կրկնոցդ ինծի մեծ ծառայութիւններ ըրաւ, մանաւանդ պաղ վրաններու տակ պառկած ժամանակնիս:

Մեր ամենէն փառաւոր յաղթութիւնը ամառուան մէջն էր, ինչու որ Գերմանացիք անօթիութեան ու պաղի, տօթի ու ծարաւի մեղմէ աւելի կը դիմանան**, ու ծարաւէն եւ ջերմութենէն շուտով կը յաղթուին: Իրենց կերակուրը բարակ ճաշակներ փնտռող Աթենացիի մը չիգար: Շատերը վայրի խըն-

* Տակիտոս, Գերմ. 12:

** Տակիտ. Գերմ. 4:

ձորներով ու թանձր կաթով կը շատանան: Քայց թէ որ իրենց չափէն աւելի առատ ըմպելիք տրուի, մեր զէնքերէն աւելի՝ իրենց արբեցողութեամբը դիւրաւ կը յաղթուին: Խաղաղութեան ատեն իրենք զիրենք դատարկութեան ու որսի կու տան*: Աս ազգը Հռոմայեցիներէն գլխաւորաբար անով կը զանազանի՝ որ Հռոմայեցիք ուտելու՝ Գերմանացիք ալ խմելու մէջ քաջ են: Գեռ շատ չէ, արշաւանքի մը ժամանակ հեռուէն ձիւնով ծածկած դաշտավայրի մը վրայ աղբակոյտ մը տեսանք: Կերէ մայր, որ ես ասոր պատմութիւնն ալ պատմեմ: Հետաքրքրութենէ շարժած սկսանք վազել որ մօտէն աս կոյտը զննենք, տեսանք որ ասոր տակը խնձորի, ասնձի ու ցորենոյ առատ մթերներ կան, մէյ մ՝ալ յանկարծ գետինը բացուցաւ ու մեզմէ մէկ քանին փոսի մը մէջ ինկան եւ արիսն որ անկից չկրցան մէյ մ՝ալ դուրս ելլել, ստիպուեցանք զանոնք այնպէս թողուլ, ուշ իմացանք որ Գերմանները իրենց կնկրտոցմով, զաւկրներով ու անասուններով շատ հեղ պսպիսի գետնափոր տեղեր խլուրդներու պէս կը բնակին եղեր, ձմերուան պաղութենէն իրենք զիրենք պատսպարելու համար**:

Գուն հոն ըլլալու էիր, մայր, այն վիթխարի, երկայնահասակ մարդիկը տեսնելու համար: Մէկը մէկալէն աւելի: Հագուստնին ու կղիմայի ազգեցութիւնը՝ հիւանդութիւններու գրեթէ անընդունակ ըրած էր զիրենք: Ասոնց մեծ մասը ծերութեան տկարութենէն կը մեռնի:

Այնչափ տոկուն ու դիմացկուն մեծցած են՝ որ ըստ մեծի մասին եւ ոչ մարմիննին ծածկելու հոգ կ'ընեն, եւ ոչ խիստ օգերու անհարթութենէն պատսպարուելու փոյթ կ'ունենան: Ի վերայ այսր ամենայնի շատ անգամ դեռ լէգէոն մը չտեսած, կը խորտակին: Թող մէկը աս մարմիններուն ու աս հոգիներուն, որոնց փափկակեցութիւն, շուայտութիւն ու հարստութիւններ ծանօթ չեն, խելք ու կարգաւորեալ զինուորական հրահանգ տայ, ան ատեն

* Տակիտ. Գերմ. 23:

** Տակիտ. Գերմ. 16:

ուրիշ բան չեմ ըսեր, բայց եթէ Հռոմայ Տին բարբը
ձեռք առնելու նայելու ենք*:

Վուցէ սիրելի մայր աս բարբարոսներուն կրօն-
քին վրայ ալ բան մը լսել կ'ուզես. ափսոս որ շատ
քիչ ծանօթութիւն կրցայ քաղել: Ասոնք շատ Տին
երգեր ունին, — որոնք իրենց քովը եղած գիտու-
թեանը միակ հետքերը կ'երեւան: — Աս երգերը
Թուիսկո անուամբ Աստուածոյ մը վրայ շինուած են,
որն որ երկրէս ելած է, կ'ըսեն, իր որդին ալ Մաննոս
կ'անուանեն: Եւ երկուքն ալ իրենց ցեղին նախահայր
կը բռնեն: Նա եւ Հերմէսն ալ իրենց մէջ մեծ
համարում ունի, եւ իրենց մթին ու նուիրական ան-
տառներուն մէջ անոր մարդազոհ ալ կը մատուցա-
նեն, գլխաւորաբար բռնած թշնամիներէն: Իրենց մա-
քուր բարքին վրայ լսուածները իրաւ են: Աղջիկ մը
իրենց մէջ՝ որչափ աղուոր ու հարուստ կ'ուզէ նէ ըլ-
լայ՝ երբոր անունն ու համբաւը տեղը չէ, առ հա-
սարակ ամենէն ալ արհամարհուելու ենթակայ է:
Մէջերնին ցեղեր կան, որ մինակ կոյսերը կին կ'առ-
նուն, ու այրիները իրենց երկան մեռնելէն ետքը ան-
այր կը մնան: Անկան մը ամուսնական անհաւատար-
մութիւնը՝ էրիկը անմիջապէս կրնայ պատժել: Այս-
ինքն մազերը կը կտրէ ու ազգականաց առջին տու-
նէն դուրս կը հանէ ու բոլոր գեղին մէջ բրածեծ
ընելով կը պտըտցընէ**:

Մայր, բարբարոսաց աս
բարբը մեր կրթեալ ազգերուն մէջ չենք գտներ:
Բայց ես զքեզ կրնամ ազահովցընել որ մեր լէգէ-
ոններուն մէջ գտնուող կապադովկացի քրիստոնեա-
ները Գերմանացուց ազգին պէս մաքուր բարք ունին:
Ասկից զատ նա եւ չեն գինովնար, պղերդ չեն, զի-
նուորական ըսուած խեղկատակութիւնները երբեք
չի լսուիր, եւ ոչ ալ անիծաբանութիւն: Մի միայն Աս-
տուածոյ մը կը հաւատան ու անոր ամէն օր աղօթք կ'ը-
նեն, իրենց հետ մէկտեղ ապրելէն աւելի ցանկալի
բան չկայ:

Թող որ երկու խօսք ալ մեր նշանաւոր ան-

* Սենեկա «բարկութեան վրայ», Ա. 11:

** Տակիտ. Գերմ. 19:

ձանց վրայ պատմեմ, այսինքն մեր Վերոս աստուածային կայսեր, ու մեր երբեմն գերեզման Բողոսին վրայ:

Թէ Վերոս մեռաւ, արդէն գիտես: Կառքի մը մէջ Մարկոս Աւրելիոսին քովը նստած էր, վրան ինջուածք եկաւ, ու եղբօրը ուսին վրայ մեռած մնաց: Իր դիակը չգմբուսեցին, վասն զի շատ գէր էր, այլ հոս բարբարոսաց երկիրը թաղուեցաւ: Անոր մեռնելէն օր մը յառաջ քանի մը Յունաց ազնուականներու հետ անոր սեղանը հրաւիրուելու պատիւ ունեցայ: Ստոյգը ըսեմ, շատ հաճութիւն զգացի նոյն օրը, որովհետեւ հինգ տարի էր որ համով կերակուր մը չէի կերած: Աս ճաշը մեր ակնկալութենէն վեր էր, ոչ որ կրցաւ հասկընալ թէ ինչպէս աս երկրիս մէջ անանկ փափուկ բազմախորտիկ ճաշ մը կրցաւ հոգացուիլ: Նոյն օրը կայսրն ալ շատ ուրախ զուարթ էր, ու ամէն մէկ նոր կերակուրը բերուած ժամանակ ինծի հետ կ'իյնար հարցընելով՝ որ արդեօք կը ճանչնամ, ու չկրցար գտնել՝ ըսելով՝ կը ծիծաղէր, կերակուրին գերմաներէն անունը կու տար, անանկ որ զմեզ ալ տարակուսի մէջ կը ձգէր թէ կերածնիս ինչ է: Ըմպելիքներն ալ աւելի հարուստ էին: Վերոս իր առջին երեք գաւաթ շարած էր: Մէկը աղեքսանդրիական բիւրեղէ, մէկալը արեւելեան միւռէ (նիւթ մը, որն որ մեզմէ մէկն ալ չէր ճանչնար), երրորդը գոհար քարերով զարգարուած ոսկի բաժակ մըն էր: Կայսեր կենդանութեանը խմած ատեննիս, մեզի նշան ըրաւ որ բաժակները պահենք*:

Ըմպելիքէն վերջը ուլունք խաղալու նստեցանք, մինչուկ որ լուսընցաւ: Կղաւզիոս Պոմպէանոս Հռոմայեցի ասպետի մը որդին սեղանի ժամանակ իմ քովս նստած էր: Զարմացաւ երբոր իմ անունս լսեց, եւ զիս ապահովցուց որ զքեզ երբեմն Հռոմ տեսած է: Ասի շատոնց եղած պիտ'որ ըլլայ: Ես իրեն յայտնեցի որ աս ծանրագին բաժակը, քեզի՝ պատուական մօրս պարգեւ պիտ'որ խրկեմ: Պոմպէանոս ալ աղաչեց որ քանի

* Այս կայսրը հեղ մը իր հրաւիրեալներուն խրկած կառքերը իւրաքանչիւրոց պարգեւած է:

մը ոտանաւոր խօսք աս բաժակին վրայ փորել տայ, ես ալ չէ չըսի:

Բողոս, որն որ երկու ամսէ յառաջ հոս եկաւ, եւ իբրեւ կամաւոր զինուոր ձիաւորաց գնդին մէջ մտաւ, կրնայ քեզի պատմել, թէ Գերմանիոյ մութ անտառներուն մէջ ինչպիսի անասուններ կան: Գեռ շատ չէ մօտերս սխալմամբ գլխէն մեծ վրտանգ մը անցուց: Ասիկա ցրտէն շատ նեղուելով, մտածեց որ արջ մը սպաննէ ու անոր մորթը հագուի: Արտաքոյ կարգի ու անսովոր կ'ըլլան կոր աս անասունները: Գուն կը յիշէ՞ս դեռ ան սեաւ ու մեծ խողերը, զորոնք մենք երբեմն Սիրա կղզւոյն մէջ, երբ որ դէպ ի վերի քաղաքը երթալու համար լեռնէն վեր կ'ելլէինք, գետնի վրայ պառկած տեսանք: Գրեթէ անոնց պէս, բայց թաւուտ մազերով, պատսպարուած են հոստեղացի արջերը: Գեռ քանի մը օր է, երբոր որսէն տուն կը դառնայինք, մեր Բողոսը ցաւալի դառն խաղ մը ունեցաւ, քանի մը հոգի հետն առած նորէն նոյն բլրակը դարձաւ, ուր տեղ մենք Գերմանացւոց դիակները ձգած էինք: Ասի արջ մը դուրս որսալ ուզելով, Գերմանացւոց դիակի մը գլուխը կտրեց ու երկայն մազերէն բռնած (որն որ հոս տեղացի էրիկ մարդիկն ալ ձգելու սովոր են,) դէպ ի վար գլտորցուց, աս փորձը զանազան անգամ կրկնեց: Եւ վերջապէս անօթի արջու մը վրայ յաջողցուց, երբոր արջը նոյն գլուխներուն հետ զբաղած էր, նետով մը զարկաւ, մորթը հանեց ու վրան հագաւ, շինծու արջ մը դարձած էր, երբոր իրիկունը կէս մթընցած մեր բանակը դարձաւ: Զինուորները կրակի մօտը կը ջնոնուին, պանիր հաց կ'ուտէին ու գինւոյ նման ըմպելիք մը՝ զորն որ Գերմանացիք գարիէ ու ցորենէ կը հանեն*, կը խմէին: Զինուորք՝ հեռուէն աս արջնատեսիլ կերպարանքին մօտիկնալը տեսնելնուն պէս, մէկէն տեղերնէն ցաթկեցին զէնք առին, վրան վազեցին, ու գետինը պառկրցուցած անխնայ կը ծեծէին: Չէին կրնար կոր իմանալ որ Բողոսն է,

* Աս ըմպելիքը, որն որ գարեջուրն է, կը յիշէ Տակիտոս Գերմ. 23:

իր խորունկ արջային ձայնովը, զորն որ ասանկ չարաչար կը ծեծէին, հիմակ շատ գէշ վիճակի մէջն է, ու չեմ կարծեր որ կարող ըլլայ աղէկ վրայ գալ:

Հիմակ ալ սիրելի մայր աս տեղեկութիւններուս պէտք եմ վերջ մը տալ: Յուրար՝ ասկից աւելի գրելու զիս կ'արգիլէ: Բայց իմ սրտիս մէջ քեզմէ աւելի անգին ու պատուական ինչ բան կրնայ գտնուիլ: Կրկին ու կրկին իմ տղայական փափուկ գորովս ու սէրս քեզի կ'ապահովցընեմ: Ո՛հ, իմ ու քու մէջ տեղը, գտնուած միջոցն ինչչափ ընդարձակ է: Բայց հոգ չէ, ոգին թեւերու ու ջնջին լաստերու կարօտ չէ՛ ան մեծատարած միջոցներէն թուշտելու անցնելու համար: Գուն հարաւային ծայրը, ես ալ գրեթէ երկրիս հիւսիսային ծայրը, իրարմէ բաժնուած ենք: Մարդկութիւնը մինչուկ աս կողմերը սփռած տարածուեր է: Կարելի է որ աս անտառները իյնան, Գանուբի ալեացը վրայ քաղաքներ կանգնուին, քաղաքականութիւնը աշխարհքիս մէկ ծայրէն մէկալ ծայրը փոխադրուի: Հիմակ՝ կը հաւատամ կոր մեր բանաստեղծներուն թէ՛ Գեղփիս երկրիս միջնակէտն է եղեր. եւ թէ մարդկութիւնը հոն՝ ամէն տեղերէ աւելի երկար կը մտածէ ու ազդու գործունէութիւն մ'ունի. եւ անոր համար ալ՝ հոն քաղաքականութիւնը աւելի կայ: Ինչ զարմանալի բան է, սիրելի մայր, ազգաց աճումը, ու ինչ պատասխան կ'ընդունի մարդկային միտքը, երբոր մարդկային սեռին դէպ ի օրորոցը կը դառնայ ու ինք իրեն կը հարցընէ թէ ո՞րն է ընդհանուր պատմութեան սկիզբը ու վերջը: Բայց ես ո՞ր տեղուանքը կը պտըտիմ կոր, չէ՛, կը յուսամ որ ասկից քանի մը ամսէն, տարիներով, փորձառութեամբ ու գործքերով հարուստ քաջ զինուորի մը պէս, հայրենական տունս պիտ'որ դառնամ, որ քեզի՛ դեռ երկար իմ շնորհակալու միտքս, հաւատարմութիւնս ու անձկայրեաց սիրտս ցուցընեմ: Բարով մնաս,,:

* * *

*

Աս էր Մետեղղայի քովի գրասեղանին վրայ ձգած թուղթը: Երազ մը զինքը անանկ գրգռեց՝ որ կարծես թէ աներեւոյթ ձեռք մը զինքը վախէն գետինը կը զարնէր. մէկէն աչքը բացաւ, նշան տուաւ որ Լիւզիան ներս մտնէ եւ իրեն հարցուց:

«Ի՞նչի մը վայելու ձայն առի՞ր մի հիմակ,»:

Լիւզիա «ապահով եղեր որ,» ըսաւ «հիմակ բաց պատուհանի մը առջին կեցած էի, շատրուանի ձայնէն ուրիշ բան չլսեցի,»:

«Արագի մէջ՝ կանչող բուռի մը ձայն առի: — Ասոր նշանակութիւնը կրնամ մի ինծի զուրցել: Իբրեւ քրիստոնէութիւն կրնամ ինծի նոյնը մեկնել: Մտիկ ըրէ. 2. քնացած՝ որդւոյս նամակը կարդացի. ասոր վրայ անոյշ քուն մը եկաւ վրաս: Ինծի անանկ կ'երեւար որ չորս դիւ մոլթ խաւարը պաշարած է: Յառաջ երթալ կ'ուզէի, բայց ձեռքս ճրագ չկար, խաւարի մէջ ելք մը չկրցայ գտնել: Զքեզ մինակ իմ քովս իբրեւ ուղեցոյց ունէի: Գէպ ի վեր, բարձրը, պայծառ երեւոյթ մը աչքիս դպաւ, որն որ երթալով կը մեծնար: Լեռ մըն էր, որուն գագաթէն վար մոզական լոյս մը կը թափէր: Առջեւնիս կէս մթոյ մէջ ծածկուած սպիտակ մարմորէ սանդուղ մը կ'երեւար, անանկ երկայն էր որ իր ծայրը չէր տեսնուեր, եւ կ'երեւար որ հոն կը տանէր, ուսկից որ լոյսը կու գար: Բոլորովին վերը՝ կարծես թէ փառաւոր պարտեզի մը մէջ, երկնային էակներ կը շարժէին, իբրեւ թէ սպիտակահասնդերձ կանայք եղած ըլլան, ու աս գնդէն աւելի բարձր կեցած վեհ մարդու մը կերպարանք տեսայ: Որչափ ալ մեծ էր, նոյնչափ ալ ահաբեկի բան մը վրան չուներ: Աչուրները աստղներու պէս հեզիկ կը շողային, գագաթէն վար երկայն խարտեաշ մագերը կը ծածանէին: Հովուի զգեստ հագած, բարձր գահաւորակի վրայ բազմած էր, այնպէս որ այն սպիտակազգեստ գունդը իրմէ շատ վար կը մնար, որոնք զմայլած գէմբով անոր չքնաղ երեսին կը նայէին: Մէկէն ինչ կը նայիս հագուստը փոխուեցաւ, ձեան պէս կը փայլէր, կուրծքը արեւու սկաւառակին պէս կը շողար: Իր բոցաճաճանչ սիրտը ամէն կողմանէ

Ճառագայթ կ'արձակէր նոյն գնդին վրայ, որն որ ծնկան վրայ եկած կ'աղօթէր, ու անոր չորս կողմը բողբոջած էր ինչպէս սպիտակ գառինք իրենց հովուին քով: Բայց անոր ոտքը երիտասարդ մը կար, որ կը մրափէր, գլուխը թեւին վրայ դրած, իմ Ղուկիոս որդւոյս կը նմանէր: Պողովատիկ սուր մը կար քովը, ինքն ալ վահանի մը վրայ պառկած էր:

Սաստիկ բաղձանք մը զիս առաւ. մարմարեայ սանդուղէն վեր ելել կ'ուզէի: Ինքը զինքս վեր վեր կը հրէի, բայց նորէն ետ ետ դէպ ի երկիր կը մղուէի, կարծես որ ոտուրներուս տակ կապար կար: Ան ատեն դուն իմ թեւս մտար, եւ կը ջանայիր որ զիս սանդուխին վրայ բերես: Առջի սանդխամատը մօտեցածիս պէս, վիրաւոր վիշապ մը ելաւ դիմացս, աչուրներէն կրակ կը ցաթկէր, ու իր կարմիր լեղուովը վէրքերը կը լցէր*:

Մէկալ կողմը փտտած ծառի մը կոճեղ վրայ բու մը կը տեսնէի, որն որ թեւերը բացած, բարկացած իմ առջիս կը պուար: Զօրութիւնս հատաւ, գետին ինկայ, եւ երբոր արթընցայ, դեռ ինծի այնպէս կ'երեւար որ նոյն թռչտող բուին ձայնը ականջս կը խօսի: —

Հիմակ ըսէ ինծի, ինչ կը նշանակէ աս արեւակերպ սրտով կերպարանքին երեւոյթը: Եւ ինչո՞ւ համար իմ Ղուկիոսս ան հովուին ոտքին տակ պառկած տեսայ,:

Վիւզիա ասոր նշանակութիւնը տալու չէր յանդրգներ, անոր համար ըսաւ իրեն.

“Բարի Տիկին, ներէ ինծի թէ որ աս տեսիլքին մեկնութիւնը քեզի տալու համար զիս յարմար չգտնեմ: Վաղաչեմ իզմէ իմաստնագոյններուն գնա: Քու նկարագրած իդ նայելով, գուցէ մեր Աստուածորդին էր անի, որ քեզի իր փառքը յայտնեց: Ինքը երկրիս վրայ երբեմն բարիներուն քաջ Հովիւն էր, եւ իրենները արեւու պէս լուսաւորուած պայծառա-

Աս երեւոյթը Վիւզիա Պերպետուա վկայուհւոյն († 203) կարբեդոն իր մահուրնէն քանի մը օր յառաջ պատմած տեսիլքին համեմատ է:

կերպ տեսան զինքը մէկ անգամ բարձր լերան մը վրայ : Քայց տեսածներուդ մանրամասն մեկնութիւն մը տալու համար ինքը զինքս տկար կը գտնեմ : Սակայն Աթէնքին մէջ կան սրբակեաց մարդիկ, որոնք մեր կենարարին աշակերտներն են, ու իրենց տէրն ալ աղէկ կը ճանչնան, ասոնք քեզի կրնան անոր վրայօք շատ լուսաւորութիւններ տալ : Եւ ամէն բան տեղն ի տեղ պատմել :

« Իւզիա, ինչ, կը կարծես որ քրիստոնէ եզող Աթենագորաս փիլիսոփան, որն որ յառաջ երբեմն երբեմն իմ տունս ալ եկաւ, հիմակ ինծի իբրեւ հեթանոսուհիի մը այցելութեան գալու ու քանի մը խորհուրդներ տալու դժուարի պիտ'որ : — Աաղը առտու անոր մարդ պիտ'որ խրկեմ որ շնորհք ընէ մէյ մը ինծի գայ : Առանց կարծեաց դեռ Պղատոնի Ակադեմիային մէջ պիտ'որ ըլլայ . ես երբեմն զինքը ծաղկաւէտ Աողոնոսի մէջ գտած էի, ան անմահ իմաստասիրին * շիրմին քով :

Գ Լ Ո Ւ Խ ԺԱ.

Աթենագորաս :

Աս իմաստունը՝ թէ գեղեցիկ գիտութեանց ու թէ արեւելեան ու յունական փիլիսոփայութեան մէջ ճարտար էր : Քրիստոնէութեան անանկ ջերմութեամբ զարնուած ու յարած էր, որ քանի մը տարի ետքը իբրեւ բարեխօս քրիստոնէից Մարկոս Աւրեղիոսին դիմեց, որն որ Եկլեկտիկեան դպրոցէն փիլիսոփայ մըն էր, այն դպրոցէն՝ որն որ ամէն դրութիւններէն (système) ինչ որ յարմար կը տեսնէր՝ իրեն կը սեպհականէր : Աս իմաստասէրը կայսեր յանձնած էր՝ որ քրիստոնէից հետ անանկ քաղցրութեամբ վարուի, ինչպէս որ ամէն ազգաց կրօններուն հետ կը վարուէր :

Մետեղա Աթենագորասին ապահովցուց, որ ինք ան քրիստոնէութիւնը արհամարհող կարգի մարդիկներէն չէ : Եւ թէ իր հանգուցեալ հօրմէն շատ

* Պղատոնի շիրմը փառայեղ, աղաւնշատ ու ծաղկաւէտ Աողոնոս կղզւոյն վրան է :

հեղ լսած էր որ քրիստոնէից վարդապետութիւնը՝ մարդս բախտաւոր կ'ընէ ու բարոյականի կողմանէ կը շիտկէ* : Եւ թէ աս ետքի ատենները նոյն կրօնը աւելի մերձուստ ճանչնալու առիթ ունեցաւ ու համարումը վրան աւելցած է : Աղախիններէն մէկը քրիստոնեայ է, որուն բերնէն շատ հեղ իրենց կրօնին հիմնադրին վրայօք խօսք լսած է : Բայց երէկ զարմանալի երազ մը ունեցած է, որուն մէջ աչքին առջեւը հովիւ մը, որն որ միսնգամայն թագաւորական կերպարանք ունէր, սպիտակահանգերձ կուսանաց մէջ կ'երեւար : “Ես, ըսաւ, աս հովիւէն սուրբ ակնածութիւն մը ունեցայ, հեռուէն իրեն երկրպագութիւն ըրի, ու դեռ զինքը չճանչցած սիրեցի : Ո՛հ, ըսաւ, սա հովիւը աղէկ մը ճանչնալ տուր ինձի, :”

Տեսած երազը մանրամասն պատմելէն վերջը, անոնց նշանակութիւնը ուզեց : Իսկ փիլիսոփան նոյն երազը իբրեւ իրեն հաղորդուած մասնաւոր շնորհք կը նկատէր, որն որ իրեն մեծ բարիք կրնար յառաջ բերել, քրիստոնէութեան վրայ աւելի նոր յարում ունենալով : Իսկ ան ամէն մէկ տեսած երեւոյթներն ալ բարի հրաւեր մ'էին ու առիթ՝ քրիստոսի վրայ պատմելու, որն որ ըստ ճիշդ մտաց “Հովիւ ազգաց, ” է, եւ իրեն նկարագրեց հանգերձեալ կենաց երջանկութիւնը :

“Գիտե՛ս որ, ըսաւ, նոյն թագաւորը միածին Որդին Աստուծոյ է, մի բնութիւն ընդ Հօր եւ ընդ Հոգւոյն սրբոյ : Ար ճանչնա՛ս, ըսաւ, մեր վարդապետութիւնը Աստուծոյ երրորդութեան մէջ ունեցած միութեանը վրայ, :”

Մետեղղա պատասխանեց. “Գիտեմ՝ Պղատոնի վարդապետած՝ սկզբնական էակը, հոգին ու բանը, ու ծանօթ է ինձի, որ Պղատոն՝ երգում ընել սորվեցուցած է, “Ամէն ներկայ ու ապագայ բաներուն կանաւար՝ Աստուծոյ վրայ, կառավարին ու Սկզբան Հօրը ու Տիրոջը վրայ, ” : Գիտեմ՝ որ քրիստոնեայք ալ Ե-

* Ատաիկոս 150 տարի . Գ . Ե . նոյն ատենուան կայսեր Անտոնինոս Պիոսին՝ քրիստոնէութեան վրայ ունեցած կարծիքը գրով տուած էր :

ղիսի Դիոսի արձանը բան մը կը համարին, որովհետեւ երեքգլխեան է: Բայց աս վարդապետութեանց վրայ իմ ինչ կարծելս պէտք եմ ըսել: — Ոչ որ Աստուծոյ էութեանը վրայ ըմբռնում մը կրնայ ունենալ: Անոր համար շատ գեղեցիկ է, Եփեսոսացոց Սայիսի * մէջ, Աստուածոց արձանի մը վրայ գրած մէկ խօսքը. « Ես եմ ամէն բան, ինչ որ եղած է, ինչ որ պիտ'որ ըլլայ, մահկանացու մը դեռ իմ քօղս բացած չէ, »: Գուն ինծի կը հարցընես որ արդեօք քրիստոնէից երեակ ու մի աստուածութեան խորհուրդը գիտեմ: Կարծեմ աս խորհուրդը, իմ գերուհւոյս օրինակաւ մը բացատրածէն աւելի յայտնի չիկրնար ցուցուիլ: Աստուած մի է, ըսաւ, իր բնութեան մէջ, ինչպէս ծառը՝ որուն արմատը, բունը ու տերեւներու պսակը, մի եւ նոյն էութեամբ կեցած են, — ինչպէս բունը արմատէն յառաջ կու գայ, ասանկ ալ Որդին Հօրմէ. ինչպէս տերեւներուն պսակը՝ բունին ու արմատներուն վրայ կը յենու, ասանկ ալ յաւիտենական Հոգին՝ յՈրդւոյ եւ ի Հօրէ նմանապէս յառաջ կու գայ: Բայց Աթենագորաս, աս նմանութիւններով ինչ բան կայ որ չիբացատրուիր: Ներէ ինծի, որ Աստուծոյ վրայ ունեցած ըմբռնումս քիչ մը խորունկէն առնում: Մարդս փոքրիկ աշխարհք մըն է, մարմինը երկրիս պատկերն է, հոգին՝ աստուածութեան ցոլացումը: Մարդկային մարմինը շինողը ո՞վ որ է նէ, ասոր նիւթը երկրէս առած է: Ասոր ապացոյցը մեր անդամներուն վրայ կը կրենք՝ ոսկրներնիս ուրիշ բան չեն, բայց եթէ ճերմակ քարային զանգուած մը, մարմիննիս ազնուական կերպարանք բերուած հող, երակնիս լեցուն աղբիւրներ, վտակներու գետեր, որոնց ջուրը՝ արիւն կ'ըսուի, հովը՝ շնչի կը փոխադրուի, կրակը՝ ջերմութեան, նոյն իսկ արեւը ու լուսինը որոնք տիեզերքը կը լուսաւորեն, մարդուս մարմնոյն մէջ գարձեալ կը ցոլանան, վասն զի Արարիչը մեզի արեւու նման աչքեր տուած է: Բան մ'ալ ըսեմ, Աթենագորաս, ու հոս պզտիկէն մեծը կը մակաբերեմ. աս փառաւոր մարմինը՝ որն որ տեսանելի բնութեան

* Պլուտարքոս. Իս. 9:

ամենէն ճարտարագործ շինուածն է, աներեւոյթ հոգի մը իրեն առած է, աս հոգին է, որն որ զանիկա կը կառավարէ, ու բոլոր անդամներուն մէջ կը թափանցէ, եւ աս հոգին մի միայն է: Ասանկ ալ մի միայն կրնայ ըլլալ ու մի միայն է, որն որ երեւելի աշխարհքը ստեղծած է, ու աս մի միայն էակը Զեւս կ'անուանենք. Զեւս իր աստուածային ոգւովը, ու աստուածային իմացութեամբը: Ա՛ն քեզի ահա նմանութիւն մ'ալ եւ թէ որ ըսելու կրնամ համարձակիլ, նմանութենէ մ'ալ աւելի, այսինքն Աստուծոյ միութեան պայցոյց մը,»:

«Սոյոգ խօսեցար, ըսաւ Աթենագորաս, ես ալ նոյն տեսութիւնն ունիմ: Մենք քրիստոնեայքս ալ կ'ըսենք. Մի է Աստուած. ինչպէս մարդուս հոգին ալ մի է: Բայց մոռցա՞ր արդեօք որ մարդուս հոգին երեքութեամբ մի է,»:

«Ի՛նչ կերպով,», ըսաւ հեթանոսահին:

«Ուրիշ է հոգին, ուրիշ է սիրտը, եւ ուրիշ մարդուս կամքը, ի վերայ այսր ամենայնի, մեր մտածելը, զգալը ու կամելը մի միայն հոգի է,»:

Մետեղղա մտածեց. «Ա՛յո՛ կը յիշեմ, ըսաւ. Պլուտարքոս ալ մարդուս վրայ աս երեք բաժանումը կ'ընէ: Թէ որ հոգին ի պատկեր Աստուծոյ ստեղծուած է, ան ատեն հարկաւ կը հետեւի որ Աստուծոյ հոգւոյն վրայ ալ նոյն երրորդութիւնը գտնուի, կարգադրող, սիրող ու կամեցող Աստուած մ'ըլլայ: Ուստի կրնայ ըլլալ որ մեր սիրտը Արարչին պատկեր մ'ըլլայ, անոր համար ալ սաստիկ գրգիռ մը տուած ըլլայ այն սիրող Որդւոյն, որն որ մեղաւոր մարդկութեան վրայ արգահատելով, ինչպէս դուք կ'ըսէք, մեր բնութիւնը առած՝ ու «Հովիւ ազգաց,» եղած ըլլայ: Բայց թո՛ղ որ նորէն աս հովուին դառնամ, զորն որ երազիս մէջ տեսայ: Ո՛հ, ինչպէս քաղցրութեամբ կը նայէր անոնց՝ որոնք իր չորս կողմը պաշարած էին, ու իմ որդւոյս վրայ՝ որն որ անոր ոտքերուն առջեւը խոնարհած նստած էր, սիրալիր աչքով կը նայէր: Ըսէ ինձի. իմ Ղուկիոսս նոյն աստուածային ընկերութեան մէջ ինչպէս կը մտնէ,»:

“Վուցէ, ըսաւ Աթենագորաս, նոյն արշաւանքին ժամանակ քրիստոնէից հետ յաճախ տեսնուելէն, անոր հիմնադրին վրայ վստահանալով մէջերնին խառնուած է: Հոն ապահովապէս իր հանդարտութիւնը գտեր է, եւ այնպէս հիմակ ալ ինքը զինքը բախտաւոր կը սեպէ,):

“Ինչ կը նշանակէ, ըսաւ, գլուխը վեր վերցընելն եւ ընտանութեամբ վար ինծի նայիլը, այնպէս որ կարծես թէ ինծի կ'ուզէր ըսել, “վեր ինծի եկու: Հեթանոսուհի մը հոն կրնայ մտնել, ուր երանեալները իրենց թագաւորին չորս կողմը ժողված են,):

— “Թէ որ ծիծաղելով վար նայեցաւ, ան տեսն ըսել է թէ իր գոհութիւնը ու բախտաւոր վիճակը ճանչցընել ուզած է. եւ միանգամայն բաղձանք ալ, որ մայրն ալ նոյն խաղաղութիւնը ձեռք բերէ, զորն որ ինք կը վայելէ: Աս բարձր տեղը՝ ուր Քրիստոս իր գահը գրած է, ելած ատենդ՝ երկու բան արգելք կը դնէ, — ու հիմակ կարծեմ թէ տեսիլքին իմաստին աւելի կը մօտենամ, այսինքն այն վիշապը, զորն որ դուն մէկ կողմը տեսար, եւ մէկալ կողմն ալ բուն՝ առջինը մեր յայտնութեան գրքերուն համեմատ ուրիշ բան չէ, բայց եթէ չարեաց սկզբնապատճառ, զորն որ մենք սատանայ կ'անուանենք *, ասիկա ի սկզբանէ հետէ մարդս երկրաքարշ կ'ընէ, ի չարն կը միտեցընէ, կը հրապուրէ զամէնքը՝ որոնք որ իրեն կ'անսան, վերջապէս տեղ մը կը տանի, ուր ջրի ծարաւով պապակող Տանտաղոսին պէս **, միշտ կը չարչարուին: Զքեզ ալ արգելուլ կ'ուզէր, որ չըլլայ թէ Քրիստոսի մօտենաս, ու իրենց երջանկութեան հասնիս: Մեր կենարարը՝ սատանային զօրութիւնը տկարացուց, բայց բոլորովին չկտորեց, անոր համար ալ սատանան վիշապի կը նմանի, որն որ ինչպէս դուն կ'ըսես, վիրաւորուած է:

* Յայտնութիւն Պ. Ի. 2:

** Սատակ ծարաւով տանջուած Տանտաղոսը ալիքներուն կը ծռէր որ խմէ, ջուրը շրթունքներէն կը քաշուէր. եւ քանի որ գլուխը վեր կը բռնէր նորէն ջուրը յառաջ կու գար: Տէս Ոգիս. ԺԱ. 582:

Իայց մինակ ինքը չէ զքեզ անկից հեռու բընողը, այլ ուրիշ բաներ ալ կան որ քեզի երջանկութեան մոտաքը կը դժուարցընեն եւ աս ուրիշը բուին վրայ տեսածդ է: Աթենաս՝ իմաստութեան աստուածը, աս մեր իմաստութեան պատասպարան հրատարակուած քաղքին պաշտպանը, բու թուչունը իբրեւ նշան կը կրէ: Աս անասունը մարդկային իմաստութիւնը կը նշանակէ, որն որ Աստուծոյ առջին յիմարութիւն է, ու յայտնութեան վարդապետութեամբ յաղթահարեցաւ: Փիլիսոփայութիւնը աս յաղթութիւնը ճանչնալ չուզեր, որ իր յատուկ զօրութեամբը ճշմարտութեան մինչուկ արեւային բարձրութեանը հասնիլ կը ջանայ: Բայց ասոր համար թեւերը շատ տկար են: Ա՛հ, Պղատոն ինչպէս գեղեցիկ չափաւորութեամբ մը աս բանս կը բացատրէ, երբոր կ'ըսէ թէ պէտք է մարդկային ապացոյցները մէկտեղ հաւաքել, ու անոնց վրայ այնպէս յենուլ, ինչպէս լաստափայտներու՝ կենաց ծովածուփ ալիքներէն համարձակ անցնելու համար, բայց ինք ապահովագոյն կը կարծէր ու աւելի անվտանգ, հաստատուն նաւու մը վրայ, — այսինքն Աստուծոյ խօսքին վրայ նաւարկելը* : Աս աստուածային խօսքը քրիստոսի ըսածներն են, ու աս հաստատուն նաւն ալ Եկեղեցին է, :

— «Երէ ինձի, Աթենագորաս, թէ որ ես քանի մը բաներու վրայ՝ որոնք քու գրութեանդ կը հային, անհմուտ տղու մը պէս հարցումներ ընեմ: Ի՞նչ կ'ուզէիր կոր ընել քիչ մը յառաջ՝ երբոր չար սկըզբան մը վրայ խօսեցար. Տանտաղոսի տանջանք մը յիշեցիր, որն որ չարաբարոյից պատիժն է, կ'ըսէիր,» :

«Ի՞նչպէս բարիները, ըսաւ, ատեն մը Աստուծոյ քով, որն որ ամէն բարեաց սկիզբն ու ազբիւրն է՝ պիտ'որ գտնուին, ասանկ ալ չարերն այնպիսի չար հօր մը՝ քով պիտ'որ ըլլան, ու Աստուծմէ յաւիտեան անջատուած պիտ'որ մնան: Թէ բարիներուն վարձքը, եւ թէ չարերուն պատիժը ամենեւին վախճան մը պիտ'որ չունենայ, եւ աս է քրիստոնէութեան ամենէն ծանրակշիռ վարդապետութեանց մէկը,» :

* Սիմիաս Սոկրատեսին կ'ըսէ Պղատոնի Փեդոնին մէջ :

— «Վ՛ս մաքով, պատասխանեց Մետեղղա, Բրիստոս Պղատոնին հետ բոլորովին կը համաձայնի: Երկուքն ալ կը սորվեցընեն որ բարիներն երջանիկ՝ չարերն ապերջանիկ պիտ'որըլան: Պղատոն կ'ըսէ. «Պվ որ մաքուր ու ազէկ սանձահարած կեանք կ'անցընէ, աստուածները իրեն բարեկամ ու առաջնորդ կ'ունենայ, ու հոն կը բնակի ուր որ կը վերաբերի. . . : Բայց անոնք որ իրենց ոճրագործութեան մեծութեանը համար անուղղայ կ'երեւան, ամէնն ալ կ'արժանաւորին դէպ ի Տարտարոս ընկղմելու, ուսկից երբեք դուրս ելլալիք չունին»,,: Բայց Պղատոն՝ ուրիշ երրորդական տեղ մ'ալ կը զանազանէ, այսինքն Ա. քերոնը, ուր անկատարները կ'երթան, «ասոնք հոն կը բնակին, կ'ըսէ, կը մաքրուին, իրենց անիրաւութեան պատիժը կը հատուցանեն, ու երբոր բոլորովին կը մաքրուին հոնկից կ'ազատուին *»,,: Թէ որ աս ասանկ է, ու իրօք աս զանազան տեղերը կը գտնուին, չի՞ս հաւատար որ իմ տեսած երազիս համեմատ, որդիս բախտաւորաց մէջն է, ինչու որ քու Աստուծոյդ քով կը նիրհէր»,:

«Հարկաւ», պատասխանեց փիլիսոփոսը:

«ՂԷ ես Պղատոնին սկզբանցը հետեւելով, որն որ չէր ուզեր որ մէկն իր հարց կրօնը փոփոխէ **, թէ որ իմ հեթանոսութեանս մէջ հաստատ մնամ նէ, կը հաւատամ դուն որ ես ալ երբեմն այն փառաւոր ու լուսաւոր տեղը երթամ, ուր իմ որդիս անանկ երջանիկ կը զգայ ինք զինքը»,:

«Թէ որ դուն մէյ մը քրիստոնէութիւնը ճանչած ես, ու շնորհաց զօրութեամբ իբրեւ մի միայն ճշմարտութիւն ըմբռնած ես, — ան ատեն, Մետեղղա, Աստուած ու քու սեփհական խիղճդ քեզմէ կը պահանջեն որ աս ճշմարտութիւնը յայտնապէս դա-

o *Ἀπλωστοι εἰ τις τε ἠδικῆσε*. Աս երեք կոչումներն ալ Պղատոնի Փեդոնէն են:

** Նա եւ Գեղգիիսի պատգամն ալ Աթենացւոց աս հարցմանը թէ ո՞ր Աստուածոց պաշտօնը ամենէն աւելի հաճոյականն է, աս պատասխանը տուաւ թէ, «Անի՛ որ իւրաքանչիւր տէրութենէ օրինաւորապէս հաստատուած է»:

ւանիս: Աս ընելէդ վերջը, կրնաս յուսալ այն երկնային տեսութեան արժանաւոր ըլլալու: Թէ որ նորէն սխալմանդ մէջ մնաս, մարդկային ունայն ակնածութեան միտ զնելով, նոյն ընկերութեան մէջ չես կրնար մտնել, ուր քու որդիդ տեսար,»:

— «Դ՛նչ, Ա՛թենագորաս, կարելի բան կը համարիս որ որդի մը ինքը զինքը բախտաւոր կարող ըլլայ զգալ, երբոր իր մայրը յաւիտենական գոթբախտութեան մը մէջ եղած գիտնայ: Ա՛հ, ինչպիսի տրտամագին երջանկութիւն պիտ'որ ըլլայ իմ Ղուկիոսիս համար, երբոր իր մայրը ցաւոց տեղ մը ինկած տեսնէ,»:

«Վարիները,» պատասխանեց Աթենագորաս, «թէ որ Աստուծոյ հետ միացած են, ինչպէս անձրեւի կաթիլ Ուկիանոսի մը հետ, Աստուծոյամէն յատկութիւններուն մասնակից կ'ըլլան, եւ հետեւապէս անոր արդարասիրութեանն ալ: Ուստի եւ իրենց ալ անանկ անհաճոյ պիտ'որ ըլլայ որ չարերը վարձատրուին, ինչպէս որ Աստուծոյ անհաճոյ է: Բայց նա եւ անոնց ալ, որոնք զԱստուած սիրել չուզեցին, բնականապէս հակառակ պիտ'որ գայ, թէ որ Աստուծոյ քովն ըլլալու ստիպուին,»:

— «Թէ եւ չեմ կրնար կոր քու խօսքերդ ճշդիւ իմանալ, բայց կը գուշակեմ թէ ինչ ըսել կ'ուզես, այսինքն անդիի աշխարհք մի միայն ազգականութիւն կայ, բարի սկզբան հետ ազգականութիւն ու չար սկզբան հետ ազգականութիւն: — Բայց ինչպէս ես Աստուածոց բարկութեանը պիտ'որ հանդիպիմ, թէ որիմ հարցս հաւատքին անհաւատարիմ գրտնուելով, Բրիստոնէից Աստուածը պաշտելու ըլլամ,»:

— «Դուն դեռ զանազան աստուածութիւններու վրայ կը խօսիս, Մեհեղլա, եւ կ'երեւայ որ ստուգիւ զանոնք իբրեւ Գիոսին արբանեկները կը համարիս, Աստուածներ չկայ, ուստի Աստուածոց վրէժխնդրութիւն ալ չկայ: Գեռ չես կրնար կոր աս համոզման ելլել, որ ամէն զօրութիւն՝ թէ երկնքի ու թէ երկրիս վրայ մի միայն Աստուծմէ մը՝ չէ թէ զանազան աստուածներէ կը բղխէ: Եւ իրօք ալ յայտմ կը

կայանայ գլխաւորաբար քրիստոնէից ու հեթանոսաց հաւատքին տարբերութիւնը: Ըստ հեթանոսական տեսութեան՝ երկինքը իր Գիոսն ունի, արեւն իր Հեղինոսը՝ ծովը իր Պոսիդոնը, աղբիւրը իր Նայադը, ծառը իր Գրիասը ու նոյն իսկ եղէգը իր Սիրինքսը. — անոր ներհակ ըստ քրիստոնէական հաւատոյ, երկինքի ու երկրի վրայ մի միայն ամենակալ Աստուած կայ, որուն Հոգին արեւէն կը փայլի, ու ծովու վրայ կը ծփայ, ծառերն ու ծաղիկները կը խնամէ, ու մինչուկ վերջի խօսն ալ չիմոռնար: Աստուծոյ խորհրդները հազարաւոր ճառագայթներով ամէն ստեղծուածներուն վրայ կը սփռին: Ինքն է ան միջնակէտը՝ ուսկից ամէն բան կ'ելլէ: Այո՛ մի է Աստուած. Մեծեղղա, եւ աս մի Աստուածը քեզմէ կը բաղձայ, որ զինքը բոլոր մտօք ճանչնաս, ու բոլոր սրտանց սիրես,»: —

«Մըչափալ գեղեցիկու վեհ է աս վարդապետութիւնը, Աթենագորաս, եւ որչափ ալ իմ մտքիս համաձայն կու գայ, ի վերայ այսր ամենայնի, ես զիս տկար կը զգամ՝ հրապարակաւ դաւանելու,»:

— «Հաւատքը,» շարունակեց Աթենագորաս, «աստուածային ողորմութեան գործքն է: Բայց հաւատոյ շնորհքին հասնելու համար, հարկ է որ աշխարհքիս զուարճութիւններէն ու ցրումներէն ետ քաշուիս, լռութեան ու առանձնութեան ինքը զինքրդ տաս, ու հոն աղօթքի պատաղիս: Այսպէս ըրին ամէնքն ալ, որոնք ճշմարտութեան ետեւէ ինկան, նա եւ մեր մեծագոյն իմաստնոց աչկերաները: Աստուծոյ ձայնը մինակ ան ատեն կը լսուի, երբոր մարդուս հոգւոյն մէջ լիով հանդարտութիւն տիրած է: Բայց մէյ մը որ Աստուած խօսելու կը սկսի, ան ատեն իր ձայնը ամուր ու ականջալուր կ'ընէ ու որոտումի մը պէս հեռաւոր ամայի լերանց ձորը լսել կու տայ,»:

«Աթենագորաս, ուրիշ մէկ հարցում մ'ալ, որուն լուծումը կրնաս տալ: Կը տեսնեմ որ իրենք զիրենք քրիստոնէ անուանողները պատրաստ են իրենց կեանքը հաւատոյ համար զոհելու: Հին Սպարտացւոց պաղարիւնութեամբը ու Սոկրատեսի հոգւոյ հանդարտութեամբը, քրիստոսի համար տանջանք ու մահ կը կրեն:

Ուստի՞ աս մտաց հաստատութիւնը, աս կենդանի համոզումը, :

— «Վունանանկ հարցումներ կ'ընես, Մետեղլա, ուսկից կը տեսնեմ որ քրիստոնէութեան վրայ առջի անգամ խօսողներէն չես: Ո՛վ որ իր հաւատքը արեամբ կը կնքէ, բոլորովին համոզուած է որ Քրիստոս ճշմարիտ որդի Աստուծոյ է, որն որ աստուծմէ խրկուած ըլլալուն ապացոյցը՝ արեւուն ճառագայթներէն աւելի պայծառ յայտնի ցուցուցած է: Շատ անգամ, մանաւանդ իր մեռնելուն վերջի օրերը, Հրէից հրապարակական խօսակցութեանը մէջ ըսաւ որ ինք Աստուծոյ որդին է: Յառաջուրնէ ըսաւ անոնց՝ որ զինքը պիտ'որ մեռցընեն. բայց աւելցուց միանգամայն որ գերեզմանէն պիտ'որ յառնէ: Երբոր դատաւորին առջին ելաւ ու երգուընցընելով հարցուեցաւ որ ըսէ, թէ Աստուծոյ որդին ինքն է, իր անողորմ մահը աչքին առջեւ տեսնելով ալ նոյնը հաստատեց: Մեռցուելէն ետքը անոր կողն ալ բացին, ու մարմինը գերեզման դրուեցաւ: Բայց երբորդ օրը ըստ կանխասացութեանը, իր զօրութեամբը յարութիւն առաւ. իր աշակերտաց երեցաւ ու հարիւրաւոր բազմութեան՝ զանազան առիթներու մէջ: Իրեն ականատես ըլլողները անոր հաւատացին, եւ աս հաւատքը բոլոր աշխարհք քարոզեցին: Բայց անոր վարդապետութիւնը քարոզողները մինակ ասոնք չէին, այլ նա եւ անոնք, որոնց իր մահուընէն յառաջ Աստուծմէ խրկուած ըլլալը բաղմամբիւ նշաններով հաստատած էր: Անոր համար Աթէնքի նախկին եպիսկոպոսներէն մէկը Կուադրատոս անուն, իր գրուածներուն մէկուն մէջ ըսած էր որ Քրիստոսի ողջընցուցած հիւանդները, մեռեալները, զորոնք ի կեանս կոչեց, անցողական երեւոյթ մը չէին, այլ իրեն հետ մէկտեղ երկրիս վրայ մնացին, ոմանք նա եւ, կ'ըսէ նոյն եպիսկոպոսը, մինչուկ մեր ատենն ալ, եւ ըստ հետեւորդի Քրիստոսի համբարձումէն ետքն ալ դեռ կ'ապրէին*:

o Աս Կուադրատոս եպիսկոպոսը, որն որ աւելի ետքը ապրող ուրիշ Կուադրատոսի մը հետ պետք չէ շփոթել.

Աս հաւատքը մենք ամենքնիս ալ ուրախ սրտիւ կը խոստովանինք, մեզի մտիթարութիւն մըն է կեանքերնուս մէջ, ու զուարթ վտահաճութիւն ապագայ լաւագոյն կենաց համար, : —

“Աս ամենայն ինծի համար դեռ շատ շուտ է. Աթենագորաս: Ես հիմակու հիմակ զքեզ կ'ապահովցընեմ, որ քու տուած խորհրդեանդ համեմատ աւանձնացած, քրիստոնէութեան բարձրագոյն վարդապետութիւնը մտածելու հետ պիտ'որ ըլլամ, ու այն անձանօթ Աստուածը, որուն գաղափարը ինծի մօտեցուցիր, ամէն օր աղաչելէն պիտ'որ չզաղրիմ, որ ինքը զինքը ինծի աղէկ ճանչցընել տայ, : —

Գ Լ Ո Ւ Խ Ժ Բ .

Նդիւսիսի զեղազնացութեան տունը :

Մեծատուն Տիկինը դեռ գեղի տունը չտխազրուած, մեր պատուական ընթերցողը մէյ մը Եղեւսիսի մօտ, նոյն փառաւոր գիւղօրէն այցելութեան տանիք : Աթէնքէն շատ հեռու չլինար, կէս օրուան մը ճամբայ է. թէ ծովէն ու թէ ցամաքէն՝ Պիրէոսի կողմանէ նուիրական ըսուած փողոցէն շատ զուարճալի տեսքեր առջեւը կ'ելլեն :

Նդեւսիսէն դուրս ընդարձակ դաշտ մը կը բացուի, որուն վրայէն վտակներ կ'անցնին, որն որ “Թրիասեան դաշտ, կ'անուանուի : Թէեւ քանի մը ամիսէն ի վեր աս երկրիս վրայ կաթիլ մը անձրեւ եկած չէր, ի վերայ այս ամենայնի ցորենի արտը, որն որ գիւղերական ցօղէն ոռոգուած՝ կենդանի կանաչութիւն մը առած էր, նոյն դաշտավայրը տօթագին տաճանեցուցիչ ու անապատային տպաւորում մը տալէն բոլորովին հեռու կ'ընծայէր : Աս տպաւորութիւնը՝ Յունաստանի պէս երկրի մը մէջ՝ հազիւ աշնան վեր-

Ս. Պարզիոսին յաջորդն էր. ու քրիստոսէ 125 տարի ետքը Աթէնքի եպիսկոպոսական գահը ելաւ : Աս վերի խօսքերն ալ 126ին քրիստոնէից պաշտպանութեան համար գրած թղթէն առնուած են :

ջերը կ'երեւար: Աս արձակավայր դաշտին վրայ միօրինակութիւնը չէր ղգացուեր, որովհետեւ ճարտարարուեստ Յոյները, Պանայ մեծ ու պզտի արձաններ աս դաշտին վրայ կանգնած էին, որոնց քովերը ժամտաթղենիներ ու դաշտային ծաղիկներ տնկուած էին: Արեւակէզ ձեռքերը՝ Կեմետրէի* պարգեւները շտամարաններու մէջ կրելու զբաղած էին: Տեղ մը բեռնաբարձ ջորիներ կը տեսնենք որ ծարաւնին ջրշղջներէն կը յագեցընեն. հոն ծանր բեռնաւորուած սայլեր՝ գեղեր կը տարուին: Անդին պարարտ արօտի մը վրայ այծերու հօտեր կ'արածին, եւ հովիւները իրենց քաղցրանուագ սրինգը կը հնչեցընեն: Արեւմտեան կողմը կոհակաձեւ դիզուած բարձր լեռներուն վրայ երկայն դարատափներ շինած կը տեսնուին, զորոնք բնակիչները աշխատութեամբ պատրաստած են, որպէս զի պտղաբեր տեղեր վաստըկին: Այգեստանները զատ տեսակ խաղող մը յառաջ կը բերեն, որոնք մօտաւոր Կորընթոսի մէջ ալ շատ կ'ելլեն եւ դուրսը զանազան գաւառներ Կորընթոսի չամիչ անուամբ ծանօթ են: Չարաճձիներէն ոմանք այծեմորթ հագած բարձունքը կը սպասեն, ու հովանաւոր կնձնիի տակ պահուրտած պտուղներուն հասնելուն դարանամուտ եղած են՝ որ անմիջապէս գողնան տանին: Հիւսիսային կողմի բարձր լեռները կանանչագեղ ու ծառախիտ են, ետեւի կողմանէ ժայռուտ Աթերոնը Պարնէս լեռան հետ կը կապուի:

Աս բարձունքին արեւմտեան դին Սարանտա գետակին վրայ աղուոր կը նայէր Մետեղղայի գեղեցիկ ամարանոցը: Առջեւի դին մեղմ՝ բարձրացող բլրի մը ստորոտը նուիրական աղբիւր մը կը կարկաչէր: Աերը փափուկ կանանչագեղ դալարը աղուոր անտառակ մը ծածկած էր: Բողբոջազարդ սարգենիին եւ տխուր մըրտենուոյն տերեւները, ծովուն հոտաւետ շաղէն թըրջած էին: Քիչ մը վերը բոցսարձակ պրակագեղ մոշենիները եւ անկից վեր շոճիներու անտառը գրաւած էր. եւ այսպէս նոյն դաստակերտը երեք կողմ կը բաժնէր, անանկ որ միայն հարաւային արեւելեան մասը

* Յորենի շաստուածուհի:

դէպ ի Եղեւսիս բաց կը մնար * : Ամարատան վրայ բարձր քառակուսի աշտարակ մը շինուած էր, վրան շիտակ, որուն մէջն ալ բնակութիւն կ'ըլլար : Ի՛նչ հետու վայրատեսիլներ աչքին առջեւը չեն բացուիր աս սենեկին մէջ բնակողին : Հոն վարը գոյնագոյն գորգի նման պողաւէտ դաշտ մը, իսկ վերը կարգաւ ամարատունները, հարուստ, կիսաբոլոր մարգարտի շարք մը կը կազմէին : Աջ կողմերնիս երկիրը բաց կը մնայ, եւ հոս տեղաց տեսքն ալ շատ աւելի հրապուրիչ է : Հոն կը նշմարուի հարուստ վաճառաշահ Եղեւսիս քաղաքը, սէգ կերպով ծովին քով բազմած եւ որն որ Ատտիկէի մեծագոյն քաղաքներէն մէկն է : Նոյն քաղքին մէջէն Գեմետրէի ընդարձակ մեհանները բարձրացած էին, նոյն միջոցին արեւն ալ վրանին զարնելով անանկ կը շողային՝ որ աչք չէր գիմանար : Հոն կը գտնուին եղեւսիսեան խորհրդաներով անուանի եղող Հելլենաց սրբազան տեղերը :

Տարւէ տարի Հոկտեմբերի սկիզբը մեծ թաբօր մը կ'երթար դէպ ի Եղեւսիս. Գեմետրէի տօնը հինգ օր յառաջ կը սկսէր Աթէնքի մէջ, վեցերորդ օրը գիցուհւոյն տղան ուրախութեան ու ցնծութեան ազաղակներով հիւսուած կողովի մը մէջ դէպ ի նուիրական դուռը կը տարուէր, քրմերը ու աւագանին արձանին կ'ընկերանային, ու բոլոր նուիրեալներուն միատեղ գացող գունդը՝ հասկեր, մշակութեան գործիք ու ջահեր ձեռքերնին բռնած կը տանէին : Իսկ հանդիսութեան եօթներորդ գիշերը Եղեւսիսի տաճարին մէջ սրբազան երգումներով, ու որոշուած խօսքերով միջամուխ ըլլալիքները կ'ընդունուէին : Աս պաշտաման հրապուրիչ բաներն էին՝ գաղտնի վարդապետութիւնները, ու կենդանի դերասանական երեւոյթներ, որոնց հետ խառնուած էին ամէն արուեստներ ու արուեստական վայելմունքներ, այսինքն երաժշ-

* Ո՛րչափ այսօրուան օրս աս տեղը կերպարանափոխ եղած է. երկիրը պարապ եւ անշուք առանց անտառի. դետակին ջուրը անանկ նուազ՝ որ աշնան մէջ չոր վրայէն կրնայ անցնուիլ, եւ բլուրներն ու լեռները, ի բաց առեալ 4000 ոտք բարձր Պարնէսը, անտառներու կողմանէ շատ աղքատ են :

տութեան, երգի, կաքաւի ու փառաւոր լուսաւորութեան, ինչպէս նա եւ բարակցած զգայական վայելմունքներ, ու գլխաւորաբար մահուընէ ետեւ երջանիկ ապագայի մը համար խոստում: Հոն մինակ նուիրեալներուն համար պայծառ արեւային լոյս մը կ'երեւար:

Թէ աս խորհրդաւոր վարդապետութեան ուսումը ինչ բանի վրայ կը կայանար, հնութիւնը ասոր վրայօք յագեցուցիչ պատասխան մը չիտար: Աս խորհրդաւոր գաղտնիքը դուրս հանելը խստիւ արգելուած էր, եւ ասոր մէջ պակտողը ըստ պարագայից մինչուկ մահուան պատիժ ալ ընդունելէն վախ կ'ունենար: Պղատոնի վրայ կասկած կար որ աս գաղտնիքը դուրս հանած ըլլայ, ուսկից կրնանք հետեւցընել որ իր փիլիսոփայութեան գլխաւոր հիմունքը Եղեւսիսի վարդապետութեանց նման բան մ'ըլլայ: Այսչափս միայն ստոյգ է որ աս ամէն հին պաշտամունքին գլխաւոր խորհուրդը, որուն հիմնարկութիւնը Յոնիացւոց Ատտիկէէն դուրս փոքր Ասիա գաղթելու ժամանակներէն յառաջ կ'իյնայ, մահուընէ ետքը ունենալու կենաց վրայ ապահով եւ ստոյգ հաւատքի մը վրայ կայացած է: Եղեւսիսեանց մէջ, կ'ըսէ Կիկերոն, կը սորվէր մարդ՝ չէ թէ մինակ բախտաւոր ու երջանիկ ապրելու կերպը, այլ եւ ցնծալից յուսով մեռնելը: «Երիցս երջանիկ է, կը գոչէ Սոփոկլէս, այն մահկանացուն՝ որն որ Հադէս չիջած, աս նուիրագործութիւնը տեսած է: — Իրեն համար միայն մէկալ աշխարհքի մէջ կեանք կայ, ուրիշներուն համար միայն զուր տառապանք ու կարօտութիւն»: Աս երջանկութիւնը ազնուական ոգիքը անընդհատ բարեպաշտական դործունէութեան մը վրայ կը դնեն, իսկ մեծագոյն մասը՝ ըստ Պղատոնի տեսութեանցը՝ զգայական հաճութեանց ու անվերջանալի արբեցութեան մը վրայ:

Ստոյգ է որ աս կարծիքն ալ հաւանական է, որ նոյն խորհրդաւոր գաղտնութիւնը, որուն ծագումը այնչափ հին ժամանակները կ'իյնայ, ան յայտնութեանէն առնուած ըլլայ, զորն որ Իսրայէլացւոց ժողովըր-

գեան նախաճարքը ճանչցած էին, եւ ետքէն անսուրբ ու անմաքուր գործքերով ու վարդապետութիւններով նոյն սկզբնական պաշտօնը պղտորեցաւ: Եւ զարմանք չէ որ անուանի Հռոմայեցիք ալ աս եղեւսիներէն պաշտօնին մէջ մտան. ինչպէս Ոկտաւիանոս, Աւրեղիոս, Անտոնինոս, Ագրիանոս եւ իրմէ ետքը Մարկոս Աւրեղիոս (176. Ք. Վ.): Եւ ինչպէս Ղուկիանոս կը պատմէ. Աթէնքի մէջ մինակ մարդ մը կը գտնուէր, որն որ աս ընկերութեան անդամ գրուած չէր*:

Եղեւսիսի արեւմտեան դին ընդարձակ բրինձի արտերը բռնած են, որոնք նոյն ատենը իրենց մութ կարմիր ծաղիկներու փունջով զարդարուած, դաշտին գոյներու խառնուրդը աւելի եւս կ'աղնուացընեն: Քաղքին մէկալ դին Սաղամիսի նեղուցը կը սկսի, որուն մակերեւոյթը ընդարձակ արծաթի տախտակ մը կը նմանի. անոր մէջ տեղէն ձգուած գիծ մը արեւուն ճառագայթները ետ ետ կը ցոլացընեն. անոր մէկալ դին Սաղամիս կղզւոյն կապոյտ լեռները վեր կը բարձրանան, զորոնք ծովուն վեր ցոլացող գոլորշին բարակ կերպով մը կը քողարկէ:

Դէպ ի արեւելեան ուղղութիւնը գալով, ծովեզերքին մօտ օձաձեւ կ'երկրննար նուիրական ճամբան. աս ճամբուն բռնած տեղերը՝ Տիմակ մէջ ընդ մէջ անկոխ ճահիճներ կան: Աս նուիրական կամ թափօրի ճամբուն վրայ մեզի լոյս մը տուող կէտերն են՝ տեղ տեղ ճարտարագործ յիշատակարանները, որոնց մէջը երեւելի Յոյներուն աճիւնք ծածկուած է:

* Երբոր Վաղենտինիանոս Ա. (370ին Ք. Ե.) քրիստոնէ կայսրը, Հեթանոսներուն գիշերական հանդէս ընելու արգելած էր, Պրետեքստատոս Յունաստանի անդիհիւպատոսը՝ խնդրեց որ Եղեւսիներէն խորհուրդները աս արգելքէն դուրս առնուին: Իր յառաջ բերած պատճառներն ասոնք էին, 1) որ առանց աս խորհրդներուն ժողովուրդը անմխիթար կեանք մը կ'անցընէ, այնպիսի կեանք մը, որն որ կեանք չիկրնար ըսուիլ, սրովհետեւ ան արարողութիւններէն զրկուած պիտ'որ ըլլայ, որոնք որ իր ապագայ ու յաւերժական կենացը նշանակիչ բաներ են: 2) Երբոր մարդուս կեանքը ապագայ կենաց մխիթարիչ հաւատքէն մէյ մը որ զրկուի, կենդանի մահուան մը հաւասար է:

Աս շիրիմները ճամբուն վրայ մինչուկ կերամիկոս* կը պատահին, եւ երբեմն կ'ընդհատուին փոքր փոքր տաճարներով, որոնք Փեքոսի, Գիոսի ու Ափրոզիակայ եւ ուրիշ դիւցազանց կը վերաբերին, անանկ որ կարծես թէ մէկէն աս տեղւոյն տեղքը մարդը Հոռոմին Ա.Ւ. Ա.Ք.Ք. ըսուած ճամբան կը փոխադրէ, որն որ հազիւ ասկից գեղեցիկ յիշատակարաններ կրնայ մեր առջին ընծայել:

Ինչպէս կը խաբէ ծովը, որն որ լճի պէս երեսնէս վեր մտերմութեան ժպիտ մը կը ցուցնէ: Ատեն մը ջրին երեսը կարմիր ծիրանագոյն ներկած կ'երեւար. ինչու որ աս ծովին վրան էր՝ որ անչափ անչափ հազարաւոր Պարսիկք իրենց կեանքը կորսընցուցին, իրենց զօրապետներուն երկաթը, ոսկին, ու արեւելեան զարդը, դեռ թաղուած մնացած են ան խորութեան մէջ, ու մէկու մը ձեռքը կարող չէ զանոնք քաշելու դուրս հանելու:

Սաղամիսի բարձանցը վրայ յոխորտ աչօք կը նայի այսօրուան օրս Յոյնը, հին Հելլէն ազգին յաղթութիւնը յիշելով, որ թէ չկատարուէր՝ բոլոր Եւրոպական աղգաց յառաջադիմութեան պատմութիւնը ուրիշ ընթացք մը կրնար առնուլ: Եւ հոն որ կայտառ ձկնորսը իր երգը կը սուլէ, եւ անցածին վրայ ոչ դք կը մտածէ, ատենօք՝ կորընթոսի ծովածոցին քովը՝ երկու քաղաքներ կը ծաղկէին — Հեղիկէ ու Բուրիս, — որոնք դժբախտ ու աղէտալի օր մը վրանին հասնելով, երկրիս վրայէն մէկէն չիք աչաց եղան, ու նոյն կապոյտ ծովը ընկղմեցան, առանց հետք մը թող տալու**:

Ամարատունը աղէկ մը աչքէ անցընելու համար կարգ մը բռնելու ենք, նախ եւ յառաջ բնակութեան շէնքը*** մէյ մը պտըտինք, ետքը՝ պտղանոցները****:

Աս ամարատան ճակատը, որն որ իշխանական

* Կերամիկէ. Աթէնքի ընդարձակ ճամբան, որուն մէկ կողմը քաղքէն դուրս գէպի արուարձանները կը տարածուէր: Աս անունը կերամոս՝ Գիոսիակայ որդին տուած է:

** Աս դէպքը Բ. Յ. 370ին կ'իյնայ:

*** Urbana.

**** Fructuaria.

պալատի մը հետ կրնար համեմատուիլ, Մետեղղայի տանը շատ նման էր: Մեզի համար ամէն բանէն աւելի աչքի զարնողը պատուհանի ապակիներուն տեղ՝ բարակ թափանցիկ փայլածուի նման գործածուած նիւթն է:

Ընդունելութեան մեծ սենեակները կիսարձաններով զարգարուած էին, մէկ կողմը Ատտիկոսին նախահարքը, մէկալ դին Մետեղղոսինը, որոնք պարսեան մարմորէ շինուած կիսարձաններ էին, մանաւանդ նոր շինուածները մեծ վարպետութեամբ, Սկոպասի ու Պրաքսիտելեսի արժանի գործուածներ էին: Ըրձաններու ետեւէն, Լոթոսի * ծաղիկներով նկարուած պատին վրայ քաշուած սիրուն աղոց պղտիկ գլուխներ կ'երեւային. ծիծաղազէմ՝ մատուրնին բերաննուն վրայ դրած էին, նշանակելու համար որ ասանկ մեծամեծ մարդկանց քով լուծեամբ մերձենալու է: Ընդունելութեան սենեկին մէկալ կողմերը Պողիգնոտոսի ընդօրինակութիւնները կային՝ Աթէքի Ստոա Պիկիդէ ըսուած պատկերաց սրահէն օրինակուած, որոնց մէջ Չենոն փիլիսոփային պատկերը ամենէն աչքի զարնողն էր, որն որ նոյն նկարուած սրահին մէջ կը սորվեցընէր: Սաստիկ սպիտակ կճեայ արձանները, վանակնէ անօթները, ճերմակ մարմորէ մեծ ջահերը՝ ու անթիւ թափանցիկ քարէ պղտիկ կամ հռչակաւոր կորընթեան պղնձէ արձանները հոս հոն սրահին մէջ դրուած էին:

Աս փառաւոր սրահէն դուրս կորընթական ոճով զարգարուած սիւնազարդ գաւիթ մը կ'ելլըցուէր, ուսկից դրսի կողմանէ երկու դիաց զարգարուն մարմոր սանդուխներէն վարդէպի պարտէզ կ'իջնուէր: Հոս մեր հայեցուածքը քիչ մ'ալ Մետեղղային պարտէզը դարձրնենք, որն որ աչքի զարնող բան մը կ'երեւայ, ան կողմանէ որ Քրիստոսէ երկու դար վերջը՝ նոյն արուեստակեալ այլանդակութիւնները կը տեսնենք, զորոնք նա եւ տասնեւութերորդ դարը՝ ծառերու վրան

* Ծառ, որուն պտուղը ըստ գիցարանից՝ անանկ ազուոր ու բերկրալից կ'ըլլար՝ սր ուտողին՝ հայրենեաց համը մոռցընել կուտար, ու Լոթոս երկրին հետ կը կապէր:

դանազան անսուրբ ձեւերով՝ ցուցուցած է, գլխաւորաբար Գաղղիայի ու Անգղիայի մէջ: Հոս ծառին մէկը պիրամիտի ձեւով կտրուած էր, մէկայլը՝ առիւծաձեւ, մէկայլը՝ խօսող հաւու մը դիրքով, անանկ որ կարծես թէ այնչափ զբօսանաց պարտէզ մը չէիր մտնէր, որչափ անասնոց դառագեղի մը մէջ: Ան բարձր ու վրան խաղացուած գեղաղէշ օփիներուն քովէն, սիգաճեմ վեր կ'ելլէ հիներուն սիրական հաւը՝ սիրամարգը, իր մութ կապոյտ, նետաձեւ վիզը ձեւաւոր արագութեամբ մը կը շարժէ, իր բազմագունի, խայտաբղէտ տուտը կարակնաձեւ կը պարզէ: Թէ Յունաստան՝ որն որ իր կէս ազատ բնակչաց մեծ մասը գրեթէ մինակ քանդակագործութեամբ կը զբաղըրնէր, որչափ արուեստաւոր գործուածներու նկատմամբ շոյլ էր՝ հարուստներուն ամարատունները ասոր յայտնի պացոյցը կու տային:

Իւրաքանչիւր ածուի քով, իբրեւ պահապան, գունաւոր կամ սպիտակ արձան մը կանգնուած կ'ըլլար: Ծաղիկները ըստ տեսակի կը փոփոխուէին, անոր համար հասարակ հմտութեան տէր եզող Յոյն մը այնչափ տեսակ ու բազմազգի ծաղկանց անունը դժուարաւ միտքը կրնար պահել, որովհետեւ օտարազգի բոյսեր շատ կային: Եգիպտոսի մշտածաղիկ պարտէզը, գրեթէ Յունաց ամէն ամարատուններուն ծաղկի սոխ, ու տնկարկելու ճիւղեր կը մատակարարէր: Կա եւ Իտալիան ալ իր չքնաղ տունկերը հոս կը խաւրէր, ու Յունաստանի մեղմ զեփիւռը՝ սիկիլեան ծաղկանց խումբերուն անուշահոտ բուրմուկքը կը տածէր: Մետեղղայի պարտիզպանն ալ նարդոսի ծաղիկներէն, զմոնենիներէն ու ականթոսներէն զուարթութեամբ քեզի փունջ մը կ'ընծայէ:

Ք Լ ՈՒ Խ ԺԳ.

Բրուտը ու իր տղան :

Ոսկիազօծ թեթեւ կառք մը հեծած, զորն որ սպիտակ աշխոյժ ձիանք կը քաշէին, Մետեղլա սաստիկ արագութեամբ մը իր գեղի տան առջին հասաւ : Հոն տեսնելու բան էր իր սպասաւորաց բազմութեան իրար անցնիլը, որոնք մարմարեայ սանդուղներուն վրայ կարգաւ շարուած էին. ասոնց մէջ Մետեղլայի բարձրահասակ դիրքը, իր Ատտիկեան շնորհքն ու վայելչութիւնը, որով իր գերեաց շարքը կ'ողջունէր, աս տեսարանը կրնանք արդեօք մոռննիս տարակոյս մը բերել, որ օր մը աս ամբարհաւած խաթունը հաւատոյ փշալից ճամբուն մէջ դառնայ պիտ'որ : Սակայն նախախնամութիւնը մարդուս գոռոզութիւնը իջեցընելու միջոցն ունի. եւ ինչպէս աշնանային հողմը թառչամած տերեւները ծառին վրայէն վար առնուլը գիտէ, եւ զանի կունդ ու կողոպտուած թափուր կը ձգէ, մինչուկ որ գարունը գայ ու զանի նորէն տերեւազարդ նորոգէ, ասանկ ալ Աստուծոյ շնորհքը երբեմն մարդուս վրայ զօրաւոր փշմամբը՝ ունայնութիւնները կ'առնու կը տանի, ու քիչ մը ատեն ամացի ու իրեն անմխիթարութեանը մէջ կը ձգէ :

Հիմակ քիչ մ'ալ Մետեղլայի վրայ՝ իբրեւ Քրիստոսի հետեւողի նշանները գիտենք — անձնուրացութիւն՝ սիրոյ յաղթութենէն յառաջ եկած — աս սիրոյ սկզբնաւորութիւնը գոնէ ինքը զինքը աս կերպով յայանի կ'ընէ, այսինքն խոնարհական բարեգործութեամբ մը, որուն վրայ հոս օրինակ մը պիտ'որ ընծայենք :

Միջնագաւթին մէկ ծայրը, մացառներով ծածկած խոհանոցին մօտ, տկար ու անզօր բայց զուարթադէմ մարդ մը նստած էր : Իր երկայն վարսաւոր մազերը, մետաքսեայ կրկնոցը, կէս մը արուեստաւոր ըլլալուն գուշակ կ'ըլլային : Բրուտ մըն էր, Հիւղղօս անուամբ, միւսիոնի զով քարերուն վրայ, սեան մը շքի տակ հանգչած ժամանակ մտքին ծայրէն իսկ

չէր անցըններ՝ որ օտար աչք մը կայնած զինքը կը գննէ : Միջնագաւթին մէկալ դին կեցած էր տիկինը, իր քովը աղախնով մը, որ սիրամարգի փետուրներէ շինուած հովահարով՝ ճարտարութեամբ անոր երեսը կը զովացընէր : Հիւղղոս՝ իր գործատընէն յառաջագոյն քանի մը խոհանոցի անօթներ հետը բերած էր, եւ կը յուսար որ անոնք ծախելով գէթ վճարքը կ'ընդունի : Բայց յոյսը պարապի ելաւ, ինչու որ հազիւ բարերար խոհակերի մը ձեռքով կտոր մը հաց կրցաւ ճարել : Միրտը կտորած էր որ կէս օրուան համար ուտելու բան չ'ունէր, եւ անոր համար ալ խոհակերոցին քով նստած սկսաւ զրուցել :

«Խեղճ Հիւղղոս, ասանկ ողբալի աղքատութեան մը վիճակ հասնիս պիտ'որ եղեր : Բոլոր շաբաթը աշխատեցար, քանի մը դանկի կտոր կրնար զքեզ բարեբախտիկ ընել, ու հիմակ բան մ'ալ չունիս, կտոր մը հացէն զատ : Անօթիութիւնը ներսէն զքեզ կ'ուտէ : Բայց համբերութիւն, նայէ խոհանոցէն պատուական շոգւոյն եկած հոտը չե՞ս առներ, կ'երեւայ որ աղուոր խորովածոյք մը ունին այսօր : Ան կերակուրին կրնաս դուն ալ մասնակից ըլլալ, : Հանեց մասաղէն իր չորաբեկ հացը ու խածնելով կ'ուտէր, մէկալ կողմանէ ալ խոհանոցէն ելած կերակուրներուն հոտը կը հոտուրտար : «Հիմակ ի վերայ այսր ամենայնի հացի համը ուրիշ տեսակ կու գայ,» կ'ըսէր ինք իրեն, «երբոր առողջ երեւակայութեան համեմնորու մէջ թաթխուի ու մտօք ուտուի,» :

Քանի մը հեղ ալ բերանը բացաւ գոցեց ու երկայն շնչով մը խոհանոցի հոտերը առնելէն ետքը՝ տեղէն ցաթկեց ու զուարթ գէմքով մը անկից ճեռացաւ :

Մետեղա նոյն ծաղրական տեսարանը կեցած կը դիտէր, ու վրան իր խորհրդածութիւններն ընելով, միտքը դրաւ որ նոյն աղքատ մարդուն մէյ մը այցելութեան ելլէ :

Չոր ու տօթագին աշնանային օր մըն էր, ինչպէս Յունաստանի մէջ յաճախ կը պատահի : Մետեղա իր ամենէն ընտանի աղախնոյն պատուիրեց որ

շեակուի, պատրաստուի՝ իրիկուան դէմ՝ քիչ մը պտը-
տելու ելլէ պիտ'որ: Ուրիշ ամէն բանէն յառաջ եր-
կայն կոթով սպիտակ հովանոցակը բերաւ, որն որ
հնութեան մէջ շատ համբաւաւոր էր: Հոգն ու
մտմտուկը զինքը կը նեղէր որ արդեօք նոյն հովանո-
ցակը հաճելի ըլլայ պիտ'որ, արդեօք արեւու կիզիչ
ճառագայթներէն պաշտպանելու բաւական է, եւ կամ
աշնանային հովին հանած փոշոյ ամպոյն դէմ պա-
տրասպարելու բաւական է: Բայց մեծ մխիթարութեամբ
դիտեց որ Մետեղլա քիչ մը ատենէ ի վեր ասանկ
բաներու վրայ մտադրութիւնը կորսնցուցած էր, հա-
ճոյք մը չէր ցուցըներ, եւ իրօք ճամբան գացած ա-
տեննին ալ ասանկ բաներուն վրայ բերնէն ամենեւին
գանգատ մը կամ դժկամակութիւն մը չէր լսուեր:
Երբոր տօթագին հովտի մը մէջ քիչ մը յառաջ գա-
ցին, Մետեղլա՝ «Ի՛նչ կ'ըսես Ո'փնէ, ըսաւ, դուն սա
աղքատ Հիւղղոսին տունը պիտ'որ գիտնաս, կորըն-
թացի բրուտին տունը, ուր շատ չէ Լիւզիան խրկած
եմ: Հիւանդ աղայ մը ունի. եւ թէ որ չեմ սխալիր
սա կաւով ծեփած խղիկն է իր աղքատին բնակու-
թիւնը: Ան ծերուկին կ'ուզէի այսօր այցելութիւն մը
ընել ու իրեն պարգեւ մը տանիլ,»: Ուրիշ աս խօսքին
վրայ քիչ չգարմացաւ, որ իր ազնիւ խաթունը աղքատ
բրուտի մը տուն այցելութեան կ'ելլէ՝ անձամբ անոր
բարերարութիւն մը ընելու համար: «Ճամբանիս շի-
տակ է», ըսաւ. «Հիւղղոս հոն, ճախճախուտ տեղե-
րուն մէկալ դին կը բնակի: Յառաջ ան մարդը առանց
ուրիշին ձեռքին կարօտ ըլլալու իր արուեստը կը բա-
նեցընէր. իր ձեռակերտները Աթէնքին շուկաները
կը ծախուէին, բայց քանի որ ծերացաւ, ինկաւ, իր
արհեստը մեծ դժուարութեամբ կը բանեցընէ եւ
բնական է որ աղքատութեան ծանրութիւնն ալ հի-
մակ ալ աւելի իրեն զգալի կ'ըլլայ: Բայց տղայ մը
ունի, որուն փոքր ձեռագործներ, ու կարգալու գրելու
ալ սկզբունք կը սորվեցընէ,»:

«Եւ մարդս, ըսաւ Մետեղլա, իրեն հայրենակից
Գիոնիսիոս կորընթացւոյն դժբախտութեանը բախ-
տակից է, Գիոնիսիոս ալ իր բռնաւորութեան իշ-

խանութիւնը կորսնցընելէն ետքը, թէեւ մեծ մարդ էր, ի վերայ այսր ամենայնի պզտի տղոց գրել կարգալ սորվեցընելու սկսաւ, :

Հիւզդոս՝ որն որ նոյն միջոցին գործատանը մէջ ծաղկի թաղարներ շինելու զբաղած էր, տեսաւ հեռուէն որ ազնուատոհմ Տիկինը իր գերուհւոյն հետ դէպ իրեն կը շիտկուի. մէկէն դուրս վազեց, որ առջեւէն անցած ժամանակ անոր իր շնորհակալութիւնը յայտնէ քանի մը բարերարութեանց համար, զորոնք նորերս ունեցած էր: Բայց որչափ մեծ եղաւ իր զարմանքը, երբոր տեսաւ որ Տիկինը քաղցր ժպիտով մը իր խղիկին թփերուն մէջէն դէպ ի ներս անոր աղքատին բնակարանը կը մտնէ, զինքը կը բարեւէ ու իրեն տղուն վիճակը կը հարցընէ: Փոքրիկ Ասկանիոսը, որ հազիւ վեց տարեկան էր, տան մէկ անկիւնը կոտորած կաւէ անօթի մը վրայ նստած էր. ձեռքը պզտիկ ճագար մը բռնած ականջները մեղմով կը փայփայէր:

“Գ՞ճ էս Հիւզդոս,,” հարցուց Մետեղլա. ու դեռ բրուտը պատասխան չտուած, Ասկանիոս իր ձեռքի ճագարը ընդոստեցուց ու հօրը ականջէն վար, “Գ՞ճ էս հարցուց խաթունը,,” փսրրտաց. ետքը տղան խախուա սիւնի մը ետեւը քաշուեցաւ ու անկից հետաքրքրութեամբ մը խաթունին երեսը կը զննէր:

“Ալէս օրը ի՞նչ կերար,,” հարցուց խաթունը. բրուտը պատասխան տուաւ. “տափակ գարեղէն հացի կարկանդակ մը, քիչ մ’ալ սոխ, քանի մը աղի հատիկներ, եւ խմելք մը ինը խողովակեան աղբիւրէն, որն որ եղեւնի անտառակը կ’ելլէ,,” ըսաւ:

“Հիւանդ տղայ մը ունէիր, շատ չէ լսած էի, ի՞նչ եղաւ հիմակ անոր վերջը,,” Բրուտը իր տղուն հիւանդութիւնը երկայն բարակ պատմած ժամանակ անդիէն տեսաւ խաթունը զտղան, որն որ փաթթած ձախ թելին ծղեքովը իր պզտի գլուխը պահել կը ջանար. իրեն կանչեց զանիկա: Տղան օտար կնկան մը առջին երեւնալու կը քաշուէր. հօրը ետեւը պահուտեցաւ: Մետեղլա իր քսակին մէջէն փայլուն ոսկիի կտոր մը դուրս հանեց ու տղուն ցըցունելով իրեն

կանչեց. մէկէն դուրս ելաւ տղան եւ իր առողջ սիրուն թաթիկները սարկին երկընցուց ու հետը ընտանեցաւ:

Բրուտին աչուըները լեցուեցան. եւ յայտնեց խաթունին որ ինչպիսի մեծ ուրախութիւն իր ծերութեանը պատճառեց: Ու տղուն հիւանդութեան պատմութիւնը յառաջ տանելով, նկարագրեց թէ ինչպէս բժիշկը անոր ձեռքը կտրելու որոշեց: Աս գործողութեան յիշատակը Մետեղլային երեսը պլայլեց, ու սիրտը չէր դիմանար:

“Ա՛յ ե՛ս, ըսաւ պզտիկ Ասկանիոսը, ան դարչելի մարդը անանկ ըսելէն ետեւ, ելաւ կորսուեցաւ գնաց: Ասոր վրայ ազնիւ Լիւդիան մեր պզտիկ պարտեղէն ներս մտաւ ու ինծի աղուոր աղուոր շաքարեղէններ բերաւ,,”

Մետեղլա տղուն այն կերպ խօսակցութեանը վրայ ժպտեցաւ, միտքը իր սիրական Ղուկիոսը իյնալով, որն որ տղայութեանը ժամանակ ասանկ խօսքեր կը թօթովէր: Ասկանիոս իր խօսքը յառաջ տարաւ ըսելով.

“Բարի Լիւդիան ետքը ինծի ըսաւ որ ձեռքը կտրելն այնչափ ահաբեկի բան չէ, եւ ինք անձամբ կու գայ ինծի օգնելու որ անչափ ցաւ չզգամ,,”

Մետեղլա ասոր վրայ հարցուց, որ իրօք Լիւդիան նոյն գործողութիւնը կատարուած ժամանակ եկա՞ւ:

Տղան գլխովը նշան մը ըրաւ լռելով, եւ սկսաւ լալ:

Շայրը տղուն բերնէն խօսքը առնելով աչքը սրբեց եւ սկսաւ խօսքը յառաջ տանիլ:

“Շարկա՛ւ, ըսաւ, ապա թէ ոչ, ազնիւ Տիկին, ինչպէս մարդուն սիրտը անանկ անգութ գործողութեան մը կրնար դիմանալ, թէ որ ուրիշ աղախին մը օգնելու չըլլար: Ստոյգ է որ մեզի պէս աղքատ ու ողորմելի մարդկանց ասանկ մեծ շնորհք մը քիչ կը պատահի: Արդէն տկար բնութեան տէր մարդ մըն եմ, տղուն աղիողորմ ձայնէն, որն որ ձեռնամած կ'աղաչէր որ չցաւցընենք, սիրտս յառաջ չէր երթար

որ զինքը բռնեմ: Ի՞նչպէս կրնայ հայր մը իր մէկ հասակ որդւոյն ձեռքը կտրուելը տեսնել: Ա՛հ, ան վայրկեանին մտածութիւնը միայն վրաս սարսուռ կը բերէ: Բայց քու Լիւգիադ խօսքը բռնեց, որոշած ժամանակին հասաւ, եւ դեռ բժիշկը չեկած ինք հոս էր,»:

«Եւ հետը չուխտ մը ձուկ, խաղող ու անոյշ կնձխի կարկանդակներ բերած էր հօրս,» ըսաւ Ասկանիոս:

«Ի՛նչ իրեն մսխթարութեան խօսքերը աւելի քաղցր էին,» աւելցուց ծերը, զորոնք տառապագին հօր մը ու իր վշտակիր որդւոյն մատոյց: Ա՛խ, ինչ բնեմ, աղքատութիւնը շատ քիչ անգամ բարեկամ կը գտնէ, բայց ան քիչ բարեկամները որ իրեն հետ կը կապուին, ոսկիի պէս հարազատ են —, ինչու որ ստրկի ու պատուոյ համար չեն, հապա մեզի համար բարեկամ են: Ասանկ էր աւասիկ ձեր աղախնոյն բարեկամութիւնն ալ: Բժիշկը իր գործողութիւնը սկսած ժամանակ, տղուն սկսաւ խօսիլ՝ որ հանդարտ կենայ, եւ որն որ բոլոր նոյն գործողութեան ժամանակ դիւցազնական արիութիւն մը ցուցուց: Ի՞նչ խնամոտ սիրով անոր ճակտին անձկութեան քրտինքը կը սրբութի, եւ ինչ ջերմեռանդ աղօթքներ կ'ընէր գերագոյն Աստուծոյն: Որովհետեւ ինք մեր պաշտած աստուածներէն զատ Աստուած մը ունի, ու գերագոյն Աստուածը՝ հայր Գիոս չ'անուաներ, այլ՝ Հայր Աստուած, եւ անոր ծառայող աստուածութիւնները, աստուածներ չ'անուաներ, հապա հրեշտակներ: Նաեւ պղտրկին ալ շատ անգամ աս խօսքերը կը կրկնէր: «Միայն համբերութիւն — միայն վայրկեան մը համբերութիւն — կը լմըննայ կոր,»:

Մետեղղա կը տեսնէր կոր որ աս ստորագրութիւնը վրան զգացում մը կը բերէ, կարծես որ բարակ ցուրտ հով մը երեսին կը զարնէ: Ծերունին Հիւզղոս երբոր տղուն ձեռքը ցուցընել կ'ուզէր որ ինչպէս աղէկ կ'ողջըննար, — շուտ մը անոր նշան մը ըրաւ որ կապը չքակէ. «Չէ հիմակ կենայ, ըսաւ, պիտ'որ երթամ,»:

Ասկէ ետեւ Ասկանիոս ալ խաթունին բոլորո-

վն քովը կեցած էր, ու իր ճագարն ոտքին բողոր-
տիքը կը ցատկորոտէր: Տղան շփոթած երբեմն իր խա-
ղախիբին վրայ կը նայէր, երբեմն ալ Մետեղղային վրայ,
ու տղուն կարմրած այտերը կը ցուցնէին՝ որ կ'ուզէ
դեռ բան մը ըսել: Աչքը՝ հարցման կերպով մը դէպ
ի հօրը կը նայէր, պղտի մատուրներովն ալ իր խար-
տեաշ մագերը կը խառնէր:

« Խմակ մանկիկ, ուրիշ ի՞նչ կայ ընելու »,
հարցուց Մետեղղա գորովով մը:

Տղան սրտի անձուկով մը դէպ ի գետին ծու-
ցաւ, իր մաքուր ճագարը թեւին վրայ առաւ, եւ իր-
րեւ թէ անոր ուրախութիւն մը կը պատճառէ, խա-
թունին ընծայեց: Տիկինը առաւ ան փոքրիկ անա-
սունը, Ափնէին տուաւ որ հետն առնու, ու տղան
փայփայելով մը աս խօսքերը ըսաւ « Բարձրեալը աս
քու բարի սիրտդ միշտ այսպէս մաքուր պահպանէ
որդեակ », :

Ղամբան տուն դարձած ատեննին, Մետեղղա
խորունկ մտածութիւններու մէջ ընկրղմած էր, անանկ
որ եւ ոչ իրեն ընկեր եղող երեկոյեան աստեղ միտ
կը գնէր: Լիւդիայի վրայ ունեցած համարումը աւել-
ցաւ: Այնպիսի հոգւոյ մը առջին չէ թէ միայն հա-
մարում ստանալու, հապա նա եւ անկից անկեղծու-
թեամբ սիրուելու բաղձանքը աւելցաւ: Թէպէտ Լիւ-
դիա իրեն շատ յարած էր, ի վերայ այսր ամենայնի
Մետեղղա կը կարծէր, որ խանդաղատանօք մը չիսի-
րեր: Իրաւ է որ իրեն ընդունած սէրը՝ այն խռովայոյզ
զգացման մը բացատրութիւն չէր, զորն որ մինակ
բարեկամութիւն կը սեպէր Մետեղղա: Ետքը երկու
տեսակ բարերարութեանցը վրայ սկսաւ մտմտալ, զո-
րոնք այն աղքատ բրուտը թէ իրմով, ու թէ իր ա-
ղախինին ձեռքով ընդունած էր: « Կոս անոր ստակ
պարգեւեցի », սկսաւ ըսել ինք իրեն, — « այնպիսի
պարգեւ մը, որով ես աւելի աղքատ մը չեղայ. իսկ
ասոր ներհակ Լիւդիան՝ ան վատաբախտիկ մարդուն
ոսկի չտուաւ, հապա ինքը զինքը անոր ծառայութեանը
նուիրեց: Ես ըլլայի հազար անգամ աւելի ստակ կու-
տայի, քան թէ իր ըրածը կ'ընէի, անոր համար ալ

իր ըրած բարերարութիւնը իմինէս աւելի մեծ է. եւ Աստուծոյ առջին ալ իր գործքը աւելի մեծ աժէք ունի: Ո՛հ, երանի թէ այնպէս անկեղծութեամբ ու սրտանց իրմէ սիրուէի, ինչպէս Հիւզըոսի տղան սիրուեր է: Ծերը իրաւունք ունի եղեր, որ աղքատաց հետ բարեկամութիւնը՝ առանց անձնախնդրութեան կ'ըլլայ, հարստութիւն ու երկրաւոր ինչքը՝ որչափ զմեզ կը բարձրացընեն, նոյնչափ ալ մեր անվտանգութիւնը մարդկային սիրոյ նկատմամբ՝ անհիմն ու խախուտ կ'ըլլայ եղեր: Նոյն իսկ լեռներն՝ ոսկիի ու մետաղի պահապանները, որչափ որ իրենց գլուխը վեր վեր կը բարձրացընեն, այնչափ ալ ամպի ու մշուշի մէջ կը ծածկուին: Աւելի աղէկ է ցածուն ու համեստ ձորին կեանքը, քան թէ ամպով ու ձիւնով ծածկած բարձր գլուխ մը: Ի՞նչ օգուտ այն գետնամած յարգութեան նշաններէն, երբոր անկեղծ բարեկամներ, սիրալիր սրտեր չունինք: Աս մտածութիւնները զինքը արտմութեան ու փոքրագութեան մէջ կը ձգէին: Ինչու որ երբոր իր անցած կենացը վրայ անդրադարձ խորհրդածութիւն կ'ընէր, կը տեսնէր որ իր ամէն բարի գործքերը ուրիշ գետնի մը վրայ բուսած չէին, բայց եթէ հարստութեան: Բայց որովհետեւ հարստութիւնը, իր ճակտին արդիւնքովը ստացուած չէր, այլ առ առաւելն իր հօրը արդիւնքն էր, անոր համար աչքին առջեւը այնպէս կ'երեւար թէ ամենեւին բան մը գործած չէ: Ուստի եւ բարի գործքերու նկատմամբ՝ ինքը զինքը բոլորովին աղքատ կը գտնէր, ամօթով ու ցաւով սիրալը կը զգածէր, երբոր իր ստակը կը յիշէր, իրեն աչքին այնպէս կ'երեւար թէ մեծահոգի մարդ մը զինքը պէտք է որ միայն արհամարհէ, որովհետեւ անգիտի աշխարհքին համար ցուցընելու բան մը չունի, բայց եթէ անցաւոր գանձեր: Նոյն ատենը առջի անգամ՝ ըմբռնեց, որ աշխարհքիս վրայ անանկ մարդիկներ կրնան ըլլալ, որոնք հարստութիւնը անկատարութիւն կը համարին, եւ թէ Աւետարանը իրաւունք ունի եղեր որ կատարելութիւնը երկրաւոր բարիքներէն ազատ ըլլալու վրայ կը դնէ: Աս մտածութիւնը՝ նոյն ատենները հարուստ

Հոռմայեցի մը՝ Մինուտիոս Փելլիքս՝ ալ խոստովանած էր, իր ծերութեանը ժամանակ քրիստոնէութիւնը ընդունած ատեն: «Մենք ստորնագոյն ժողովրդեան չենք վերաբերիր, կ'ըսէ, երբոր ձեր պատիւներէն ու ծիրանի հագուստներէն կը հրաժարինք»:

Խեղճ աղքատի մը ուստի մէկէն ասանկ պատիւ մը, որ շրջակայ հարուստ ընտանիքէ Տիկին մը մէկէն այցելութեան ելլէ, ու անոր մխիթարութիւն պատճառէ: Հարուստ Տիկինը՝ ասիկա մինակ անոր համար ըրաւ, վասն զի այնպիսի վարդապետութեան մը սկսաւ ծառայել ու անոր վրայ հաճութիւն գրտնել, որն որ կը սորվեցընէր՝ թէ մերձաւորնիս առանց ամենեւին զանազանութեան մը մեր անձին պէս սիրելու ենք: Այսպէս աղքատութիւնը քրիստոնէական աշխարհքին մէջ բոլորովին ուրիշ գիրք մը ունի, քան թէ հեթանոսութեան մէջ, վասն զի առաքինութիւնը՝ անոր ազնուականութեան մուրհակ կու տայ, սէրը՝ հպատակներ, եւ մերկ ու խաչուած Աստուածորդին իրեն նախահայր կը ճանչնայ: Նոյն իսկ աղքատները կենարարին ձեռքով իրենց եղած աս շնորհքը ամէն ատեն ճանչցան, ու իրենք զիրենք անոր արժանի ըրին, եւ անոր համար ալ ամէն դարերու մէջ՝ ամենէն աւելի սրտակից ու հաւատարիմ որդիք են Աստուածորդւոյն ու անոր Ս. Եկեղեցւոյն:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Գ .

Գուժ մը:

(175. ք. 3.)

Պարտեզին մէկ խորշը փառաւոր սօսեաց տակ հովանաւոր տաճար մը կար: Մրտենիններուն մանուածոյ բաղեղը, որ զարգարուն ձողերէն վեր վեր կը ծլի կ'ելլէ, ճիւղերուն թեթեւ խաւարծինները գմբեթաձեւ առաստաղէն դէպ ի կասիայի մացառախիտ թուփերուն վրայ կ'իյնան, ու երկու անգամ ծաղկող Պեստոնի վարդը, կոկոններովն ու ծաղիկներովը

աղօս տաճարէն ներս կը ծիծաղի: Մետեղդա աս տա-
ճարին մէջ գեղեցիկ բազմոցի մը վրայ նստած նա-
խաճաշիկ կ'ընէր: Երբեմն երբեմն ապակեայ փնդա-
կով մը կը խաղար, ու ատեն ատեն այտերուն կը
բռնէր որ զանոնք զովացընէ: Լիւդիա դէպ ի վար
ստորնագոյն բարձի մը վրայ նստած էր. ձեռքը մա-
գաղաթէ թերթ մ'ունէր, ուսկից իր խաթունին
նախաճաշիկ ըրած ատենը կարդար պիտ'որ: Յովհան-
նու Աւետարանչին մէկ հատուածն էր. թէ եւ առջի
ժամանակուան քրիստոնէից մէջ Աւետարանը՝ հե-
թանոսաց առջին կարգալու՝ ի կանոնէ կը խորշե-
ցուէր, բայց Կուսակրօտոս Եպիսկոպոսը հրաման տուած
էր որ Մետեղդա բոլոր Ս. Գիրքերը կարող ըլլայ
կարդալ: Աս միջոցիս մէջ պառուած Սելինան վրայ
կու գայ, քովը զուարթ ընտանի տղայ մըն ալ հետը:
Թեւը՝ կողով մ'ունէր, մէջը որթու տերեւով ծած-
կած կարմրուկ մեծկակ գեղձ վրայէ վրայ խառն,
գրուած ազգի ազգի թարմ թուզեր ու արմաւ: Տղուն
ձեռքէն վար պեղուսեան ազնիւ կտաւէ լաթ մը դէպ
ի վար կը կախուէր, աջ թեւը՝ նեղ պարանոցով ու
երկայն կոթով գինւոյ աման մը բռնած, ձախ թեւն
ալ ծանր ոսկի բաժակ մը: Դուրանոսին ետեւէն՝
պղտիկ Թրակացին կու գար, ձեռքը՝ ծովային խե-
ցւոյ ձեւով վարդագոյն, շերտաւոր, աքատէ տաշ-
տով մը, որն որ պայծառ սառոյցով կամ պաղպա-
ղակով լեցուած էր՝ աս ամանները բերին ու սեւ
մարմորէ սեղանի մը վրայ դնելէն ետքը, ըստ գերեաց
սովորութեան գետնամած երկրպագութիւն մը ըրին
ու ելան գացին:

Ղուկիոս՝ ազնիւ տղայ մըն է, ըսաւ Մետեղդա.
ու ձեռքը ոսկի բաժակին երկընցուց, անիկա ինծի շատ
չէ Վերոս կայսեր աս պարգեւը խաւրեց, ու կ'ուզէ
որ ամէն օր գործածեմ մինչուկ որ ինք գառնայ: Ա-
սոր վրայ Մետեղդա կարմիր գինիէն բաժակին մէջ
լեցուց, քանի մը կտորուանք սառոյց մէջը նետելով,
որ գինին զովանայ: Անդիէն Լիւդիա իր այսօրուան
կարդալիքին յառաջաբանութիւն մը ընելու համար՝
պատմեց թէ ինչպէս Յիսուս՝ իր Ղազարոս բարեկա-

մին տունը երթալ ուզեց, որն որ Երուսաղեմէն շատ
Տեռու չէր, թէ Ղազարոս անգամ մը ծանր հիւրնու-
ցաւ ու անոր քոյրերը Մարիամ ու Մարթա Յիսուսին
մարդ խաւրեցին իրենց հիւանդ եղբօրը համար. անոր
աստուածային օգնութիւնը խնդրելու: Ասոր վրայ Ղա-
զարու յարութեան պատմութիւնը սկսաւ կարգալ,
ու վրան խորհրդածել որ Քրիստոսի ետքէն բռնուե-
լուն առիթը անոր յարութիւնը եղած է: «Այնպիսի
նշանագործութեան մը համբաւը եղաւ որ՝ ըսաւ, Երու-
սաղէմ՝ զինքը այնպիսի փառաւորութեամբ ընդունեց,
Քաջանայապետաց նախանձը վրան շարժեց ու նոյն
խկ Աննարարին մահուան առիթ տուաւ: Ղազարոսի
կեանքը այս կերպով իր մահուանը պատճառ եղաւ:
Քայց ինչպէս Ղազարոս գերեզմանին մէջ քանի մը օր
միայն մնաց, ասանկ ալ Քրիստոս երկրիս ծոցը երեք
օր միայն մնաց, եւ իր անձնական զօրութեամբը ի մե-
ռելոց յարեաւ: Մենք երբեմն մարմնով այսպէս յա-
րութիւն պիտ'որ առնունք, ու իրարմէ երբեք պիտ'որ
չբաժնուինք: Նորէն մէկզմէկ մէյ մ'ալ տեսնելու յոյ-
սը՝ մեր միակ մտիթարութիւնն է, մեր սիրելիներուն
մահուան գերեզմանին քով,»:

Աս միջոցիս Մետեղղա քանի մը հարցուածներ
ըրած ատեն, տեսաւ որ անդիէն երեւելի մարդուն
մէկը հապճեպով մը իրեն կու գար. երբոր մտիկ-
ցաւ, ճանչցաւ որ իր առջի հին բարեկամը Պաւսա-
նիասն է, իր հօրը ամենէն աւելի երախտագէտ աշ-
կերտներէն մէկը: Ասիկա այլայլած ձայնով մը սկսաւ
իրեն պատմել, որ Աթէնքի անդիհիւպատոսը պատե-
րաղմի ասպարեղէն լուր առաւ թէ Մարկոմանաց յազ-
թութիւնը վերջապէս գլուխ ելած է, յաղթութեան
պսակը գլխաւորաբար Փայլաբողիչ ըսուած լեզէոնին
քաջութեան կը տրուի, որոնց մէջ շատ Յոյներ ալ
գանուած են եղեր: Եւ թէ առ հասարակ կը խօսուի
կոր եղեր Աստուծոյ զարմանալի օգնութեան վրայօք-
որ թէ չհասնի եղեր, ամէնքն ալ բարբարոսաց ձեռք
պիտ'որ մատնուին եղեր: Այլ եւ Ղուկիոսի վրայ
պատմուած լրերը, որն որ մեծ քաջասրտութեամբ
պատերազմեր է, առանձինն բզեչխին լրերուն մէջ կը

բովանդակուին եղեր: Աս խօսքս ըսաւ չըսաւ, ծոցէն տոմսակ մը դուրս հանեց ու գրասեղանին վրայ դնելով արտորնօք ելաւ գնաց:

“Արդւոյս վրայ լընր”, — հարցուց Մետեղղա, մտմտուկներով գրաւուած աչքը իր գրակարդացին վրայ շտկեց:

“Առանց կարծեաց ուրախալի լըեր են, ըսաւ գրակարդացը, որովհետեւ Ղուկիոս քաջութեամբ պատերազմեր է եղեր”,:

“Սա տոմսակը բանալու սիրտս չհրաշեր, Պաւսանիասն ալ անանկ արտորնօք ելաւ գնաց. ան ի՞նչ ըսել կ’ուզէ: Կը դողամ սա նամակէն: Ա՛հ, դուն ալ գնա, գնա քու Աստուծոյդ աղօթք ըրէ, զիս հոս առանձին քիչ մը ատեն թող տուր՝ որ իմ որդւովս զբաղիմ”, : Լիւդիա հրամայուածը ըրաւ:

Բայց որչափ երկընցաւ իր դուրսը մնալը, նոյնչափ ալ մտմտուկը զինքն առաւ, որովհետեւ թղթաբերին երեսն ալ այնչափ չէր հաւնէր: Թէ եւ ասոր մէջն ալ Նախախնամութեան մէկ գործքը կը տեսնէր, որ իր վախճանին յաջող ելք մը պիտի տար: Ժամանակը անցաւ. դեռ ներսը Մետեղղայէն ձայն ձուն չէր լսուէր: Սկսաւ դէպ ի հովանաւոր տաճարը նայիլ, զննել: Մետեղղային քովը կեցող պզտի շունը աղիողորմ ձայնով մը սկսաւ քիչ մը ետքը հաջել. անանկ որ կարծես թէ մէկը իրեն դպած ըլլայ: Ասոր վրայ շատ չանցաւ տեսաւ Լիւդիա, որ անասունը սմքած սմքած դէպ իրեն շիտկուեր է, ու հազիւ թէ առջին հասաւ, նորէն ետ ետ դէպ ի տաճարը կը վազէր, պոչը գետինը կը զարնէր. աս գործողութիւնը անոր առջին քանի մը հեղ կրկնուեցաւ: Իմացաւ Լիւդիան՝ որ ասի նշանակութիւն մը պիտ’որ ունենայ, մէկէն շփոթեցաւ, միտքը դրաւ որ վազէ իր խաթունին քով երթայ, թէ եւ անկից կանչուած չըլլայ, մէյ մը նայի, նորէն ետ գայ: Գնաց ու մացառախիտ անկերուն մէջէն դէպ ի ներս ծռեցաւ. ի՞նչ կը նայիս. իր խաթունը անշարժ փռուեր կը պառկի, մէկէն սոսկաց ու սկսաւ գոչել, ներս մտաւ, թեւէն բռնեց, անոր կիսաբաց ձեռքին մէջ դեռ թուղթը բռնած տեսաւ, իմացաւ որ

Ղուկիոսի մահուան լուրը առած է: Աս ըստէս անանկ ցաւագին զգացում մը ունեցաւ, որ մօրմէն բաժնուելէն հետէ երբեք ունեցած չէր: Մետեղղային գլուխը վերցուց թեւին վրայ առաւ, ճերմակ սրբիչը ջրին մէջ թաթխեց ու զօրաւոր գինւոյ կաթիլներով հիւանդին վրան սրսկեց, շունը աս միջոցին անդին ասդին պատերէն վեր մագլելով, ձայն կու տար, կարծես թէ քնացողը արթընցընել կ'ուզէր: Լիւդիա գիտեր արգէն որ նոյն միջոցին ուրիշի օգնութեան դիմելը պարապ է. հիւանդին գլուխը թեւին կրթընցուցած հանդարտ կեցաւ, կը սպասէր որ կամաց կամաց արթըննայ, ոգի առնու:

Ետեղճ աղախինը աս դժուար դրքին մէջ երկայն մնաց, փափուկ գորովով մը անոր գլուխը իր կուրծքին վրայ բռնեց, մտածելով մտքին մէջէն որ գոնէ մէկ անգամ իր կենացը մէջ ան բախտին հասաւ, որ այնպիսի պատուական գլուխ մը իր կուրծքին վրայ կրթընի: Աերջապէս քիչ մը ետքը տեսաւ որ մեղմ շունչ մը կը սկսի վրան կենդանանալ, ու արտեւանունքը սկսան բացուիլ:

Մետեղղա գլխէն անցածէն բան մը չէր իմացած, իբրեւ գինովութենէ մը նոր սթափած սկսաւ ասդին անդին նայիլ, ու հարցընել որ արգեօք երանց տեսած է: Լիւդիա պատասխանեց թէ չէ, «թեթեւ անհանգստութիւն մըն էր՝ անցաւ»: Ոսկի բաժակը ձեռքը տուաւ որ խմէ: Քանի մը կաթիլ բերանը առաւ, ու սկսաւ Լիւդիային հարցընել ու անոր աչքին նայելով, «Կարծեմ կու լաս կոր, ըսաւ, ինչ բան կայ: Ա՛հ, ինձի ալ լալ կու գայ քեզի հետ — թող որ քիչ մ'ալ թեւիդ վրայ հանգչիմ», —

— Երկայն ատեն լուռ կենալէն ետեւ հարցուց որ քիչ մը յառաջ քովերնին ո՞վ կար: Գուրսէն մարդ կ'որ: «Ինձի անանկ կու գայ, որ ասանկ մարդ մը, Ղուկիոսին խօսքը ըրաւ: Մութ կը յիշեմ որ, ըսաւ, ինձի կ'ըսէր որ աղէկ է, — բայց չէ, կը սխալիմ — պատերազմի վրայ բան մը չըսա՛ւ, կոտորածի մը վրայ: Ա՛խ Աստուածք, ինչ կը տեսնեմ — ինչ կը տեսնեմ», —

“**Վ**իւղիա, արդեօք զգայութենէ դճուս եմ՝, չէ նէ հոն փոքրիկ տոմսակ մը կայ, որ իմ տղուս վրայ կը խօսի,, : Մէկէն ձեռքը երկընցուց առաւ, ու աչուրները վրան տնկեց : “Վարելի բա՞ն է, տղաս ինկեր է պատերազմի մէջ, Ղուկիոսս մեռեր է : — Մայր մը իր մէկ հատիկ որդին կորսընցընէ, մայր մը որն որ միանգամայն պրի է,, : — — —

Աս միջոցիս տաճարէն դուրս տղու հեկեկանք մը կը լսուէր : Պզտի տղայ մըն էր, որ դէպ ի ներս նայել կը ջանար, թրակացի կարծուկը, Ղուկիոսի սիրելի հաւատարիմը : Վրան շատ չանցաւ Ռփնէ ալ եկաւ, իր դժբախտ խաթունին ծունկը ինկաւ ու անոր զգեստովը երեսը գոցած սկսաւ լալ : Թրակացին անոր դէպ ի կոնակը գնաց պահուրտեցաւ, ու գրասեղանին վրայէն նամակը մէկդի առաւ : Եւ իր աղաչաւոր կեցուածքովը հարցընելու ձեւ մը կ'ընէր, որ կրնա՞յ կարդալ : Մետեղլա հաւանութեան նշան տուաւ ու հասկըցուց որ թէ ինքը ու թէ Ռփնէն ելլեն երթան : Աս դժբախտ մահուան լուրը բոլոր ամարատան մէջ տարածուեցաւ, որովհետեւ Պաւսանիաս դուրս ելած ատեն մեծ դռան պահապաններուն իր բերած լուրը հաղորդած էր :

Թրակացուոյն առած թուղթը ձեռքէ ձեռք պտրտեցաւ, բայց ոչ ոք կը յանդգնէր Մետեղլային առջին ելլելու եւ ոչ իսկ պարտէզը երթալու, որ իրեն ցաւակից ըլլան :

Աս սաստիկ տպաւորութիւնը անցնելէն ետեւ, Վիւղիա քանի մը մխիթարական խօսքեր սկսաւ մէջ բերել. բայց քանի անգամ որ բերանը բացաւ, խօսքը չկրցաւ յառաջ տանիլ : Մետեղլա տեսաւ որ իր հաւատարիմ աղախինը զինքը մխիթարելու կը ջանայ, ու իր ցաւոցը մէջ իմացաւ որ անկից նա եւ սիրուելու համար ունեցած բաղձանքը լիուրի կատարուեցաւ : Մեծ դժուարութեամբ յաջողցուց Վիւղիա քանի մը խօսք անոր զրուցելու : “Սիրելի Տիկինս, ըսաւ “քու ցաւդ սաստիկ է ու իրաւացի, բայց դուն չես մինակ որ կը կրես — քու ազնուական հոգւոյդ գաղտնիքը ճանչցողներն ալ մէկտեղ են ու քեզի հետ մի եւ նոյն

ցաւով կը զգածին, անանկ ներքին զգածմամբ մը որ չէս կրնար կարծել,, : Աս խօսքիս վրայ խաթունին սիրան ալ ելաւ եւ իր սրտին տրտմութեան արցունքը աչքէն կը քամէին :

“Մընչուք, ըսաւ, անսպառ արտասուաց աղբիւր մը եղած են,, :

“Սինչուկ որ այն մսիթարութեան Աստուածը, ըսաւ քրիստոնէ բարեկամութիւն ալ, նոյն աչքերը պայծառացրնէ նոյն հանգուցեալը մէյ մ'ալ տեսնել տայ : Ներկային՝ ու նոյն վայրկենին մէջ եղած միջոցը շատ քիչ է, նոյն ատեն մայրը իր տղուն հետ մեկտեղ կատարեալ պիտ'որ միաւորուի : Ինչպիսի մսիթարութեան առատութիւն չկայ, ո՛վ պատուական Տիկին, աս ճշմարտութեան մէջ,, :

— “Թէ որ աս հաւատքը չունենայի, ըսաւ Տիկինը, վիշտն ու տառապանքը զիս պիտ'որ ոչնչացրնէին : Ի վերայ այսր ամենայնի հոգւոյ անմահութեան վրայ սաստիկ համոզուած եմ : — Ո՛հ, ինչպիսի չոր կրօն եղած կ'ըլլար ան կրօնը, որն որ սգաւոր մօր մը ձեռքը որդւոյն պատանքը տար, ու աս պատանքով՝ վերջին մսիթարութիւնը թաղեր, առանց նորէն տեսնելու յոյսը հաղորդելու,, : Ու ինք իրեն բռնութիւն ընելով, յառաջ տարաւ խօսքը ըսելով, “Լիւդիա Լիւդիա, — իմ երազս, — գուցէ Ղուկիոս արդէն ան տենը մեռած էր,, :

“Ու արդէն ան ատենը երջանիկ էր, պատասխանեց Լիւդիա, վասն զի քրիստոսի քովը կը հանգչէր, Աստուծոյ որդւոյն քովը,, :

“Կ'ազգէի քրիստոսի քովը երթալ, երբոր զինքը տեսայ, բայց կարող չէի : Դուն կը ջանայիր ինծի օգնելու . բայց դուն ալ շատ տկար էիր : Ո՛վ պիտ'որ զիս հոն տանի : Ո՛հ, թէ որ իմ որդւոյս քովը պիտ'որ չերթամ, ինչ խիստ, ինչ զարհուրելի բան կ'ըլլայ : Մահկանացուաց ամենէն դժբախտը կ'ըլլամ, երկնից ու սանդարամետաց ամէն կողմերը թռչելով, պիտ'որ գոչեմ ու կանչեմ իմ սրտիս որդեակը, հեծելէն պիտ'որ չգադրիմ, նա եւ թէ որ յաւիտենականութիւն մը տեսէ : Ո՛վ սիրելի դուստր, զիս իմ որդւոյս տար,, :

«Դ՛մ բազուկս ըսաւ, Լիւդիա, շատ տկար է. բայց շնորհքը թէ որ քեզի այցելութիւն ընէ, կրնայ քեզի երկնքէն զօրաւոր հրեշտակ մը խաւրել, որն որ իր սրովը ամէն արգելք մէկդի կ'ընէ, ու զքեզ քու որդւոյդ երջանկութիւնը կը տանի»։ Աս խօսքերուն մէջ Լիւդիա իր Տիկնոջը ցաւերուն չէ թէ իբրեւ աղախին՝ այլ իբրեւ հաւատարիմ անձ ու բարեկամ մը մասնակից կ'ըլլար։ Ասան զի առանց գիտնալու՝ ինք ալ Մետեղղային նաժիշտը չէր, հապա անոր սրտակիցը։ Եւ իրօք ալ բարեկամութիւնն է, որ տառապանաց բեռը կը թեթեւցնէ, ու անոր թշուառութեան մէկ մասը իր ուսերուն վրայ կ'առնու։ Բարեկամութիւնը՝ երբոր սիրոյ ձիրքերն են որ զանի կ'ընծայեն, Աերոնիկայի վարչամակին կը նմանի, որն որ չարչարելոյն երեսէն փոշին, արիւնը ու արցունքը կը սրբէ, եւ ինչպէս որ անոր երեսը տրտմութեամբ զգածած կը տեսնէ, այնպէս ալ ինք զգածեալ՝ անոր պատկերը անջինջ իրեն վրայ կը դրոշմէ, եւ հնարք կը փնտռէ որ ինչ ճամբով կամ միջոցով իր սիրելոյն սիրութիւն ճարէ։

Աս կերպով Լիւդիայի հոգւոյն առջին գիշեր ու ցորեկ դժբախտ մօր պատկերը միշտ կը ներկայանար։

Գ Լ Ո Ւ Խ Ժ Ե .

Գիտնիսիոս Կորնթացին։

Մետեղղա Աթէնքի մէջ շատ ծանօթ էր, անոր համար ալ աս գուժաբեր լուրը իրեն բարեկամներուն վրայ ալ մեծ ազդեցութիւն ըրաւ, եւ իրենցմէ ոմանք անոր գեղագնացութեան պալատը եկան հետը ցաւակից ըլլալու համար։ Ասոնցմէ մէկն էր Աթենագորաս մեծարոյ ծերունին ու երեւելի փիլիսոփան, որուն խօսքերը ընկճած տառապելոյն վրայ այնպէս ազդեցութիւն կ'ընէին, ինչպէս արեւուն մեղմ ճառագայթները սառած ցօղունի մը վրայ։ Թէեւ Աթէնք՝ իր բնակած գեղէն շատ հեռու չէր իյնար, ուր բոլոր

իր ծանօթներն ունէր, ի վերայ այսր ամենայնի իր սրտին ցաւերը թող չէին տար որ հոն երթայ. ինչու որ դժբախտութեան մէջ մարդկային սրտին՝ առանձնութիւնը ամէն բանէն աւելի սիրելի կու գայ ու ինքը զինքը քանի մը սրտակից բարեկամներով միայն գոհ կ'ընէ: Գերմանացւոց վրայ եղած յաղթութեան հանդէսը մայրաքաղաքին քանի մը երեւելի տեղերը սկսաւ կատարուիլ, որուն ներկայ գտնուիլը կրնար իր սրտին մեծ ցաւ պատճառել ու վէրքերը նորոգել: Աթենագորաս իրեն խոստացաւ որ զինքը այնպիսի մարդու մը հետ ծանօթ ընէ, որ Յունաստանի նոյն ատենուան հաւատացելոց առջին իբրեւ զարմանագործ մարդ մեծ պատիւ ունէր, եւ իր բնակութիւնը կորնթոս էր, ուստի Մետեղղայի գեղի պալատէն ալ շատ հեռու չէր: Մետեղղա աս առաջարկութիւնը մեծ շնորհակալութեամբ ընդունեցաւ:

Յայսմաւուրքները՝ աս ժամանակուան Յունաց երկու Գիոնիսիոս անուանի եպիսկոպոսներ կը դնեն մեր առջին: Ասոնցմէ առջինը այնչափ յիշատակուած երեւելի Գիոնիսիոս Արիսպագացին է, որն որ Պօղոս առաքելոյն (51 Գ. Ե.) Արիսպագոսին առջին ըրած խօսքովը, քրիստոնէութեան հաւատքը ընդունեցաւ: Ասիկա Աթէնքին առջի եպիսկոպոսն եղաւ ու 117ին վախճանեցաւ, եւ իր յիշատակին համար ետքի դարերուն մէջ Արիսպագոսին վրայ եկեղեցի մը շինուեցաւ, որն որ հիմակ քանդուած աւերակ մըն է: Ասոր հակառակ մեր Գիոնիսիոսը՝ որուն համար Աթենագորաս կը խօսի, Մարկոս Աւրեղիոսի ժամանակ կորնթոսի մէջ ծաղկեցաւ. եւ ինքը զինքը իր նախանձովն ու փառաւոր ճարտարախօսութեամբը երեւելի ըրաւ: Իր հոգը միայն իր Եկեղեցւոյն վրայ չէր, այլ եւ դուրսի քրիստոնէայ հասարակութեանց ալ իր զանազան գրուածներովը կը հասնէր, որոնց մէջ ամենէն ծանօթագոյնը, Լակեդեմոնացւոց, Աթենացւոց, Նիկոմիդիայ եկեղեցւոյն, Գորտինայի, Ամաստրիսի, Գնոստոսի ու Հռոմայ եկեղեցիներուն գրածները ամենէն անուանիներն են: Աս առաքելական հոգւով գրուած թուղթերը, որոնց մէջ

լու: Հաւատքը վերէն կու գայ ու ամենէն մեծ պարգեւն է, զորն որ Աստուած մահկանացուաց կը շնորհէ: Մէկու մը՝ աս պարգեւը բարձրագոյն աստիճանով կու տայ, մէկային ալ նուազագոյն չափով: Ինչու որ հաւատքը՝ խաւարի մէջ լուսաւորող լոյս մըն է, իւրաքանչիւր մարդուն ձեռքը հասարակօրէն մինակ տկար լապտեր մըն է, զորն որ մարդս բուն ճշմարիտ լուսէն՝ որ է Քրիստոս՝ կը վառէ: Եղբ մանց համար հազիւ իրենց կարօտութիւնը լեցընելու համար բաւական է, երբոր աս կեանքին խաւարային լաբիւրինթոսէն կ'անցնին, հազիւ երկու քայլ անդին կրնան նշմարել՝ հայրենեաց ճամբան գտնելու, թող թէ ան նուազ կանթեղին լուսով երկնից փառքը տեսնելու: Բայց առանց աս կանթեղին եւ ոչ ճամբուն ուղղութիւնը կրնանք գտնել, եւ խոհեմ հոգի մը պիտ'որ նայի որ նոյն կանթեղը ու անոր եզը միշտ աղէկ վիճակի մէջ պահէ: Թէ որ աս լոյսը մարելու՝ ու եղն ալ լմնալու վրայ է, մի վհատիր: Ասիկա նոյն իսկ Առաքելոց պատահեցաւ, ու անոր համար ալ Քրիստոսի գոչել սկսան. «Տէր յաւել մեզ հաւատս», իսկ ան խնդրին գալով թէ արդեօք դժբախտութիւնը քրիստոնէից Աստուծմէն՝ թէ հեթանոսաց ամենամեծ աստուծմէն յառաջ կու գայ՝ պատասխանեց. «Գիցուք որ աս դժբախտութիւնը Գիոսէն յառաջ եկած ըլլայ, ան ատեն անիմանալի բան մըն է, որ ինչո՞ւ Գիոս ամէն Հելլէնները չիպատօեր, որոնք իրեն չեն հաւտար, որովհետեւ այնչափ իմաստուն մարդիկ իրենց հարց հաւատքը կամ բոլորովին թող տուին եւ կամ ուրիշ հաւատքի մ'անցան: Բայց Գիոս՝ նախ ամենէն յառաջ քրիստոնէները պէտք էր պատօեր, որ իր սեղաններն ու տաճարները ոչընչացընելու միտք ունին: Իսկ թէ որ քու դժբախտութիւնդ քրիստոնէից Աստուծմէն է, ան ատեն մեկնութիւնը դիւրին է»,:

— «Ի՞նչպէս ձեր Աստուածը՝ որ դուք սկիզբն ամենայն բարեաց կ'անուանէք, մարդուս գլուխը դրժբախտութիւն ու տառապանք կրնայ բերել», հարցուց հեթանոսահին:

“Աստուած այգեգործ մըն է, ըսաւ Գիտնիսիոս, “որ իր մանգաղովը որթատընկին վրայի չոր ճիւղերը կը կտրէ որ բունին արգասաւորութեան զօրութիւն մը տայ: Մենք ան կտրուած տեղերուն ցաւը կը զգանք, արցունքնիս գետինը կ'իյնայ. որթոց արտասուքն է անի: Բայց պէտք չենք մոռնալ, որ աս աստուածային այգեգործը երբոր մեզի ան ցաւերն ու վէրքերը կը պատճառէ, միայն վնասակարը ու անպտուղը մէկդի կը կտրէ*: Թէ որ քու խղճմտանքիդ քօղը քիչ մը մէկդի առնուս, կը տեսնես որ աստուածային սէրը նա եւ քու վրադ ալ այնպիսի պակասութիւններ տեսած է, զորոնք հեռացընել ուզած է, զքեզ ճշմարտապէս բարի ընելու համար,:

“Ի՞նչ կ'իմանաս ասով, մեծարգոյ Հայր,:

“Վուցէ աշխարհքիս, անյագ ստածուածոց, արարածոց սէրն է, որն որ զքեզ մինչուկ հիմա կապած բռնեց, անանկ որ յաւիտենական բաներուն մտածութիւնը երկրաւոր բաներէն խղզուեցաւ: Գուցէ հիմակ աս դժբախտութիւնը քու գլուխդ գալէն ետքը, շատ աւելի յաճախ կը մտածես երկնից Աստուծոյն, քու յաւիտենական վախճանիդ ու որդւոյդ վրայ, որն որ Աստուծոյ քով հիմակ հանգչած է,:

“Ո՛հ, ինչպէս ճշմարիտ խօսեցար, գոչեց Մետեղլա, “այսպէս Աստուած դժբախտութիւն կը բերէ մարդուն գլխուն, ճշմարտութեան ու երջանկութեան հասցընելու համար, նա եւ այրող ճառագայթը ու կիզիչ կայծը՝ յաւիտենական սիրոյն բոցավառ սրտէն բղխած է: Ասիկա բարձրագոյն էակի մը արժանի գործողութիւն է, եւ Պղատոն աս բանս չկրցաւ գուշակել, երբոր ըսաւ թէ մարդկային ոգին լուռ կը կենայ, երբոր չարեաց սկզբնապատճառը կը մտածէ: — Այնպէս չէ՞, իրաւունք չունիմ, Գիտնիսիոս, երբոր հաւատամ, որ աստուածութիւնը աս օրերս ինձի այցելութեան ելած ատեն՝ զիս ամէն ատենէն աւելի սիրեց,:

* “Վէրք եւ հարուածք սրբէն ի չարեաց”, Առակք Սոզումնի. Ի. 30:

“Ստուգիւ, Մետեղղա, Աստուած՝ զով որ կը տանջէ, նոյնը միանգամայն կը սիրէ ալ, եւ ամէն մէկ պատիժը ուրիշ նպատակ մը չունի, բայց եթէ ինքը զինքը անկէ ետքը ալ հարկաւոր չընել,»:

“Ա՛հ, ինչպիսի յօժարութեամբ ամէն պատիժ յանձն կ'առնուի քաշել, թէ որ ստոյգ ու ապահով բլլայի որ Աստուած ան երջանկաց դաշտը զիս պիտ'որ հասցընէ: Բայց կը հաւատամ որ Աստուած իմ ցաւս ու տրտմութիւնս իր անչափ անսահմանութեամբը պիտ'որ թափանցէ, տեսնէ, — ինչու որ երկրիս վրայ չկայ լեզու մը՝ որ մօր մը թշուառութիւնը ըստ բաւականին նկարագրել գիտնայ, երբոր իր կորսուած մէկ հատիկ զաւկին վրայ սուգ առած է,»:

Գիտնիսիոս աս միջոցիս ծոցէն կտոր մը թուղթ հանեց, վրան քանի մը խօսք գրած էր՝ ան գիտմամբ որ այրի կնոջ քովը ձգէ, Ղուկասու Աւետարանչին այրի կնոջ որդւոյն մահուանը վրայ քրիստոսի ունեցած արգահատութիւնն էր, զորն որ իրեն ալ կարգաց:

“Երբոր Յիսուս, ըսաւ, ‘նային քաղքին դրանը քով եկաւ, նայիս մեռել մը դուրս կը հանէին: Ասիկա իր մօրը մէկ հատիկ որդին էր, ան մօրը որն որ միանգամայն այրի էր: Շատ մարդիկ քաղքէն մէկտեղ ընկերացած էին, երբոր Տէրը կնիկը տեսաւ, վրան խղճաց ու իրեն ըսաւ, “մի լար,»: Աւ մօտեցաւ դագաղը շօշափեց. մեռելը տանողները կեցան, Յիսուս ըսաւ, Պատանի քեզի կ'ըսեմ, եւ: Մեռելը վեր շիտկուեցաւ ու սկսաւ խօսիլ, Յիսուս դարձուց զպատանին իր մօրը * : Նոյն Տէրը, ըսաւ Գիտնիսիոս, ‘նայինցի այրւոյն վիշտը ճանչցաւ, ուրիշ այրիներուն ալ ցաւը գիտէ, ու գայ պիտ'որ վայրկեան մը, որուն մէջ քեզի ալ պիտ'որ ըսէ. “Մի լար,»: Զքեզ պիտ'որ կանչէ ու սիրելի զաւակդ նորէն քու բազուկներուդ մէջ պիտ'որ գտնես. — քրիստոս ան տղան նորէն իր մօրը պիտ'որ դարձընէ,»: —

Մետեղղա աս խօսքին վրայ նորէն աչքը բացաւ, զօրութիւն առաւ, երբոր աս զարմանագործ

* Ղուկ. Է:

դէպքը անոր մեկնութեամբը լսեց իմացաւ: “Այս պէս ուրեմն, ըսաւ, դուն ալ ինծի ան յոյսը կու տաս, զորն որ ինծի Աթենագորաս աւետած էր, որ ես երբեմն երկնից երանելեաց հետ մեկտեղ պիտ'որ ըլլամ”:

“Տարակոյս չունիմ, ըսաւ, թէ որ ան թէու-
թիւնները կը կատարես, որոնցմով Աստուած երջան-
կութեան պսակը մեզի կը շնորհէ, — այսինքն Հաւատք
ու Առաքինութիւն: Երկուքն ալ քոյրեր են, որոնք
Մարեմայ ու Մարթայի պէս փրկչին ետեւէն կ'եր-
թան, մէկը՝ անոր ոտուըներուն կը պլլուի, մէկայն ալ
իրեն համար եռանդեամբ կը գործէ: Ով որ աս եր-
կու քոյրերէն մէկ հասն ալ կը ճանչնայ, ստուգիւ-
նոյնին ձեռքով մէկային ալ կը տարուի: Թէ որ քրիս-
տոնէական առաքինութեան հետ բարեկամութիւն
խառնես, առաքինութիւնը՝ շուտ մը զքեզ հաւատոյ
ճշմարտութեան կը տանի: “Վուչէք գիտնալ, ըսաւ
Քրիստոս, որ իմ վարդապետութիւնս Աստուծմէ է, միտ
դրէք անոր”:

Գեղեցիկ բան է ուսմանց զբաղիլ, ու գի-
տութեան գանձերով իբրեւ զովացուցիչ ակնաղբերէ
մը կազդուրիլ. ինչ գերազանց բան է իրաց երեւոյթ-
ներուն վրայ մտածելը՝ ճշմարտութեան աւելի մօտիկ-
նալու համար, բայց իմաստութենէն աւելի առաքի-
նութիւնը զքեզ վեր կը բարձրացընէ: Փիլիսոփայու-
թեան ուսումը խորունկ ծով մըն է, ասոր մէջէն
ոմանք ճշմարտութեան մարգարիտ կը հանեն, ոմանք
ալ միայն”:

“Իայցի՞նչ մասնաւոր առաքինութիւն կը յանձ-
նես դուն ինծի, երկնից փառացը մասնակից ըլլալու
համար”:

“Ս. Քահանայապետ մը, ըսաւ Գիոնիսիոս, մեր
Վորնթոսի եկեղեցւոյն թուղթ մը գրած է, զորն որ մենք
դեռ կիրակի օրերը հրապարակաւ կը կը կարդանք,
ու աս թղթին մէջ մեզի աս խօսքերով կը սորվեցընէ
թէ երջանկութեան պայմանները որոնք են: Աշխարհաց
փառաւոր Արարիչը ու հայրը, կ'ըսէ Վղեմէս աս Վորն-
թացւոց գրած թղթին մէջ, երկնային ուրախու-
թեանց թիւն ու գեղեցկութիւնը կը ճանչնայ: Անոնց
մէջը գտնուելու ջանանք, որոնք իրեն կը սպասեն,

խոստացուած պարգեւներուն մասնակից ըլլալու համար: Բայց ինչպէս կրնանք ասոր հասնիլ. երբոր մեր միտքը Աստուծոյ հաւատալու մէջ հաստատուն է, երբ որ միշտ ան կը մտածենք, որն որ Աստուծոյ հաճոյականն ու ախորժելի է, որպէս զի իր սուրբ կամքը կատարենք: Քայլենք ճշմարտութեան ճամբուն վրայ ու մէկդի ձգենք ամէն անիրաւութիւն ու օրինազանցութիւն, ընչասիրութիւնը, կագը, չարամտութիւնը, հեշտութիւնները, լեզուանութիւնը, աստուածատեցութիւնը, հպարտութիւնը, բարձրամտութիւնը, փառասիրութիւնն ու սնապարծութիւնը*, և:

Մետեղդա ասոր վրայ խօսք տուաւ Գիոնիսիոսին՝ իրմէ չբաժնուած, որ ամենայն եռանդեամբ առաքինութեանց ետեւէ կ'ըլլայ, ինչպէս որ սուրբ Արօնը կը պահանջէ:

Բայց շուտ մը անոր ծանօթներուն մէջ ձայն ելաւ որ Մետեղդա այնպիսի վարդապետութեան ուսում մը ընդունած է, որն որ առ հասարակ «յիմարութիւն», կը սեպուի: Անոր համար ալ իր բարեկամները ամէն ճիգ ի գործ դրին որ միտքը դարձնեն, յիշեցընելով անոր իրեն հին ազնուատոհմ ընտանեաց փառաւորութիւնը, հարստութիւնը, իրեն մտացը համբաւը ու Ապստեր դէմ բրած ապերախտութիւնը: Աս ամէն բան զինքը քրիստոնէ ըլլալէն ետ պիտ'որ կեցըններ: Այսպիսի ազդեցութիւններով դժուարին վիճակի մը մէջ ինկաւ: Յուսահատութիւնը՝ իր ներսի դին որդի մը պէս կ'ուտէր, այնպէս որ կամաց կամաց այս ներքին պատերազմին մէջ ընկճելու չափ եղաւ: Բայց մարդուս դեգեւած ու նուազած ժամանակը՝ շատ անգամ երկինքէն մարդուն աներեւոյթ ձեռք մը կ'երկըննայ, որն որ զինքը ոտք կը հանէ ու յաղթութեամբ դէպ ի նպատակը կը տանի:

* Աղեմէս, Թուղթ առ Կորնթ. Գլ. 34:

Գ Լ ՈՒ Խ ԺՁ.

Գարձ:

Խաթունը պատերազմի ասպարեղէն ընդունած սգալի լուրը առնելէն ի վեր ամիսներ անցած էին: Աշուն էր ու ձմեռը վրայ եկաւ, դեռ իր ամարուան տունը թող տուած չէր: Գոյնը նետած, նիհարացած, ստուերի մը պէս սգոյ հագուստներովն իր հարուստ սենեակներուն մէջ կը պտրտէր, որոնք ալ իրեն համար հրապոյրք մը չունէին: Շատ անգամ բազին մէջ նստած՝ կճեայ աւազանին ջուրը կը դիտէր, որուն մէջ իր գունատ կերպարանքը ան ծածանող ջրին երեսը իբրեւ հայելիի մը մէջ կը նշմարէր, եւ կամ քիչ մը ուշ իրիկուան դէմ սոխակի մը վշտագին խօսուածքը մտիկ կ'ընէր: Այսպէս ցաւն ու տրտմութիւնը մերձաւորին տրտմութեան հետ յօժարութեամբ խառնուել կ'ուզէ, եւ ասով իր վշտերն իբր թէ ամոքած կը համարի: Թէ եւ Գիոնիսիոս թղթով զինքը մխիթարելու կը ջանար, բայց «բարեպաշտ քոյր Քրիստոփորան», (Ս. Հայրապետն իր թղթին մէջ ասանկ կ'անուանէր զՄետեղղան,) մխիթարութիւն ամենեւին չէր վերցընէր:

Գիոնիսիոսին շինածը՝ Մետեղղայի բարեկամները կ'աւրէին: Մանաւանդ ճարտար ու խելացի Ղուկիանոսը, որն որ նոյն ատենները Եգիպտոսէն Յունաստան դարձած էր, քրիստոնէութիւնը ծաղրական ցուցրնելուն կերպը աղէկ գիտէր: Իր հենգնութիւնները այնպէս սաստիկ կ'ազդէին Մետեղղայի հոգւոյն վրայ՝ որ ժամ մը յառաջ մեռնիլ երթալ կ'ուզէր, որ խալըսի իր կեղակարծ վիճակէն, թէեւ չէր ալ գիտեր որ արդեօք իբրեւ քրիստոնէ՝ չէ նէ իբրեւ հեթանոս պիտ'որ մեռնէր: Իր տարտամ վիճակը զինքը յուսահատութեան մէջ ձգած էր:

Մարդուս ոգին բնածին կարօտութիւն մը ունի ճշմարտութիւնը հասկընալու, եւ քանի որ իր վրան հանգիստ չիգտնար, մահուան անձկութիւն ու ցաւ կը զգայ: Մարդուս միտքը ճշմարտութեան այնպէս կ'

գիմէ, ինչպէս սիրտը սիրոյ: Իսկ ուր որ տարակոյս մը կայ, հոն երկու տարրներ կան, մոլորութիւն ու ճշմարտութիւն մէկտեղ, ասանկով մարդուս ներսի գին պղտոր վիճակ մը կը գոյանայ, որն որ ան նախնական երկրի ու ջրոյ խառնակութեանը նմանութիւն ունի: Այսպիսի չարակրութեան մէջ Մետեղլայի մարմնական ոյժն ալ շատ ինկաւ: Աերակուր քիչ կ'ուտէր: Գեղերը վրան քիչ ազդեցութիւն կ'ընէին, սաստիկ տկարութեան մէջ ինկաւ, անանկ որ առանց իր աղախիններուն օգնութեանը խցէն դուրս չէր կրնար ելլել:

«Ար զգամ կոր վրաս, ըսաւ օր մը, որ Քարոնը իր նաւակովը երթալով դէպ ի ինծի կը մօտենայ կոր, աքերոնեան ծովին քով ինծի սպասելու համար : Չմոռնաք լեզուիս տակ դանկը դնելու: Աչքիս լոյսը, որ երբեմն իր շանթարձակ ճառագայթներովը այնչափ գերեաց բաղմութիւն իմ առջիս դողալ կու տար, մարելու վրայ է: Ազօտ անձրեւային գիշեր մը՝ անմխիթար արտասուաց հոսանքին տեղի տուած է: Աեանքը՝ իր ամէն զուարճութիւնները ինծի համար կորսնցուցած է: Գժբախաութիւնը աս աղէկութիւնը միայն հետն ունի՝ որ զմեզ մահուան երկիւղէն կ'ազատէ,»:

Աս վիճակին մէջ մինակ մէկ բաղձանք մը ունէր, զԳիոնիսիոս տեսնել. Գիոնիսիոս ալ Մետեղլային դարձը իր կենացը մէջ տեսնելու արտաքոյ կարգի կը բաղձար, որովհետեւ աղէկ համոզուած էր, որ անի Յունաստանի եկեղեցւոյն բարի օրինակ մը պիտ'որ ըլլայ: Եւ աս յոյսը դեռ բոլորովին պարապ ելած չէր ըսուեր: Անոր համար ալ Աստուծոյ մեծ եռանդով կ'աղաչէր, որ անոր կեանքը իր աստուածորդոյն փառացը պահէ, եւ այն վշտակրութեամբ փորձուած կնոջ առողջութեան հետ, միանգամայն գիւրահաւան սրտի մը խաղաղութիւնը շնորհէ: Գիոնիսիոս արտորնօք դէպ ի Եղեւսիս երթալու ատեն, ճամբան իր եռանդագին աղօթքը կը շարունակէր ու աս աղօթքներով Մետեղլայի ամարատանը սանդուխներէն վեր ելաւ:

Խաթունին անկողինին չորս կողմը աղախիններն

առած էին, ասոնց հետ էր Աիւզիան ալ, ամէնքն ալ հու լային ու կը հեծեծէին:

Չէին կրնար որոշել որ արդեօք վրան մարելիք եկած է, թէ քնոյ մէջ է աս որհասականը: Գետինը փռուած պառկած էր շոճիի մը նման, որն որ լերան գագաթը բարձր գեղաղէշ երկայնութեամբ կը պանծայ, եւ դժբախտութեան մրրիկ մը զինքը տապաստ գետինը կը կործանէ:

Աս տխուր տեսարանը Գիոնիսիոսի վրայ մեծ ազդեցութիւն ըրաւ, աչուրները լեցուեցան, սկսաւ լալ, գետինը հնկաւ սկսաւ ալօթել, գերիներն ալ իրեն օրինակին հետեւեցան: Ետքէն ոտք ելաւ ու կարծես թէ Աստուծմէ նոր հրաման մը ընդունածի պէս, աչուրները երկինք վերցուց ու ձեռուրները հիւանդին վրայ տարածեց: Իր չորս գին եղողներուն վրայ սուրբ երկիւղ մը ինկաւ, երբոր անոր դողդոջուն ձեռուրներն ու վեր տնկուած աչուրները տեսան: Չեռուրները քաշելուն պէս, աս նըշանաւոր խօսքերը սկսաւ բարբառիլ. «Յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի,»: —

Աս խօսքին վրայ Մետեղղայի աչուրները առջի անգամ բացուեցան, ու հեզիկ կարմրութիւն մը անոր այտերուն վրայ տարածուեցաւ: Ելաւ նստեցաւ ու Եպիսկոպոսին ձեռքը պագաւ:

«Աս գեռ քեզի հետ քանի մը բաներու վրայ պիտ'որ խօսիմ, բսաւ, անդիի աշխարհք չգացած: Քրիստոսի Աստուածութեան հաւատքը այն ընդարձակ խոռոչն է, որուն վրայէն անցնելու կամուրջ մը չեմ գտներ: Մարգկային իմաստութիւնը միշտ իր անջըրպեան ունի: Աստուածային բաները կրնայ մինակ գուշակել, բայց չիկրնար ցուցնել, մարգկեղէն ըլլալուն համար: Ո՛հ, Գիոնիսիէ, աս կամուրջը ինծի ո՞վ պիտ'որ ձգէ, թէ որ նոյն ինքն Աստուած ասի ինծի զարմանագործ կերպով մը չճանչցնէ: Յուցուր ինծի Աստուծոյ նշանագործ զօրութիւնը, որուն վրայ դուն այնչափ յաճախ խօսեցար, — եւ կ'ուզեմ հաւատալ — եւ հաւատալ այնպէս որ դեռ սիրտ մը չէ հաւատացած,»:

Վիոնիսիոս երկնային հանդարտութեամբ մը պատասխան տուաւ. «Ասոր ապացոյցը Աստուած քեզի դեռ հիմակ ցուցուց»:

Մետեղղա իր չորս դին դարձաւ նայեցաւ, գըլսէն անցածը չէր յիշեր. իսկ իր քովը գտնուողները դեռ սարսափած մնացած էին, որովհետեւ Աստուծոյ զօրութեան ազդեցութիւնը իրենց աչքովը տեսած էին:

Բժշկուած խաթունը զարմացմամբ չորս դին նայած ատենը՝ Սուրբը դարձաւ իրեն դեռ չըրած հարցմանը լուծում տուաւ, ըսելով, «Մարդուս ձեռքով չէ, այլ կենարարին զօրութեամբը ողջացար»:

Նազիւ ան ատենը ճանչցաւ Մետեղղա, որ գրեթէ դագաղէ մը հանուած է, ու նոր կենդանութիւն մը իր բովանդակ մարմնոյն վրայ հեղուած է: Ելաւ կանգնեցաւ առանց մէկու մը կրթընելու: Թեւերը վար ձգած, իր չորս դին կը նայէր: Իր զգածումները երթալով զօրացան: Խոստովանեցաւ որ յանուն փրկչին Յիսուսի՝ կորսուած զօրութիւնները նորէն իրեն տրուած են, եւ սկսաւ աս անունը օրհնել:

Եւ է զարմանագործութեան նշանակութիւնը՝ Քրիստոսի անուամբը գործուած, որն որ մարդուս կը ցուցընէ ինչ որ միտքը ամենեւին ցուցընել չիկրնար, Աստուծոյ տեսչութիւնը ու վարդապետութեան ճշմարտութիւնը:

«Արդ կը հաւատամ գոչեց: Կը հաւատամ, որ Քրիստոս մարդկութենէ վեր անձ մըն է. եւ աս հաւատքը իմ բովանդակ կենացս մէջ պիտ'որ պահեմ»:

Եւ Վիոնիսիոս անոր ճակատը խաչով գրոշմեց: — Չոգեցաւ անոր առջին եւ խոնարհութեամբ իր հպարտ գլուխը վար ծռած, աղաչեց որ Քրիստոսի խոստովանողաց կարգը դասուի, եւ սուրբ Մկրտութիւնը խնդրեց:

Յառաջուան ժամանակը սովորութիւն մը կար Քրիստոսի Եկեղեցւոյն մէջ, որ մկրտութիւնը ընդունել ու զօղները իրենք զիրենք յառաջուընէ, ինչպէս Տերտուղիանոս կ'ըսէ, «ստէպ աղօթքի, ծոմապահութեան, ծնրադրութեանց, ջերմեռանդ գիշերական հսկումներու եւ իրենց նախընթաց մեղքերուն խոս-

տովանութեան կու տային *, : Գիտնխիոսս որոշեց որ նորագարձ հաւատացեալը նոյն տարւան Զատկին նախընթաց օրը կերպապէս Եկեղեցւոյն մէջ ընդունուի, ու կրօնական կրթութեանց զբաղելով ասոր հնքը զինքը պատրաստէ: — Ամէն օր կատարելութեան ճամբու մէջ յառաջ կ'երթար, իր մաքին կրօնական գաղափարներուն մէջ ունեցած շիտթութիւնները երթալով կը պայծառանային, Աստուծոյ փրկագործութեան գաղտնիքը օր քան զօր աւելի պայծառ կ'ըմբռնէր, ամենէն ետքի շարժառիթը՝ ուսկից ամէն բան յառաջ կու գայ, եւ որն որ սէր կ'անուանուի: Աս սէրն էր որ զԱստուած աշխարհքս ստեղծելու շարժեց, եւ որուն համար իր Արդին խրկեց ու Յայտնութիւն տուաւ: Ինքը զինքը Աստուծոյ սիրելի ընել, ու փոխարէն զինքը սիրել, ասոր վրայ կայացած է այն երկնային կապը, զորն որ մենք կրօն կ'անուանենք — սէր է ամէն բան. սկիզբ, մէջ, ու վերջ:

Օտակէն քանի մը օր յառաջ Մետեղլա իր բոլոր ընտանիքը գլուխը ժողովեց, — իր բոլոր գերիներն, — ու անոնց իմաց տուաւ որ մեծ պարգեւ մը կը պատրաստէ, զորն որ իրենցմէ ոմանք ստանալու համար տարիներով յառաջ հոգի կը նետէին, եւ կը կարծէին որ իրենց կենացը մէջ նոյն օրը տեսնելու պիտ'որ չհասնին, այսինքն ազատութեան պարգեւը:

Աստուածային սիրոյ պատուիրանին հետ ստրկութիւնը ինչպէս կրնայ միանալ: Քրիստոնէութիւնը՝ սկզբամբ կը հակառակի գերութեան, թէ եւ տերանց ու ծառայից մէջ տարբերութիւն մը կ'ընդունի, բայց տերանց միշտ չափ մը՝ ծառայից ալ երկիւղէն վեր՝ ազնուագոյն շարժառիթ մը կը դնէ: Ծառայութիւնը եղբայրութեան պատիւ կը բարձրացընէ: Անոր համար ամէն տեղ կը տեսնենք, որ ուր որ փրկչին վարդապետութիւնը մուտ գտած է, գերեաց շղթաները քակուած են: Աս շղթային հետ բոլոր հին հեթանոսական տէրութեանց գրութիւնն ալ քայքայած է, ան գրութիւնը՝ որն որ մարդկութիւնը երկու դաս կը բաժնէր, ազատ՝ ու իրաւունք չունեցող ստրուկ:

* Տերտուղիանոս, Մկրտութեան վրայ. Գլ. Թ.:

Լսանկ նախընծայ պտուղ մը նորահաւատ հոգւոյ մը սրտին մէջ աճելով, Մետեղղայի հպատակելոցը շատ մեծ օգուտ յառաջ բերաւ: Ամէն մարդ իր շատոնցութենէ հեռացած հայրենիքը նորէն տեսաւ, ու ազգականներն ու բարեկամները նորէն գտաւ: Բայց անոնց մեծ մասն ալ ուր երթալիքնին չգիտնալով, անոր քով վարձկան ծառաներ եղան:

Եւ իւրիա՛ս աս շնորհաց վճիռը լսածին պէս եւ ոչ վայրկեան մը տարակուսեցաւ իր միտքը դրածը փութով գլուխ հանելու: Արդէն շատ տարիներէ ի վեր գերութեան մէջ ապրած, եւ իր թոշակէն այնչափ մէկդի դրած էր, որ վճարքով ալ ինքը զինքը կրնար ազատել: Եւ հիմակ անոր տեղ Հռոմ՝ իր մայրը տեսնելու համար ճամբու ծախքին կրնար գործածել: Մտածեց որ թէ որ այլազգ կարելի չըլլար, իր մօրը տեղ ինքը զինքը գերութեան կը դնէ, ու մայրը կ'ազատէ. եւ այսպէս իրեն գէթ լռիկ եւ զուարթ կենաց իրիկուն մը կը հայթայթէ:

Աստի երբոր օր մը Մետեղղա իրեն հարցուց, թէ ասկէ ետեւ միտքը ի՞նչ ունի, ի՞նչ պիտ'որ ընէ, տարակուսած դէմքով մը պատասխանեց. «Ինծի շատ ծանր պիտ'որ նստի իմ մինչուկ հիմակ ունեցած բնակութիւնս թող տալը, բայց մօրս ունեցած պարտքս աս զո՛հը իզմէ կը պահանջէ, անոր համար դէպ ի Հռոմ պիտ'որ երթամ», ըսաւ:

Իր սրտին մեծ տրտմութիւնը ծածկելով, զորն որ աս բաժանումէն կրնար ունենալ, նորահաւատ խաթունը ինքը զինքը պատրաստ ընծայեց, նա եւ աս զոհն ալ, որն որ իրեն ամենէն մեծ կ'երեւար, Աստուծոյ նուիրելու: Չեւքը Եւրոպային ուսին վրայ դնելով ըսաւ, «Աս օրերս զգացած երկնային ուրախութիւնս պղտոր տրտմութեան մի փոխեր: Չէի կրնար հաւատալ որ մահկանացուի մը հետ այսչափ երախտագիտութեան ու բարեկամութեան թելերով պիտ'որ կապուիմ եղեր: Դուն տունս ոտք չկոխած ինչ էի: Յիմար արարած մը, արտաքուստ փայլուն շաստուածի պատկեր կը նմանէի, խել մը ինծի նման յիմարներէն երկրպագութիւն կ'ընդունէի: Եւ իրօք ալ Դիոսի

տաճարին ան հսկայաձեւ պատկերին կը նմանէի, որն որ Աթէնք դեռ կեցած է, արտաքուստ սուտ ոսկիէ ու փղոսկրէ շինուած խրոխտ կերպարանք մը կը ցուցնէ, ներսը որ ծռիս նայիս՝ ուրիշ բան չես տեսներ, բայց եթէ փայտէ կազմածք կամ սեպ մը, կուպր ու կաւ եւ խել մը ասանկ տգեղ բաներ. թող տուր ան մկերն ու առնէտները, որոնք երբեմն ներսը կը բնակին: Այսպէս, սիրելի դուստր, այսպէս ես ալ ներսանց էի: Թէ որ հիմակ այլազգ եմ, քու արդիւնքդ է: Ընդհատեց աս խօսակցութիւնը, ու երախտագիտութեամբ ու ցաւով զգածեալ գնաց առանձնացաւ:

Աւ որովհետեւ քանի մը ատենէ ի վեր երախայից կարգն անցած էր, անոր համար երբեմն երբեմն իր պարտքը կատարելու կը նայէր. քրիստոնէից կորնթոս գտնուած ժողովատեղին կ'երթար: Արդէն յայտնի է որ առջի դարերուն մէջ քրիստոնէից հասարակութեան մէջ մտնել ուզողները՝ երեք կարգ կը բաժնուէին: Առջի կարգիները, «Աւնկնդիրք», կ'ըսուէին, վասն զի միայն քարոզի կրնային կենալ, երկրորդ կարգիները՝ «Ծնրագիրք», կ'անուանուէին, վասն զի քարոզէն ետքն ալ չոքած Աստուածային պաշտօնին կրնային ներկայ գտնուիլ, որպէս զի Եպիսկոպոսին օրհնութիւնն ու աղօթքը առնուն, երրորդ կարգիները՝ «Ընտրեալք», կ'անուանուէին: Աս ետքիները հաւատոյ դաւանութիւն կրնային ընել. բայց Հաւատամքէն ետքը սարկաւազը «եւ որք ոչ էք կարողք հաղորդել աստուածային խօրհրդոյս առ դրունս ելէք», ըսած ատեն պիտ'որ հեռանային: —

Վարունը մտեցաւ, այն շնորհաբաշխ ժամանակը, որուն մէջ Եկեղեցին իր տօներուն ամենէն մեծը կը կատարէ: Աստուածորդւոյն Յարութիւնը՝ մեռած բնութեան նորէն արթննալուն հետ մեկտեղ կը հանդիպի, եւ երկնային դրախտին երկրորդ Ազամին ձեռքով վերստին ժառանգութիւնը ամէն տարի զուարթ գարունէն կ'աւետուի, լեռներն ու դաշտերը, թփերն ու անտառները դրախտային գեղեցկութեամբ մը նորէն կը կենդանանան: Բնութեան զուարճութիւնը ամենուն սրտին կը ցոլանայ, առանձինն այն սրտին մէջ, ուր որ

անձնասիրութեան սառոյցը հալած, ու նորագոյն շնորհաց վարք մը ծլելու սկսած է, ուր երկնային զուարթունք ալ կը հրաւիրուին, եւ արթնցած ոգւոյն՝ վերի գաւառներէն իրենց երգերը լսել կու տան:

Մկրտութեան հանդեսէն երեք օր յառաջ, Մետեղղա իր բոլոր ծառաները կանչեց: Հին ատեններէն պահուած Արոնոսի նուիրուած տօն մը կար, որն որ Գեկտեմբերի մէջ եւ Օգոստոսի առջի օրը կու գար, աս տօնին մէջ գերիները սեղանի վրայ իրենց տէրերէն ծառայութիւն կ'ընդունէին: Մետեղղոսի մահունէն ի վեր Թերեգորոնի մէջ աս հանդէսը կատարուած չէր, աս անգամուն աւելի շարժական կերպով պիտ'որ կատարուեր: Արդէն նոյն օրը մեր աստուածային կենարարը, երկնի ու երկրի թագաւորը, իր աշակերտացը ասոր նման տօն մը կատարած էր, անոնց ոտքը լուալով ինքը զինքը իբրեւ ծառայ ցուցուցած էր: Ասոր յիշատակին համար Մետեղղա ալ իր գերիները սեղանի նստեցուց, նաժշտի պէս լաթ մը առաւ սփածաւ ու անոնց ծառայեց: Անկից վերջը իրենց ամէն մէկէն թողութիւն ուզեց՝ որ երբեմն իրենց հետ իր բնածին բարոյից խստութեամբը ու ամբարտաւանութեամբը վարուած է, զիրենք վշտացընելուն աղաչեց որ ներեն. եւ պսպէսով անոնց՝ ամէն առաքինութիւններէն գեղեցկագոյն առաքինութեան օրինակը ցուցուց: Վասն զի թշնամին սիրելը ու խաղաղարարութիւնը ամենէն դժուարին ու անոր համար ալ ամենէն արգիւնաւոր գործքերն են: Մէկը որչափ բարձր կ'ուզէ՝ ըլլայ, չիկրնար ըլլալ որ ազնիւ գործողութիւն մը իրեն համար անվայելուչ ըլլայ:

Իմաստնոր հաւատացելոյն ընկերսանանք Աորնութոսի եկեղեցւոյն սեամբք երթալու: Հոն՝ ուրիշ շատերուն հետ կեցած, կ'աղաչէ որ «ի հաղորդութիւն սրբոց, ընդունուի: Եպիսկոպոսը յիշեցուց իրենց ան ամէն հալածումները, նեղութիւններն ու վշտերը, զորոնք երկրիս վրայ պիտ'որ կրնն, եւ այն յաղթութեան պսակը, որն որ երկինք պատրաստուած է: Ետքը՝ ամէն մէկուն քովը մօտեցաւ, (որովհետեւ հին ատենը, Մկրտութիւնը մինակ Եպիսկոպոսը կու տար), ձեռքը վրան

գրաւ, ինչպէս որ կոչուցած Սաւուղին վրայ երբեմն Անանիա ըրած էր, ու փրկութեան նշանն անոնց ճակատը դրոշմեց: Ետքը հաւատոյ գաւանու թիւնը զրուցելով եկեղեցին մտան գէպ ի մկրտութեան աւազանին մօտ, ուր վերստին ծննդեան շնորհքը (Մկրտութիւնը) ընդունելէն ետքը, ձերմակ զգեստ հագան իբրեւ նշանակ անբծութեան, զորն որ Զատկին մինչուկ երկրորդ Աիւրակէն կը կրէին:

Մետեղղա մկրտութեան ծէսին ամէն մէկ արարողութեանը թափանցած էր, մանաւանդ հաղորդութեան Ս. Խորհրդոյն, զորն որ մկրտութենէ ետքը ընդունեցաւ: Ի՞նչպիսի հիացում չէր պատճառած իր սրտին մէջ այս խորհուրդը, ինչպիսի երջանկաւէտ խաղաղութիւն ու սրտի հանգարտութիւն, որոնք երեսին վրայ կը փայլէին: Ինչ ցաւ ու տրտմութիւն որ ասկէ ետքը վրան եկաւ, իր հարուստ հաւատքը զանոնք մեղմացընելը գիտցաւ: Ինչ արտմալի տառապանք որ աշխարհքս անոր գլուխը բերէր, շնորհքը՝ իր առատ պարգեւներովը անոր տեղը կը լեցընէր: Աս անցաւոր կեանքը հաւատարիմ էրիկը իրմէն յափրշտակեց, — շնորհքն՝ ի քրիստոս իրեն երկնային փեսայ մը տուաւ, կեանքը իր պատուական որդեակը՝ որն որ իր ապագային միակ յոյսն էր, ձեռքէն առաւ, — շնորհքը՝ իրեն տեսութիւն մը տուաւ, որ կորսընցուցածը քիչ ատենէն նորէն գտնէ:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Է .

Մարկոս Արեղիոս ու Մարկոմաններուն վրայ ըրած յաղթութիւնը:

(175 ք. Ե.)

Արբոր Մետեղղա իր լուիկ առանձնութեանը մէջ նոր կարգի տօներ կը կատարէր, որոնց քաղցրութեան ճաշակը յառաջագոյն եւ ոչ իսկ գիտէր, զօրքը սկսան պատերազմի հեռաւոր ասպարեղէն ետ դառնալ. Ժողովուրդը ամէն կողմ՝ ուրախութեան աղաղակներով զիրենք կ'ընդունէր: Հոռմայու քաղաքացիքը

ուղեցին կայսեր փառաւոր կամար մը կանգնել, եւ այն ընդարձակածաւալ տէրութեան քաղաքներուն ամէն կողմը տօներ, թափօրներ, շնորհակալութեան զոհեր ու գազանամարտեր կը կատարուէին:

‘Կա եւ Աթէնք՝ իր բազմաթիւ մեհեանները բացաւ որ գոհացողութեան զոհեր զոհէ: Ժողովրդեան հրապարակական զբօսանքները, քանի մը ընդհատութեամբ, շատ եօթնեակներ տեւեցին: Աթենացիք ալ կորնթացոց օրինակին հետեւելով, կ’ուղէին ըմբշամարտ խաղեր ձեւացնել, բայց ծերունին Գեմոնաքս * զիրենք ծաղրելով ըսաւ, թէ ‘Աս բանս դեռ չորոշած, գթութեան բազինը մէջ տեղէն վերցուցէք **’,:

Նոմայեցւոց աս յիշատակաց արժանի յաղթութեան վրայ չխօսած, որն որ աւելի հաւատոյ՝ քան թէ զինուց յաղթութիւն էր, կայսեր բարուցը նըկարագիր մը ընենք:

Մարկոս Աւրելիոս արդէն ի մանկութենէ իր մտացը ու սրտին բարեմասնութիւններովը երեւելի եղած էր: Երբոր դեռ ութը տարւան տղայ էր քրմաց ընկերութեան մը մէջ ընդունուեցաւ, ու անոնցմէ կրօնական սկզբունքներ սորվեցաւ: Գից հրապարակական պաշտամանցը ջերմեռանդ կը ճանչցուէր, անոր համար ալ զինքը երբեմն Նումա Պոմպիլիոս բարեպաշտօն թագաւորին հետ կը համեմատէին: Օր մը, երբոր իր վարպետներէն մէկուն մահուանը վրայ կ’արտասուէր, այնպէս որ քովը կեցողները կը զարմանային, ու երիտասարդներէն ոմանք զինքը կը մեղադրէին, իր որդեգրական հայրը՝ Անտոնինոս կայսրը դարձաւ իրենց աս գեղեցիկ պատասխանը տուաւ. ‘Թող տուէք իրեն որ մարդ ըլլայ, ո՛չ փիլիսոփայութիւնը, ո՛չ ալ կայսերական արժանապատուութիւնը կրնան զինքը իր զբաժումներէն կողոպտել’,:

Անտոնինոսի կայսրութեան երկրորդ տարին էր, երբոր Մարկոս Աւրելիոս անոր Փաւստինա աղջկանը

* Վինիկեան երեւելի փիլիսոփան՝ Մարկոս Աւրելիոսի ժամանակակից:

** Ղուկիանոս. Գեմոն. թ. 57:

Հետ կարգուեցաւ ու կայսեր Հետ մէկտեղ բզեշխ եղաւ: Մարկոս 26 տարեկան էր, երբոր կայսրը զինքը Տրիբուն ըրաւ ու մինչուկ անոր աթոռակից ալ եղաւ: Ասյսեր վրայ ունեցած իր ներքին մտերմութեան կապը այնպէս սրտանց էր, որ ամբողջ քսանուհինգ տարի անոր քովէն չէր զատուեր, այսինքն որդեգրութենէն մինչուկ Անտոնինոսին մահը, մինակ երկու օր եղաւ՝ որ կայսեր գտնուած տեղը չգտնուեցաւ: Քառասուն տարւան կայսրական գահը ելաւ, փիլիսոփայութեան սաստիկ պաշտպան եղաւ, ու Պղատոնին կարծիքը ունէր թէ «Այն ժողովուրդը երջանիկ է, որուն փիլիսոփաները թագաւորք են, եւ կամ որուն թագաւորները փիլիսոփայ են»: Աս նորընտիր կայսեր բաղձանացը համեմատ՝ Հռոմի ծերակոյտը անոր որդեգրական եղբայրը՝ Ղուկիոս Աերոս կայսերակից ըրաւ, բայց ասիկա աւելի խաղի եւ կերուխումի, քան թէ ժողովրդեան երջանկութեանը միտ կը դնէր: Մարկոս Աւրելիոս գլխաւորաբար հին կրօնին պահպանութեանը ու գիտութեան կը հսկէր: Թէ որ վրան ստուգիւտ մը կրնար դրուիլ՝ իր կոմագոս որդւոյն Փաւստինա կնոջը վրայ ունեցած չափազանց ներողամտութիւնն էր, ու թող տալը որ երբեմն իրեն հպատակեալները գաւառներու մէջ ուղածնին ընեն: Նա եւ անգթութենէ ալ զինքը չէնք կրնար ազատ սեպել:

()ը մը երբոր Գանուբեան ազգերուն դէմ պատերազմ կ'ըլլար, քանի մը հարիւրապետ իրենց զինուորներովը առջեւը եկան ու պատմեցին որ 3000 թշնամի զարկին ու շատ աւար ըրին: Բայց աս գործքիս համար հրաման առած չէին, ուստի կայսրը զինուորական կարգաւորութեան դէմ գործած ըլլալուն համար զիրենք խաչ հանել տուաւ: Զինուորները սկսան յայտնապէս աս գործքին վրայ իրենց դժկամակութիւնը յայտնել, բայց կայսրը ցատկեց, ու անդէն այն գրգռուած ամբոխին մէջ մտաւ ու կանչեց. «Հնապա, զիս ալ զարկէք ու առջի եղեռնագործութեան վրայ նոր եղեռնագործութիւն մ'ալ աւելցուցէք»: Ասանկ ալ Պարթեւական պատերազմին ա-

տենը Սելեւկիայի մէջ շատ հազարաւորներ սպաննել տուաւ: Իրեն կայսրութեան ժամանակը շատ խոռվայոյզ ժամանակ մըն էր, վասն զի Կատտացիք, Բրիտանացիք, Մարկոմանք, Սկիւթացիք եւ ուրիշ ազգեր անդադար տէրութեան սահմանները անհանգիստ կ'ընէին, նա եւ ժանտախտ, սով ու սասանութիւնք՝ տէրութեան քանի մը քաղաքները ապականեցին: Անոր համար քրմերը զանազան կերպով բարկացած աստուածները հաշտեցրնելու փորձ ընելէն ետքը, վերջապէս աս ամէն չարեաց յանցանքը քրիստոնէից վրայ ձգեցին, ու ասանկով քրիստոնէից վրայ հրապարակական հալածանք սկսաւ:

Իր ժամանակները տրուած պատերազմներու մէջ ամենէն դժուարինը Մարկոմանաց ու Կուադաց դէմ տրուած պատերազմն էր: Կայսրը երբոր 174ին դէպ ի Գերմանիա կը յառաջանար՝ Կուադք իր զօրքը խորունկ ձորամէջ մը քշեցին տարին, այնպէս որ չորս դիաց ուրիշ բան չէր երեւար՝ բայց եթէ քարաժայռ լեռներ: Զօրքը սկսաւ վհատիլ, արդէն հինգ օրուրնէ ի վեր բերաննին պուտ մը ջուր դրած չէին, ծարաւը զիրենք կը մաշէր: Զօրաց հրամանատարը կայսեր առջին ելաւ ու սկսաւ գոչել. «Կեսար, մեր զօրաց մէկ մասը, մելիտինացի լեզէոնը՝ քրիստոնէ է, իրենց համար անկարելի բան չկայ. աղօթք ընել տուր,»: — Կայսրը հաւանութեան նշան տուածին պէս, նոյն գունդը մէկէն գետինը չոգեցաւ, Աստուծոյ աղաչեց որ նոյն ժամուն մէջ իր անունը փառաւորել ուզէ: Հազիւ թէ աղօթքնին վերջացաւ, երկինքը մրրկալից ամպերով ծածկուեցաւ, որոտմունք կը ճայթէին ու լեռները կը թնդային: Կայծակներու բազմարձակ ճառագայթներն ան լեռներուն վրայ կը սփռէին, ուր որ բարբարոսները կեցած էին: Կայծակին հետ մէկտեղ սաստիկ կարկուտն ալ կ'ընկերանար, անանկ որ թշնամիները իրարու անցուց ու խառնակեց: Իսկ վարի ձորամէջը մեղմ անձրեւէ մը կ'ոռոգանէր, ուր թալկացած Հռոմայեցիք իրենց ծարաւը սաղաւարտներնուն մէջ ժողված ջրով յագեցուցին, թէ իրենք զովացան հոգի առին, ու թէ ձիերնուն ալ առատ ջուր խրմ-

ցուցին: Դիոն Կասսիոս հեթանոս պատմագիրը այսպէս կը նկարագրէ աս արտաքոյ կարգի դէպքը. «Մի եւ նոյն երկիրքը թէ ջուր ու թէ կրակ կը տեղար, ոմանք կազդուրեցուց, ոմանք ալ այրեց: Թշնամիները փորձեր փորձեցին կրակը մարելու, բայց վերջապէս յուսահատելով ինքը զինքնին Հռոմայեցւոց բանակը նետեցին, ու կայսրը իրենց գթութիւն ըրաւ»:

Կղաւղիանոս հեթանոս բանաստեղծը աս՝ ամենուն բերանն ինկած դէպքը հետեւեալ կերպով կ'երգէ.

«Ջորապետ մը չպարծի, հուր մըն էր այն երկնառար
Տեղաց վրան թշնամույն, երբ բորբոքեալ բոց ու կրակ
Սաղաւարտներն եւ սուրեր
Տաք տաք հեղուկ կը լուծէր,
Կատղած ձիոց կը ղնակէն
Թըշնամիք վար կը ցատկեն:

Յաղթութիւնն այն յերկնից էր, շէր մոհացուաց զէնքն
անզօր:

Քաղզէացւոց զիւթ մըն էր, որ յայս շարժեց զիքն
այն օր.

Եւ կամ՝ ըսենք աւելի
Վարձ մ'էր տուաւ Արեւի,
Առաքինի եւ ըզպատ,
Որոտացող Արամազդ,:

Ըս յաղթութեան յիշատակին համար զօրքը՝ զՄարկոս Արեղիոս եօթներորդ անգամ Ինքնակալ կոչեց. կայսրն ալ ուզեց որ մեկիսինացի լեգէոնին անունը «չանթաձիգ լեգէոն կոչուի», *. աս ալ բաւական չեղաւ, Ծերակուտին աս զարմանագործ դէպքը հաղորդեց ու հրովարտակ հանեց որ քրիստոնէից հալածումը դադրի: Եւ աս հրովարտակը, որուն զօրութիւնը ինչպէս յայտնի է շատ չտեւեց, դեռ պահուած է:

Ըս յաղթութեան յիշատակը անմահ ընելու համար Հռոմայեցւոց ծերակոյտը վերջէն հսկայածեւ արձան մը կանգնել տուաւ, եւ աս դէպքը վրան

* Legio fulminatrix.

քանդակել տուաւ, վերը՝ Արամազդը երկայն մօրու-
քով, թեւերը բացած, ձեռքերը շանթ, վարը՝ եր-
կու բանակներ մէկը շիտթութեան մէջ ինկած, մէ-
կալը՝ զինու զօրութեամբ յառաջ կը քալէ: Նոյն
սիւնը մինչուկ պսօրուան օրս պահուած է, ու Հոռ-
մի ամենէն գեղեցիկ զարդերէն մէկն է, Բիոյց-
Քոյննա ըսուած հրապարակին մէջ, 28 հատ մարմնի
կտորէ շինուած, 135 ոտնաչափ բարձրութեամբ: Սես-
տոս Ե.ին ժամանակը նորոգուեցաւ ու վրան Ս. Պօ-
ղոսի արձանը դրուեցաւ: —

Ղանուբեան ազգերուն հետ խաղաղութիւնը
հաստատուելէն ետքը, կայսրը իր մտադրութիւնը Ա-
սորեոց նահանգին վրայ դարձուց, ուր որ Աւիդիոս
կասսիոս զօրավարը ապստամբած էր: Եւ ասոր հա-
մար փութով Արեւելք գնաց, ուր կասսիոս իր զի-
նուորներէն արգէն սպանուած էր, ոտք ելած գաւառ-
ները հանդարտեցուց եւ Յունաստանի վրայէն Հռոմ
դարձաւ, հոն փառաւոր յաղթանակի մը ներկայ
գտնուելու համար:

Տէրութեան բազմահոգ աշխատութեանց մէջ
ու ստիպողական ճանապարհորդութեանց մէջ «Անձ-
նական խորհրդածութիւնք», ըսուած գործքը շարա-
գրեց, որն որ տասուերկու գիրք բաժնուած է, եւ
մէջը շատ կենցաղօգուտ սկզբունքներու գանձեր բո-
վանդակուելուն համար հնութեան երեւելի իմաստ-
նոց կարգը համարուեցաւ: Առջի գրքին մէջ կը պատ-
մէ, թէ ինչպէս իր ծնողքէն, վարպետներէն ու բա-
րեկամներէն կը սորվէր՝ որ կիրքերն ու գլխաւորաբար
բարկութիւնը զսպելու է, եւ թէ ինչպէս ամէն ա-
ռաքինութիւնը իր վրան ցուցնելու ջանք ունեցած է:
Առանձինն Անտոնինոս Բարեպաշտին չափաւորութեան
ու ժուժկալութեանը վրայ զարնուած էր, որուն որ-
դեգիր ալ եղած էր: Բարոյից նկատմամբ աս գը-
րուածքը գեղեցիկ ժողովածոյք մըն է, հեթանոսա-
կան գրչէ չսպասուած: Առաքինութիւնը, կ'ըսէ, մեր
բնութեանը պարծանքը՝ կատարելութիւնն ու երջան-
կութիւնն է: «Մեր վրայ չկայ, կ'ըսէ, անանկ վսեմ
բան մը, ինչպէս աստուածութեան պատկերը, երբոր

կիրքերը մաքրած ու զնպած կ'ըլլան ու զգայութեան կապերը խզած, աստուածներուն կամացը հպատակ կը մնանք»։ Մարդու հոգւոյն միակ կոչումը՝ աստուածային ծանօթութեան ու սիրոյ վրայ կը դնէր. առաքինական ներգործութիւններով Աստուծոյ հետ միանալով, անոր հետ մէկ կամք մը ունենալու։

«Մարդս, կ'ըսէր, ան պէտք է ընել, որն որ մարդուս է, ինչպէս թզենին կամ մեղունները կ'ընեն, ինչ բանի որ իրենք սահմանուած են։ Առաքինի մարդուն հոգը այն չէ, թէ մարդիկ իրեն վրայ ինչ կը խօսին, կը մտածեն, կամ իրեն դէմ կը գործեն, հպա պոհ է, թէ ինք ուղիղ ու պատշաճ ատենին ու սիրով կը գործէ, ինչ որ իրեն կոչումը իրմէ կը պահանջէ։ Ամէն գրգռութենէ ազատ ըլլալով, ուրիշ կամք չունի, բայց եթէ Աստուծոյ օրէնքը։ Ի՞նչպիսի ծուռ խօսք է ըսելը թէ՛ անկեղծ ու յայտնի գործել կ'ուզեմ։ Ի՞նչ ըսել է ասի։ Աչքը սրտին թարգմանն է, ինչպէս սիրական մը իր հարսին աչքերուն վրայ սրտին մէջ անցածը կը կարգայ։ Կեղծաւորեալ անկեղծութիւնը, ծածկուած դաշոյն մըն է։ — Աստուածաշնորհ մարդ մը կրնայ ըլլալ մէկը, ու ամենուն անծանօթ մնալ։ Աս սկզբունքը քու աչքիդ առջեւէն չհեռացընես, եւ մի մոռնար, որ կենաց երջանկութիւնը՝ քիչ բանի վրայ կայացած է։ — Կարձ ժամանակը, զորն որ ունիս, գործածէ։ Քիչ մը ետքը աս ժամանակը, որն որ քեզի բարեգործութեան համար տրուած է, պիտ'որ անցնի։ Ամէն մէկ գործքդ այնպէս ըրէ որ իբր թէ նոյն վայրկենին պիտ'որ մեռնիս։ Իմաստուն մարդու մը չիվայլեր, մահուան վրայ պարծենալով մը արհամարհութիւն ցուցընելը»։

Իր աս ամէն ժողովածոյքներովը կը ցուցընէ Մարկոս Աւրելիոս՝ որ ինչպէս քրիստոնէութեան իր կարծածէն աւելի մօտիկցած էր։

Գ Լ Ո Ւ Խ Ժ Ը .

Լիզիայի հրատեղութիւնը :

Այն ատենը որ հարաւային բնութիւնը իր առատութեան ամաղթեղջիւրը կը թօթուէր, — Մայիսի առջի օրերը — հեթանոսական սովորութեան համաձայն, հանդիսական թափօրները սկսան, աստուածներէն առատ հունձ մը մաղթելու համար: Աս տօնը ճանապարհակիցներու տօն կ'ըսուէր, որովհետեւ ճանապարհակիցներու վրայ կ'ըլլար, այսինքն հոն ճամբուն գլուխը, եւ կամ դուրսը ագարակի մը վրայ գից արձան մը կը դրուէր, ու զարգարուն հագուստներով թափօրը հոն հասնելէն ետքը, սովորական զոհերը կը մատուցուէին:

Մետեղղա ու Լիզիա պատուհանին առջեւը կայնած, Աթենացւոց թափօրը կը զննէին: Վարը տան առջեւէն սպասաւոր մը կ'անցնէր, որն որ ճամբորդութեան ծրար մը կոնակը կը տանէր: Չիթաստանեաց անտառակին անդիի դին, հեռու նաւահանգստին մէջը, մեծ վաճառականի նաւ մը իր դրօշներովը կը ծփար, որն որ աս իրիկուն ճամբայելլեր պիտ'որ: «Միրելի դուստր, ըսաւ Մետեղղա, ես յառաջագոյն Իդեսոսի եղերքն էի, դէպ ի իմ հօրս գերեզմանին անտառակը, միտքս մարդկային կենաց փոփոխականութեան վրայ դնաց, զանազան խորհրդածութեանց մէջ ընկղմեցայ: Կը մտածէի որ օր մը ան տխուր ժամը ինձի ալ պիտ'որ հասնի, թէ որ կարելի ըլլար՝ ժամանակին թեւերը տկարացրնել կ'ուզէի, որ ան օրը շուտով վրաս չհասնի: Աս միջոցիս աչքս մատաղատունկ եղեւինի մը վրայ դպաւ, անոր կեղեւին վրայ փորուած նշան մը տեսայ: Քիչ մը քովը որ մօտեցայ, իմ անմոռաց յիշատակի որդւոյս անուան սկզբունքները տեսայ, մատաղատունկին ամէն մէկ նշանագիրներուն վրայէն ոսկի արցունքներ կը քամէին: Աս մինակ պակաս էր, քու երթալդ ինձի աւելի դժուար ընելու համար: Ասանկ ամէն բան իզմէ կ'երթայ, հայր, անուսին, որդի ու բարեկամուհի, կը յուսամ որ ա-

նոնց ետեւէն ես ալ շուտով կը հասնիմ, որպէս զի մնայուն բնակութեան տեղ մը գտնեմ: Միայն աս մտածութիւնը զիս կը մխիթարէ որ գուցէ քեզի մեծ ուրախութիւն մը կը ծագի, թէ որ մայրդ նորէն տեսնես: Ա՛հ, զուրցէ իրեն որ ես շատ անգամ քեզի հետ խստիւ վարուեցայ, շատ անգամ զքեզ վշտացուցի. ու քանի մը անգամ ալ հետդ չարաչար վարուեցայ: Միայն երկու աղաչանք ունիմ՝ քեզի, եւ կը յուսամ որ չես մերժեր, ասոնք քեզի առաջարկածներէս ամենէն ջերմ ու սրտինս է: Մէկը՝ քու ճամբորդութեանդ համար հարկաւոր եղածներուն նկատմամբն է: Ճամբար երկայն է, Հոռոմ որչափ ատեն կենալիքդ ալ անստոյգ: Անոր համար քու ծրարներուդ մէջ գրամոց գումար մը դրի, որն որ չէ թէ միայն քեզի բաւական կրնայ ըլլալ, այլ նոյն իսկ մօրդ փրկանքին համար: Թէ որ մայրդ խալըսես, նայէ սիրելի դուստր՝ որ — աս ալ իմ երկրորդ աղաչանքս է — հետդ առնես Աթէնք դառնաս: Ինծի հետ հոս գոհ օրեր կ'անցընէք: Թէ եւ գիտեմ որ ձեր անձուկը միշտ հայրենիքն է, բայց ինծի պէս դժբախտութեան մէջ ինկած այրի կնկան մը քրիստոնէական բարեկամութիւնը յօժարակամ սիրոյ ծառայութիւն կը մատուցանէ»:

Լիւզիա խորին մեծարանօք մը իր Տիկնոջը ձեռքը բռնեց, ու աչքը երկինք վերցընելով «Աստուած զքեզ քու սրտիդ բարութեանը համեմատ օրհնէ», ըսաւ:

Վուրանոս աս միջոցիս վրայ եկաւ իմացընելու՝ որ ժամանակը մօտ է: Մետեղղա ու Լիւզիա տան մատուռը քաշուեցան՝ որ գէթ ան ետքի վայրկեանները միատեղ աղօթքով անցընեն: Աս յառաջուան մեհենին մէջ առջի տարիներու պէս դեռ նուիրական կանթեղը կը վառէր, բայց տան պաշտպան չաստուածները աներեւոյթ եղած էին: Անոնց տեղ գոցուած խորշի մը մէջ խաչեցելոյն պատկերը դրուած էր, եւ դէպ ի ներսը խորհրդաւոր հացը կը պահուէր. որովհետեւ առջի քրիստոնէից շնորհուած էր ան երկնային մանանան տան մէջ ալ պատուելու ու անձամբ

Ճաշակելու, գլխաւորաբար հալածանաց ժամանակ: Մետեղցա խորին յարգութեամբ նոյնին առջեւը գնաց բացաւ: Տապանակին աղօտ մթութեան մէջէն արծաթի աղաւնի մը դուրս կը շողար, որն որ իր թեւերը տարածած իբրեւ թռչելու վրայ կ'երեւար, ու փաղփաղուն ագամանդներով զարդարուած էր: Ամենասուրբ խորհուրդը ասոր մէջ կը պահուէր, ասոր քով փոքրիկ քառակուսի ոսկի տուփ մը կար մեծ մարգարտով մը ազուցած, վրայէն կարմիր ժապաւէն անցուած էր: «Աս փոքրիկ ամանը տեսա՞ր, ըսաւ Մետեղցա, նուիրական հացին մէկ կտորը հոս դրած եմ: Աստուած զքեզ ծովին ալիքներէն ու հեթանոսաց թշնամանքէն պահէ»:^{*} Աս խօսքերը ըսելով ժապաւէնը Վիւզիային վիզն անցուց, ամանն ալ ծոցը գնել տուաւ: Վիւզիա մարգարտին միտ դրաւ, տուփը նորէն դուրս հանեց, համբուրեց ու իր տիկնոջը ըսաւ. «Խորհրդաւոր մտածութիւն մըն է, որ ան աստուածային սիրոյ «մեծ մարգարիտը»,¹ ոսկւով պատելու ատեն, մեծ մարգարիտ մը ընդելուզեր ես, որն որ այս խորհրդեան օրինակն է^{*}: Բայց մարգարիտներու մէջէն ամենէն ծանրագինն է, եւ գուցէ հարցդ թողուցած յիշատակներէն մէկն է: Արնայ դուրս հանուիլ, ուստի հրաման տուր ինձի որ քեզի դարձնեմ»:

«Ասի երբոր Հռոմ կ'երթաս՝ ան ատեն ըրէ, ըսաւ Մետեղցա, թէ որ մօրդ փրկանացը համար կարծածէս աւելի հարկաւոր ըլլայ: Քու արդիւնքդ անկից աւելի է, որովհետեւ զիս այն ազարակին մէջ բերիր, որուն մէջ երկնից արքայութեան մեծ մարգարիտը գտայ: Ես զարտուղի ճամբու մը մէջ ինկած էի, ըսաւ հառաչելով, դուն քու աղօթքներովդ ու արցունքովդ զիս քեզի ձգեցիր, ու յաւիտենականութեան արժէքը ինձի ճանչցուցիր: Ես մէկդի նետուած կճեայ մարմորի կտոր մ'էի, որուն մէջ աղնուական պատկեր մը կը քնանար, մինակ աղէկ քանդակագործիք մը կրնար զինքը ի լոյս հանել. դուն

* Ս. Հաղորդութեան խորհուրդը հին Եկեղեցական բացատրութեամբ, մարգարիտ մեծ margarita ingens կ'ըսուէր:

եղար այն ճարտար գործիքը, սիրելի ու անմոռաց յիշատակի արժանի դուստր: Քանգակագործը, որն որ այս գործիքը գործածեց, տիեզերաց Արարիչն է, ան որն որ Եւայի մարմինը կազմեց, ու զանի արարչութեան պսակը ըրաւ: Քու վրագ կրկին կրկին հարուածներ եկան, թէ քու վրագ որն որ համբերող գործիք մ'էիր, եւ թէ իմ վրաս, որն որ կարծր ու անկերպարան նիւթ մ'էի: Ի վերայ այսր ամենայնի որչափ որ այն հարուածներն երկայն կը տեւէին, նոյնչափ ալ մեր կատարելութեանը աւելի կը մտանայինք: Հիմակ ալ գործքը լմնցաւ, անոր համար գործիքը մէկգի կը դրուի՝ որ իր արժանաւորած հանգիստը ունենայ»:

Ասոր վրայ բարեմաղթութեան ու շնորհակալութեան խօսքեր իրարու առին տուին, անանկ որ Վիզիա իր բարերարին բազուկներէն հազիւ կրցաւ ինքը զինքը փրցընել: Աթէնք թողուց, ուր տասը տարի զանազան փոփոխ գէպքեր գլխէն անցած էին: Մետեղղա վերի պատշգամբ վազեց, որ անոր երթալը ետեւէն խել մը ատեն դեռ զննէ: Արեւմտեան հորիզոնը դեռ արեգակը կը շողար ու ծիրանի կարմրութեամբ մը լուսաւորած էր Պիրէոսի նաւահանգիստը, որն որ հեռուանց կ'երեւար: Մեղմ երեկոյեան հով մը ելաւ ու նաւուն առագաստներն ուռեցուց:

Նարեսիրտ Ուինէ ու յառաջուան գերուհիներէն քանի մը հոգի նաւահանգիստը կեցած կը զըննէին: Ճանապարհորդաց մէջ վաճառականներ ալ կային, որոնք իրենց վաճառքը դէպ ի Խտալիա կը տանէին: Վիզիա քանի մը քրիստոնէ ընտանիքներու յարեցաւ, որոնք Հռոմ բնականութիւն հաստատելու կ'երթային: Երբոր նաւուն ելլելու նշանը տրուեցաւ, Վիզիա ետքի անգամ մ'ալ իր հրաժարականը ծովին եզերքը կեցող բարեկամացը նշանով յայտնեց:

«Նարի ճանապարհ», կանչեց Ուինէ, ետ դարձաւ ու ձեռքի թաշկինակը՝ որով Վիզիայի բարեւին պատասխանը տուած էր, երկու ձեռքը արտասուլից աչուրներուն վրան բռնեց, նաւը երթալով կը հե-

ուանար եւ իր ուղղութիւնը դէպ ի Սիրա բռնեց, որն որ հին ատենուան երեւելի վաճառատեղիներէն մէկն էր: Հոնկից՝ դէպ ի Եւրոպայի հարաւային ծայրը Քալթա կղզին պիտ'որ հանդիպէր:

Ի իւզիա աս միջոցիս նաւին մէկ կողմը քաշուած դէպ ի համատարած ծովը կը նայէր, ու ան ետքի ատենները գլխէն անցածներուն վրայ խորունկ կը մտածէր, արդէն ետքի ամիսները պատահածները մտքին ու սրտին մէջ սաստիկ տպաւորութիւն մը ձգած էին: Շատ անգամ նաւին մէկ կողմը նստած բարձրադէղ կոհակները կը դիտէր, որոնք իր գլխէն անցած ալիքներուն հետ շատ նմանութիւն ունէին: Ինչչափ հիմայ փորձառութեամբ հարուստ էր, ասանկ ներութեանց դպրոցէն անցնելէն ետքը: Ատեն մը Զմիւռնիոյ բանտին մէջ փակուած ժամանակ՝ մարտիրոսութեան մեծ փափաքով կ'եռար —, իսկ հիմակ, որ արիւնը քիչ մը հանդարտեցաւ, ճանչցաւ որ աւելի մեծ մարտիրոսութիւն ալ կայ եղեր, սուրի ու կրակի մարտիրոսութենէն աւելի, եւ թէ բոլոր իր գերութեան մէջ անցուցած կեանքը, մէկ կողմանէ նայելով ուրիշ բան եղած չէ, բայց եթէ վշտաց ու չարակրութեանց շղթայ մը, որն որ հաւատոյ յաղթութեամբ մը վերջացաւ: Աստուծոյ սիրալիր նպատակները ինչպէս ական յայտնի իր հոգւոյն առջեւը կը ներկայանային: Ինք որոշուած է եղեր՝ երեւելի տիկնանց մէկուն դարձին գործիք մը ըլլալու: Աստուած ան տիկինը՝ էրկանը ու զաւկին կորստեամբը՝ քրիստոնէութեան պիտ'որ պատրաստէ եղեր: Ասով աղէկ ըմբռնեց որ ոչ բախտի ժպիտը եւ ոչ մտաց ձիրքերը մարդս գոհ կրնան եղեր ընել: Մարդուս սիրտը իր սիրականին հետ նա եւ մահուրնէն ետքն ալ անձուկ յարաբերութեան մէջ մնալու հարկաւորութիւն ունի եղեր, եւ աս յարաբերութիւնը միայն հոն կը գտնուի եղեր, ուր որ հոգւոյ անմահութեան հաւատք կայ: Աս էր Մետեղղային դարձին առջի շարժառիթը:

Արչափ ալ ծովի ճամբորդութիւն մը երկայն ու առանց փոփոխութեան առարկայից ըլլայ, ի վերայ

այսր ամենայնի մտածող մարդու մը՝ խորհրդածու-
թեան նիւթ չիպակսիր: Իրաւցընէ ծովը մեծամեծ
գաղտնեաց քարոզիչ մըն է: Ինչպէս իր անգորր խա-
ղաղութեան մէջ, նոյնպէս իր կատաղի բարկութեանը
ժամանակ, թէ համատարած ընդարձակութեամբը եւ
թէ իր անսպառ խորութեամբը՝ աստուածութեան
պատկեր մըն է: Ու նաւը՝ որն որ առագաստները բա-
ցած, ալիքներուն վրայէն կը վազէ, երկնից կապոյտ
հաստատութեան ու անծանօթ անդունդներուն մէջ
տեղը, շնորհաց երկնքին ու կորստեան անդնդին մէջ
տեղը ապրող մարդուս պատկերքը չէ նէ՛ ի՛նչ է:
Երբոր արեւին մեծ գունտը մարը կը մտնէ, ու երկ-
նային կամարը արեւմտքէն դէպ ի արեւելք եօթը փա-
ռաւոր գոյներով մեծատարած ծիածանի մը պէս կը
տարածուի, ուրիշ բան կրնան աս գոյները նշանակել,
բայց եթէ Ս. գրոց ան կենդանութիւն տուող խօս-
քերը թէ. «Յիշեցից զուխտն յաւիտենական ի մէջ իմ
(Աստուծոյ) եւ ամենայն շնչոյ կենդանւոյ», * : Իրիկուան
պայծառ երկինքը նայողը, մտքին մէջէն կ'ըսէ՝ որ աս-
տեղազարդ երկինքը երբեք իրեն այնպէս փառաւոր
չերեւար, ու երբեք անանկ խորհրդաւոր կերպով իր
սրտին չիխօսիր, ինչպէս նոյն ատեն: Կարծես որ հոգին
բարձրաթուիչ ըլլալ ու ան պայծառ փալիւրտող աստղե-
րուն մէջ սլանալ կ'ուզէ, մուրացիկ աղքատի մը պէս,
որն որ հարուստ իշխանի մը վրայ գոհարներով զարդ-
մը տեսնէ: Կաթին ծիրը, որուն վրայ աստղները փոշ-
ւոյ ամպերու պէս վեր վեր կը ցոլանան, մեր միտքը
իրեն կը յափշտակէ, վեր կը բարձրացընէ, մինչուկ
որ ան միտքը ամենազօրին պալատը հասնի: Բայց աս
ամէն բան միայն հաւատացեալ հոգի մը կրնայ վայե-
լել: Ինչպէս գիշերուան մութին մէջ նստող մարդուն
աչքին հազարումէկ աշխարհքներ կ'երեւան, զորոնք
ցորեկուան լուսաւորութեան ատեն չիտեսներ, ասանկ
ալ հաւատոյ մանկական աչքին առջեւը ծածուկ ու
ալօտ կենաց մէջ բացայայտ կ'երեւայ Աստուծոյ ամե-
նակարողութեան ու գեղեցկութեան ազդեցութիւնը
— ան ազդեցութիւնը՝ որուն վրայ իմաստնոյ մը լու-

* Դանդ . Թ . 16 :

սաւորեալ միտքը, հաղիւ աղօտ գուշակութիւն մը կրնայ ունենալ:

Ղանապարհորդաց աչքին դեռ սիրուն Մալթան չէր երեւար, որուն ցածուն բլուրները ծովու մակերեւոյթէն շատ վեր բարձրացած չեն: Որչափ որ աչքերնին կը զօրէր նէ, ուրիշ բան չէին տեսներ, բայց եթէ երկնից կապոյտ վրանը, որն որ կանանչ ջրոյն երեսին վրայ կամարածեւ տարածուած էր: Շնչաւոր բան ըլլալով՝ ուրիշ բան չէին տեսներ, բայց եթէ քանի մը ճամբորդ թռչուններ, որոնք անխոնջ նաւորդներու պէս օդը պատուելով կ'անցնէին, երբեմն մէկը կամ մէկալը նաւուն կայմին վրայ հանգչելով ու քանի մը բոպէ ետքը նորէն թռչելով: Աս թռչուններուն պէս անխոնջ կ'ընթանար նա եւ ժամանակը, ու եթէ կը կարծենք որ ժամանակը մեզի հետ կտոր մը ատեն հանդարտ կը կենայ, գիտնանք՝ որ ճիշդ ան ատենը զմեզ աւելի շուտ յափշտակած կը տանի:

Միրակուսա հասնելով, հոն Փարկոս Արեղինոսին՝ Փարկոմանաց վրայ ըրած մեծ յաղթութեան լուրը աւին, հոս դարձող ճամբորդները կայսրը գովելէն չէին դադրիր, ան արտաքոյ կարգի առատածեոնութեանը համար, որով քրիստոնէից զօրքը վարձատրած էր:

Հոսկից երկիւղի ու յուսոյ մէջ դէպ ի Սիկիլիայի արեւելեան եղերքը սկսան նաւարկել, Արեւմտեան կողմը հսկայածեւ Ետնան իր կապոյտ գլխովն ու վիթխարի կեցուածքով վեր կը բարձրանար եւ մութ եթերին մէջ իր սեաւ ամպերը կը շնչէր. ծովու եղերքը առագաստաւոր թեթեւ նաւակներու խուն բաղմութիւն մը կ'երթեւէկէին, անդիէն կայտառ դեղփինները զուարթութեամբ ծովուն երեսը կը ցաթկրրտէին եւ զուարճութեամբ նաւուն կողը կը զարնուէին: Նաւը յաջողակ հողմով Սիկիլիոյ վտանգաւոր նեղուցէն անցաւ, ու ետրուսկեան ծովը դէպ ի Ոստիա նաւահանգստին առջեւ երկաթ նետեց: Հոն Ղիւզիայի ոտքը առջի անգամ Իտալիայի ցամաքը կոխեց, սիրտը ուրախութեան ջերմ զգացումներով լեցուեցաւ, որովհետեւ ան քաղքին պարիսպներուն

մօտ եկած էր, որոնց մէջ կը յուսար իր մայրը գանելու: Սուրբ մեծարանօք մը սկսաւ քաղքին մօտենալ, որն որ արդէն նոյն ատենը քրիստոնէական աշխարհքին միջակէտն էր: Եւ որուն սիրտը չիկլըրտիր երբոր կեսարներու մայրաքաղաքը կը մտնէ: Հռոմ՝ ինչպէս նոր մատենագիր մը աս յաւիտենական քաղքին համար կ'ըսէ, երկու աշխարհքներու միութեան պն խորհրդաւոր հանգոյցն է, որուն մէջ մարդկութեան պատմութիւնը՝ հեթանոսութեան ու քրիստոնէութեան ազդեցութեանը տակ կը ներկայացուի, եւ ինչպէս երկրիս վրայ ամէն գետերը դէպ ի Ովկիանոս կը վազեն, ասանկ ալ աստուածային ու մարդկային կարգին մէջ, թէ հին ու թէ նոր պատմութեան ամէն դէպքերը, քաղքի մը կը դիմեն, որն որ Հռոմն է: Ուստի Հռոմ՝ կրնայ իրեն համար ըսել թէ «Աշխարհքն ես եմ»:

Գ Լ Ո Ի Խ Ժ Թ .

Յողթանակ:

(176. ք. Ե.)

Ի իւրիա՝ Իտալիա հասնելէն ետքը լսեց որ կայսրը պատերազմի ասպարեզէն արդէն դարձած էր, եւ իր Փաւստինա կնոջ հետ արեւելք գացած ըլլալով, նորերս իր դարձը կը սպասուի: Ու դարձէն ետքը յաղթուած գերմանական ազգերուն վրայ յաղթանակ պիտ'որ կատարէ: Աս հանգիսութիւնը կը կարծուէր որ շատ փառաւոր պիտ'որ ըլլայ, որովհետեւ Մարկոս Աւրելիոս ութը տարիէ ի վեր Իտալիայի մէջ քիչ տեսնուած էր, վերջին արեւելեան ճամբորդութեանը ասեն դժբախտ դէպք մ'ալ գլուխը եկեր էր: Այսինքն իր Փաւստինա կինը Տաւրոս լեռանց ստորոտը վախճանած էր: Հռոմայեցիք աս անպիտան կնկան սուգը միայն արտաքուստ կը ցուցնէին, ներքուստ շատերը իրարու աչքի լոյս կը շնորհաւորէին. թէ եւ Մարկոս Աւրելիոս վրան խորունկ սուգ բռնեց ու անոր պատուոյն համար տաճար մ'ալ կառուցանել տուաւ:

Հիւպատոսներն ու պրետորները Բրունդուսիոնի մէջ՝ որ Վալարրիայի երեւելի ծովեզրեայ քաղաքներէն մէկն էր, կայսեր կը սպասէին: Հռոմ քաղքին պատրաստութիւնները արտաքոյ կարգի էին եւ ժամէ ժամ մեծ անհամբերութեամբ ու անձկութեամբ անոր հասնելուն կը սպասէին: Այսչափ ուշանալուն պատճառն ալ սաստիկ մրրիկ մը եղած էր, որն որ ինչպէս պատմագիրները կ'աւանդեն Յունաստանի ու Իտալիայի մէջ ճամբորդութիւն ընողներուն կեանքը մեծ վտանգի մէջ ձգած էր:

Աոմոնդոս՝ կայսեր որդին ան ատենները դեռ տասնութեց տարեկան էր, եւ իր հասակին կազմութիւնը ու զօրութիւնը տարիքէն արտաքոյ կարգի աւելի էր: Ասիկա իր երիցագոյն Ղուկիլլա քրոջմովը՝ որ Աերոսի մահուամբ սյրի մնացած էր, մեծ բազմութեամբ իրենց հայրը դիմաւորելու գացին ու Պրէնեսթէի մէջ զինքը ողջունեցին: Հոն Մարկոս Արեղիոս՝ իր որդւոյն արիբունական պատիւ տուաւ, ու պատուիրեց որ յաղթանակին ժամանակ ոսկեզօծ կառքին մէջ իր քովը նստի: Հռոմ Աատիկանեան դաշտին վրայ, ուր որ հիմակ Հռոմայ քահանայապետին պալատը կայ, բազմութիւնը կարգաւ կը կենար: Բոլոր ծերակոյտը հոն ժողոված էր կայսեր ընդունելութիւն ընելու համար:

Նտուի դին զոհի համար որոշուած անասունները կը մոնչէին, ոսկեզօծ եղջիւրներով սպիտակ ցուլեր: Պատերազմի աւարը եւ ուրիշ նշանագրոջմ պատկերները ետեւէն քաշելով կը տանէին: Աս աւարէն ու պատկերներէն ետքը, դժբախտ պատերազմի գերիները պիտ'որ գային, յաղթականին համար որոշուած կառքին առջեւը փառաւոր զարդարուած քրմերը կը սպասէին իրենց շաստուածներուն նշանագրոջմ պատկերներովը, դրօշներովն ու խնկի ամաններով: Ժողովուրդը ամէն դիաց խուռն բազմութեամբ թէ քաղքէն ու թէ գեղերէն դէպ ի հրապարակները կը դիմէր որ բան մը տեսնէ, հրապարակներն ու պատուհանները, ուսկից յաղթականին կառքը պիտ'որ անցնէր, մարդիկներով կը

վատար, ու ամենուն բերանը «Կեանք ու յաղթու-
թիւն մեծի կայսեր», կը մաղթէր: Կառքը քաշող-
ները հարուստ զարդարուած փղեր էին: Մարկոս
Աւրելիոս ծիրանիէ թիկնոց մը հագած էր եւ աս-
տեղազարդ պատմուճան մը: Չախ ձեռքը փղոսկրէ
գաւազան մը բռնած էր, Հռոմէական արծուով մը,
աջ ձեռքը արմաւենեւոյ ոստ մը: Գլուխը ոսկիէ գափ-
նի պսակ մը կար գոհարներով զարդարուած: Ըստ ա-
նայնի նոյնպէս զարդարուած էր նա եւ կոմոզոս:

Աս միջոցիս լուսթեան նշան տրուեցաւ: Եր-
գեցիկ տղաք յառաջ անցան ու յաղթութեան եր-
գեր երգելու սկսան, որոնց ամէն մէկ խօսքը Ամենա-
զօրին հայրենի տեսչութեանը ու անմահութեանը
գովեստ մըն էր:

Կայսերական կառքը դեռ յաղթանակի կամուրջը
չհասած, կոմոզոս պատանին կրկին ու կրկին դէպ ի
վեր Moles Hadriani * ըսուող՝ դեռ նոր շինուած
լմընցած ամբարտակը նայելով, ծիծաղ դէմքով մը
իր հայրը մտադիր կ'ընէր, որ նոյն դղեկին վրայ նայի:
Վասն զի Բրուտոս Պրեսենս իր Արիսպինա գաստերովը
մէկտեղ հոն վերը կայսերական վրանին տակ փա-
ռաւոր տեղէ մը հանդիսատես կ'ըլլային: Աս դուստրը՝
որ շուրջ տասուիրեք տարւան էր, թափօրին մօտիկ-
ցած ժամանակը՝ ուրախութեան ձայներով սկսաւ ող-
ջունել, ու թաշկինակով մը այնչափ նշան տուաւ,
մինչուկ կոմոզոսին աչքը իրեն գրաւեց: Բայց երբոր
ան երիտասարդ յաղթականին խրուկով կամ կարմ-
րագելով ** գունաւորուած երեսը որ տեսաւ, ծիծաղ
մը փրցընելով ետ քաշուեցաւ: Աս այն Արիսպինան էր,
որն որ իրօք նոյն ատենը Արիսպինիկ մըն էր, Հռոմայի ա-
պագայ կայսրուհին, որն որ քիչ ատեն ետքը կոմոզո-
սին հետ կարգուեցաւ: Բայց ան ատեն ինչչափ անկա-
րող էր իր ետքէն գլուխը գալիքը գուշակելու ***:

* Հիմակուան՝ Հրեշտակի դղեկը:

** Յաղթականաց դէմքը կարմրագելով կամ խրուկով
(minium) ներկած կ'ըլլար, ինչպէս երեւելի տօնի օրերը
Արամազդայ արձանը կ'ըլլար. Պլին. ԼԳ. 7:

*** Արիսպինա ետքէն Գարբի (Գարբերա) կղզւոյն վրայ աք-
տրուելով հոն սպանուեցաւ:

Արչափ որ երկու յաղթականներն ալ աս յիշեալ հանգեսին մէջ իրենք զիրենք ուրախ զուարթ կը ցուցնէին, նոյնչափ ալ կեսարներուն կոնակը կայնող սեւ գերիին իր պաշտօնը կատարելու համար մեծ ճգանց ու հոգոց մէջն էր: Որովհետեւ ըստ հին սովորութեան, ոսկի պսակը բռնող գերիին մէկը, որն որ յաղթականներուն կողքին ետեւը կը կենար, բովանդակ հանդիսութեան տեւած ժամանակը, իրենց աս խօսքերը պիտ'որ կանչէր. «Յիշեա՛ զե դու մարդ ես»: Աս Ափրիկեցի պսակակիրը երբոր Աոմոգոսին աս խօսքերը կրկին ու կրկին կը շընչէր, վերջապէս Աոմոգոս խիստ կերպով մը անոր սաստեց. «Ես ան հասարակ մարդիկներէն չեմ», ըսելով: Թափօրը յաղթական ըսուած ճամբուն մէջ (Via triumphalis) մըտաւ, ուսկից Ադրիանոսի շիրիմն ալ չէր տեսնուեր: Աս ճամբուն վրայ բանիբուն հեղինակ մը *, հետեւեալ գննութիւնները կ'աւելցընէ, որ աս ճամբան ուրիշ բաներէն զատ՝ շատ մը գերմանական արցունք ու հեծութիւն տեսած է, երբոր Հռոմայեցւոց լեզէոնները՝ Գերմանիոյ կապուած նախնիքը գերի բռնած, իրենց յաղթանակին ատենը հետերնին քաշկրտելով կը տանէին: Եւ այնպիսի դառն արտասուքներ Հռոմայի գետինը աս հեղուան պէս շատ քիչ անգամ խմած է, որովհետեւ աս անգամ երկայնժամանակեան պատերազմին ճգունքն ու զոհերը՝ Գերմանացւոց համար շատ նախատական վերջ մը ունեցած էին:

Հոն գերիները ձեռքերնին ծանր շղթաներ կրելով, ձաղ ու ծանակ կ'ըլլային աշխարհքիս ամենէն թեթեւամիտ ու արհամարհոտ մարդկանց առջին: Իրենց մութ կապոյտ աչուրները, զորոնք թաւընքուիներ բողորած էին, գետին տնկած, մինակ իրենց ձաղիչներուն առջին սրտերնուն դառնութիւնը թափելու ժամանակ վեր կը վերցընէին: Իրենց ազգային հագուստը՝ պարզ մետաքսէ թիկնոց մըն էր, եւ կամ՝ անասնոյ մորթ, կուրծքերնուն վրայ հաստատուած ճարմանդով մը, որն որ իրենց հերակղեան

* Թոմմա, իր անուանի՝ «Անթենոփին», մէջ, Աւկսպոսի, րկ, 1847:

երեւոյթը կ'աւելցընէր: Կոմոդոս պատանին գրեթէ անոնց վրայ կը նախանձէր՝ որ ասանկ առաւելութիւն մը իրեն զւացուած է, որովհետեւ արդէն ան ատեն ինքը զինքը Հերակղէսին հետ համեմատել տալը շատ կը բաղձար * : Գերմանացոց գլխաւորներն ու իշխանները աւելի հարուստ հագուած էին, որոնք իրենց քալուածքովն ու մարմնոյն շարժուածքովը իրենց ազգային սէգ զգացումը կը ճանչցընէին:

Գերի բռնուողներուն մէջ նա եւ կանայք ու տղաք ալ կային: Անկտիք ալ՝ էրիկ մարդոց պէս հագուած էին, մինակ ասոնցմէ մէկ քանին կտաւէ զգեստ ունէին, որն որ տեղ տեղ կարմրաներկ կ'երեւար: Իրենց հագուստը դէպ ի թիկունքը կը նեղնար, բայց բազուկնին մերկ կը թողուր **:

Թշնամիներէն առնուած զէնքերն ու սաղաւարտները, մեհեաններու արծաթ ու պղինձ անօթները, նշանաւոր բան մը չէին: Զէնքերու մէջէն ամենէն հետաքրքրականը՝ սլաքներն էին, որոնք նեղ ու կարճ, բայց շատ սուր երկաթէ շինուած էին: Նա եւ վահանները նշանաւոր էին, որոնք ձեւին ու զանազան գոյներուն կողմանէ՝ Հռոմայեցւոցմէ տարբեր էին:

Գերեաց յուսահատ մտլ թխուր կերպարանքներուն դիմացը՝ ընդդիմապատկեր մը կը ձեւանար Հռոմայեցւոց արհեստներուն երեսը, որոնք յաղթական կառքին քովէն կ'ընկերանային: Ասոնց անմիջապէս քովէն՝ յաղթանակողին ետուր յաղթական զօրքին վաշտերը կու գային: Ռտանաւոր զօրքը գլուխին դափնիով զարդարուած, հին ու նոր զինուորական երգեր, իրենց զինուցը գովեստը կ'երգէին, ու ձեռքերնին ան գինիներուն ու համադամներուն կ'երկընցընէին, զորոնք Հռոմայեցիք իրենց կ'ընծայէին: Զինուորական հանդէսը անցած տեղուանքը, որն որ ըստ մեծի մա-

* Կոմոդոս երբոր Կայսր եղաւ, ինքը զինքը «Հռոմայեցի Հերակղէս», անուանեց, եւ իրիկունները առիւծի մորթ հագած, ասղին անդին կը պտրտէր, ու իր առջին հանդիպողներուն մահակով մը կ'իջեցընէր:

** Տակիտոս, Գերմ. զանազան տեղեր:

սին հրապարակական տեղեր ու Հռոմի երեւելի փողոցներն էին, ամէն մէկ տուն ծաղկէ պսակներով ու գոյնզգոյն նկարէն օթոցներով, եւ ինքնակալին աւունը կազմող գրերով զարդարուած էին: Ասաղաղակը, «Ո՛վ յաղթանակ, կեցցեն՝ Հարք հայրենեաց*», («Jo triumphe! vivant patres patriae,») ամէն դիաց կը հնչէր: Նոյն իսկ փողոցներուն երեսը տերեւներ ու խոտեր ցանուած էին, այնպէս որ բոլոր Հռոմ զբօսանաց պարտէզ, եւ կամ դրախտ դարձած էր: Բաց ասկից ամէն տեղ անուշահոտ բուրում մը սփռուած էր, վասն զի քաղքին ամէն տաճարներէն խնկոց ամպեր դէպ ի օդը կը բարձրանային, ու ամէն նուիրական տեղուց առջեւ զօհերու բոցեր բորբոքած էին:

Ամէն տեղաց աւելի Ագրիպպասի ամենագից մեհեանը, ու վերը կապիտողեան բլուրը խտացած զօհերու միւէն չէր տեսնուեր: Կայսրը աս իրեն եղած ընդունելութենէն անանկ շարժեցաւ, որ ժողովրդեան սկսաւ կանչել, «Ո՛հ ամեներջանիկ օր, ասի իմ կենացս ամենէն բարենշանն է», աս ըսելով վիզէն կախուած ոսկի յուռութը (Bulla) կը պագնէր, որն որ նախանձայուղութենէ պահպանող բժժանքի մը պէս էր**:

* Կոմմոդոս պատանին՝ որ արդէն տարի մը վերջը Մարկոս Աւրելիոսին գահակից անուանուած էր, Հռոմայ ծերակուտէն աս պատուաւոր անուանակոչութիւնը «Հայրենեաց հայր» ընդունած էր: Այսպէս աննշանական էր նոյն ատենները աս տիտղոսը, ու այսչափ անպատիւ՝ ծերակայտը: Եւ թէ Կոմմոդոս ընդ հակառակն (որն որ 18 տարի մինակ գահակալեց,) ինչպէս ծերակուտին հետ վարուեցաւ, հետեւեալ օրինակէն յայտնի կ'ըլլայ: Հեղ մը Ամիիթեատրոնին մէջ թռչուն մը սպաննեց, գլուխը փրցուց ու արիւնտա սրովը իր սրոշուած տեղը անցագնաց: Քովը նստող սինկղիսիկոսներուն նոյն գլուխը ցուցնելով, սպառնական կերպով անոնց հասկըցուց որ անոնց գլխէն ալ նոյն դէպքը պիտ'որ անցնի: Գիտն Կատսիոս՝ որն որ աս դէպքը կը պատմէ, անոնց հետ նստած էր, ու կը հաւատարմացրնէ որ ծերակայտը նոյն կատակերգական գործողութեան վրայ իրեն ծիծաղը բռնելու համար, գլուխներնէն դափնեայ պսակներուն տերեւները փրցուցին ու ծամելու սկսան: Ապա թէ սչ, ծիծաղ մը կրնար իրենց բոլոր կեանքը արժեւ:

** Մակրոբ. Սատուրն. Ա. 6:

արձանը կարգնուած էր: Կայսրը՝ յաղթութեան կառքէն իջաւ, ու իր վախճանած կնկանը արձանին քով գնաց ու անոր խնկարկեց: Անկից Կապիտողեան Արամազդին տաճարը ելաւ, ու իր պսակը Արամազդայ նուիրեց ըսելով «Աստուածներն են յաղթողները, անձրեւաբեր Արամազդայ կը վայլէ պսակը»,:

Հոս զոհի համար սահմանուած անասունները, որոնք պսակազարդ եղջիւրներովը թափօրաբար հետերնին մինչուկ հոն բերուած էին, զոհուեցան: Մի եւ նոյն ատենը ուրիշ տաճարներուն մէջն ալ զոհեր կը մատուցուէին: Հանդէսը լմրննալէն ետքը փառաւոր սեղան եղաւ:

Վոյն օրը ու հետեւեալ օրը, կերպ կերպ ժողովրդեան տօներ կատարուեցան, որուն մէջ ծերն ու երիտասարդը, բարձր ու ստորին աստիճանի մարդը, եւ առանձինն ռամիկը իրենք զիրենք կերուխումի տուին:

Եւ տօնական օրերէն ետքը Կայսրը սկսաւ ժողովրդեան պարգեւաբաշխութիւն ընել: Իրօք Հռոմայեցիք երբեք կայսեր մը տակ անանկ հարուստ չեղան, ինչպէս ասոր ժամանակը: Ասանկ առատ պարգեւաբաշխութեամբ Մարկոս Աւրելիոսին արկղը անանկ չքաւորութեան մը մէջ ինկաւ, որ իր կայսրական զարդերը, սեղանի ամաններն ու Փաւստինային գոհարները հրապարակաւ Հռոմի մէջ ծախու հանուեցան: Ասչափի հասաւ Մարկոս Աւրելիոս՝ իր առատաձեռնութեամբը ժողովրդեան նպաստը վաստըկելու եւ իր ինքնակալութիւնը կանգուն բռնելու համար. ի վերայ այսր ամենայնի իր Կոմոզոս որդին ժողովրդեան առջին ատելի համարուած էր, եւ այսպէս ազնուական հօր մը նպատակներն՝ անարժան որդւոյ մը պատճառաւ պարապի ելան:

Գ Լ Ո Ւ Խ Ի .

Մայրս կը փնտռեմ՝

Ղուկիանոս քրիստոնէից վրայ խօսելով կ'ըսէ. «Անհաւատալի բան կ'երեւայ որ ինչպէս աս մարդիկը ժրաջան են, որ եւ իցէ տէրութեանց ամէն պարտքերուն անտարբեր են, երբոր իրենցմէ մէկուն գլուխը նեղը մտնէ, մըջիւնի պէս մէկէն իրարու քով կու գան կը ժողվին որ զինքը ազատեն: Իրենք անանկ համոզած են որ մարմնով ու հոգևով անմահ են — եւ թէ ամէնքն ալ մէկ եղբարք են,»:

Արդ աս այսպէս ըլլալով, օտար աշխարհքէ կայսրանիստ քաղաքը գաղթող հաւատացեալ անձի մը ինչպէս կրնար դժուար ըլլալ անանկ տեղ մը հիւրընկալութիւն գտնելը: Ինչպէս որ հիմակ ալ ժողովուրդը՝ իրենց եկեղեցւոյն մօտերը բնակութիւն հաստատել կ'ուզեն, ասանկ նոյն ատենն ալ Հռոմի քրիստոնեաները գլխաւորաբար իրենց տաճարներուն քովը, ու ի մասնաւորի քաղքին արեւելեան դին իրենց բնակութիւնն ընտրած էին: Ախմինալ ըսուած բլուրը կրնայ գուցէ քրիստոնէից առջի գաղթականութեան տեղը անուանուիլ: Արդէն առաքելոց ատենէն, Հռոմի մէջ նուիրական տեղեր շատ կային, որոնք երբեմն տուն աղօթից, երբեմն ալ եկեղեցի կ'անուանուէին, ուր ամէն մէկ շաբթուան առջի օրը կը ժողվէին ու աղօթք կ'ընէին, Աստուծոյ խօսքերը մտիկ կ'ընէին ու գոհութեան խորհրդոյն կը հաղորդուէին: Ախմինալի ստորոտը «Հովուի», ըսուած եկեղեցի մը կար: Ան եկեղեցւոյն մէջ, որն որ ետքէն «Ս. Պուղենտիանա», անուանուեցաւ, դար մը յառաջ Ս. Պետրոս կը բնակէր ու հոն սուրբ խորհուրդները կը պաշտէր: Պետրոս ու Պաւղոս Հռոմ բնակած ատեննին Պուղէս անունով սինկղիտիկոսը իրեն դուստրոներովը քրիստոնէութեան դարձուցին, եւ անոր երկու դուստրները — Պուղենտիանա եւ Պրաքսեդիս, որոնք սուրբ եռանդով մը քրիստոնէութեան հաւատքը գրկած էին, չէ թէ միայն իրենց բնակութեան

տները, այլ նոյն իսկ իրենց ինչքն ու ստացուածները քրիստոնէական նպատակներու որոշեցին: Եւ դեռ մինչուկ այսօրուան օրս տասներու թը դար ետքը, պանդուխտ մը Հռոմի մէջ Մարիա Մածնիօրէ ըսուած համբաւաւոր Եկեղեցիէն քիչ մը հեռու երկու եկեղեցիներ կը գտնէ Ս. Պոլեոնիսիանա եւ Ս. Պրոսպերիանա անուամբ *:

Թէ եւ Լիւդիա Հռոմի մէջ օտար էր, սակայն «Քաջ հովուի», ըսուած աղօթատեղւոյն մէջ շատ քրիստոնէաներ գտաւ, որոնք մեծ մտերմութեամբ իրենց ծառայութիւնը անոր նուիրեցին: Ամենն ալ առաքելոց ատենուան պէս մի սիրտ մի հոգի էին:

Լիւդիա իր առջի ծանօթներուն՝ կամաց կամաց գլխէն անցածները սկսաւ պատմել, թէ ինչպէս տարիներով յառաջ Զմիւռնիոյ մէջ իր մօրմէն յափը տակուեցաւ, եւ թէ իր մօրը անունը Քարիտանէ կ'ըսուէր, որն որ քրիստոնէայ ըլլալուն՝ Հռոմ իբրեւ գերի բերուած պիտ'որ ըլլայ: Քրիստոնէից թիւը ան ատենները արդէն այնչափ բազմութիւ էր, որ գերուհի մը, որ հաւանականաբար իր առջի անունն ալ կորսնցուցած պիտ'որ ըլլար, անանկ մեծ քաղքի մը մէջ դժուարաւ կրնար գտնուիլ: Ուր թողունք որ հարուստ ընտանիքներն ալ ամարուան պատճառաւ ըստ մեծի մասին գեղերը կ'ըլլային, հոն անտառներու քովերը ու զով ծովային օդով սթափելու համար, ու իրենց ծառայից մեծ մասը հետերնին կ'առնուին:

Լիւդիա հաստատութեամբ միտքը դրած էր, որ մայրը մինչուկ որ չգտնայ կամ ուր ըլլալուն վրայ որոշ լուր մը չառնէ, Հռոմէն չմեկնի: Ոմանք յիշեցուցին իրեն որ քանի մը օրէն Սրբուհի Մագդաղենացւոյն յիշատակը պիտ'որ կատարուի, եւ թէ աս վախճանաւ հաւատացեալք Ապպեան ճամբուն վրայ

* Կա եւ Ս. Յուստինոս Ախմինալի մէջ կը բնակէր: Իր վկայաբանութենէն աս հետեւեալ կտորը կը քաղենք: Դատաւորը. — «Կուզեմ գիտնալ որ դուն քու աշկերտներդ ո՞ւր կը ժողովես»:

Յուստինոս. — «Ես մինչուկ հիմակ Տիմոթէոսի բաղանեաց քովերը բնակեցայ, Մարտինոսի տան մօտ»: — Արդ աս բաղանիքը Ախմինալի վրան է:

ստորերկրեայ (Գալիսիայ ըսուած) տեղերը պիտ'որ ժողովին աստուածային պաշտօնը կատարելու համար. հոն կը յուսային քարիտանէի վրայ որոշ տեղեկութիւն մը առնուլ:

Աս խօսքին վրայ Լիւդիային երեսը զուարթացաւ, ինքը զինքը արարածոց մէջ ամենէն երջանիկը կը սեպէր, ու կը կարծէր որ արդէն իր սիրելի մօրը շրթունքը մօտեցած է զինքը համբուրելու, այնչափ ժամանակէ վեր իր զգացումներուն վրայ իշխելու վարժած բարեպաշտ դուստրը՝ անընդդիմակաց մըղմամբ մը նոյն օրունէ սկսաւ այլ եւ այլ քրիստոնեայ անձանց իր մայրը հարցընել: Գիտնիսիոս եպիսկոպոսէն յանձնարարութեան թուղթ մը առած էր՝ Փելիկիտաս անուամբ բարեպարիշտ ու հարուստ կրնկան մը վրայ, ան թուղթը անձամբ իրեն տարաւ, ու անկից այնպիսի ընդունելութիւն մը գտաւ՝ որ կարծես թէ ան փորձ ու հմուտ կնկան համբաւաւոր ընտանիքէն մէկն եղած ըլլար: Հաւատոյ համար գերութեան առնուած ու ձեռքէ ձեռք ծախուած մօր մը աղջիկ ըլլալուն պատմութիւնը բաւական եղաւ՝ որ իրեն քրիստոնէական սիրոյ ամէն կերպ ծառայութիւնները մատուցուին: Տիկինը անոր խոստացաւ որ մօտերս երբոր հաւատացեալք մէկտեղ կը ժողովին, Սովտեր Հռոմայ եպիսկոպոսին առջին զինքը կը ներկայացընէ, որն որ կրնայ գուցէ իրեն ճամբայ ցուցընել:

Այն յիշուած օրը Ապպեան ճամբուն վրայ գետնափորներու մէջ հաւատացեալք մէկտեղ եկան ժողովեցան: Գիշերուան ժամը երկուքն էր: Հռոմի ճամբաներուն մէջ խոր լուծիւն մը կը տիրէր, ինչու որ կէս գիշերուան մօտ հրապարակական տեղերէն սովորութիւն էր որ մէկդի կը քաշուէին, միայն հոս հոն քանի մը ուշ մնացողներ կային. անոնք ալ արտորնօք տեղերնին կը դառնային: Աս միջոցիս քանի մը կնկտիք մեծատուն Հռոմայեցի փաստաբանի մը, այսինքն Մինուտիոս Փելիքսին տնէն դուրս կ'ելէին, Եսկիղինեան բլուրէն դէպ ի քուսէոմը շիտկուելով, ուսկից երբեմն երբեմն ամբողջօրեայ անասուններուն մանչիւնը շփոթ կերպով կը լսուէր: Անկից դէպ ի

Անտոնինեան բաղանեաց մեծայաղթ շէնքերուն կողմը շիտկուեցան, ու անկից ալ անդին դէպ ի Ապպեան ճամբուն ու Ալմոյ գետակին կողմերը: Աս տիկնանց աջ դին Եգերիայի հովտին վրայ քանի մը ամարատուններ կ'երկրննային, ու ճամբուն մտա Հռոմայեցւոց քանի մը շիրիմներ, ու անոնց վերի դին «Ծաղրական աստուծոյ», * մեհեանը:

Աս բարեպաշտ ընկերութիւնը գեռ յիշեալ ստորերկրեայ տեղերը չմտած, Լիւդիա իր ուղղեկցին լուութիւնը ընդհատելով, հետեւեալ խօսքերը իրեն բացաւ:

«Արդեօք մէյ մ'ալ աս աշխարհքիս մէջ փնտռածս պիտ'որ գտնեմ: Աս բոպէս՝ որ անոր վրայօք կը յուսամ բան մը լսելու, ո՛հ, սիրտս արտաքոյ կարգի անձկութեամբ կը լեցուի: Գեռ չլուսընցած՝ աս մեր ըրած այցելութիւնը, չորս դիեր տեսնուած շիրիմները, նա եւ ան սուրբերուն յիշատակը՝ զորոնք տօնելու կ'երթանք, վերջապէս ամէն բան Իւղաբերից յիշատակը միտքս կը բերեն, որոնք չլուսընցած Երուսաղեմէն ճամբայ ելան իրենց կենարարին գերեզմանը այցելութեան երթալու: Գուցէ մեր աս երթալն ալ գերեզմանի մը այցելութեան երթալ է»:

«Ասկից աս տխուր մտմտուկները, պատասխանեց Փեղիկիգաս, միտքդ բեր որ Մագդաղենացին՝ գերեզմանի այցելութեան համար գնաց ու փնտռածը ողջ գտաւ: Մենք ալ Սրբոց գերեզմաններուն այցելութեան կ'ելլենք, որոնք ան ստորերկրեայ տեղիքն ** են, եւ գուցէ դուն ալ փնտռածդ մեռելոց մէջ կենդանի պիտ'որ գտնես», —

Որչափ որ աս ստորերկրեայ գերեզմանատուններուն (որոնք ետքէն կալիքստոսի ու Սեբաստիանոսի գերեզմանատուններ անուանուեցան) մօտիկցան, այնչափ ալ ճամբան սկսաւ մարդիկներով լեցուիլ: Ասոնք քրիստոնեայք էին, որոնք ասանկ անսովոր ժա-

* Deus ridiculus.

** Բոլոր ստորերկրեայ տեղերուն երկայնութիւնը հազար Խառլական միլոն, զանազան ստորերկրեայ տեղերուն մէջ գտնուած գերեզմաններուն թիւն ալ վեց միլիոն է:

մու մէջ հոս կը ժողովէին: Գուան առջեւը տղայ մը կը սպասէր պահպանութեան համար, ու մանողներուն ձեռքը ջահ մը կու տար: Ուրիշ կանանց խումբ մ'ալ իրենց առջեւէն կ'երթար, որոնց ջահին փայլունութիւնը ետեւիններուն ալ կը զարնէր: Օգը խիտ էր ու նեղացուցիչ, ամարուան բուն տաք ժամանակը չըլլալուն համար: Զանազան մեծ ու պզտիկ փողերուն (Քրիփփերներուն) պատերը դազաղներու ձեւով դէպ ի ներս փորուած էին, աս փորուածքները, որոնք վրայէ վրայ մինչուկ վեր կրկնուած էին, երկայնաձեւ քարեղէն տախտակներով կը գոցուէին, ու աս տախտակներուն վրայ Հոռոմայեցի կամ Յունարէն դամբանագիրներ կային: Քանի մը տեղ քարեղէն տախտակին առջեւը պզտիկ հողէ աման մը կը տեսնուէր, որն որ նշան մըն էր՝ թէ հոն մարտիրոս մը թաղուած է: Աս դամբանագիրներուն տակ զանազան պատկերներ կ'երեւային, երբեմն ծարաւած եղջերու մը, որն որ մեր յաւիտենական բարեաց ծարաւը կը նշանակէ, երբեմն զոյգ մը արմաւենիի ճիւղ, որն որ յաղթութեան նշան է, կամ առագաստաւոր նաւ մը, որն որ Եկեղեցին կը նշանակէ: Երբոր աս կերպով զարդարուած զանազան սրահներէն քիչ մը յառաջ անցան, հեռուէն մեղմ երգի մը ձայն լսուեցաւ, Սաղմոսերգութիւն մըն էր: Քանի որ յառաջ կ'երթային, այնչափ ալ տեղը երթալով ընդարձակուեցաւ եւ առջեւնին ստորերկրեայ եկեղեցի մը բացուեցաւ, որն որ կանթեղներով ու մեղրամոմէ ճրագներով լուսաւորուած էր **:

* Արովհետեւ աս տեսակ մութ ժողովատեղիներուն մէջ, զորոնք քրիստոնեայք մինչուկ 312 տարի Քրիստոսէ վերջը գործածեցին, միշտ մեղրամոմէ ճրագներ կը վառուէին, անոր համար անկէ ետքն ալ մինչուկ այս օրս աս սովորութիւնը կը պահուի:

ձեռքը աղքատաց համար տուրքեր յանձնելու ու հաւատացելոց ընդհանուր գործառնութեանց վրայ խօսակցելու:

Լիւդիա պարապ տեղ ասդին անդին կը նայէր. հոն գտնուողներուն մէջը մայրը չկրցաւ գտնել: Ան ատենը Փելիկիդաս՝ սարկաւագի մը քով մօտեցաւ, անոր աղաչեց որ պատարագը մատուցող ծերունւոյն հետ մէյ մը խօսակցի: Իրեն հասկըցուց որ Ջմիւռնիայի քրիստոնեայ գուստր մը եկած է, իր Քարիտանէ անուամբ մայրը՝ որ քրիստոնեայ էր՝ փնտռելու, եւ արդէն քանի մը օրւոնէ ի վեր ամենուն հարցուցած է, բայց չէ կրցած գտնել:

Քահանան երբոր աս խօսքերը լսեց, երեսը սկսաւ ուրախութեան ու միանգամայն տրտմութեան նշաններ ցուցնել: Լիւդիա՝ ծերունւոյն առջին անշարժ կեցաւ, աչքը անոր շրթունքներուն վրայ էր, գիտնալով որ ան հազարաւոր մակաբերութիւնները՝ զորոնք մինչուկ ան ատեն ունեցած էր, աս ըրպէս իրենց լուծումը պիտ'որ գտնեն:

Օտքը սկսաւ խօսիլ:

«Մ'վ երջանիկ գուստր, ըսաւ, երջանիկ՝ որ Սրբոյն Պողիկարպոսի գպրոցէն անցեր ես, ու երջանիկ՝ որ սրբուհւոյ մը գուստր ես,»: —

Չայնը սկսաւ շարժիլ ու հատկըլտիլ: Իսկ իրեն ընկերացող խաթունները, որ աս խօսքին զօրութիւնը հասկըցան, գլուխնին ծռեցին ու երեսնին ծածկեցին: Լիւդիա չիմացաւ որ մայրը ինչ եղած է, ինչ ըսել կ'ուզէ ան խօսքը, եւ թէ ինչու իբրեւ սրբուհւոյ մը գուստր կը համարուի կոր: Մէկէն սիրտը սկսաւ զարնել, երբոր ծերը ոտք ելաւ անոր ընկերներուն նշան տուաւ որ իր ետեւէն գան: Խել մը շեղ ճամբաներէն անցնելէն ետեւ, ընդարձակ բակ մը հասան, Քահանան հոն կեցաւ, աչքը սրբելով աղջկան նշան ըրաւ որ յառաջ անցնի, ու իր ծեր գողգոջուն ձեռքովը ճերմակ դամբանաքար մը ցուցուց, որուն վրայ ջահերը անմիջապէս կարմիր լոյս մը ձգեցին: Լիւդիա մեծ անձկութեամբ տապանաքարին մօտիկցաւ, որուն վրայ աս խօսքերը գրուած էին:

“Քարիտանէ վկայուհի, հոս կը հանգչի իբրև սուրբ՝
սուրբերուն մէջ. Ապրիլի սկիզբները մեռաւ: Աւրախացի
ի Տէր ու աղօթէ մեզի համար,,:

Լիւդիա աս խօսքերը որ կարգաց, կսկըծագին
դէմքով մը իրեններուն դարձաւ ու տարակուսած
աչուրներով հարցուց որ արդեօք ա՞ն է, ստոյգ այս-
պէս է. ուրախութեան ու տրտմութեան զգացումներն
իրար կը փոխանակէին: Մէկէն հեծութեան ձայն հա-
նելով նուազած, հետը ընկերացող Փեղիկիդասին
վիզը պլլուեցաւ, քիչ մը ետքը սթափելով, ուր ը-
լալը իմացաւ, ճանչցաւ որ իր Քարիտանէ մօրը գե-
րեզմանին քովն է:

Եր ջերմաջերմ սիրելին նորէն գտնելու ակըն-
կալութեան մէջ կեցած ատեն, գերեզման մը գտաւ,
կարմիր շիշ մը շերմին քովը կը կենար, իբրև մար-
տիրոսութեան նշան:

* * *

*

Շոս Լիւդիա իր մօրը քով զանազան խոր-
հրդածութեանց մէջ ընկղմած ատեն, սիրտն ու
հաւատքը իր ներսի դին կը կռուէին, սիրտը իր մայրը
երկրիս վրայ տեսնել կը բաղձար, հաւատքը անոր
կանգնած յաղթութեանը վրայ կ'ուրախանար: Աւեր-
ջապէս ետքինը յաղթեց, Լիւդիա ծնկան վրայ եկաւ,
ձեռուրները մօրը նշխարները ամփոփող քարին վրայ
դրաւ: Շուտով ետեւէ ետեւ հասնող ալիքներու
պէս զանազան զգացմունք փոփոխ կը յաջորդէին, ցաւ
ու կարեկցութիւն, հոգ եւ ուրախութիւն, բայց
ամէն զգացմանց վրայ ներքին սրտալիր ուրախութիւնը
յաղթութիւն կանգնեց, որովհետեւ հանգուցեալը իր
յաղթանակը առած էր, կենդանեաց ու մեռելոց
մէջ գանուած միջնորմն՝ այնչափ ահագին չէր ե-
րեւար: Առջի քրիստոնեաները բարի մահը Աստու-
ծոյ պարգեւներուն մեծագոյնը կը սեպէին: Անոր հա-
մար Լիւդիա ինչ ուրախութիւն որ պիտ'որ ունենար,
թէ որ իր մայրը կենդանեաց մէջ գտնէր, նուազ
բերկրութիւն չունեցաւ՝ երբոր զանիկա սրբոց մէջ
գտաւ:

Արբոր Լիւզիա դեռ հոս է, ու երթալով աւելի լուսաւոր կերպով մը կը զգայ թէ սրբոյ մը գուստրն ըլլալու առաւելութիւնն ունի, մենք ընթերցողին պատմենք թէ Քարիտանէի գլխէն ինչ անցաւ:

Պողիկարպոսի մահունէ ետքը, Քարիտանէ Հռոմ բերուեցաւ եւ հոն Կրեսկենտիոս ոստիկանին իբրեւ գերի ծախուեցաւ: Քանի որ հալածումը դադրած էր, Կրեսկենտիոս չէր ուզեր մատնել որ Քարիտանէ քրիստոնէայ է: Աս միջոցիս Յուստինոս փիլիսոփան տեսնելով որ քրիստոնէական կրօնին վրայ զանազան այլանդակ լուրեր տարածուած են, ասոնց առջեւը առնելու համար իր երկրորդ ջատագովութեան թուղթը դուրս հանեց, զորն որ Մարկոս Աւրելիոսին ու անոր ծերակուտին ուղղած էր: Աս գիրը հազիւ թէ դուրս տուաւ, բանտարգելութեան պատիժ ընդունեցաւ, իրեն հետ մէկտեղ ուրիշ շատ քրիստոնեաներ ալ ստորերկրեայ տեղեր բանտ դրուեցան: Կրեսկենտիոս ալ նոյն միջոցին Հռուստիկոս կուսակալին աչքը մտնելու համար՝ որ մը իր քրիստոնէ ազախինն ալ անոր խրկեց ըսելով, որ ուզածին պէս անոր վրայ դատաստան կտրէ: Կուսակալը Քարիտանէն՝ որն որ հոգէ ու տրամութենէ հիւժած էր, մէկալ քրիստոնէից հետ ստորերկրեայ բանտին մէջ դնել տուաւ:

Յուստինոս իր մէկալ վեց ընկերներով դատաւորին առջին կանչուած ատեն, հոն յայտնի խօսքը դատաւորին առջեւը դրաւ՝ որ մինչուկ ետքի շունչը իր քրիստոնէութիւնը հաստատուն պիտ'որ բռնէ: Երբոր Հռուստիկոս իրեն հարցուց որ ինչ գիտութեամբ աւելի կը զբաղի, աս պատասխանը տուաւ, «Ամէն կերպ գիտութիւն սորվելու փոյթ տարի: Բայց որովհետեւ ճշմարտութիւն չգտայ, անոր համար ամենէն վերջը քրիստոնէից փիլիսոփայութեանը տուի ինքը զինքս, թէ եւ աս գիտութիւնը՝ մոլար կարծիքներուն առջին հաճելի չէ: Բայց ես աս հաւատքին վրայ մեծ ծանրակշռութիւն մը կը դնեմ, որովհետեւ զիս ճշմարտութեան ճամբուն վրայէն կը տանի,»: Իսկ ոստիկանին՝ որ կը հարցընէր թէ ո՞ւր տեղ քրիստո-

նեայք կը ժողովին, պատասխան տուաւ, որ «Ար ժողովին, ուր որ կ'ուզեն ու կրնան: Մեր Աստուածը որոշեալ տեղոյ մը կապուած չէ, ըսաւ, որովհետեւ աներեւոյթ է, եւ երկինքը եւ երկիրը կը լեցընէ, ամէն տեղ կրնանք անոր երկրպագութիւն ու փառաբանութիւն ընել»:

Ասոր վրայ դարձաւ դատաւորը քանի մը հարցումներ ալ անոր ընկերակիցներուն ըրաւ. ու երբոր ամէնք ալ հաւատքի մէջ անգրգուելի գտաւ, չարաչար ծեծել տալէն ետքը մահուան վճիռ տուաւ: Արդէն Յուստինոսին գլուխը գետինն էր, եւ անոր հինգ ընկերակիցներուն մահուան պատիժը կատարուած էր, բայց դեռ Քարիտանէ արիւնլուայ եղած գետնին վրայ դատաւորին դիմացը կեցած էր, խոնարհութեամբ գլուխը դէպ ի գետին ծռեց, թեւերը կուրծքին վրայ դրաւ ու քանի մը աղօթք մըմնչեց: Հոռուստիկոս երբ որ տեսաւ որ իր հարցումներուն եւ ոչ մէկը պատասխանի արժանի եղան, դահճին նշան տուաւ, անմիջապէս բիրտ ձեռք մը աս տկար կնիկը ուսէն բռնեց, դէպ ի գետին ծռեց ու յական թօթափել գլուխն ու մարմինն իրարմէ բաժնուած գետնին վրայ փռուեցան: Ակայաբանութիւնը աս վեց մարտիրոսներուն՝ որոնք Յուստինոսի հետ վկայեցին, անունները պահած է. որոնք են, Քարիտոն, Եւելպիստոս, Հերաքս, Պէոն, Լիբերիանոս ու Քարիտանէ: Աս դէպքին տարին՝ 167 կը սեպուի, օրը՝ 13 ապրիլ: Յոյները զՅուստինոս Յունիսի մէկին կը տօնեն:

Հոս Քարիտանէի գերեզմանը նորէն դառնալով, զԼիւդիա նոյն գերեզմանատեղին բերողը՝ թող տուած գացած էր, որ պատարագէն վերջը ըլլալու ժողովքին ներկայ գտնուի: Աս ժողովքը անոր համար երեւելի կը հանդիսանար, որովհետեւ Սովտերոս Քահանայապետն ալ իբրեւ քաջ Հովիւ իր վտանգի մէջ ըլլող ոչխարներուն մէջ կը գտնուէր, որուն միայն երեւոյթը ամենուն ալ հաստատութեան խրատ մըն էր: Եկեղեցական պատմութիւնը աս Ս. Քահանայապետը առանձինն իր բարերարութեան ու հայրական գործովն համար կը գովէ. մանաւանդ անոր մարդա-

մօտի հաճոյակատար բնութիւնը: Իր խնամոտ հոգաբարձութիւնը չէ թէ միայն Հռոմայ վրայ կը ցուցընէր, այլ նոյն իսկ Եկեղեցւոյ ամէն մասին վրայ: Նոյն իսկ Գիտնիսիոս հայրապետը, զորն որ մենք վերը յիշատակեցինք, անոր Կորնթոսի համար ցուցուցած աւատածեռն բարերարութիւնը շնորհակալութեամբ կը յիշատակէ:

Լիւդիայի ուրախութիւնը կրկին եղաւ աս սուրբ քահանայապետին վրայ՝ Յունաստանի մէջ տրուած գովեստներն աչքով հոն ալ տեսնելով: Ժողովքի մէջ մարդ չէր ըլլար որ իր խօսքերէն նոր քաջալերութիւն ու նոր զօրութիւն չգտնուէր. թէ եւ մէջերնին չկար այնպիսի հոգի մը, որն որ եռանդէն նուազած ըլլար, ամէն մարդ աստուածային սիրով հարուստ ու ճոխ էր: Ամենուն վրայ մի սիրտ ու մի հոգի կ'երեւար, եւ եթէ երբեմն արտաքին իշխանութենէ սպառնացուած գանուէին, մի եւ նոյն յոյսը ամէն կերպ վտանգը ոչինչ ու աննշանական կ'երեւցընէր: Եւ թէ այն հեթանոս պատմագրաց վրանին դրած ամէն զրպարտութիւններն անհիմն էին, արդէն յայտնի կը տեսնուի, Պլինիոս կրտսերին աւ Տրայանոս կայսր ուղղած նամակէ մը: Ասոր մէջ ուրիշ խօսքերէ զատ, աս ալ կ'ըսէ Պլինիոս որ «Քրիստոնեայք կ'ապահովցընեն զմեզ՝ որ իրենց մի միայն յանցանքը կամ մոլորութիւնը ուրիշ բան չէ, բայց եթէ որոշեալ օրեր, դեռ արեւը չելած, միատեղ կը ժողվին ի պատիւ Քրիստոսի իբրեւ Աստուծոյ, փոխն ի փոխ երգ մը երգելու համար: Անկէ ետքը իրարու կը խոստանան, չէ թէ ամպարիշտ գործք մը ընելու, հապա չգողնալու, չյափշտակելու ու չշնալու, ասանկ ալ խօսքերնին բռնելու եւ իրենց աւանդուած բաները չուրանալու»:

Ժողովքը լուծաւ, հաւատացեալք սկսան քաղաք գառնալ: Իսկ քահանայապետը դեռ հոն մնաց, որպէս զի տրուած տուրքերը կարգի դնէ: Լիւդիա աս միջոցիս աս Ս. Հօր մօտեցաւ, անոր առջին ծրնկան վրայ եկաւ ու իր մօրը ցուցուցած մարդասիրութեան վրայ շնորհակալ եղաւ: Լիւդիա քիչ մը յա-

ուաջ իմացած էր, որ Սովտեր Սրբոյն Պօղիկարպոսի բարեկամն էր, եւ թէ աս բարեկամութենէն էր՝ որ քարիտանէին, որն որ Պօղիկարպոսի հոգեւոր գուստրն էր, գերեզման մը կանգնել տուած է: Սիրալիր քահանայապետը սկսաւ զինքը խրատել որ մօրը առաքինութիւններուն հետեւի, եւ Աստուածորդւոյն հաւատոյ խոստովանութեան մէջ հաստատութեամբ մինչեւ ցվախճան յարատեւէ:

Ի իւրիա հոն՝ Ս. Անիկետիոսի եւ ուրիշ շատ քահանայապետաց գերեզմաններուն այցելութիւն ընելէն ետքը, իրեն ընկերացող խաթուններուն հետ աս ստորերկրեայ գերեզմանատան գուռը հասաւ ու անկէ Ապպեան ճամբուն վրայ ելաւ:

Գ Լ Ո Ւ Խ Ի Ա .

Առանձնութիւն ու նուիրական տեղերը :

Բարեպաշտ կնկան մը քով Լիւրիա՝ առանձին խուց մը քաշուած, աս վերջի ատեններս գլխէն անցած դէպքերուն պատճառաւ, խորունկ մտածութիւններու մէջ ընկղմած կ'ապրէր: Առանձնութեան սէրը՝ խորհրդածու եւ ինքն իրեն տէր բնութիւն ունեցող մարդու միշտ նշանակ մըն է: Որչափ որ ալ Հռոմ՝ քաղաքը մեծ ըլլար, որ նոյն ատեն իրօք մէկ միլիոնի չափ մարդ ունէր, իր հոյակապ պալատներովն ու տաճարներով, հրապարակական բաղնիքներովն ու զօսանաց պարտէզներով զարդարուած էր*, ի վերայ այսր ամենայնի ամէն բանէն յառաջ ինքը զինքը անոնց խոստացած վայելմունքներէն առջի բերան բոլորովին ետ քաշեց, որպէս զի իր մտադրութիւնը բոլորովին Աստուծոյ տեսչութեանը զօհէ, որն որ գլխաւորաբար աս ետքի ատենները իր վրան յայտնի երեւցած

* Արեւիոսին ժամանակը Հռոմի շրջապատը ամէն ժամանակէն աւելի ընդարձակ էր, գրեթէ մէկ միլիոն բնակիչ ունէր, քաղքին շրջապատը 4 Գերմանական մղոն էր: Հռոմ 400 մեհեան, 37 մեծ դռներ, 215 մեծ փողոցներ, 36 յաղթական կամարներ, 12—18 հրապարակական բաղնիքներ, 20 ջրանցքներ, 50 մեծայաղթ արձաններ, 11 հրապարակական ատեաններ ու 14 շատուաններ ունէր:

էր: Շատոնցուրնէ ի վեր իրեն սովորութիւն մը ըրած էր, քանի Տեղ որ իր առանձնական կենացը մէջ երեւելի դիպուած մը կը պատահէր, նոյն դէպքին բուն պատճառը Աստուծոյ վրայ կը փնտռէր: Իր մանկութեանը ժամանակ երջանիկ անցուցած օրերուն քաղցր յիշատակը մտքին առջեւէն ստուերակերպ պատկերներու պէս կ'անցնէին: Նոյն ժամանակը մըտքին մէջ կը նկարէր՝ որ ինչպէս իբրեւ կայտառ մանուկ՝ մօրը գիրկը հանգչած, երկնից ազրուորութեանը վրայօք պատմութիւններ անոր բերնէն կը լսէր: Իր հօրը մահուան անկողնին քով անցուցած տխուր վայրկեանները կը մտածէր. եւ ինչպէս անոր տուած խրատներն իր մանկական սիրտը կը զգածէին, եւ անոր մահուրնէն ետքն ալ բարեպաշտ ու սրբակեաց մարդիկներէն քրիստոնէութեան հրահանգներուն մէջ կը վարժէր: Ս. Պողիկարպոսէն լսած խրատները, բարեպաշտ մօրմէն առած հրաժարականը, միշտ մտքին մէջ տեղի ունէին: Բայց աս ամէն բան ստուերի պէս անցան, եւ իր երակները շուտով կը նետէին, երբոր աչքը կապոյտ երկնից եթերը կը դարձընէր, եւ ան շքեղ յաղթանակը կը մտածէր, զորն որ հիմակ երկինքը նոյն երջանիկ հոգիները կը վայելէին: Արովհետեւ անոնց դասին մէջ նա եւ այնպիսի բարեխօսուհի մը աւելցած էր, որն որ զինքը երբեք պիտ'որ չմոռնար: Թէ որ իր հոգւոյն ջինջ հայելոյն պայծառութիւնը, փորձութեան շնչով մը նսեմանար, իր բարեխօսուհւոյն կը դիմէր, եւ միայն անոր մտածութիւնը ամուր վահան մը կ'ըլլար իր չարասէր յօժարութեանցը դիմացը: Այսպէս աւասիկ բարեպարիշտ մայրերը մահուանէ վերջն ալ իրենց վշտակիր զաւակաց վրայ բարեզգեսաց ազդեցութիւն մը կ'ունենան, այնպէս որ եթէ իրենց սիրտը չարութեան յօժարամտի, իրենց հանգուցեալ մօրը մտածութեամբը կը զսպուին:

Իր առջեւ նախնական կրթիչն՝ իր մայրն եղած էր, եւ անկէց ետքն ալ նոյն կրթութեան հոգին վրան շարունակեց: Իր մօրմէ ժառանգած առաքինութիւնները այնպիսի հարուստ կտակ մըն էր, որն որ բոլոր իր կեանքը պահպանելու համար բաւական էր:

Աստուած ան պատարագը՝ զորն որ աս գուստորը պիտ'որ ըներ, իր ազատութիւնը զոհելով, ընդունած էր, ինչու որ քարիտանէ՝ արդէն ազատութեան մէջ էր, երբոր Լիւզիա մայրը փնտուելու համար Հոռոմ հասաւ: Բայց իր նուէրքին արդիւնքը ասոր համար երբեք չնուազեցաւ, ինչու որ Աստուած կամաց կը նայի, եւ աս կամքը արդէն աս զոհը որոշած էր: Անոր համար ինքը ասկէ ետեւ իր բացարձակ ազատութիւնը՝ (որն որ ժամանակաւոր բարեաց մէջ ամենէն գերազանցն է, եւ որուն կորուստը ամէն մէկուն ալ գառն զգացում կը պատճառէ,) կրնար կատարելապէս վայելել: —

Քրիստոնէ մը՝ բնական է որ Հոռոմ եկած ատեն երեւելի Սրբոյ մը գերեզմանն ալ այցելութեան ելլէ, ու մեծարէ, «Դմ պղտիկութեանս, կ'ըսէ Ս. Յերոնիմոս, Հոռոմ սորված ժամանակս սովորութիւն մ'ունէի որ կիրակի օրերը, առաքելոց ու մարտիրոսաց գերեզմաններուն այցելութեան կ'երթայի, գլխաւորաբար անձաներն ու ստորերկրեայ տեղերը կ'երթայի, ուր տեղաց խոր տխրութիւնը վրաս բարեզգեաց սոսկում մը կը բերէր *»:

Հոռոմի տեսնելու տեղերէն մէկը գլխաւոր առաքելոց Պետրոսի ու Պօղոսի ոսկրոտիքը պահուած տեղն էր: Արդ աս երկու առաքեալները, ինչպէս Գրիգոր Բահանյապետը կը պատմէ, Գալատիոս ըսուած ստորերկրեայ տեղիքը թաղուած էին, Հոռոմէն երկու մղոնաքար հեռու: Քիչ մը ետքը Ս. Պետրոսի մարմինը վատիկանեան բլուրը բերուեցաւ, իսկ Պօղոս Առաքելոյնը՝ Ոստիայի ճամբուն վրայ:

Լիւզիա աս գլխաւոր առաքելոց այցելութիւն ընելու քաղցր պարտքը կատարելէն վերջը, ուսկից անչափ մարդիկ հեռաւոր ու մերձաւոր տեղանքներէն հոն գալով՝ հաւատքով զօրացած դարձած են, իր սիրական մօրը արիւն թափած տեղն ալ մէյ մը աչքէ անցընել ուզեց: Հոն երթալու ճամբայ ելան, Փեղիկիգաս՝ կապիտողեան Արամազդայ տաճարը իրենց ու-

* Յերոնիմ. Գլ. Խ. Եղեկիէլ:

ցուց, յատակը մոլթ բանտեր կային, ուր այնչափ քրիստոնեայք՝ որոնց մէջ Լիւդիայի մայրն ալ, իբրեւ գերուհի դրուած էր: Աս ծածուկ տեղերը կապիտողեան բլրին ժայռին մէջ փորուած էին, ու ինչպէս այսօրուան օրս ալ մարդ կրնայ տեսնել, ներսի խորունկ փապարներուն մէջ մտնելու համար մասնաւոր մուտք անգամ չկար, հապա դատապարտեալները տախտակներու վրայէն վար կ'ինջեցուէին: Աս ստորերկրեայ բանտերուն մէկուն մէջն էր Ս. Պետրոս ալ, ուր իր բանտապանը մկրտեց զարմանագործ զօրութեամբ՝ իբրեւ երկրորդ Մովսէս քարէ ջուր բղխեցընելով:

Հոռմէական կապիտողիոնի վրայ ինչ իրարունք հակ երեւոյթներ կը տեսնուէին. վերը Արամազդայ տաճարը ու բազմաթիւ փոքր մեհեաններ Հոռմի բազմաթիւ կուռքերովը. վարը, ինչպէս նոյն ատեն կը կարծուէր, նորընծայ քրիստոնէութեան շիրիմները, վերը՝ անդուսպ անձնասիրութեան վկաներ, անձնասիրութեան՝ որն որ ինչպէս Աւգոստինոս կ'ըսէ, մինչուկ մարդ աստուածացընելու հասաւ. վարը՝ աստուածային սիրոյ վկաներ, ան սիրոյ՝ որն որ մինչուկ ինք զինք ոչընչացընելու խոնարհեցաւ:

Կապիտողիոնէն քիչ մը հեռու հոռմէական ատենը կու գար: Եւ ո՞վ կրնայ մէկիկ մէկիկ նկարագրել ան փառաւոր պատերազմը, որն որ հոս մը զուած է, եւ ո՞վ կրնայ մէկիկ մէկիկ յանուանէ նշանակել զանոնք՝ որոնք որ իրենց մահուան վճիռը հոս ընդունեցան: Լիւդիա հոն հասածին պէս դէպ ի գետին ծռեցաւ, ու մարմարեայ տախտակները պագաւ, որոնցմով որ աս նշանաւոր տեղը սալայատակ եղած էր, որովհետեւ մօրը հոգին աս տեղէն դէպ ի երկինք ելած էր: Այրի կնիկը յառաջ անցաւ ու դատաւորին նոյն ատեն կայնած տեղը իրեն ցուցուց, Յուստինոսի կեցած տեղն, ու Քարիտանէի արիւն թափած գետինը ցուցուց: Երբոր Հոռուստիկոս տեսաւ, կ'ըսէր Փելիկիտաս, որ Քարիտանէ զոհել չուզեր, դատապարտեց որ ձաղկուի, ձաղկանք՝ անանկ պատիժ մըն է դձուտը, ըսաւ, որ մեզմէ բարձրագոյն մէկը մեզ-

մէ յառաջ կրած է: Ետքը Քարիտանէ իր չարչարակիցներուն քովը կեցաւ ու գլուխը խոնարհեցուցած անդադար կ'աղօթէր: Այնչափ ընկզմած էր, որ դիրքը չփոխեց երբոր Յուստինոսի գլուխը կտրուեցաւ ու ժողովուրդը հաճութեամբ ծափ կը զարնէր: Աերջապէս՝ երբոր կարգը իրեն եկաւ, յառաջ անցաւ, ու մինակ մէկ հարցման մը պատասխան տուաւ այսինքն թէ որո՞ն համար կը մեռնի, եւ թէ մահը իրեն այսչափ ախորժակա՞ն է՝ հարցման պատասխանը աս եղաւ, «Քրիստոսի վրայ ունեցած հաւատքիս համար, Քրիստոսի՝ որն որ իմ փրկիչս ու ամենայն ինչս է: Բարեկամի մը համար կրելը քաղցր է, իսկ Աստուծոյ համար մեռնիլը երկնային զմայլումն է»:

Լիւդիա աս միջոցիս լեցուած աչուըներով՝ վար գետնին վրայ կը նայէր: Ո՛րչափ արդեօք սիրով ինքն ալ գլուխը ան հատու սրին տակ կը բռնէր, մօրը հետ այն յաւիտենական հայրենիքը դառնալու համար: Աս մտածութիւններով ձգեց ելաւ նոյն տեղէն: Ասկից ետեւ Փեղկկիդաս զինք ներոնի ամփիթէատրոնը տարաւ, որն որ Վոլոտոն կ'ըսուի, ուր տեղ այնչափ անչափ մարտիրոսաց արիւններ նոյն գետնին վրայ առիւծներէն ու յովազներէն լափուեցան, եւ այնպիսի անգութ տեսարանին վրայ որչափ բազմութեան՝ գուցէ իննսուն հազար հանդիսատեսներուն հաճութեանց ձայներ հնչեցին:

Ասկէց ետքը գերեզման մը միայն մնաց տեսնելու արժանի, որն որ Լիւդիայի բարեպաշտ հետաքրքրութիւնը կրնար յագեցընել: Լիւդիայի ծնանելէն շուրջ քսան տարի յառաջ, Ումբրիայի գաւառին մէջ, երեւելի հարուստ այրի կնիկ մը կար Սաբինա անուամբ: Աս հեթանոս կնիկը ասորի գերուհի մը ունէր, որն որ մասնաւոր եռանդով մը աւետարանական վարդապետութեան հետ կապուած էր: Աս աղջիկը իր խաթունին առջին քրիստոնէական կրօնին գեղեցկութիւնը գովելէն չէր քաշուեր, եւ որովհետեւ իր այնպիսի մատաղ հասակին մէջ ալ նոյնին սքանչելի օրինակը վրան կը ցուցընէր. անոր համար խաթունին քրիստոնէութեան վրայ ունեցած ու լսած

նախապաշարումներուն բոլոր յաղթեց: Սաբինա սուրբ
հաւատքը ընդունեց, եւ իր առաքինութեան պայծա-
ռութեամբը Եկեղեցւոյ երկրորդ դարուն ամենէն լու-
սաւոր կէտերէն մէկն եղաւ: Նոյն ատենները Ադրի-
անոս կայսրը քրիստոնէից դէմ հալածում հանած
ժամանակ, Ումբրիա գաւառին կուսակալը աս նորա-
գարձ խաթունը իր Սերափիկէ գերուհւոյն հետ մէկ-
տեղ բռնել տուաւ: Աւերջինը այնչափ բրածեծ ըրաւ,
որ անոր փափուկ մարմինը ծեծին տակ մնաց: Իսկ
Սաբինա տարի մը ետքը մարտիրոսական մահուամբ իր
կեանքը լմընցուց: Աւենտինեան բլրին վրայ Սուլ-
պիկեան կամուրջին մօտ քանի մը դարերէն ետքը
երկուքին յիշատակին համար Ս. Սաբինա անուամբ
գեղեցիկ Եկեղեցի մը շինուեցաւ, որուն քով հիմակ
Գոմինիկեանց վանքը կայ քաղքին վրայ տիրող գե-
ղեցիկ տեսքովը: Աս Եկեղեցւոյն շինութիւնը Բ. Ե.
430ին կ'իյնայ:

Աս արեւելեան գերուհին իր խաթունին պատ-
ճառած դարձովը Լիւզիային հետ շատ նմանութիւն
ունենալով, Լիւզիայի յարգութիւնն ալ պէտք էր
որ մեծ ըլլար, նա եւ ուրիշ պատճառաւ մ'ալ: Յի-
շեալ ասորի վկայուհւոյն անունը Սերափիկէ էր ու
Լիւզիա ալ մկրտուած ատենը ճիշդ աս սրբին ա-
նունը առած էր: Անոր յիշատակովը սրաին մէջ ծանր
խորհրդածութիւններ ընելէն վերջը, չէ թէ միայն
ինքը զինքը անոր յանձնեց, այլ եւ նոյն իսկ իր դար-
ձուցած խաթունին հոգին ալ: Առաջագրութիւն գնե-
լով որ իբրեւ աղախին Տեառն հաստատութեամբ յա-
րատեւէ մինչուկ իր ետքի շունչը: Ասկէ ետքը նոյն
սուրբ ու նուիրական տեղիքը թող տուաւ: Այսպիսի
բինակաւ ամէն ժամանակ բարի մարդիկ այսպիսի ե-
րեւելի մեռեալներուն գերեզմաններէն իրենց նոր
կեանք առած են:

Գ Լ Ո Ի Խ Ի Ք .

Իրենէոս:

(177 Գ. Ե.)

Լիւդիա արդէն յառաջուրնէ իր հայրենիքը դառնալու ամէն նախապատրաստութիւնները տեսած էր. բայց դիպուածը անանկ բերաւ որ ան մէկն ալ տեսնէ, որուն երեսը ետքի անգամ Չմիւռնիոյ աւերակացը վրայ տեսած էր, այսինքն Իրենէոս քահանայն:

Վանի մը տարիներէ ի վեր ասիկա Լիոնի Պոթինոս ծերունի եպիսկոպոսին քովը՝ որն որ իրեն պէս Պողիկարպոսի աշակերտ էր, Գաղղիոյ հարաւային կողմերը քարոզութիւն կ'ընէր: Այսինքն Փոքր Ասիոյ քրիստոնէից մէկ մասը, Չմիւռնէ եւ փոքր Ասիայի ուրիշ տեղւանքը եղած հալածումէն ետքը, հարաւային Գաղղիա գաղթած էին, որոնց մէջէն մէկն ալ Իրենէոսն էր: Եւ այսպէս այնչափ իրարմէ հեռու գաւառներու մարդկանց մէջ ալ երթեւեկ մը բացուած էր: Որչափ ալ աս մատաղ բողոքը՝ քրիստոնէութեան նոր արտին վրայ ծաղկելու սկսած էր, ի վերայ այսր ամենայնի վերջի ատենները անանկ մը կ'երեւար որ ալ զարհուրելի մըրիկ մը ընդ միշտ զինքը բնաջինջ ընել կ'ուզէ: Թէպէտ եւ 177ին կայսերական հրովարտակը ելած էր՝ քրիստոնէից դիւրութիւն ընելու համար, ի վերայ այսր ամենայնի Հռոմայեցւոց պաշտօնեաներն ու Լիոնի եւ Վիէնայի ժողովուրդը հոնտեղաց քրիստոնէից դէմ անլուր անգթութիւններ կ'ընէին: Հռոմայեցւոց դատաստանական արգարութիւնը, (ինչպէս երեք առջի դարերուն եկեղեցական պատմութիւնը կը ցուցնէ,) շատ յողոգող անհաստատութեան մէջ էր, եւ տէրութեան ընդարձակածաւալ ըլլալուն պատճառաւ յայտնի է՝ որ ինչ կերպով կայսերական վճիռները գաւառաց մէջ, իւրաքանչիւր կուսակալաց որպիսութեան համեմատ, շատ կամ նուազ ճշդութեամբ ի գործ կը դրուէին: Գաւառապետի մը դիրքը քիչ շատ ժողովուրդեան հաճութենէն կախում ունէր, եւ արդէն յայտնի բան

է որ ինչպէս ժողովուրդը սաստիկ կիրքով մը արիւնոուշտ խաղեր տեսնել կը ցանկար, ու իրենց գոչման ու աղաղակի ձայնը՝ այս առակ եղած խօսքն էր. «Հաց ու կրկէսի խաղեր», * : Հոռմ պատերազմի ատեն՝ իր սուրը իր թշնամեաց արեան մէջ կը թաթխէր, կ'ըսէ նոր հեղինակ մը, իսկ խաղազուծեան ատեն՝ իր սեպհական քաղաքացիներուն արեանը, այսինքն երբոր սուսերամարտիկ խաղերը կը կատարէր, ու քրիստոնեաները կը հալածէր:

Ա,ա եւ աս ալ անտարակուսելի է, որ արգէն Գաղղիայի մէջ քրիստոնեայ հասարակութիւններ կային. բայց Մարկոս Արեղիոսի կառավարութենէ յառաջ Գաղղիայի հողին վրայ մարտիրոսի արիւն երբեք թափուած չէր: Նոր հաւատոյ լոյսը բերողները՝ Պոթինոս ու Իրենէոս եղան: Գաղղիոյ աս երկու մեծ առաքեալները՝ հաւատքը Ասիայէն տարին, ուր որ իրենք նոյնը Պողիկարպոսէն, եւ որովհետեւ Պողիկարպոս ալ Յովհաննու աշկերտ էր, կրնանք ըսել որ առաքեալներէն ընդունած էին: Ս. Պոթինոսի գործունէութեան ժամանակը՝ գրեթէ միշտ խաղաղութիւն ու հանդարտութիւն էր, եւ արգէն իննսուն տարւան ծեր մըն էր, երբոր հալածումը սկսաւ:

Օմիւռնական եկեղեցւոյն վկայաբանութենէն զատ, որուն մէջ Պողիկարպոսի ու անոր ընկերացը մահուան վրայ կը խօսուի՝ քրիստոնէութեան հնութեան վերաբերեալ չկայ ուրիշ այնչափ նշանաւոր յիշատակարան մը, ինչպէս այն երեւելի գրուածքը, որուն մէջ Լիոնի ու Վիէնայի եկեղեցին, աս հալածման վրայօք Փոքր Ասիայի եկեղեցեաց տեղեկութիւն կու տայ: Նոյն վկայաբանութեան հեղինակը կը կարծուի որ Իրենէոսն եղած ըլլայ, եւ թէ ինքը նոյն տարւոյն մէջ, որ հալածումը պատահեցաւ (177 Ք. Ե.) Հոռմ խրկուած ըլլայ՝ որ եղածներուն վրայ Ս. Քահանայապետին աւելի մանրամասն տեղեկութիւններ տայ: Սովտէր արգէն վախճանած՝ ու անոր տեղը Եղեւթերոսն անցած էր:

Առջի դարերուն մէջ սովորութիւն էր՝ մարտի-

* Panem et circenses.

րոսաց վկայաբանութիւնները հաւատացելոց առջին շինութեան համար՝ քրիստոնէից ժողովատեղւոյն մէջ կարդալը: Իրենէոս իր աշքովը տեսածները, Հռոմ հասնելէն ետքը հոնտեղաց հաւատացելոց հաղորդել ուզեց: Թէ որ օր 48 մարտիրոսաց մարմիններուն վրայ դամբանական ճառը պիտ'որ խօսէր, ամենուն ծանօթ էր, եւ սրբուհւոյն Պրաքսետեայ եկեղեցին, որն որ առջի քրիստոնէից ապաստանարանն ու աղօթատեղին էր, որուն յատակը 3300 մարտիրոսաց մարմինները թաղուած էին*, աս նպատակիս համար սահմանուած էր:

Եւ իւրիա ալ հոն գնաց, Պողիկարպոսի ծանրագին յիշատակը հեան առնելու չմոռցաւ, այսինքն գօտին, զորն որ ձեռք ձգելու համար տասնումէկ տարի յառաջ իր ազատութիւնը կորսընցուց: Սրտաթունդ կ'անցնէր Փլորայի Թէաֆոնին առջեւէն, թէպէտ եւ չէր գիտեր այն անգութ տեսարանները, որոնք որ ան պատերուն մէջ շատ անգամ նոյն իսկ անամօթ ճակատները ամօթով կը կարմրցընէր, եւ վերջապէս հասաւ աղօթատեղւոյն դռանը առջին: Ինչչափ իրենէոսը փոխուած էր: Սրտի դառնութիւնը, մտմտուկն ու հոգը իր երեսը խորշոմեցուցած էին, ու իր գագաթը ճերմըկցած էր, թէ եւ հասակն առած մարդ չէր:

Եւ իր ատենախօսութիւնը սկսելով, “Աս ետքի օրերը, մեր գլուխը եկած նեղութիւններն ու վշտերը նկարագրելը, ըսաւ իրենէոս, պարապ աշխատութիւն մըն է: Լիոնի քրիստոնէից բնաջինջ կոտորած եղաւ: Տներէն դուրս վըրնտելէն ետքը, կապոյտ երկինքը իրենց յարկ տրուեցաւ . . . : Մէջերնէս մէկը ժողովուրեան կոյր կատաղութեանը զոհ որ ըլլար, ոստիկանութեան մէջէն մէկը չէր գտնուեր որ անոր արդար գանգատանացը ականջ կախէր: Մանաւանդ թէ նոյն իսկ տէրութեան պաշտօնատէրներն էին քրիստոնեաները հրապարակ քաշկըռտողները, ու իրենց հաւատքին վրայ հարցում ընելէն ետքը, առանց ուրիշ բանի մը սպասելու բանա նետողները: Ասանկ

* Տես Տ. Կովին “Երեք Հռոմներ”, գիրքը. Հ. Ա. Ե. 333:

չարաչար վարմանց համար օր մը սինկղիստիկոսին մէկը սաստիկ զայրացած հրաման ուղեց, որ իբրև քրիստոնէից փաստաբան ատենին մէջ խօսի: Զորն որ ըրաւ ալ այնպիսի կենդանի ու վառվռուն կերպով, ինչպէս որ իր արդարութեան զգածումը ու երիտասարդութեան հասակը ազդել կու տար. ազացոյցեր յառաջ բերաւ որոնցմով քրիստոնէից վրայ դրուած բեռը անիրաւ ցուցուց. բայց ժողովուրդը ատենախօսին ձայնը մոմուացող աղաղակով ընդհատեց. բանը այնչափի հասաւ որ կայսեր կուսակալը որ ատեանը նստած էր, իրեն հարցում ընելու ստիպուեցաւ որ արդեօք ինքն ալ քրիստոնեայ է: Աետտիոս էր անոր անունը, եւ երբոր նոյն հարցման դրական պատասխան տուաւ, կուսակալը նշան տուածին պէս բռնուեցաւ ու կալանաւոր քրիստոնէից քով տարուեցաւ: Եւ ասով յայտնապէս դատաստանական հալածումը սկսաւ :

Մայիս ամսոյն մէկ մասը աս կերպով անցաւ: Բայց նոյն ամսոյն վերջը աւելի տխուր պիտ'որ ըլլայ եղեր:

Թողէք որ ծերու մը մահն ալ հոս պատմեմ, որն որ իր մեծ վարպետին՝ Պողիկարպոսին յոյսերը լիով ի գործ դրած էր, եւ ինչպէս ի կենդանութեան՝ այսպէս մահուան ատենն ալ անոր ճամբէն գնաց, այսինքն մեր սիրելի Պոթինոս Վիոնի եպիսկոպոսը: Արչափ ալ ինքը զինքը տկար կը զգար, ի վերայ այսր ամենայնի ետքի դէպքերը ուրիշ նոր եւ գրեթէ երիտասարդական կեանք մը տուին անոր անդամներուն, որպէս զի մեզի այնպիսի զարմանագործ օրինակ մը թողու: Քաղաքատար աս յարգելի անձը զինեալ զօրութեամբ անէն դուրս հանել տուաւ, եւ ժողովրդեան բազմութիւնը, տղաք ու ծեր մարդիկ, պոռալով պուշրտալով ու հայհոյելով առին բերին: Կուսակալը երբոր ասոր հարցուց որ քրիստոնէից աստուածը ո՞վ է, պատասխանեց Պոթինոս. Ա'իմանաս թէ որ արժանի ես. ծառային մէկը յանկարծ ապտակ զարկաւ երեսին, հեռու կեցողները վրան քար նետելու ու հահոյելու սկսան, ուրիշներն ալ ասդին

անդին քաշկուտեցին, այնպէս որ կրնար արդէն նոյն ատեն անմիջապէս իր կենաց փոքրիկ կայծը մարիլ: Կուսակալը տեսնելով որ ժողովուրդը դառնացած է, ու դատաւորի պաշտօնը ինք իրմէ կատարելու կը յանդգնի, Եպիսկոպոսը մէկդի տանել տուաւ ու բանտարկեց: Մենք տեսանք զինքը վերջի անգամ: Իր արիւնոտ շրթունքները մեր երեսներուն վրայ դրոշմեց ու մեր ճակատները մարտիրոսութեան ծիրանի նշանովը ներկեց: Բայց ախ, երկու օր ետքը, Յունիսի Չին, Ղիոն քաղաքը իր Եպիսկոպոսը, Եկեղեցին իր երեւելի սիւներէն մէկը կորսընցուց, :

Ըս խօսքերով ատենախօսը հասկըցընել կ'ուզէր ան կորուստը, որն որ ինք ունեցաւ, իր հայրենի բարեկամին կորուստովը: Իր ունկնդիրներուն ամէնքը իրեն իրաւացի տրտմութեանը մասնակից եղան, ու հեծութեան ձայնը ժողովոյն մէջ լսելի կ'ըլլար:

“Այսպէս վերջացաւ մեր հալածումը, քառասունեւութը խոստովանող վկաներ աս կերպով կեանքերնին զոհեցին: Սպանուածներուն մարմինը շներուն առջին նետեցին, ետքը այրեցին, ու մոխիրնին Ռոն գետը ցրուեցին: Տեսնանք, կ'ըսէին հեթանոսները, արդեօք իրենց աստուածը ասոնք նորէն կ'արժընցընէ: — Թէ որ մեր աշուրները, “ըսաւ Իրենէոս լմընցընելով իր խօսքը, մէյ մը երկինք վերցընենք, այն կապոյտ երկընքին կամարը, որն որ զմեզ մեր երանելի եղբարցմէ կը բաժնէ, անոնց ամէն մէկուն գլխին յաղթութեան պայծառ պսակը կը տեսնենք: Արովհետեւ քանի հեղ որ հալածում մը կ'ելլէ, երկընքին դռները կը բացուին, ու դափնեայ փառաւոր պսակները քաջամարտիկ նահատակներուն գլուխը կ'իջնան, : — —

Թէ որ մեր կեանքն ալ նոյն նշանաւոր ատենը իյնար, մենք ալ նոյն անպատմելի տպաւորութեան մասնակից կ'ըլլայինք, որն որ ասանկ վկայաբանութեան պատմութիւն մը ունկնդիրներուն վրայ յառաջ բերաւ: Ժողովականաց ամէն մէկը իր ապագային վրայ կը մտածէր ու ծնկան վրայ գալով, մարտիրոսները կ'աղաչէին՝ որ իրենց համար զօրութիւն

ընդունին, թէ որ իրենց ալ անանկ վտանգ մը վրայ
հասնի: Բայց Աստուած բանը պնայէս դարձուց որ
նոյն յիշեալ հալածումը երկայն ատեն վերջինը ե-
ղաւ: Աս խօսքին վրայ ամէն մարդ սաստիկ զգաց-
մամբ շարժած, լուսթեամբ ու խորհրդածութեամբ
սրբուհւոյն Պրաքսիդեայ եկեղեցիէն ետեւէ ետեւ
դուրս ելան: Իսկ Լիւդիա կը սպասէր՝ որ իրենէն
մատրան սեամբը կոխէ: Այնչափ տարիներ անցած
էին, յորմէ հետէ իրենէն զԼիւդիա իր նոր մար-
տիրոսութեամբ վախճանած վարդապետին գօտուփը
կապուած՝ Զմիւռնիոյ մէջ տեսած էր: Լիւդիա աս մե-
ծագին նշխարը, Պողիկարպոսի գօտին հետն ունէր, ու
գրեթէ գուշակելով, որ իրենէն ալ իրեն վարդապե-
տին պէս պիտ'որ մեռնի, աս յիշատակէն ինք զինք զրկեց,
որպէս զի նոյնը անոր պարգեւէ, որն որ իր ձիրքովն
ու առաքինութեամբը եկեղեցւոյ մէջ ասչափ երեւելի
եղած էր*: Իրենէն աս առջի բերան զինքը չճանչցաւ.
բայց անոր կերպարանքը ծանօթ կ'երեւար, միայն
միտքը չէր կրնար բերել: Քիչ մը մտածելէն ետեւ,
հա ասի Պողիկարպոսի աշակերտուհիներէն մէկն է.
որուն որ ես Զմիւռնիոյ աւերակաց վրայ ետքի անգամ
հանդիպեցայ, ըսաւ: Լիւդիա լուց: Անոր տեղ Փելե-
կիտաս խօսեցաւ, որն որ անոր քովը կեցած էր ու
համառօտիւ անոր գլխէն անցածը պատմեց: Քիչ մը
ետքը հոգի առաւ Լիւդիա ու սկսաւ խօսիլ. «Արժանի
աշակերտ մեր մեծ Եպիսկոպոսին, կրնամ արդեօք
յանդգնիլ քեզի զմիւռնական յիշատակ մը նուիրելու:
Աւասիկ ան գօտին որ Պողիկարպոս փայտակուտին
վրայ չեղած գետինը ձգած էր: Իր աշակերտաց մէջ
առաջին ըլլողին կ'իյնայ ասիկա, թէ որ քեզի վերջի
ժամն ալ հասնի, թող իմ հայրենեացս պաշտպանը
զքեզ իր հովանաւորութեամբը խնամարկէ»:

Իրենէն աս առաւ նոյն պարգեւը, լուսթեամբ
չթուներն բերուն տարաւ ու պատասխանեց «Եղիայի
աշակերտը իր վարպետին թիկնոցը առած ատենը բաղ-
ձաց՝ որ անոր հոգին կրկին իր վրան իջնայ»:

* Ա. Իրենէն ետքը Լիւն մարտիրոսական մահուամբ
վախճանեցաւ:

Գ Լ Ո Ւ Խ Ի Գ .

Անկարող զինուոր մը :

Փեղիկիտասին տունը մեծ շիոթութեան մէջ էր : Արեւելքէ եկող ազատ գերուհին, որ աս խաթունին տունը իջած էր, ամենուն սիրելի ըլլալով, հիմակ նորէն իր Աթենք դառնալու միտքը ամենուն սրտին մեծ տրտմութիւն պատճառեց : Աս քրիստոնեայ Տիկինն իր հիւրուհւոյն հետ կապուած էր թէ աս աշխարհքիս վտանգներովը եւ թէ անդիի աշխարհքին յոյսերովը :

Շաղիւ թէ ետքի բարեմաղթութիւններն ու իղձերը իրարու կու տային կ'առնուին, ու Լիւդիա տուփը ան մեծ մարգարտով մէկտեղ առջեւը դրած էր, վասն զի ան ժամանակուան բարեպաշտ սովորութեան համեմատ իր ճամբորդութիւնը իր Աստուծոյն ընկերութեամբը կ'ուզէր ընել, մէկէն դուռը զարնուեցաւ, վարը պռոտախօս մարդու մը ձայն կը լսուէր : Այրահան կուրծքի մը ձայն էր, կը հարցընէր թէ Աթենքէն եկող աղջիկը դեռ հոն է, թէ արդէն դէպ ի Յունաստան ճամբայ ելած է :

Ո՛հ, փանք Աստուծոյ, հոս է եղեր, բարեւ, հարուստ մեծատուն Մետեղղային քով ծառայող աղախինը կ'ուզէի մէյ մը տեսնել, խօսք մը ունիմ անոր ըսելու :

Մարդուն՝ այն անախորժ կերպով ներս մտնելուն ու իրեն մօտենալուն եղանակը, կերպարանքին նկարագիրը, Լիւդիան շիոթեց : Քայց իրեն կ'երեւար որ նոյն խեղ ու փաթթած թելը, ուրիշ հեղ մ'ալ տեսած է, քրիստոնէից աղօթատեղոյն մէջ :

«Ըն ազատ թող տրուած գերուհին դձեք էք, հարցուց, աթենացի Տիկնոջ մը քով ծառայողը. աս Տիկինը Ղուկիոս անուամբ որդի մը ունէր, կը ճանչնամ, դեռ ծաղկափրթիթ հասակի մէջ Մարկոմանաց պատերազմին մէջ ինկաւ. » :

Լիւդիա Փեղիկիտաս խաթունին պլայլած աչքով մը դարձաւ նայեցաւ, որն որ յունարէն աս

խօսքերը կ'ըսէր իրեն. «Հոգ մի ըներ, ան մարդը քրիստոնեայ է, ձեռքը քիչ մը բան կու տանք, գոհ կ'ըլլայ»:

«Չէ չէ, ըսաւ մարդը ծիծաղելով, անանկ բան չըլլար, ես Տիմոթէոսի բաղնիքներուն տեսուչն եմ ու անկարող զինուոր, որն որ կայսեր ու քանի մը լաւ անձանց նպաստովը ապրուստս կը ճարեմ: Աս թեւս այսպէս Մարկոմաններէն վերաւորուած է, անանկ որ ուրիշ պատերազմներու համար անկարող եղայ»:

«Ղանչցա՛ր գուցէ Մետեղլային որդին», արտոր- նօք հարցուց Լիւզիան, որովհետեւ անմիջապէս միտքը եկաւ, որ աս մարդը կրնայ Ղուկիոսի վրայ քանի մը բան գիտնալ: «Անշուշտ, ըսաւ անկարող զինուորը, Ղուկիոսը կը ճանչնայի, ու ասոր համար է, որ հոս եկած եմ. աիսո՛ս որ անանկ հասակի մը մէջ վա- ղամեռիկ եղաւ»:

Փեղիկիտաս կը կարծէր, որ աս աղքատ մարդը Ղուկիոսի զինուորակցութեան պատճառանօք՝ ողոր- մութիւն առնելու համար եկած է, խօսքը կարճ լմնցընելու համար, «բարի՛ մարդ, ըսաւ իրեն, կ'երեւայ որ շատ աղքատ ես, ու Մետեղլային աս ազատ թո- ղուած գերիէն ողորմութիւն կը փնտռես»:

«Ոչ երբեք, ըսաւ, միտքս ան չէ, թէ եւ աղ- քատ եմ, բայց գոհ կ'ապրիմ, եւ ասով միայն ինքը զինքս կը մսիթարեմ որ աշխարհքիս Տէրն ալ աղ- քատներէն մէկն էր, քանի որ երկրիս վրայ էր»:

«Դուն քրիստոնեայ ես», ըսաւ Լիւզիա:

«Նապա՛, ու նա եւ ան քրիստոնեաներէն եմ, որոնք շանթաճիգ գնդին մէջ պատերազմեցան, ու ա- նոր համար ալ արտօնութիւն ունին, որ իրենց կրօնը հրապարակաւ դաւանին, ու մէկը կարող չըլլայ ի- րենց դպչիլ»:

«Դուն Ղուկիոսին հետ ստէպ կը տեսնուէիր»:

«Նարկաւ, պատասխանեց, որովհետեւ մի եւ նոյն լէգէոնի մէջն էինք, եւ մի եւ նոյն զօրավարի տակ, չենք կրնար ան տղուն կտրիճութիւններն, ա- ռաքինութեան ու զինուց պատուոյն համար ցուցու-

ցած եռանդը մոռնալ: Կարծես թէ միշտ աչքիս առջեւն է դեռ յաղթութենէն վերջը, փրփրացող ձիունք վրայ նստած, Գերմանացւոց սառնապատ պատերազմական դաշտին վրայ վազելը, այնպէս քաջասրտութեամբ մը, որ կարծես թէ սիրտը զրահին պատեաններէն դուրս պիտ'որ ելլեր: Աս միջոցիս չեմ գիտեր ինչպէս ծածուկ տեղաց մը իր ձիուն վրայ փքին մը եկաւ, ուրիշ մ'ալ զինքը վիրաւորեց, մենք մէկէն աճապարեցինք վրան հասանք. Կուռնեղիոս անուամբ տասնապետ մը ունէինք, որուն հետ աս կտրիճ երիտասարդը արտաքոյ կարգի կապուած էր, եւ ասոր հետ յաճախ իր ձմերուան պահակատունը մէկտեղ կու գային, քրիստոնէութեան ճշմարտութիւններուն վրայօք շատ շատ հարցումներ կ'ընէր, ու անկից տեղեկութիւններ կ'առնուր: Այն ինչ ըսեմ ան կտրիճ երիտասարդին, քանի անգամ մեզի յանձնած էր, որ եթէ վիրաւորուի, մէկէն զինքը մկրտեն, որովհետեւ ինք աս խորհուրդը ընդունելու համար ինքը զինքը բաւական կրթուած կը սեպէր,:

Վիգիային մտադրութիւնը երթալով կը շատնար, կամացուկ մը սրտէն հառաչեց, կարծես թէ կ'ուզէր հիմակ ալ աղօթել որ Ղուկիոս մկրտուի, ինչպէս որ յառաջ շատ անգամ ըրած էր: «Յառաջ տար պատմութիւնդ, ըսաւ, երկնից հրեշտակի մը պէս կը խօսիս,»:

«Ի՛նչ ինչ օգուտ որ անոր կեանքը կարճատեւ եղաւ: Ան հարուածը մեր կարծածէն աւելի շուտով զինքը մեռցուց: Փքինը դուրս հանեցինք, վէրքը լուացինք, արիւն վազելու սկսաւ, ասոր վրայ քունէն արթընցածի մը պէս եղաւ պատանին: Կէս բացուած աչուրներովը մեզի նշան տուաւ, բան մը կ'ուզէր հասկըցնել, երկայն ատեն ջանացի, չկրցայ բան մը քովէ քով դնել հասկընալ. ու շիտթութեամբ անոր վերջի կամքը մոռցած էի, վերջապէս ընկերներէս մէկը ինձի իմացուց որ Ս. Մկրտութիւն կ'ուզէ,»:

Մօտ տեղը ջրհոր մը կար, մէկէն վազեցի սաղաւարտս ջրով լեցուն բերի, հոգեվարը իր զօրու-

Թիւնները միատեղ ամփոփած, շատ մեծ ճգամբ աս խօսքերը՝ լսելու չափ՝ զրուցել սկսաւ. «Ար հաւատամ ի Յիսուս Քրիստոս, յՌդին Աստուծոյ, ախ մկրտեցէք զիս անոր անուամբը,» : Սիրտս ելաւ, յանուն երրորդութեան սկսայ մկրտել. քաղցր ժպիտ մը ըրաւ, գլուխը մէկդի քաշեց կրթընեցաւ, սկսաւ մրափել : Հեղ մ'ալ շրթունքները շարժեցան, մէջերնէս մէկը ականջը անոր դէպ ի բերնին երկընցուց ու իր խօսքը լսեց, որն որ մօրը համար ողջոյն մին էր :

Այլ որովհետեւ շատ չէ, լսեցի որ Աթենքէն ազատ թողուած քրիստոնէ գերուհի մը հոս եկած է, զձեզ փնտուել ուզեցի, որ ձեզի աղաչեմ՝ որ ան բարի ու կտրիճ տղուն վերջի յանձնարարութիւնը անոր մօրը հասցընէք, :

Աս միջոցիս զինուորին հին ցաւերը կարծես թէ նորոգուեցան, իր նիզակակցին յիշատակը, որուն մինչուկ երկնից սեամբը ընկերացած էր, անոր մշտնջենաւոր հրատարական մը տալու համար, ցաւով սիրտը կը լեցընէր : «Բարերար Աստուած, կը կանչէր Լիւզիա, ուրեմն Մետեղղային զաւակը իբրեւ քրիստոնեայ մեռած է,» ու թրջած աչուրներէն պայծառ բոցեր կը ցայտէին :

«Այո, պատմէ ասոնք իր մօրը՝ որ այնպիսի քաջ ու կտրիճ որդի մը ունեցած է, որն որ բոլոր լեզէոնին սիրելին եղած էր. — եւ զրուցէ իրեն որ նոյն որդին իբրեւ Փրկչին աշակերտ մեռած է,» :

Ան ատեն Լիւզիա ալ անոր հաղորդեց, որ Մետեղղա ալ դարձած քրիստոնեայ եղած է, որն որ անշուշտ իր սիրական տղուն արգիւնքն է, որով աստուածային նախախնամութիւնը բոլոր աշխարհքիս ու անոր որդւոցը վրայ կ'երեւայ :

Ասկից վերջը արի զինուորը ճամբորդին յաջողութիւն մաղթելէն վերջը, հեռանալ ուզեց, Լիւզիա մտածեց որ այսպիսի աւետարեր լուր մը մատուցողին համար, խաթունին կողմանէ պարգեւ մը կը վսյլէ, պարանոցէն կախած ոսկի տուփը հանեց, զորն որ Մետեղղա ճամբայ ելած ատեն պարգեւ տուած էր, ծանրագին մեծ մարգարիտը քակեց, հանեց մէ-

ջէն, ու քրիստոնեայ Տիկնոջ անուամբը նոյնը անոր պարգեւ տուաւ: Բայց զինուորը ետ կեցաւ, առնուլ չէր ուզեր, մեռնող զինուորակցի մը այնպիսի ծառայութիւն մը ընել պարտքս էր, ըսաւ, ասոր համար վարձք չեմ ուզեր ընդունիլ: Բայց երբոր լսեց որ անոր մայրը Մետեղլա, Աթէնքէն պէտք է որ փոխարէն բան մը խրկէ, թէ որ անի չընդունի, դողդոջուն ձեռուրներով պարգեւը ընդունեց, իբրեւ անձնական ստացուած մը:

Աիւզիա այսպիսի անակնկալ ուրախալի լուրի մը վրայ սթափելով, զինուորին երթալէն ետքը, քիչ մը ինքն իրեն եկաւ, սկսաւ մտմտալ որ արդեօք անանկ շուտով ու մեկանց լսածները երա՞զ էին, թէ ճշմարտութիւն: Սկսաւ երեւակայել որ ի՞նչպիսի ուրախութիւն պիտ'որ պատճառէ իր Տիկնոջը, թէ որ այս ամենայն լրերուն աւետիքը անոր տանի: Եւ թէ որ իր ճամբորդութիւնը արդէն նոյն օրուան համար որոշած չըլլար, հարկ պիտ'որ ըլլար, որ իր կամացը զօրութիւնը գործածէ, ժամ մը յառաջ Աթէնք երթալու անհամբերութիւնը զսպելու համար: Տիրերիսի նաւահանգիստը աճապարեց որ նաւ մտնէ: Արդէն ան ետքի առած լրերը, Աիւզիային Փելիկիտասէն զատուիլը դիւրընցուցին: Իրարու խօսք տուին իրենց փոխադարձ սիրոյն կապը անբակ պահելու, եւ թէ որ երկրիս վրայ մէյ մ'ալ իրար չտեսնեն, իրարու մաղթեցին՝ որ լաւագոյն հայրենեաց մը մէջ, երջանկութեամբ իրար տեսնեն:

Արդ դուն ալ բարեաւ մնա՛, սիրելի՛ Հռոմս, քու յիշատակդ անջնջելի է ան ամենուն սրտին մէջ, որոնք քու պարիսպներուդ մէջ հանգչած՝ քու սուրբերուդ շիրիմներուն վրայ աղօթած են:

Գ Լ Ո Ւ Խ Ի Գ .

Գարձ ու նորէն տեսութիւն :

Հին ատենները ամենէն աւելի սիրուած նաևու տեսակ մը, որն որ միանգամայն շատ գործածական էր, Կորկիւրա կղզիէն յառաջ եկած ըլլալուն համար Յոյները Կերկիւրա կ'անուանէին: Ասանկ վաճառականի նաև մը իր առջևի դին Յուշկապարիկ մը, ու կայմին ճոթը երկայնաձեւ կողով մը կ'ունենար: Աս կերպ նաև մը Ոստիա նաևահանգստին բերանը ճամբայ ելլելու մեծ պատրաստութեան մէջ էր: Հարուստ հռոմայեցի ընտանիքներէ ալ իբրև ճամբորդ հասարակ նաևակներով աս եռաթի նաևուն մէջ կ'եկէին: Յորդորիչը * նշան տուածին պէս, թիավարները իրենց թիերուն քով նստեցան: Ու ասոնց վերելը սրնգահար մը երգեր կը հնչէր, որոնց գրեթէ կը համաձայնէր թիավարաց ըրած շարժումը:

Ճամբորդներուն հագուստին ու մարմնոյ կազմութեանը նայելով՝ մէջերնին շատ Փոքր Ասիացիներ կ'երեւային: Ասոնցմէ ոմանք հարաւային Գաղղիայի մէջ ետքի ատենները պատահած արիւնահեղ դէպքերէն ստիպուած, նորէն իրենց արեւելեան հայրենիքը կը դառնային: Շատերուն վրայ դեռ մարտիրոսութեան հետքեր կային, իրենց հաւատքին դրոշմը մարմիններնուն վրայ կ'ըրուած էր: Ասոնց մէջ կայտառ քրիստոնէ երիտասարդ մ'ալ կար, որն որ առանց միտ դնելու հեթանոսաց ընկերութեան իր կրօնին պաշտամունքը ճշգիւ կը կատարէր. իր ջերմ վառվրոուն երեւակայութիւնը, իրեն խօսուածքին նորանոր կենդանի բացատրութիւններ կու տար, անոր համար ալ նաևուն մէջ ամենուն սիրելի էր ու ընկերական: Երբեմն իր անոյշ ձայնովը նոյն խառն ընկերութիւնը կը զուարթացընէր: Առտու մը արևը դեռ ելլելու վրայ՝ նաևուն մէկ ծայրը քաշուած, քաղցրանուագ երգեր կը կանչէր:

Իր երգին խօսքերը ճամբորդներուն վրայ մեծ ազդեցութիւն ըրին, ու բնութեան զարմանալիքնե-

* Hortator.

րուն վրայ խորհրդածութիւննին շարժեցին: Երեկոյ-
եան աղօտ ստուերը երթալով ծովին վրայ սկսաւ
տարածուիլ, նաւին մէջ ամենուն աչքը սկսաւ քնով
ծանրանալ, միայն նաւապետները ոտքի վրայ արթուն
հսկողութիւն կ'ընէին: Ծովուն դէպ ի արեւելեան
հորիզոնէն լուսինը զուարթ ընտանութեամբ մը սկսաւ
վեր ելլել, կոհակածեւ ալիքները նաւին շորս դին
պար կը բռնէին: Ծովուն մութ ալեացը վրայ գող-
դոջուն նաւուն ահօսները կը բացուէին, նաւուն առա-
գաստները վեր վար ծռելով ամեհի ալիքները կ'ող-
ջունէին, այն ընդարձակ համատարածը արծաթի հայե-
լի մը կ'երեւար, որուն մէջ երկիրը լեռներովը ինքը
զինքը կը տեսնէ: Մարդկային կենաց թշուառութիւնը
Լիւդիային սիրտը կը պաշարէր: Թախծութիւնն ու
մտմտուկը վրան թմրութիւն ու մրափութիւն բերին,
բարձին վրայ փռուեցաւ, երեսին վրայ ձերմակ քօղ
մը ծածկած, տեսածներուն ու լսածներուն խորհր-
դածութեամբը ինքը զինքը կը զբաղեցընէր: Բայց
քաղցր յուսոյ ճառագայթ մը մէկէն անոր սիրտ
տուաւ կանգնեց, առաւօտեան հեղեկ նշոյլի մը պէս,
որն որ ծաղկին վրայի ցօղը մէկդի կ'առնու, կը սրբէ,
ու անկին զուարթ կայտառութիւն մը կու տայ: Աւ-
րախութեան ձայն մը ճամբորդներուն աւետիս կու
տար: Աերջապէս երկու ամիսէ ի վեր մեծ անձկու-
թեամբ սպասած Աքայիան կ'երեւար, Մեսսենէին
լեռները հեռուանց կը տեսնուէին: Ամէն մարդ նաւուն
առջեւի կողմը դիզուեցաւ: Նաւը իր ուղղութիւնը
դէպ ի Սիրա կղզին բռնեց: Հոն ընկերութիւնը
բաժնուեցաւ: Արեւելք գացողները դուրս ելան՝ որ
ուրիշ առթի մը սպասեն, որովհետեւ Յուշկապարիկ
նաւը դէպ ի Ատաիկէ պիտ'որ նաւարկեր: Զուարթ
ու բարենշան առաւօտ մըն էր, երբոր նաւը Պիրէ-
ոսի նաւահանգիստը մտաւ:

Առաւօտեան արեւը դեռ իր խոր քունին մէջ
ընկղմած էր, Հիւմէտտոս*, որն որ Աթենքին անդիի

* Հիւմէտտոս՝ Ատաիկէի լեռը Աթենքի մօտ հարաւային
դին, Սարոնիկի լճին վրայ երեւելի էր իր մարմնին պատ-
ճառաւ, եւ հոնկից ելած մեղրը սքանչելի: Արամազդ
հոս գեղեցիկ ասճար մը ունէր:

դին կը բարձրանար, գորշ շղաշատեռ մը կը նմանէր, որ արեւին երեսը կը սքօղէր, կամաց կամաց երթալով օրուան Գշխոյն իր տարածած սփռած վարսերը կը թօթուէր ու լերանց վրայ հազարաւոր ճառագայթներու նշոյլներ կը ցոլացընէր, եւ երկրիս վրայ նոր կենդանութիւն մը կը հեղուր: Լիւդիա ցամաք ելաւ ու յառաջուան նաւարանին աւերակները եւ Սիղղային քանդած կիկղոպեան բերդերը, որոնք Պիրէոսը Աթէնքին հետ կը միացընէին, բարեւեց: Աարծեռ թէ քաղքին ամէն մէկ կողմը իրեն բարի դալուստ կը մաղթէին:

Արքայ Աթէնքի Ակրոպօլիսի մէջ արդէն քանի մը օրուընէ ի վեր Մետեղղային ծառան անհամբերութեամբ նաւահանգիստը սուր աչքով մը կը դիտէր, անանկ ինչպէս ատեն մը Եգէս Աթէնքի թագաւորը, որն որ դղեկի վրայէն աչքը անկած կը նայէր որ ճերմակ դրօշը՝ որն որ Մինոտաւրօսին սպանուիլը պիտ'որ ցուցընէր՝ տեսնէ: Աերջապէս նաւը ճանչցաւ: Հասկլեալ շնչով վազեց Տիւրանոսը որ ուրախութեան աւետիքը Մետեղղային ամենէն յառաջ հասցընէ: Բայց զՏիկինը տունը չիգաններ, փողոցէ փողոց կը փնտռէ, վերջապէս անբազմամարդ ճամբու մը վրայ իրեն կը հանդիպի: Մետեղղա ուրախութենէն ինք իրմէն կ'ելլէ, անմիջապէս տուն կը վազէ, ու տան սեամին վրայ Լիւդիային կը հանդիպի: Զգացումը ամէն տեղ ու ամէն դարու մէջ մի եւ նոյն լեզուն ունի, եւ աս լեզուն ներքին ամենափափուկ զգացմանց յայտարար կ'ըլլայ, սրտակից անձի մը հանդիպած ժամանակ: Երկուքն ալ իրար փաթթուեցան, լուիկ զմայլում մը վերջ չէր անուր:

Մետեղղա լուութիւնը միջահատեց ըսելով որ «երկայն ատենէ ի վեր մեծ անհամբերութեամբ աս օրուան կը սպասէի, որ քու Աթէնք դառնալդ տեսնեմ: Բոլոր ամայի հովիտները, ու երեկոյեան երկընքին ամէն աստղները կրնան իմ սաստիկ փափաքս քեզի պատմել: Հոռմէն դրած թղթերդ քու կենդանի խօսքերուդ տեղը դժուարաւ կրնան լեցընել, ի վերայ այսր ամենայնի անոնք ալ ինծի շատ անգին

ու պատուական կու գային, անանկ որ միշտ հետս կը կրէի: Աս միջոցիս մէջ քու մօրդ նկատմամբ տուած տեղեկութիւններդ վրաս մեծ ազդեցութիւն ըրին, որչափ կսկըծացի վրադ որ սիրելի մայրդ Հոռոմ չես գտած: Ես հոս տեղս երկու նորատունկ ծաղիկներ հասցուցի, որոնց զարդն ու վայելչութիւնը ամէն օր վրաս մեծ ուրախութիւն կը պատճառեն, բայց չէ՛ ինծի չէ՛, հապա երկուքն ալ իրենց Աստուծոյն ու Եկեղեցւոյ համար կը ծաղկին: Ասոնց մէկը Ուինէն՝ որն որ ատեն մը գերուհիս էր, եւ հիմակ քրիստոնէ եղած է, մէյ մ'ալ Տիւրանոսը՝ զորն որ դուն գեւտղայ կը ճանչնայիր եւ հիմակ երախայից կարգն անցած է: Որչափ մեծ պիտ'որ ըլլար մեր ուրախութիւնը, սիրելի որդեակ, թէ որ դուն ալ քու կորուստդ ու քու ցաւդ չունենայիր,»: Աս խօսքերը զուրցած ժամանակ, աչքին ծայրովն Լիւդիային նայելով հասկըցաւ թէ ինչչափ յանձնառութեամբ ու հոգւոյ հանդարտութեամբ աս կորուստը կը կրէր:

“Որդեակ, ըսաւ, որչափ ալ այն հանգուցեալը բախտաւոր ու երջանիկ ըլլայ, ի վերայ այսր ամենայնի աս արտասուաց ձորին վրայ թող տրուած զաւակ մը անոր կորուստը շատ կը զգայ,»:

“Աս ընդարձակ երկրագնտիս վրայ չունիմ մէկը որ իմն ըլլայ, ըսաւ հառաչելով Լիւդիա, բայց այնպիսի Տիկին մը ունիմ, որն որ կը յուսամ որ ասկից ետքը իմ ծառայութիւններս պիտ'որ ընդունի, ու զիս պիտ'որ չմերժէ,»:

Մետեղղա նորէն անոր վիզը փաթթուեցաւ ու սկսաւ խօսիլ: “Ա՛խ ասկէ ետքը դուն զիս ո՛չ խաթուն ո՛չ Տիկին ո՛չ ալ բարեկամուհի անուանէ: Ուրիշ անուն մը կայ, որն որ աւելի բարձրագոյն է, ու աւելի ազնուական, եւ ասկէ էտքը նոյնը իմ ականջիս աւելի քաղցր պիտ'որ հնչէ: Գիտե՛ս ինչ է,»:

Լիւդիա ամօթխածութեամբ գետինը սկսաւ նայիլ: — “Ա՛խ, գիտեմ գիտեմ՝ արդէն, դուն շատոնց ի վեր նոյն անունը բերանդ առնելու չես համարձակած, այն քաղցր անունը, Մայր անունը, ըսաւ Մետեղղա: Աս առաջարկութիւնս վայրկենական այլայլու-

Թենէ կամ սրտի գորովէ յառաջ եկած չէ, այլ իմ զաւակս կորսնցընելէս ի վեր, ասոր վրայ արդէն մտացած էի, թէ ինչպէս ըլլայ որ նոյն անունը նորէն ազանջիս հնչէ: Զքեզ ընտրած եմ աս բանիս, որ դուն ինծի նոր ու Աստուծակ պարգեւուած դուստր մը համարուիս, ու ջերմ սիրական աղջիկս ըլլաս:

Աս զքեզ մինչուկ հիմակ “Աիւդիա,” անուանեցի, բայց դուն ուրիշ շատ աւելի գեղեցիկ մկրտութեան անուն մը ունիս, անոր համար ներէ որ ես ասկէ ետքը քեզի նոյն անունը տամ ու զքեզ Յերափիկէ անուանեմ: Իմ մէկհատիկ դուստրս Սերափիկէ պիտ'որ անուանուի: Ունեցածս բոլոր քուկդ է, եւ ինչպէս որ դուն իմ սիրտս ստացար, ասանկ ալ պէտք է որ իմ ամէն անցաւոր ստացուածներուս ստացիչն ըլլաս: Արդարութեան ատենը երկայն ատեն աս ժառանգութեանդ խնդրոյն նկատմամբ դժուարութիւններ հանեց, իբրեւ թէ գերի եղած ըլլաս. բայց ես ցուցուցի որ դուն ազատածին ես ու երբեք հրապարակաւ կամ առանձնականներէն օրինաւոր կերպով ծախուած չես, հապա իբրեւ փախրտական մը իմ տունս ապաւինած ես: Զմիւսնացի նաւու մը տէրը, ամենեւին իրաւունք մը չունենալով, զքեզ գերիի տեղ դրեր ու իմ տունս խրկեր է: Արդ ուրեմն ամէն բան կարգի դրուած է, դուն հիմակ իմ ժառանգս ճանչցուած ես: Դուն ալ ինծի պէս Աթենացոց բարերար գտնուէ, եւ թէ որ վախճանդ հասնի, մեր քաղքին աղքատները մի մոռնար, եւ զանոնք քու զաւկներդ սեպէ,”:

Յերափիկէ աս խօսքերուն վրայ սիրտը լեցուելով, առջի անգամ Մետեղղային սիրոյ ու ընտանութեան համբոյր տալէն ետքը, սկսաւ այսպէս խօսիլ: “Իմ սուրբ հաւատքս ատեն մը զիս որք ձգեց, եւ նոյն հաւատքը հիմակ ինծի մայր մը տուաւ: Պիտ'որ չմոռնամ երբեք որ քու անեզը սէրդ էր որ զիս հասարակ ազախնութենէ ազատութեան վիճակ բերաւ, եւ անկից ալ քեզի դուստր ըլլալու: — Արդ ալ չեմ կրնար պահել, ան որն որ սրտիս մէջը կ'եռայ, եւ որն որ քեզի համար շատ ուրախալի աւետիք մըն

է, վասն զի գիտցիր որ այսօր անջի անգամը չէ, որ
դուն քրիստոնեայ զաւկի մը մայր կ'ըլլաս,»:

Մետեղղա չկրցաւ աս խօսքիս նշանակութիւնը
հասկընալ: «Դուն առանց գիտնալու քրիստոնէ տղու
մը մայր եղած ես եղեր: Զաւակդ արդէն շատոնց
մեր կենարարին գողը կը հանգչի եղեր, հաւատոյ
արշալոյսը անոր մօրը սրտին մէջ չծագած:

Կը յիշես որ քու Ղուկիոսդ հեղ մը երա-
զեղ մէջ տեսած էիր որ մեր փրկչին քովը նստած
կը մրափէր,»:

— — «Իմ զաւակս, — — բաներ կը գուշա-
կեմ, զորոնք չեմ կրնար բացատրել,»:

«Ինչու գուշակութիւնդ երջանկաւէտ ճշմար-
տութիւն մըն է: Քու որդիդ քրիստոնէ մեռած է:
— Ես անձամբ Հռոմ քրիստոնէից լեզէոնէն դար-
ձող զինուորի մը հետ խօսեցայ, որն որ իր ձեռ-
քովը անոր գլխուն մկրտութեան ջուրը թափած է:
Իր ետքի խօսքերն եղեր են. «Հաւատամ յՈրդին
Աստուծոյ, ու մօրս իմ ողջոյնս տուէք,»:

Մետեղղա անբարբառ մնաց, սիրտը սկսաւ նե-
տել ու գողալ, սուրբ երկիւղ մը իր բոլոր անգամ-
ներուն վրայ սկսաւ տարածուիլ: Ասոր վրայ առանց
խօսք մը աւելցընելու, մէկէն ոտք ելաւ, Սերափիկէին
ձեռքէն բռնեց ու տան մատուռը մտան: Մինակ ան՝
որն որ սիրտերուն խորքը կը քննէ, մինակ ան գիտէ,
ինչ որ ասոնք հոն զգացին:

Հ Ե Տ Ե Ի Ո Ի Թ Ի Ի Ն

«Գիտնալ ուրիշներուն առարկեական գործքերը լաւ է, բայց լաւագոյն՝ նոյններուն կարող ըլլալ *»:

Ասանկ գերի օրիորդի մը վրայ, որն որ սեռիւ, հասակաւ ու աւելի եւս իր վիճակին կողմանէ տկար էր, ցուցուցինք՝ թէ շնորհքը երբեմն ամենէն աւելի ստորինները ինչ բարձրութեան կը հասնէ: Աշխարհքիս տկարները ընտրեց Աստուած որ զօրաւորները ամչցրնէ ** : Թէ որ իրեն առաքինութիւնը նա եւ ժամանակաւոր շահով, պատուով ու փառաւորութեամբ յազմանակ ըրած ալ չըլլար, հոգ չէր: Երկրաւոր փառքն ու ճաճանչը, արտաքին անունն ու փառաւորութիւնը՝ մինակ ժամանակաւոր ու պատահական յաւելուած մըն է ան ներքին բարոյական մեծութեան, որն որ աս յաւելուածով չազնուանար ու չինուաստանար: Ի վերայ այսր ամենայնի պատիւը առաքինութեան կու գայ կը հասնի՝ անոր ետեւէն երթալու, կարծես թէ անոր շուքն է:

Թէ դժբախտութիւնը ինչ իմաստուն նպատակ ունի, թող աս բազմափորձ օրիորդը պատմէ: Կատարելութեան այն աստիճանը չէր հասներ, թէ որ վշտաց վառարանէն չանցնէր: Ինչու որ առաքինութիւնը իր գեղեցկութեանը մէջ ինք զինք ցուցրնելու համար, պէտք է որ քիչ մը ժամանակ ճնշուի: Մարկոս Աւրելիոսի ատենուան Եկեղեցւոյ վկաները, Պողիկարպոս, Յուստինոս, Բլանդինա, Պոթինոս եւ ուրիշ շատերը, որոնք յօժարակամ յանձնառութեամբ ու ցնծութեամբ մեռան, չէինք տեսներ, թէ որ անպատմելի նեղութիւն մը զիրենք արիւնոտ Արիադնեան դերձանի մը պէս, իրենց կենացը մութ լարիւրինդոսէն, ատեաններուն բացուած դռներուն առջեւը չհանէր, ան դռներուն, որոնք իրենց համար յազմանակի դռներ էին: Իրացրնէ այսպիսի հոգիներն են միայն Աստուծոյ շնորհքովը առատացեալ-

* Nosse peracta iuvat, sed praestat tradita posse.

** Ա. կորն . Ա . 27 :

ները, որոնց Աստուած մասնաւոր կերպով պայելութիւն կ'ընէ, ու աս պայելութեան ճաշակը չունեցողները երբեք նախանձելի չեն: Ասոր կը հայի Սենեկային այն խօսքը թէ «Թշուառ է անիկա, որն որ երբեք թշուառ եղած չէ»*: Չկայ ցաւ մը, երիտասարդական սրտի մը խաբուած յոյսերէն սկսած մինչուկ մատնութիւն, չարալուկ տանջանք ու սաստիկ մատանջութիւն, որն որ աս ճշմարտութեան վկայ չըլլայ: Ամէն մէկ անիրաւութիւն մեզի համար ձայն մըն է, որն որ կը յիշեցընէ թէ աս արտասուաց հովիտը արսորուած ենք, եւ որչափ նոյն անիրաւութիւնը կը կրկնուի, նոյնչափ ալ անձկալի կ'ընէ մեր վախճանը ու մեր աշխարհքէ ելքը, որն որ աւելի մուտք մըն է ի հայրենիս: Իսկ մահուան հետ բարեկամանալն ամենէն մեծ յաղթութիւնն է, զորն որ մարդկային հոգին բնութեան արհաւիրներուն դէմ կարող ըլլայ ընել: Ի՛նչպէս շքեղ կը մտնէ օրուան արեւը, երբ որ մրրկածին ամպերէն շրջապատած, արեւմտեան եթերին արիւնագոյն ծովուն մէջ աներեւոյթ կ'ըլլայ: Բայց նոյն ատեն որ կիսագունդներուն մէկը աս օրհասական գեղեցկութեան վրայ կը զարմանայ, մէկալ կիսագնդին համար մի եւ նոյն բոպէն նոր շողացող առաւօտ մը կը ծագի: Մի եւ նոյնը մուտք՝ ու միանգամայն ելք է: Մարդուս համար ալ նոյնպէս է: Աշխարհքէս հրաժարումը դէպ ի երկինք ուղղուած ուրախութեան երգ մըն է:

Ա՛ր գերուհւոյն բովանդակ վարքին մէջ անմահ հոգիներուն փրկութեանը համար ջերմաջերմ եռանդ մը կը շողայ: Իր հաւատքին լոյսը՝ յայտնութեան արեւէն վառեց, ու նոյն լոյսը հետն առած թէ աղքատին խրճիթը, եւ թէ հարստին պալատը տարաւ:

Ա՛րը՝ որով վառուած էր, ամէն արգելք յաղթեց: «Քու առջեւէդ անցայ, կ'ըսէ մարգարէն, եւ տեսայ որ ժամանակդ սիրոյ ժամանակ է**»: Անոր ոտքը փշալից ճամբաները կոխեց, որն որ մեր կենա-

* „Miser qui nunquam miser fuit“.

** Եզեկ. Ժ. Գ. 8:

րարին ոտքին հետքերն են, յաջ եւ յահեակ զո՛վ որ պարապ տեսնէր կը կանչէր անոր, գուն հեղպացեալ սիրտ, ի՛նչ կը դանդաղիս: Քաջալեր ու յորդոր կու տար անոր, որ իր թագաւորին գլխին պսակէն ինկած փշերուն վրայէն երթալու չքաշուի: Ասոնք են ըստ Աստուծոյ ըսուած հոգիները, եւ ոչ թէ անոնք, որոնք դատարկ ու պարապորդ կը կենան ու աւազի հատերը կը համրեն:

Ո՛հ, որչափ մեր օրերն ալ՝ թշուաւացելոց թիւը մեծ՝ ու մեր սէրը փոքր է: «Մարդիկ պիտ'որ որսաք», ըսաւ Տէր իրեններուն, եւ ինքն ալ ինքը զինքը աս բանիս իբրեւ աստուածային օրինակ մը ընծայեց: Արովհետեւ երբեմն ի լրման ժամանակաց, երբոր երկնից բարձրութենէն վար՝ տիեզերաց մութ Ովկիանոսին վրայ նայեցաւ, ուր հազարաւոր աշխարհքներ տատանման մէջ կը գանուէին, նա եւ մեր մոլորակն ալ տեսաւ, որուն բնակիչքը իրենց բնակած աստեղ պէս մոլորեալ կը պտըտէին ու լուսոյ եւ ճշմարտութեան կը հառաչէին, — ինքն ալ նոյն ատեն իրեն վարդապետութիւնը՝ որն որ իր ողորմութեան ուսկանն է, վար երկրնցուց, ու զմեզ ամէնքնիս վեր քաշեց: Իրեն օրինակին պիտ'որ հետեւէին իր աշակերտներն ալ: Առաքելոց գլխաւորն ու իշխանը խաչին վրայ կախուած, իր երբորդ յաջորդին՝ Աղետոսին, խրատ տուած է, կ'ըսեն, թէ «Չմոռնա՞ որ գուն քու հոգիդ կը պահես, թէ որ եղբարցդ հոգին փրկես», : Աս պարտքը ու աս վարձքը ամենուս համար է, փրկուիլ՝ ուրիշները փրկելով*:



* Salvando salvabimur.

ՅԱՆԿ ԳԼԽՈՑ

Գ.Լ.	Ա.	Գերի օրհորդը	1
Գ.Լ.	Բ.	Երկրաշարժ	14
Գ.Լ.	Գ.	Մետեղդա	26
Գ.Լ.	Գ.	Չինուորական նորընծայութիւն	41
Գ.Լ.	Է.	Գլխոյ ասեղ	51
Գ.Լ.	Չ.	Չեւսի տաճարին մէջ զոհ մը	61
Գ.Լ.	Ի.	Գերեաց կեանքին նկարագիրը	68
Գ.Լ.	Լ.	Յուստինոսին ջատագովութեան թուղթը	76
Գ.Լ.	Թ.	Արծաթի հայելին	84
Գ.Լ.	Ժ.	Պատերազմի բանակէն	96
Գ.Լ.	ԺԱ.	Աթենագորաս	107
Գ.Լ.	ԺԲ.	Էղեւսիսի զեղազնացութեան տունը	117
Գ.Լ.	ԺԳ.	Բրուտն ու իր տղան	125
Գ.Լ.	ԺԴ.	Գ.ու.ժ մը	133
Գ.Լ.	ԺԵ.	Գիտնիսիոս Աորնթացին	140
Գ.Լ.	ԺԶ.	Գարձ	149
Գ.Լ.	ԺԷ.	Մարկոս Աւրեղիոս ու Մարկոմանաց վրայ ըրած յաղթութիւնը	157
Գ.Լ.	ԺԸ.	Լիզիայի հրատեշտը	164
Գ.Լ.	ԺԹ.	Յաղթանակ	171
Գ.Լ.	Ի.	Մայրս կը փնտռեմ	178
Գ.Լ.	ԻԱ.	Առանձնութիւն ու նուիրական տեղերը	188
Գ.Լ.	ԻԲ.	Իրենէոս	194
Գ.Լ.	ԻԳ.	Անկարող զինուոր մը	200
Գ.Լ.	ԻԴ.	Գարձ ու նորէն տեսութիւն	205
ՀԵՏԵ ԻՈՒԹԻԻՆ			211

